



Անահիտ Արտյունյի Մանասյան

Անահիտ Արտյունյի Մանասյանը ծնվել է 1988թ-ի հունիսի 24-ին Երևան քաղաքում: 2004թ-ին ընդունվել է ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատ, 2008թ-ին՝ նույն ֆակուլտետի մագիստրատուրա, որն ավարտելուց հետո կրթությունը շարունակել է ԵՊՀ ասպիրանտուրայում «Հանրային իրավունք» մասնագիտությամբ: 2013թ-ին պաշտպանել է թեկնածուական ատենախոսությունը և ստացել է իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: 2016թ-ին ուսանել է ԱՄՆ Թաֆթս համալսարանի Ֆլեթչերի իրավունքի և դիվանագիտության դպրոցում:

2008-2009թթ. աշխատել է ՀՀ արդարադատության նախարարի աշխատակազմում որպես փորձագետ, 2009-2013թթ.՝ ՀՀ Սահմանադրական դատարանում որպես նախագահի օգնական, 2013-2014թթ.՝ ՀՀ Սահմանադրական դատարանի նախագահի խորհրդական, 2014-2016թթ.՝ ՀՀ Սահմանադրական դատարանի նախագահի ավագ խորհրդական, 2016-2018թ-ի մարտ՝ ՀՀ Սահմանադրական դատարանի խորհրդական:

2014թ-ից դասավանդում է ՀՀ Արդարադատության ակադեմիայում, իսկ 2017թ-ի փետրվարից Ակադեմիայի պրոռեկտորն է:

2010-2013թթ. աշխատել է ԵՊՀ սահմանադրական իրավունքի ամբիոնում որպես դասախոս, 2013-2015թթ.՝ որպես ասիստենտ: 2015թ-ից ԵՊՀ սահմանադրական իրավունքի ամբիոնի դոցենտ է: 2008թ-ից ՀՀ իրավաբանների միության, 2016թ-ից՝ «Սահմանադրական մշակույթ» միջազգային վերլուծական կենտրոնի հոգաբարձուների խորհրդի անդամ է: 2012թ-ից Մոսկվայում հրատարակվող «Համեմատական սահմանադրական տեսություն» միջազգային գիտական հանդեսի տարածաշրջանային թղթակից է, 2013թ-ից՝ տարածաշրջանային «Հարավային Կովկաս իրավաբանական ամսագրի» խմբագրական խորհրդի անդամ: 2012-2018թթ. հանդիսանում էր ՀՀ Սահմանադրական դատարանի տեղեկագրի ռուսերեն հավելվածի հրատարակչական խմբի անդամ:

2012թ-ին ստաժավորում է անցել Հունգարիայի սահմանադրական դատարանում, 2013թ-ին վերապատրաստվել է Գերմանիայում: Մասնակցել է հանրապետական և միջազգային բազմաթիվ գիտաժողովների, դասախոսություններով հանդես է եկել միջազգային մի շարք սեմինարների շրջանակներում: Որպես փորձագետ մասնակցել է միջազգային տարբեր կառույցների կողմից սահմանադրական իրավունքին առնչվող տարատեսակ հարցերի վերաբերյալ եզրակացությունների նախապատրաստման գործընթացներին:

Հեղինակ և համահեղինակ է 4 մենագրության, 1 դասագրքի, 1 ուսումնական ձեռնարկի և շուրջ 5 տասնյակ գիտական հոդվածների, որոնք հրատարակվել են հայաստանյան և արտասահմանյան հեղինակավոր գիտական հանդեսներում:

ՍԱՀՄԱՆԱԴԻՐԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ԿԱՅՈՒՆ ԳՐԱՎԱԿԱՆ ԴՊԻՊՈՄԱՆՏԱՆԻ ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ԳՐԱՎԱԿԱՆ

Ա. ՄԱՆԱՍՅԱՆ

ԱՆԱՀԻՏ ՄԱՆԱՍՅԱՆ



ՍԱՀՄԱՆԱԴԻՐԱԿԱՆ
ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ԿԱՅՈՒՆ
ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ԳՐԱՎԱԿԱՆ

ԵՐԵՎԱՆ - 2019

ԱՆԱՀԻՏ ՄԱՆԱՍՅԱՆ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ

ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ԿԱՅՈՒՆ

ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ

ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ԳՐԱՎԱԿԱՆ

Երևան

«Հայրապետ» հրատարակչություն

2019

ՀՏԴ 342

ԳՄԴ 67.400

Մ 246

*Երաշխավորվել է տպագրության ԵՊՀ իրավագիտության
ֆակուլտետի գիտական խորհրդի կողմից*

Գրախոսներ՝ իրավաբանական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր **Գ.Գ. Հարությունյան**
իրավաբանական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր **Գ.Բ. Դանիելյան**

Մանապյան Ա.Ա.

Մ 246 Սահմանադրական կայունությունը՝ որպես կայուն ժողովրդավարության կարևորագույն գրավական/ Ա.Ա. Մանապյան. – Եր.: «Հայրապետ» հրատ., 2019.- 344 էջ:

Մենագրության շրջանակներում հետազոտվել են ժողովրդավարության դոկտրինը, սահմանադրական կայունությանն ու Սահմանադրության զարգացմանն առնչվող հիմնախնդիրները, սահմանադրական վեճերի հաղթահարման իրավական կառուցակարգերը, Սահմանադրության պաշտոնական մեկնաբանության, անմիջական գործողության առանձնահատկությունները, Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների զարգացման հիմնախնդիրները, ինչպես նաև «սահմանադրական ինքնություն» հասկացությունն ու դրա արժեքանական բնութագիրը: Նշված հիմնախնդիրների ուսումնասիրության արդյունքում հեղինակի կողմից կատարվել են բազմաթիվ տեսական եզրահանգումներ, մշակվել են հարցադրումներին առնչվող նոր տեսական հայեցակարգեր և ներկայացվել են ՀՀ օրենսդրության ու իրավակիրառ պրակտիկայի կատարելագործման մի շարք գործնական առաջարկություններ:

Նախատեսված է սահմանադրական իրավունքի, իրավունքի տեսության ու փիլիսոփայության, սոցիոլոգիայի, քաղաքագիտության հարցերով հետաքրքրվող ընթերցողների լայն շրջանակի համար:

ՀՏԴ 342

ԳՄԴ 67.400

ISBN 978-9939-838-82-3

© Մանապյան Ա.Ա., 2019

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ5

ԳԼՈՒԽ 1. ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԴՈՎՏՐԻՆՆ ԱՐԴԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԻՐԱՎԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ 10

 § 1. Ժողովրդավարության դոկտրինն ու դրա վերախմաստավորումը ժամանակակից սահմանադրագիտության շրջանակներում 10

 § 2. Էլիտիզմի գաղափարը և դրա դերը ժողովրդաիշխանության արդյունավետ իրացման գործում 29

ԳԼՈՒԽ 2. ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԱՐԺԵԲԱՆԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ 39

 § 1. Սահմանադրական կայունությունը և դրա իրավական բնույթը 39

 § 2. Սահմանադրական կայունությունը պայմանավորող գործոններն ու դրանց արժեքանական բնութագիրը 49

 § 3. Սահմանադրական կայունությունը և սահմանադրական փոփոխությունների հաճախականությունն արդի սահմանադրաիրավական մտածողության համատեքստում 79

ԳԼՈՒԽ 3. ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊԵՆԴՄԱՆ ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ԳՐԱՎԱԿԱՆ 97

 § 1. Սահմանադրության զարգացումն ու դրա արժեքանական նկարագիրը 97

 § 2. Սահմանադրական զարգացումների սահմանադրականությունը՝ որպես կայուն ժողովրդավարության կարևորագույն գրավական 111

 § 3. Սահմանադրության զարգացման եղանակների արդյունավետ իրացումը սահմանադրական կայունության երաշխավորման համատեքստում 140

ԳԼՈՒԽ 4. ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԱՐԺԵԲԱՆԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ ՈՒ ԴՐԱ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ 152

 § 1. Սահմանադրական ինքնության արժեքանական նկարագիրը 152

 § 2. «Ազգի ինքնություն» և «պետական ինքնություն» հասկացությունների բովանդակությունն ու դրանց հարաբերակցությունը «սահմանադրական ինքնություն» հասկացության հետ 169

ԳԼՈՒԽ 5. ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳ 176

 § 1. ՀՀ Սահմանադրության պաշտոնական մեկնաբանությունը՝ որպես Հիմնական օրենքի զարգացման կարևորագույն գրավական 176

 § 2. Սահմանադրական մարմինների միջև իրենց սահմանադրական լիազորությունների առնչությամբ առաջացող վեճերն ու դրանց հաղթահարման սահմանադրական ճանապարհները՝ որպես սահմանադրական կայունության կարևորագույն երաշխիք 223

 § 3. Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների զարգացման հիմնախնդիրները՝ սահմանադրական կայունության երաշխավորման համատեքստում 284

 КОНСТИТУЦИОННАЯ СТАБИЛЬНОСТЬ КАК ВАЖНЕЙШАЯ ПРЕДПОСЫЛКА СТАБИЛЬНОЙ ДЕМОКРАТИИ РЕЗЮМЕ 306

 CONSTITUTIONAL STABILITY AS AN IMPORTANT PREREQUISITE FOR STABLE DEMOCRACY SUMMARY 313

 ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 319

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Ժողովրդավարություն» առօրյայում օգտագործվող ամենատարածված հասկացություններից է, և ժամանակակից աշխարհում դժվար թե գտնվի մեկը, ով ծանոթ չէ հիշյալ եզրույթին: Միննույն ժամանակ, ինչպես դոկտրինալ մակարդակում, այնպես էլ գործնականում նշված հասկացությունը ոչ միշտ է պատշաճ ընկալվում, իսկ որոշ դեպքերում ձևախեղված էության մեջ է ներկայացվում ու կիրառվում: Մասնավորապես, բացակայում են համալիր հետազոտությունները և միասնական գիտական մոտեցումը ժողովրդի իշխանության սահմանների առնչությամբ, ինչը հանգեցնում է ժողովրդաիշխանության հայեցակարգի և այն նպատակի ձևախեղման, որը պետք է ընկած լինի այդ հայեցակարգի հիմքում: Ավելին, թեև տարատեսակ հետազոտությունների շրջանակներում անդրադարձ կատարվում է անմիջական և ներկայացուցչական ժողովրդաիշխանության իրացման կառուցակարգերին, սակայն այդ վերլուծությունները վերաբերում են առավելապես հիշյալ հայեցակարգերի առանձին ասպեկտներին: Իսկ ժողովրդաիշխանության կայացումն ու ամրապնդումը փաստացի բնութագրելու համար այդ հետազոտությունները թիրախավորում են սոսկ պետական իշխանության ձևավորման հարցում ժողովրդի աջակցության քանակական բնութագիրը՝ անտեսելով այդ համատեքստում ժողովրդի իշխանության սահմանների հստակեցման, մասնագիտացված կառավարման և դրանց համադրման առանցքային դերակատարությունը: Բացառիկ կարևորություն ունի նաև ժողովրդի իշխանության սահմանների հստակեցումը և այդ առումով միասնական գիտական հայե-

ցակարգի մշակումը՝ դատական իշխանության անկախության, իրավունքի առջև վերջինիս հաշվետվողականության և անկախության ու հաշվետվողականության միջև պատշաճ հավասարակշռություն գտնելու համատեքստում:

Ավելին, ինչպես հայ, այնպես էլ արտասահմանյան իրավական մտքի շրջանակներում բացակայում են համալիր գիտական հետազոտությունները «սահմանադրական կայունություն» հասկացության և վերջինիս բովանդակության առնչությամբ: «Սահմանադրության կայունություն» և «Սահմանադրության զարգացում» հասկացությունները սահմանել և դրանց բովանդակությանն առնչվող հիմնախնդիրները վերլուծել ենք մեր նախորդ գիտական հետազոտության շրջանակներում: Միննույն ժամանակ, առկա են հիմնախնդրին առնչվող բազմաթիվ հարցադրումներ, որոնք դեռևս ունեն լրացուցիչ և ամբողջական հետազոտության անհրաժեշտություն: Մասնավորապես, համալիր վերլուծության և համարժեք գիտական հայեցակարգերի մշակման անհրաժեշտություն է առկա սահմանադրական կայունության և քաղաքականության միջև կապի և սահմանադրական զարգացումների հաճախականությանը վերաբերող հարցադրումների առնչությամբ:

Թեև գրականության մեջ կարելի է հանդիպել սահմանադրական զարգացումների սահմանադրականությանն առնչվող առանձին վերլուծությունների, իրավական մտքի շրջանակներում բացակայում է միասնական մոտեցումը հիշյալ հիմնախնդրի առնչությամբ: Կարծում ենք, սակայն, որ սահմանադրական կայունության երաշխավորման տեսանկյունից քննարկվող հարցադրման առնչությամբ միասնական գիտական հայեցակարգի մշակումն ունի բացառիկ կարևորություն,

ինչը ևս վկայում է ընտրված թեմայի արդիականության մասին: Կարևոր է նաև Սահմանադրության նախաբանի զարգացման հնարավորությունների առնչությամբ միասնական գիտական հայեցակարգի մշակումը, որպիսին ևս բացակայում է ժամանակակից իրավական մտքի շրջանակներում:

Թեև մեր նախորդ գիտական հետազոտության շրջանակներում անդրադարձ կատարել ենք Սահմանադրության զարգացման այլընտրանքային եղանակներին, սակայն կարծում ենք, որ առկա են քննարկվող հիմնախնդրին առնչվող առանձին հարցադրումներ, որոնց վերաբերյալ առկա է համալիր հետազոտության և համարժեք գիտական հայեցակարգի մշակման անհրաժեշտություն: Մասնավորապես, հայ իրավական մտքի շրջանակներում բացակայում է միասնական գիտական մոտեցումը Սահմանադրության զարգացման առումով անմիջական և միջնորդավորված ժողովրդաիշխանության կառուցակարգերի արդյունավետ համադրման, սահմանադրական մարմինների միջև իրենց սահմանադրական լիազորությունների առնչությամբ վեճերի լուծմանն առնչվող հարցադրումների վերաբերյալ: Ժամանակակից իրավական մտքի շրջանակներում բացակայում է նաև միասնական գիտական հայեցակարգը սահմանադրական կայունության երաշխավորման տեսանկյունից բացառիկ կարևորություն ունեցող՝ Սահմանադրության անմիջական գործողությանն, ինչպես նաև Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների զարգացմանն առնչվող հարցադրումների վերաբերյալ:

Թեև գրականության մեջ լայնորեն հետազոտվում է իշխանությունների բաժանման և հավասարակշռման հայեցակարգը, սակայն կարծում ենք, որ այն ևս ունի վերաիմաստավոր-

ման կարիք՝ վերջինիս առանցքային նպատակի դիտանկյունից: Մասնավորապես, իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքը, որպես կանոն, ուսումնասիրվում է՝ իշխանության ճյուղերը միմյանցից տարանջատելու գաղափարն ընդգծելով: Մինչդեռ կարծում ենք, որ հիշյալ համատեքստում առաջնահերթ նշանակություն ունի ոչ թե իշխանության ճյուղերը միմյանցից մեկուսացնելու կառուցակարգերի հետազոտությունը, այլ նրանց փոխգործակցությունն ու համագործակցությունն ապահովելու համարժեք կառուցակարգերի մշակումն ու դրա վերաբերյալ համապատասխան գիտական հայեցակարգի մշակումը:

Մասնագիտական գրականության մեջ կարելի է հանդիպել «սահմանադրական ինքնություն» հասկացության և վերջինիս բովանդակության առնչությամբ գիտական հետազոտությունների: Մինևույն ժամանակ, առկա են քննարկվող հիմնախնդրին առնչվող առանձին հարցադրումներ, որոնց առնչությամբ ևս բացակայում են համալիր գիտական հետազոտությունները կամ վերջիններիս վերաբերյալ մշակված չէ միասնական գիտական հայեցակարգ: Մասնավորապես, սահմանադրական ինքնության բովանդակության, սահմանադրական կայունության երաշխավորման տեսանկյունից սահմանադրական ինքնության դերակատարության բացահայտման առումով բացառիկ կարևորություն ունի ինքնության անհատական (ներքին) և սոցիալական (արտաքին) մակարդակների ու դրանց միջև հավասարակշռություն գտնելու առնչությամբ միասնական գիտական հայեցակարգի մշակումը, ինչը բացակայում է ժամանակակից իրավական մտքի շրջանակներում:

Ակնհայտ է, որ ներկայացված հարցադրումների առնչությո-

յամբ համալիր գիտական հետազոտությունների և միասնական մոտեցումների բացակայությունը հանգեցնում է ոչ միայն տեսական, այլ նաև գործնական լուրջ խնդիրների:

Վերը շարադրվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ ժողովրդավարության և սահմանադրական կայունության երաշխավորման տեսանկյունից բացառիկ կարևորություն ունեցող հիշատակված հիմնահարցերը սահմանադրագիտության զարգացման ժամանակակից փուլում պահանջում են լուրջ ուսումնասիրություն և միասնական գիտական հայեցակազմի մշակում, ինչը վկայում է ընտրված թեմայի արդիականության մասին:

Հենց վերը նշված հիմնախնդիրների ուսումնասիրությանն ու դրանց լուծումների բացահայտմանն է նվիրված հիշյալ աշխատությունը, որի շրջանակներում կատարվել են հայեցակարգային բնույթ ունեցող մի շարք եզրահանգումներ: Հիմնախնդրի առնչությամբ կատարված վերլուծությունը, ներկայացված առաջարկություններն ու եզրահանգումները կարող են օգտագործվել այն բոլոր դասընթացներում և գիտական հետազոտություններում, որոնց առարկան որևէ կերպ առնչվում է սահմանադրական կայունության արժեքական բնութագրին և ժողովրդավարության երաշխավորման գործում դրա ունեցած դերակատարությանը: Քննարկվող հարցադրումների առնչությամբ ներկայացված առաջարկությունները կարող են նպաստել նաև ՀՀ օրենսդրության ու իրավակիրառ պրակտիկայի կատարելագործմանը:

ԳԼՈՒԽ 1.

ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԴՈՎՏՐԻՆՆ ԱՐԴԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԻՐԱՎԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

§ 1. Ժողովրդավարության դոկտրինն ու դրա վերափնաստավորումը ժամանակակից սահմանադրագիտության շրջանակներում

«Ժողովրդավարությունն» առօրյայում օգտագործվող ամենատարածված հասկացություններից է, և ժամանակակից աշխարհում դժվար թե գտնվի մեկը, ով ծանոթ չէ հիշյալ եզրույթին: Մինևույն ժամանակ, կարծում ենք, որ նշված հասկացությունը ոչ միշտ է պաստաճ ընկալվում, իսկ որոշ դեպքերում ձևախեղված էությամբ է կիրառվում, հատկապես, երբ ավտորիտար և տոտալիտար ռեժիմներն իրենց ժողովրդավար են հռչակում՝ ժողովրդի աջակցությունը որպես դրա հիմնավորում վկայակոչելով¹: Մինչդեռ հարկ է նկատի ունենալ, որ ժողովրդի աջակցությունը փաստող այս կամ այն երևույթների առկայությունը, օրինակ՝ ընտրությունների հրապարակված արդյունքները և այլն, չեն կարող ժողովրդի իրական իշխանությունն ու ժողովրդավարության գոյությունը փաստող միակ վկայությունը լինել: Վերջիններս ենթադրում են մի շարք այլ կարևոր հանգամանքների առկայություն, որոնց էությունը անհրաժեշտ ենք համարում բացահայտել ստորև:

¹ Տե՛ս *What Is Democracy?* Editor: Howard Cincotta, <https://www.ait.org.tw/infousa/zhtw/docs/whatsdem/whatdm2.htm>, /Վերջին մուսք՝ 04.05.2018/:

Բառարանային ձևակերպմամբ «ժողովրդավարությունը» ժողովրդի կողմից կառավարումն է, որտեղ գերագույն իշխանությունը պատկանում է ժողովրդին և իրականացվում է նրա կողմից անմիջականորեն կամ ազատ ընտրական համակարգի համատեքստում նրա կողմից ընտրված ներկայացուցիչների միջոցով»։ Ինչպես բնութագրում էր Աբրահամ Լինքոլնը, ժողովրդավարությունը «ժողովրդի, ժողովրդի կողմից և ժողովրդի համար» իրականացվող իշխանությունն է²։ Մեկ այլ բնորոշմամբ՝ ժողովրդավարությունը կառավարման ձև է, որի պարագայում քաղաքացիներն անձամբ կամ իրենց կողմից ընտրված ներկայացուցիչների միջոցով իրականացնում են (քաղաքական) որոշումների կայացման իրավունքը։ Ընդ որում՝ ժողովրդավարության հիմքում ժողովրդին որպես իշխանության աղբյուր ճանաչելու հանգամանքն է³։ Ժողովրդավարությունը ներկայացվում է նաև որպես հասարակության պետական-քաղաքական այնպիսի կազմակերպում, որտեղ ժողովուրդն է հանդիսանում իշխանության աղբյուրը⁴։

Հիշյալ համատեքստում հարկ է նկատի ունենալ, որ գրականության մեջ ներկայացվում են նաև տարաբնույթ հանգամանքներ, որոնք ենթադրում են, այսպես կոչված, «լավ, որակյալ» ժողովրդավարության առկայությունը, այդ թվում՝ չափափակ քաղաքացիների համընդհանուր ընտրական իրավունքի, պարբերական, ազատ, մրցակցային, արդար ընտրություններ-

² Տե՛ս նույն տեղում։

³ Տե՛ս Философия: Энциклопедический словарь. — М.: Гардарики. Под редакцией А.А. Ивина. 2004. http://dic.academic.ru/dic.nsf/enc_philosophy/313/, /Վերջին մուտք՝ 04.05.2018/։

⁴ Տե՛ս Философский энциклопедический словарь, 2010. http://dic.academic.ru/dic.nsf/enc_philosophy/313/, /Վերջին մուտք՝ 04.05.2018/։

րի, առավել քան մեկ քաղաքական կուսակցության, առավել քան մեկ տեղեկատվության աղբյուրի առկայությունը և այլն⁵։

Ամփոփելով ներկայացված տեսակետները՝ հանգում ենք այն եզրակացության, որ չնայած դրանցից յուրաքանչյուրը տարբեր դիտակետերից է մոտենում քննարկվող երևույթին, սակայն բոլորի համար էլ առանցքային է մի կարևոր հանգամանք՝ այն, որ իշխանության աղբյուրը ժողովրդավարական հասարակական համակարգերում ժողովուրդն է։ Հետևաբար, մեր կարծիքով, «ժողովրդավարություն» երևույթը բնութագրելու համար առաջին ելակետային հանգամանքն այն է, որ, ի տարբերություն կառավարման այլ ձևերի, ժողովրդավարության պարագայում իշխանության իրական աղբյուրը ժողովուրդն է, իշխանությունը պատկանում է ժողովրդին, իրականացվում է ժողովրդի կողմից և ժողովրդի համար։

Հիշյալ համատեքստում հարց է առաջանում այն մասին, թե արդյո՞ք համընդհանուր ճանաչում գտած վերը նշված բնորոշումը բավարար է ժողովրդավարության էությունը պատշաճ ընկալելու և ներկայացնելու համար։ Ավելին՝ արդյո՞ք այդ բնորոշման պայմաններում ընդհանրապես հնարավոր է խոսել ժողովրդավարության առկայության կամ բացակայության մասին, թե՞ վերջինս ընդամենը նպատակ է, որին պետք է ձգտել, սակայն երբևէ հնարավոր չի լինի կատարյալ ձևով կենսագործել։

Հիշյալ համատեքստում հիշատակման է արժանի գրականության մեջ արտահայտված այն տեսակետը, որ ժողովրդավարությունն ընդամենը սոցիալական իդեա, նպատակ է և չա-

⁵ Տե՛ս Morlino L. Qualities of Democracy: How to Analyze Them. Istituto Italiano di Scienze Umane, Florence (Italy). 2009, էջ 3։

փազանց բարդ կամ նույնիսկ անհնար է վերջինս ամբողջությամբ իրացնել: Նշված տեսակետի կողմնակիցների կարծիքով, սովյալ պարագայում հիմնական մեթոդալոգիական ասպեկտն այն պետք է լինի, որ ժողովրդավարությունը ոչ թե պետք է դիտարկել որպես որակ, որը բնորոշ է կամ բնորոշ չէ կոնկրետ հասարակությանը, այլ հիմնական ուշադրությունը պետք է սևեռել այն հանգամանքին, որպեսզի «ժողովուրդն» ինքը պատասխան տա այն հարցին, թե որքանով ժողովրդավարական է ինքը, որքան ժողովրդավարական կարող է կամ պետք է լինի և ինչպես ժողովրդավարությունը կարելի է ընդլայնել⁶:

Առաջադրված հարցադրումներին պատասխանելու համար անհրաժեշտ է մի քանի կարևոր հիմնահարցերի վերլուծություն, ինչին հարկ ենք համարում անդրադառնալ ստորև:

Գրականության մեջ ընդունված է այն տեսակետը, որ ժողովրդավարական կառավարումն իր հետ բերում է բազում խնդիրներ, որոնք սկսում են կասկածի տակ դնել վերջինիս արդյունավետությունը: Այդ թերությունները հարկ ենք համարում վերլուծել հիշյալ համատեքստում:

Կարևորագույն բացասական երևույթը, որին հանգում են ժողովրդավարական կառավարման համակարգերը, «միջակ առաջնորդների» կամ այսպես կոչված «կարգախոսների ստրուկների» ձևավորումն է, ինչն իր հերթին հանգեցնում է ցածր մշակույթի առաջացման: Տոկվիլի կարծիքով, նույնիսկ եթե լավ առաջնորդները կարողանում են գալ իշխանության, նրանք ի վիճակի չեն լինում իրականացնել երկարաժամկետ և համահասարակական ծրագրեր, քանի որ վերջիններս

⁶ St' u Cunningham F. Theoris of Democracy (A Critical Introduction), 2002, London and New York, T J International Ltd, Padstow, Cornwall, էջ 144:

գտնվում են տարատեսակ հետաքրքրություններ ունեցող անկայուն հասարակության «նոդրամաժության» ներքո, որն անընդհատ փոխում է իշխանության կրողներին ընտրությունների արդյունքում: Այդ հանգամանքն իր հերթին հանգեցնում է իշխանության անարդյունավետության⁷: Ավելին, ընդգծվում է, որ հիշյալ համակարգերում հաջողակ քաղաքական գործիչ է դառնում այն անձը, ով հմտացած է բանակցությունների և «առևտրային» հարաբերությունների, հետևաբար նաև՝ կոնկրետ ծրագրերի աջակցության ad hoc կոալիցիաներ ստեղծելու հարցերում⁸: Նույնիսկ ժողովրդավարական կառավարման սկզբունքներին վերաբերող մեթոդական ուղեցույցներում է շեշտադրվում ներկայացուցիչների՝ ինքնագովազդի գործառույթը, և ընդգծվում է, որ վերջիններիս հաջողությունը հնարավոր է սոսկ այդ գործառույթի իրացման պարագայում, քանի որ անձը չի կարող ճանաչված լինել, քանի դեռ չի գովազդում իրեն⁹:

Ժողովրդավարական հասարակական համակարգերի կարևորագույն թերություններից է դիտարկվում նաև այսպես կոչված «դատարկ տարածքի» սինդրոմը: Վերջինիս էությունը կայանում է նրանում, որ իշխանության կրողն ու աղբյուրը, այն է՝ ժողովուրդը, սովյալ պարագայում չանհանատակացվող, վերացական երևույթ է՝ բաղկացած անընդհատ փոփոխվող մասաներից: Արդյունքում առաջանում է այսպես կոչված «դատարկ տարածք», որի համատեքստում էլ իրականացվում է իշ-

⁷ St' u նույն տեղում, էջ 17:

⁸ St' u Walker Jack L. A Critique of the Elitist Theory of Democracy // The American Political Science Review, Vol. 60, No. 2 (Jun., 1966), էջ 291:

⁹ St' u Concepts and Principles of Democratic Governance and Accountability. Edited by Mathias Kamp, 2011, էջ 18-19:

խանությունը՝ ժողովրդի կողմից ընտրված կամ ինքնանշանակված անձանց կողմից, իսկ ժողովուրդն ինքն իրականում հեռացված է մնում իշխանությունից: Արդյունքում՝ նման իշխանությունը անմիջապես զբաղեցվում է այնպիսի անհատներով, որոնք խաղում են հասարակական կարծիքի հետ կամ շահարկում են այն: Այդ հանգամանքն էլ իր հերթին հանգեցնում է պոպուլիստ քաղաքական գործիչների դեմագոգիկ կառավարման կամ ժողովրդավարության դիմակով քողարկված բռնապետության¹⁰:

Ժողովրդավարության հաջորդ թերությունն այն է, որ վերջինիս պարագայում պետությունն անընդհատ հավասարակշռում է օլիգարատիայի և դիկտատուրայի միջև: Ավելին՝ անձի դիկտատուրան տվյալ պարագայում փոխարինվում է մեծամասնության դիկտատուրայով, ինչը միանշանակ ավելի լավ չէ, եթե ոչ ավելի վատ հասարակական հարաբերությունների բնականոն ընթացքի տեսանկյունից¹¹: Դրան գումարվում է այն, որ նույնիսկ ժամանակակից ժողովրդավարությունները չեն կարողանում զերծ մնալ պլուտոկրատիայից (հարստության իշխանությունից)¹²:

Ժողովրդավարական կառավարման համակարգերին բնորոշ կարևորագույն թերություններից է նաև վերջինիս իռացիո-

նալությունը, ինչի հիմքում ընկած է անիրագել բազմության կողմից իրենց շահերը ճիշտ ընկալելու անհնարինությունը¹³:

Հիշյալ համատեքստում հարկ է նկատի ունենալ, որ տվյալ պարագայում ուսումնասիրության հիմնական սուբյեկտը հենց անհատն է, քանզի երբ քննարկվում է խմբի «ռացիոնալության» հարցը, այն հնարավոր է դիտարկել սոսկ խմբի անդամների վարքագծի տեսանկյունից: Գրականության մեջ կարելի է հանդիպել այն տեսակետին, որ ռացիոնալ անհատը ևս եսասեր է: Ավելին, ընդգծվում է, որ քանզի ժողովրդի քաղաքական վարքագիծը նման է տնտեսական փոխհարաբերությունների մասնակիցների վարքագծին, ենթադրվում է, որ նրանք կոնկրետ որոշումներ կայացնելիս հաշվի են առնում միայն իրենց սեփական շահերը: Այդ առումով, օրինակ, ակնհայտ է, որ անհատները կոնկրետ իրի համար չեն վճարում առավել, քան անհրաժեշտ է՝ սոսկ արտադրողի կամ վաճառողի բարեկեցության շահերը նկատի ունենալով: Վերը շարադրվածը հաշվի առնելով՝ հիշյալ հեղինակների համար առանցքային է դառնում տնտեսական մոդելի տարածումը քաղաքական վարքագծի վրա, ինչի համատեքստում ակնհայտ է, որ երբ անհատն ընտրում է, պաշտոն է զբաղեցնում կամ իր պաշտոնական լիազորությունների շրջանակներում որոշակի քաղաքականություն է իրականացնում, ենթադրվում է, որ դա չի արվում՝ հանրային շահերից ելնելով: Ավելին, ակնհայտ է և այն, որ հնարավոր չէ երաշխավորել, որպեսզի անհատը միշտ հետևի ներդաշնակ հասարակական կյանքի համար անհրաժեշտ և փիլիսոփաների կողմից նախանշված բարոյական նորմերին: Այդ հանգամանքն իր հերթին առանցքային է դարձնում այն հարցը, որ

¹⁰ St' u Cunningham F. նշված աշխատությունը, էջ 179:

¹¹ Կարևորագույն ինդիքը հիշյալ համատեքստում այն է, որ որևէ մեկը չի կարող երաշխավորել, որ հասարակության ընտրությունը ճիշտ է: Օրինակ՝ Հիտլերը իշխանության էր եկել ժողովրդավարական եղանակով՝ մեծամասնություն ստանալով ռեյխսթագում (տե՛ս Գալեև Կ. *Монархия и республика. Достоинства и недостатки*, <http://schools.keldysh.ru/labmro/lib/projects/galeevk.htm> /Վերջին մուտք՝ 04.05.2018/:

¹² St' u Գալեև Կ. նշված աշխատությունը, <http://schools.keldysh.ru/labmro/lib/projects/galeevk.htm>, /Վերջին մուտք՝ 04.05.2018/:

¹³ St' u Cunningham F. նշված աշխատությունը, էջ 22:

համապատասխան նորմերն ու ինստիտուտները պետք է ձևավորվեն՝ նկատի ունենալով եսասեր վարքագծի առկայության անընդհատ հնարավորությունը, և վերջինս այնպես ուղղորդելով, որպեսզի այդ վարքագիծը շահավետ, այլ ոչ վնասակար դառնա հասարակության անդամների և հասարակական հարաբերությունների բնականոն զարգացման համար: Տնտեսական հարաբերություններում հիշյալ արդյունքը որոշակի առումով երաշխավորվում է նաև այն պատճառով, որ նրանք կառուցվում են ինքնակարգավորվող ու ինքնակազմակերպվող վարքագծի հիման վրա¹⁴:

Հիշյալ համատեքստում կարևորվում է նաև քաղաքական կուսակցությունների վարքագծի ընկալումն ու վերլուծությունը: Հարկ է նկատի ունենալ, որ կուսակցությունները բաղկացած են քաղաքական գործիչներից, ովքեր իշխանության են ձգտում ոչ թե նպաստավոր քաղաքականություն իրականացնելու, այլ «պաշտոն ունենալու հանգամանքից բխող շահ, հեղինակություն, իշխանություն ձեռք բերելու համար»: Այդ նպատակով էլ նրանք այլոց հետ միավորվում են քաղաքական կուսակցություններում՝ իշխանություն ձեռք բերելու համար պայքարելու նպատակով: Արդյունքում ակնհայտ է դառնում, որ ժողովրդավարական քաղաքական համակարգերում կուսակցությունները համարժեք են գործարարներին՝ տնտեսական հարաբերություններում: Հետևաբար, կուսակցությունները ձևավորում և իրականացնում են այնպիսի քաղաքականություն, որը, նրանց կարծիքով, կարող է առավել շատ ձայներ երաշխավորել, այնպես, ինչպես գործարարները արտադրում են այնպիսի արտադրանք, որը, նրանց կարծիքով, առավել

շատ շահույթ կբերի: Բնականաբար, պետական իշխանությունը պետք է որոշակի սոցիալական գործառույթներ իրականացնի, իսկ իշխող կուսակցությունը բավարար թվով ընտրողների պետք է բավարարված պահի՝ վերընտրվելու հանգամանքը երաշխավորելու նպատակով: Այլ կերպ՝ քննարկվող «փոխանակման հարաբերություններում» քաղաքացիները պետք է որևէ բան ստանան իրենց ձայների դիմաց: Սակայն այս օգուտները ընտրվելու և իշխանությունը պահելու մտիվացնող նպատակի սուսկ կողմնակի արդյունքն են, այնպես, ինչպես գնորդին համապատասխան որակի մեքենա տրամադրելն է մեքենա վաճառողների համար արդյունավետ վաճառք կազմակերպելու սուսկ կողմնակի արդյունք:

Այս ամենը գիտակցելով՝ կուսակցություններն իրենց գաղափարախոսությունը հրապարակում են գովազդներին բնորոշ ոճով: Քանզի կուսակցության նպատակն է ընդամենը ընտրվել, վերջիններիս առաջնորդները հոգ չեն տանում գաղափարախոսության ներքին արժեքի, նշանակության մասին, այլ ձևավորում են այնպիսի գաղափարախոսություն, որը, նրանց կարծիքով, կգրավի առավել մեծ թվով ընտրողների¹⁵:

Վերը շարադրվածը հաշվի առնելով՝ հանգում ենք այն եզրակացության, որ ժողովրդավարության թերությունները ու դրա հետևանքով հասարակական համակարգերում առաջացող ձևախեղումները գրեթե նույնանում են պետական ռեժիմի այլ ձևերի թերությունների և վերջիններիս համատեքստում առաջացող ձևախեղումների հետ: Օրինակ՝ որպես ոչ ժողովրդավարական քաղաքական ռեժիմի արտահայտություն դիտարկվող բացարձակ միապետության թերություններ են հան-

¹⁴ Տե՛ս u Cunningham F. նշված աշխատությունը, էջ 101-110:

¹⁵ Տե՛ս u Cunningham F. նշված աշխատությունը, էջ 101-110:

դիսանում մեկ անձի կամքից ու որակներից ամբողջ պետության ճակատագրի կախվածությունը, գահաժառանգության հարցի շուրջ առաջացող կոնֆլիկտները, այն, որ ժողովրդի դժգոհությունը հաղթահարելու հիմնական միջոցը դառնում է իշխանության տապալումը, ինչը կարող է վերաճել քաղաքացիական պատերազմի և այլն¹⁶: Ակնհայտ է, որ հետևանքային տեսանկյունից քննարկվող թերությունները գրեթե նույնանում են ժողովրդավարության թերությունների ու ժողովրդավարական հասարակական համակարգերի ձևախեղումների հետ: Ավելին՝ այդ հանգամանքը նկատի ունենալով՝ գրականության մեջ տեսակետ է արտահայտվում, որ իրականում ստացվում է այնպես, որ ժողովրդավարության գաղափարը, որն ամեն ինչ կարող է նշանակել, բացարձակ ոչինչ էլ չի նշանակում¹⁷:

Կարծում ենք, որ ժողովրդավարության գաղափարն անբովանդակ հասկացության կարելի է վերածել և պետական ռեժիմի այլ տարատեսակներին բնորոշ նույն խնդրահարույց իրավիճակներին կարելի է հանգել մի դեպքում՝ ժողովրդավարությունը սոսկ որպես իշխանությունը ժողովրդին պատկանելու հատկանիշով օժտված պետական ռեժիմ դիտարկելու պարագայում:

Հետևաբար գտնում ենք, որ ժողովրդավարության էության առնչությամբ առկա ընկալումներն ու դոկտրինալ մոտեցումներն ունեն վերախմաստավորման անհրաժեշտություն: Ավելին՝ ժողովրդավարության էության պատշաճ ընկալման համար միայն վերը ներկայացված համընդհանուր ճանաչում

գտած բնորոշման վկայակոչումը բավարար չէ, և հիշյալ համատեքստում անհրաժեշտ է հաշվի առնել մի քանի կարևոր հանգամանք ևս:

Այդ առումով ելակետային նշանակություն ունի այն, որ, մեր կարծիքով, ժողովրդին որպես իշխանության աղբյուր ճանաչելու մոտեցումն ինքնանպատակ չէ և վերջինս որպես այդպիսին երբևէ չի կարող ընկալվել: Ավելին, կարծում ենք, որ այդ մոտեցումը որդեգրելու պատճառները բնական են և հիմնված են մարդու բնույթն ու հասարակության ձևավորման առանձնահատկությունները հաշվի առնելու հանգամանքի վրա: Այդ տեսանկյունից ակնհայտ է, որ ցանկացած հասարակական-քաղաքական կազմավորում էլ ձևավորվում է առաջին հերթին անհատի պահանջմունքները բավարարելու և մարդու՝ որպես տեսակի գոյությունը պահպանելու համար: Հետևաբար, ակնհայտ է նաև, որ հիշյալ նպատակին հասնելու լավագույն միջոցը կարող է լինել մարդկանց, ժողովրդին իշխանության աղբյուր ճանաչելը:

Այդ հանգամանքն իր հերթին ենթադրում է, որ ժողովրդավարության դոկտրինն ինքնին պետք է կառուցված լինի այն տրամաբանությամբ, որ վերջինիս առանցքում մարդն է, ում համար երաշխավորված են ինքնարտահայտման ու ինքնադրսևորման հնարավորություններն ու անհատի արժևորման պահանջի իրացումը: Կարծում ենք, որ վերը նշված հանգամանքը հանդիսանում է ժողովրդավարության էությունը, հիմնական իդեալը, նպատակը, վերջինիս ելակետային հատկանիշն ու տարբերակիչ առանձնահատկությունը հասարակության պետականքաղաքական կառուցվածքի այլ ձևերից: Հետևաբար, ժողովրդավարությունն ինքնին ինքնանպատակ

¹⁶ Ст'ю Галеєв К. նշված աշխատությունը, <http://schools.keldysh.ru/labmro/lib/projects/galeevk.htm>, /Վերջին մուտք՝ 04.05.2018/:

¹⁷ Ст'ю Concepts and Principles of Democratic Governance and Accountability. Edited by Mathias Kamp, 2011, էջ 10:

չէ, և վերջինիս արժեքը ոչ թե գուտ իշխանությունը ժողովրդին պատկանելու հանգամանքի մեջ է, այլ վերը նշված նպատակի փաստացի իրականացման¹⁸:

Ամփոփելով վերը շարադրվածը՝ հանգում ենք այն եզրակացության, որ ժողովրդավարության առկայությունը պայմանավորված է նրանով, թե որքանով է գոյություն ունեցող իրականության շրջանակներում իրականացվել քննարկվող նպատակը: Դա իր հերթին ենթադրում է, որ պետական ռեժիմի հիշյալ ձևի առնչությամբ ներկայացվող բոլոր այլ հատկանիշները բխում են վերը նշված առանձնահատկությունից, ուղղված են հենց այդ նպատակի իրականացմանը, ինչը ենթադրում է, որ հասարակական կյանքի և դրա ընկալմանն առնչվող տարատեսակ զարգացումներով պայմանավորված՝ ժամանակի ընթացքում կարող են փոփոխվել:

Հիշյալ համատեքստում հարկ ենք համարում հավելել նաև, որ 2015թ. խմբագրությամբ ՀՀ Սահմանադրությունը, ի տարբերություն 2005թ. խմբագրությամբ սահմանադրական կարգավորումների, համաձայն որոնց՝ **պետությունը** սահմանափակված էր մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող

¹⁸ Հիշյալ համատեքստում հիշատակման է արժանի գրականության մեջ արտահայտված այն տեսակետը, որ Սահմանադրությունը պարզապես բռնապետությունը կանխելուն ուղղված գործիք չէ: Այն ունի մի շարք այլ գործառույթներ ևս: Սահմանադրությունը, մասնավորապես, ոչ միայն սահմանափակում է իշխանությունը և կանխում բռնապետությունը, այլ նաև ձևավորում և ուղղորդում է իշխանությունը և կանխում անարխիան (տե՛ս Responding to Imperfection – The Theory and Practice of Constitutional Amendment / edited by Levinson S. Princeton, NJ: Princeton University Press, 1995, էջ 302-303):

իրավունք¹⁹, մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով սահմանափակված լինելու պահանջը սահմանում է **հանրային իշխանության** համար²⁰: Կարծում ենք, որ հիշյալ փոփոխությունն ունի կոնցեպտուալ բնույթ և առանցքային առումով վերափոխում է քննարկվող երևույթի էությունը: Դա ընդգծվում է առաջին հերթին այն տեսանկյունից, որ հիշյալ համատեքստում մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով սահմանափակված լինելու պահանջը տարածվում է նաև ժողովրդի իշխանության վրա՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ հանրային իշխանության գաղափարն ընդգրկում է ոչ միայն պետական, այլ նաև ժողովրդի իշխանությունը²¹: Հետևաբար, ժողովրդի իշխանությունն ու դրա իրականացումը ևս չեն կարող դիտարկվել որպես ինքնանպատակ և բոլոր դեպքերում սահմանափակված են մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով ու ազատություններով²²:

Ամփոփելով վերը շարադրվածը՝ նշենք, որ, մեր կարծի-

¹⁹ 2005թ. նոյեմբերի 27-ի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդված:

²⁰ 2015թ. դեկտեմբերի 6-ի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդված:

²¹ Հանրային իշխանությունը բաղկացած է հետևյալ երեք կառուցվածքային տարրերից՝ ժողովրդի իշխանություն, պետական իշխանություն, տեղական ինքնակառավարման իշխանություն (տե՛ս Авакьян С. Публичная власть: конституционно-правовые аспекты // Вестник Тюменского государственного университета. 2009. N 2, էջ 6):

²² Հիշյալ համատեքստում հետաքրքիր է Վրաստանի Հանրապետության օրինակը: Վերջինիս Սահմանադրության 7-րդ հոդվածը սահմանում է, որ **ժողովուրդը և պետությունը** սահմանափակված են մարդու և քաղաքացու՝ համընդհանուր ճանաչում ունեցող իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք (http://www.constcourt.ge/en/court/legislation/ constitution.page, /Վերջին մուտք՝ 04.05.2018/):

քով, ժողովրդավարության համար առանցքային հատկանիշն այն է, որ վերջինիս պարագայում իշխանության աղբյուրը ժողովուրդն է, իշխանությունն իրականացվում է ժողովրդի կողմից և ժողովրդի համար՝ հիմքում ունենալով մարդուն՝ որպես բարձրագույն արժեք և նպատակ ունենալով անհատի համար երաշխավորել ինքնարտահայտման ու ինքնադրսևորման հնարավորություններն ու վերջինիս արժևորման պահանջի իրացումը²³:

Վերը շարադրվածի արդյունքում հանգում ենք նաև ստորև ներկայացվող մի քանի կարևոր եզրահանգումների.

Ակնհայտ է, որ ժողովրդաիշխանության համակարգին բնորոշ թերությունների արդյունքում առաջացող հասարակական համակարգերի ձևախեղումները հանգեցրել են այնպիսի իրավիճակի, երբ այն նպատակը, որի համար ստեղծվել է ժողովրդավարությունը՝ որպես գաղափար, իդեա, ևս ձևախեղվում է: Ավելին, այսպես կոչված ժողովրդաիշխանությանը բնորոշ ինստիտուտները շատ հաճախ սկսում են ծառայել նշված նպատակին հակառակ:

Հետևաբար, հիմնական եզրահանգումը հիշյալ համատեքստում պետք է այն լինի, որ հասարակական հարաբերությունների կանոնակարգման նպատակով ստեղծվող տարատեսակ ինստիտուտները իրենց իրացման ընթացքում

²³ Հիշյալ համատեքստում ուշադրության է արժանի առանձին հեղինակների կողմից արտահայտված այն տեսակետը, որ «բարոյական» տեսանկյունից ժողովրդավարության էությունը հասարակության յուրաքանչյուր կոնկրետ անդամի համար բոլոր սոցիալական հնարավորությունների զարգացման մեջ է, իսկ ժողովրդավարության «հիմնական չափանիշը» անհատներին հավասար արդյունավետ իրավունքի տրամադրումն է՝ ապրել այնքան ամբողջական, որքան նրանք կարող են ցանկանալ (տե՛ս Cunningham F. ևշված աշխատությունը, էջ 149):

պետք է ծառայեն սոսկ այն նպատակներին, որի համար ստեղծվել են: Հակառակ պարագայում, անկախ տարատեսակ ձևական պահանջների պահպանման հանգամանքից, ձևախեղվում է հենց ինստիտուտի էությունը, ինչն իր հերթին անիմաստ է դարձնում վերջինիս գոյության անհրաժեշտությունը:

Հաջորդ կարևորագույն եզրահանգումը հիշյալ համատեքստում այն է, որ վերը նշված նպատակները կենսագործելու և թվարկված թերություններից խուսափելու համար անհրաժեշտ է համարժեք քաղաքական ու սահմանադրական մշակույթ: Հետևաբար, ժողովրդավարությանը բնորոշ հատկանիշների առկայությունը հնարավոր է երաշխավորել սոսկ մինչժողովրդավարական համարժեք քաղաքական ու սահմանադրական մշակույթի առկայության պայմաններում: Այլ կերպ՝ ժողովրդավարությունը պետությանն ու հասարակությանն ի սկզբանե պատկանող բնութագրիչ չէ, և կարող է ձեռք բերվել սոսկ հասարակական զարգացման որոշակի փուլում: Ավելին, ակնհայտ է, որ նույնիսկ հիշյալ նպատակի իրականացման և ժողովրդավարության առկայության պարագայում վերջինս պարբերաբար հանգելու է հասարակական համակարգերի վերը թվարկված ձևախեղումներին, արդյունքում՝ ժողովրդավարության՝ որպես պետության սահմանադրաիրավական բնութագրիչի բացակայության: Հետևաբար, կարծում ենք, որ ժողովրդավարական պետության կայացման գործընթացն անընդհատ շրջափուլ է՝ մինչժողովրդավարական հասարակական համակարգից անցում ժողովրդավարականին և հակառակը: Ընդ որում՝ ժողովրդավարական հասարակական համակարգին նախորդող և հաջորդող ամբողջ ժամանակահատվածում ընթանում է համարժեք սահմանադրական ու քա-

ղաքական մշակույթի ձևավորման գործընթացը: Այդ է պատճառը, որ որոշ հեղինակների կարծիքով, ժողովրդավարությունն անհրաժեշտ է դիտարկել ոչ միայն որպես վիճակ, այլ նաև որպես գործընթաց, և այդ առումով «ժողովրդավարություն» և «ժողովրդավարացում» եզրույթներն անհրաժեշտ է ընկալել որպես հոմանիշներ²⁴:

Հետևաբար, հետաքրքրականը հիշյալ համատեքստում այն է հանդիսանում, որ հենց պետական ռեժիմի այլ ձևերի ու դրանց բնորոշ երևույթների առկայությունն է դառնում միջանկյալ կառուցակարգ ժողովրդավարական հասարակական համակարգ և մշակույթ ձևավորելու համար: Ընդ որում՝ ներկայացված վերլուծությունից կարելի է եզրահանգել, որ դրանից խուսափելն, ըստ էության, անհնար է:

Վերը շարադրվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ ժողովրդավարության տեսությունն ինքնին ոչ այլ ինչ է, քան սուսկ հասարակական համակարգերի ներդաշնակ գոյության համար անհրաժեշտ առանցքային հանգամանքի, այն է՝ մարդու՝ որպես բարձրագույն արժեք հանդիսանալու, անհատի համար ինքնարտահայտման ու ինքնադրսևորման հնարավորություններն ու վերջինիս արժևորման պահանջի իրացումը երաշխավորելու նպատակին ուղղված միջոց: Ընդ որում՝ ինչպես արդեն նշվեց, ժողովրդին որպես իշխանության աղբյուր ճանաչելու մոտեցումն ինքնանպատակ չէ, այդ մոտեցումը որդեգրելու պատճառները բնական են և հիմնված են մարդու բնույթն ու հասարակության ձևավորման առանձնահատկությունները հաշվի առնելու հանգամանքի վրա: Թեև արդեն

ընդգծվեց այն հանգամանքը, որ ժողովրդաիշխանության հետևանքով առաջացող հասարակական համակարգերի ձևախեղումները գրեթե նույնանում են պետական ռեժիմի այլ ձևերին բնորոշ թերությունների հետ²⁵, սակայն միևնույն ժամանակ ակնհայտ է, որ ցանկացած հասարակական-քաղաքական կազմավորում էլ ձևավորվում է առաջին հերթին անհատի պահանջմունքները բավարարելու և մարդու՝ որպես տեսակի գոյությունը պահպանելու համար: Հետևաբար, ակնհայտ է, որ հիշյալ նպատակին հասնելու լավագույն միջոցը անհատների համար կարող է լինել հենց իրենց՝ իշխանության աղբյուր ճանաչելը: Արդյունքում հանգում ենք այն հետևության, որ ժողովրդին իշխանության աղբյուր ճանաչելն ինքնանպատակ չէ, սուսկ մարդու անձնային և սոցիալական առանձնահատկությունների տեսանկյունից առավել ընդունելի միջոց է հասարակական համակարգերի առանցքային նպատակին հասնելու համար: Վերը շարադրվածի արդյունքում ակնհայտ է դառնում նաև, որ ***ժողովրդավարության առկայության մասին կարելի է խոսել սուսկ այն իրավիճակում, երբ յուրաքանչյուր կոնկրետ***

²⁵ Այդ առումով տեղին է հիշատակել Արիստոտելի այն տեսակետը, որ մեծամասնությունը կարող է ձևավորել լավ իշխողներ ոչ թե այն պատճառով, որ անհատապես ամեն սովորական անհատ իմաստուն է, այլ բազմաթիվ անհատների համադրված հմտությունների և գիտելիքների շնորհիվ, այլ կերպ՝ վերջինս առաջ է քաշում քանակական իմաստության գաղափարը: Հիշյալ համատեքստում հիշատակման է արժանի նաև Կոնդորսեի «ժյուրիի թեորեմը», համաձայն որի՝ եթե ենթադրենք, որ կա որևէ կոնկրետ որոշում, որն օբյեկտիվորեն լավագույնն է հասարակության համար, և հասարակության անդամներից յուրաքանչյուրն ունի վերջինս ընտրելու 50 տոկոսից ավելի հնարավորություն, ապա որքան մեծ է կոնկրետ տարբերակի համար տրված ձայների մեծամասնությունը, այնքան առավել հավանական է, որ դա լավագույն որոշումն է, որի համար կարելի էր քվեարկել (տե՛ս Cunningham F. նշված աշխատությունը, էջ 154):

²⁴ Տե՛ս Բարանով Н. Исторический обзор развития демократии, http://nicbar.ru/theoria_democracy1.htm, /Վերջին մուտք՝ 04.05.2018/:

անհատ զգա, որ կոնկրետ հասարակական համակարգում մարդն է բարձրագույն արժեք, և իր համար երաշխավորված են ինքնարտահայտման ու ինքնադրսևորման հնարավորություններն ու իր՝ որպես անհատի արժևորման պահանջի իրացումը:

Ավելին, իշխանությունը ժողովրդին հանձնելը կարող է ծառայել հասարակական համակարգերի ներկայացված նպատակին սուկ սահմանադրական ու քաղաքական մշակույթի համարժեք մակարդակի առկայության դեպքում և որոշակի առումով հանդիսանում է հենց այդպիսի մշակույթի առկայության արդյունք:

Հավելենք նաև, որ սահմանադրական ու քաղաքական հիշատակված մշակույթի առկայությունը հնարավոր է սուկ մի դեպքում, երբ ինչպես անհատների անհատական վարքագծի, այնպես էլ իշխանության ու քաղաքական գործիչների քաղաքական վարքագծի հիմքում ընկած լինի «ողջամիտ ինքնասահմանափակման» սկզբունքը, այն տրամաբանությունը, որ մարդը պետք է լինի բարձրագույն արժեք, ում համար պետք է երաշխավորված լինեն ինքնարտահայտման ու ինքնադրսևորման հնարավորություններն ու անհատի արժևորման պահանջի իրացումը, հետևաբար, յուրաքանչյուրի վարքագիծը պետք է սահմանափակված լինի հենց այդ հանգամանքով: «Ողջամիտ ինքնասահմանափակման» սկզբունքի էությունը հիշյալ համատեքստում կայանում է նրանում, որ իշխանության կրողն ինքն առաջին հերթին պետք է իրեն սահմանափակի քննարկվող հանգամանքներով, անհատն ինքը պետք է գիտակցի, որ, թեև ինքը բարձրագույն արժեք է, իր համար պետք է երաշխավորված լինեն ինքնարտահայտման ու ինք-

նադրսևորման հնարավորություններն ու իր արժևորման պահանջի իրացումը, հանրային իշխանության այլ կրողներն էլ պետք է սահմանափակված լինեն իր հիմնական իրավունքներով և ազատություններով, տվյալ պարագայում առանցքային է այն, որ մինևույն ժամանակ նույնը բնորոշ է նաև այլ անհատներին, հանրային իշխանության այլ կրողներին: Հետևաբար, շարադրված հանգամանքների իրացումն ու դրանով պայմանավորված՝ համարժեք սահմանադրական և քաղաքական մշակույթի առկայությունը հնարավոր է առաջին հերթին յուրաքանչյուրի կողմից նշված հանգամանքների ընկալման, հարգման և դրանցով փաստացի ինքնասահմանափակված լինելու իրավիճակում:

Այս ամենի իրացումն էլ, կարծում ենք, հնարավոր է իշխանություն իրականացնող ցանկացած սուբյեկտի վարքագծի վրա տնտեսական մոդելի տարածման դեպքում: Այդ համատեքստում անհատի համար համարժեք վարքագծի դրսևորման նպատակ է դառնում այն, որ վերջինս փաստացի լինի բարձրագույն արժեք, իր համար փաստացի երաշխավորված լինեն ինքնարտահայտման ու ինքնադրսևորման հնարավորություններն ու վերջինիս արժևորման պահանջի իրացումը, հանրային իշխանությունն էլ սահմանափակված լինի մարդու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք: Համանմանորեն, կուսակցությունների ու քաղաքական գործիչների համար որպես համապատասխան վարքագիծ դրսևորելու նպատակային արդյունք կարող է դառնալ իշխանություն ձեռք բերելը և այլն:

§ 2. Էլիտիզմի գաղափարը և դրա դերը ժողովրդաիշխանության արդյունավետ իրացման գործում

Հիշյալ համատեքստում հարկ ենք համարում անդրադառնալ նաև այն հանգամանքին, որ բացի ժողովրդավարության դասական «մեծամասնության» տեսությունից, առկա են ժողովրդավարության նաև այլ տեսություններ, որոնք մի շարք առանցքային հարցերում կոնցեպտուալ առումով տարբերվում են առաջինից:

Հարկ է նկատի ունենալ, որ դրանք ևս, օրինակ՝ պլուրալիստական, խորհրդակցական և այլ տեսությունները, առաջարկում են հասարակական համակարգերում առաջացող ձևախեղումները հաղթահարելու տարատեսակ եղանակներ: Սակայն, մեր կարծիքով, հատկանշականը հիշյալ համատեքստում այն է, որ դրանցից որևէ մեկը չի կարող հաղթահարել վերոհիշյալ թերությունների առաջացման հիմնական պատճառը՝ մարդու անձնային ու սոցիալական առանձնահատկությունները, մասնավորապես, վերջինիս եսասեր լինելու հանգամանքը, ինչի արդյունքում են առաջանում նշված հիմնական ձևախեղումները:

Միևնույն ժամանակ, հիշյալ համատեքստում կարևոր ենք համարում ժողովրդավարության տեսություններից մեկի՝ «Էլիտար ժողովրդավարության» տեսության առանցքային առանձնահատկությունների բացահայտումն ու վերլուծությունը:

Ժողովրդավարության էլիտար տեսության հիմնադիրը Յոզեֆ Շումպետերն է, որը պնդում էր, որ ժողովրդավարու-

յունը չի նշանակում, որ ժողովուրդն անմիջականորեն կառավարում է: Ժողովրդավարությունն ընդամենը նշանակում է, որ ժողովուրդը հնարավորություն ունի ընդունելու կամ չընդունելու այն անձանց, որոնք նրան պետք է կառավարեն: Այս մեթոդի ժողովրդականությունը պայմանավորված է նրանով, որ առաջնորդների թեկնածուները ընտրողների ձայները ստանալու համար ազատ մրցակցության հնարավորություն ունեն:

Ժողովրդավարության էլիտար մոդելի կողմնակիցները հասարակությունը տարանջատում են կառավարող փոքրամասնության (էլիտա) և չկառավարող մեծամասնության (մասսա): Մասսան չի հետաքրքրվում քաղաքականությամբ, չի տիրապետում բավարար գիտելիքների և ամբողջական տեղեկատվության, չի կարողանում ճիշտ որոշումներ կայացնել, ինչի պատճառով էլ ինքնակամ էլիտային է փոխանցում քաղաքական գործընթացները ղեկավարելու իրավունքը: Քանի որ քաղաքացիների մեծամասնությունը իրացնում է, կոմպետենտ չէ և ունի անկայուն նախապատվություններ, մասսայի քաղաքական մասնակցությունը սահմանափակվում է ընտրություններով²⁶: Ավելին, Դ. Ս. Միլի կարծիքով, քաղաքացիների մեծամասնությանը բնորոշ հիշյալ խնդիրները լուծելու հիմնական տարբերակը իշխանությունը կրթված անձանց փոխանցելն է՝ առաջնորդների և քաղաքականության մտածված ընտրությունը երաշխավորելու համար, միևնույն ժամանակ խրախուսելով ընդհանուր առմամբ ժողովրդի մասնակցային ժողովրդավարությունը՝ վերջիններիս ինտելեկտի ինքնակառա-

²⁶ Տե՛ս Բարանով Կ.Ս. Современная демократия: эволюционный подход, 2008, <http://textbooks.studio/uchebnik-teoriya-politiki/elitarnaya-model-demokrati-23148.html>, /վերջին մուտք՝ 04.05.2018/:

վարման վերաբերյալ պրակտիկ գիտելիքներ փոխանցելու միջոցով: Ավելին, Միլի կարծիքով, անհրաժեշտ է զարգացնել «քաղաքական բարոյականություն», որը ներկայացուցիչներին կտա լայն հայեցողություն՝ գործելու այնպես, ինչպես նրանք կարծում են, համապատասխան կլինի իրենց ընտրողների լավագույն շահերին: Միննույն ժամանակ, հիշյալ համատեքստում առանքային է դառնում քաղաքական ներկայացուցիչների համար հստակ սահմանների նախատեսումը: Որպես սահմանների նման հստակեցման չափանիշ առաջարկվում է այն, որ ներկայացուցիչները ազատ լինեն հայեցողություն իրականացնելու հարցում, սակայն դա իրականացնեն՝ իրենց ընտրողների շահերից ելնելով, որոնք ևս ընկալվում են որպես ինքնուրույն որոշում կայացնելու ընդունակ սուբյեկտներ և ոչ որպես ներկայացուցիչների վրա դրված պատասխանատվություն, որի մասին պետք է հոգ տանել²⁷:

Վերը շարադրվածի առումով հարկ ենք համարում նկատել, որ համաձայն լինելով մասնագիտացված կառավարման անհրաժեշտությանն ու միանշանակ ընդգծելով դրա կարևորությանը հասարակական համակարգերի հիմնական նպատակն իրացնելու տեսանկյունից, միննույն ժամանակ ծայրահեղ ենք համարում էլիտար ժողովրդավարության կողմնակիցների առանցքային մոտեցումն առ այն, որ ժողովրդի իշխանությունը բոլոր դեպքերում պետք է սահմանափակվի սոսկ իրեն կառավարողներին ընդունելու կամ չընդունելու հնարավորությամբ: Նման լուծումը չի հաղթահարում մարդու անձնային բնութագրից բխող մեր կողմից արդեն իսկ վերը քննարկված խնդիրները, ինչի արդյունքում չի վերանում հա-

սարակական համակարգերի ձևախեղումների արդեն իսկ վերը ներկայացված վտանգը:

Հետևաբար, հիշյալ համատեքստում հիմնական եզրահանգումը հետևյալն է՝ ժողովրդավարության ինչպես մեծամասնության, այնպես էլ էլիտար տեսությունների առանցքը կազմող ծայրահեղ մոտեցումները հնարավորություն չեն տալիս հաղթահարելու հասարակական համակարգերում առաջացող ձևախեղումները: Միննույն ժամանակ, դրանցից յուրաքանչյուրն առաջարկում է առանցքային նշանակություն ունեցող առանձին տեսակետներ, որոնք բացառիկ կարևորություն ունեն ժողովրդավարության տեսությունը ամբողջականացնելու տեսանկյունից: Հետևաբար, կարծում ենք, որ հասարակական հարաբերությունների կարգավորման և հասարակական համակարգերի զարգացման առումով արդյունավետ լուծումներ կարելի է գտնել սոսկ վերջիններիս զուգակցման պարագայում, և հենց այդ հանգամանքը պետք է ընկած լինի ժողովրդավարության դոկտրինի էության հիմքում:

Մասնավորապես, ինչպես արդեն նշել ենք, մեծամասնության իշխանության իրականացման հիմքում պետք է լինի մարդը՝ որպես բարձրագույն արժեք, այդ իշխանության նպատակը պետք է լինի անհատի համար ինքնարտահայտման ու ինքնադրսևորման հնարավորությունների երաշխավորումն ու վերջինիս արժևորման պահանջի իրացումը, որպիսի հանգամանքներով էլ, ինչպես նաև մարդու հիմնական իրավունքներով և ազատություններով պետք է սահմանափակված լինի մեծամասնության իշխանությունը:

Միննույն ժամանակ, առաջացող տարատեսակ խնդիրներին համարժեք լուծումներ գտնելու, կառավարման համա-

²⁷ Տե՛ս u Cunningham F. նշված աշխատությունը, էջ 92-93:

կարգի արդյունավետությունը բարձրացնելու առումով բացառիկ կարևորություն ունի էլիտար ժողովրդավարության կողմից առաջարկվող *մասնագիտացված* կառավարման գաղափարը, և մեր կարծիքով, այն ևս պետք է ընկած լինի ժողովրդավարության տեսության հիմքում:

Այդ առումով տեղին է հիշատակել, որ թեև ներկայացուցչական տարրը ժողովրդավարության ժամանակակից դոկտրինի պարտադիր առանձնահատկություններից է և փիլիսոփաների կողմից դիտարկվել է որպես նոր ձև և որակ ձեռք բերելու՝ ժողովրդավարությանը տրված հնարավորություն, սակայն վերջինիս առանցքը պետք է լինի ոչ թե գուտ իշխանության իրականացումը պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց կողմից, այլ վերջիններիս կողմից իշխանության՝ *մասնագիտացված* ձևաչափով իրականացումը: Այդ տեսանկյունից կարևոր է, որ իշխանություն իրականացնող անձանց համար իշխանություն ձեռք բերելը չպետք է լինի ինքնանպատակ, նրանք պետք է օժտված լինեն բարձր պրոֆեսիոնալիզմով՝ անկախ նրանից՝ իրականացնում են իշխանական լիազորություններ, թե ոչ, իսկ այդ լիազորությունների իրականացման հիմքում պետք է լինի մարդը՝ որպես բարձրագույն արժեք, իշխանության նպատակը պետք է լինի անհատի համար ինքնարտահայտման ու ինքնադրսևորման հնարավորությունների երաշխավորումն ու վերջինիս արժևորման պահանջի իրացումը, որպիսի հանգամանքներով էլ, ինչպես նաև մարդու հիմնական իրավունքներով և ազատություններով պետք է սահմանափակված լինի նաև նշված իշխանությունը: Սոսկ այդ հանգամանքը կարող է հաղթահարել որոշ տեսաբանների այն մտավախությունը, որ

ներկայացուցչության տարրերի ներմուծումը հանգեցրել է մի շարք ներքին բարդությունների առաջացման, մասնավորապես, այդ ինստիտուտները այնքան են իշխանությունը հեռացրել դեմոսից, որ լիովին տեղին է քննադատների այն հարցը, թե որքանո՞վ է իրավաչափ նոր համակարգը անվանել ժողովրդավարություն²⁸:

Վերը շարադրվածի առումով հարկ ենք համարում անդրադառնալ կառավարող էլիտայի ձևավորման և վերափոխման առնչությամբ գրականության մեջ առկա առանցքային գաղափարներին: Քաղաքագիտության տեսության մեջ հիշյալ հիմնախնդրի առնչությամբ ներկայացվում է երկու հիմնական մոտեցում՝ էլիտիզմ և էլիտարիզմ: Էլիտիզմի էությունն այն է, որ իշխանություն իրականացնողների ընտրությունն իրականացվում է մերիտոկրատական սկզբունքի (բառացի՝ «արժանիների իշխանություն», լատ.՝ *meritus* — արժանի, հուն.՝ κρᾶτος — իշխանություն, կառավարում) հիման վրա: Վերջինիս էությունը լավագույն մասնագետների ընտրության մեջ է, այնպիսի անձանց, որոնք առավել կոմպետենտ են քաղաքական գործընթացների կառավարման և ղեկավարման բնագավառում: Այսպիսի մոտեցման արդյունքում էլիտան ձևավորվում է բաց մրցակցության հիման վրա՝ լավագույն մասնագետների ու կառավարողների ընտրության միջոցով, և նրանց կողմից իշխանական լիազորությունների իրականացումը ընկալվում է որպես կառավարչական աշխատանքի բաժանման գործառույթ, և ոչ կարիերային նկրտումների հիմնական նպատակ: Նշված իրավիճակում իշխանական գործառույթները

²⁸ Sté u Баранов Н. Исторический обзор развития демократии, http://nicbar.ru/theoria_democracy1.htm, /Վերջին մուտք 04.05.2018/:

պատկանում են հասարակության առավել պատրաստված և տաղանդավոր ներկայացուցիչներին, ում համար իշխանությունն ձեռք բերելն ինքնանպատակ չէ: Ավելին՝ նրանք օժտված են բարձր պրոֆեսիոնալիզմով՝ անկախ նրանից՝ իրականացնում են իշխանական լիազորություններ, թե ոչ:

Ի տարբերություն վերը շարադրվածի՝ էլիտարիզմը ելնում է էլիտան մասաներից առանձնացնելու գաղափարից, ինչի արդյունքում էլիտան դիտարկվում է որպես փակ խավ: Տվյալ պարագայում էլիտայի ձևավորումն իրականացվում է մրցակցությունը բացառող եղանակներով՝ ժառանգման, դասային արտոնությունների, կուսակցական կամ նումենկլատուրային պատկանելության միջոցով և այլն: Էլիտայի ներկայացուցիչների համար իշխանության ռեսուրսները մատչելի են դառնում՝ անկախ իրենց ունակություններից և կառավարման հմտություններից: Նրանք իշխանական գործառույթների կրող են դառնում կառավարող էլիտային իրենց պատկանելության շնորհիվ: Իշխանությունն ձեռք բերելը դառնում է նրանց քաղաքական գործունեության էությունը և հիմնական նպատակը, իսկ կառավարման հիերարխիայում իշխող դիրքեր զբաղեցնելը թելադրված է լինում սուկ սուբյեկտիվ շարժառիթներով (առաջին հերթին՝ փառամոլության և ամբիցիաները բավարարելու), և ոչ հասարակության, պետության, գործի շահերից ելնելով: Էլիտայի ձևավորման նման մոդելն առաջացնում է ոչ կոմպետենտ, միայն կարիերայի նպատակ հետապնդող կառավարիչներից բաղկացած իշխող խումբ, ովքեր իրենց գործունեության մեջ ծրագրավորված են երկրի կառավարման համակարգում իրենց կորպորատիվ գերակայությունը որքան հնարավոր է երկար պահպանելու նպատակով:

Հիշյալ համատեքստում հիշատակման է արժանի նաև այն, որ մենեջմենթի տեսությունում հայտնի է քաղաքական կառավարման բնագավառում առավել պահանջված երկու որակների հակադրում՝ լոյալության և կոմպետենտության: Արդյունքում՝ ցանկացած առաջնորդ կանգնում է երկընտրանքի առաջ. միայն իր նկատմամբ լոյալություն ունեցող թեկնածուներ ընտրելու դեպքում համակարգը անարդյունավետ է դառնում, իսկ կոմպետենտ թեկնածուներ ընտրելու դեպքում գալիս են բարձր պրոֆեսիոնալիզմ ունեցող և տաղանդավոր անձինք, ինչի արդյունքում ղեկավարի՝ որպես կառավարչի հեղինակությունը կարող է վտանգի ենթարկվել²⁹:

Ներկայացվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ նման իրավիճակներում անխուսափելի է դառնում մեր կողմից արդեն իսկ քննարկված՝ «կարգախոսների ստրուկտուրայից» և «միջակ առաջնորդներից» բաղկացած իշխող խմբի ձևավորումը, որը որևէ առնչություն չունի ժողովրդի իշխանությունն արդյունավետ իրականացնելու և ժողովրդավարության նպատակներին հասնելու գաղափարների հետ:

Հաշվի առնելով վերը շարադրվածը՝ հանգում ենք այն եզրակացության, որ ժողովրդավարության՝ մեր կողմից քննարկվող նպատակին հասնելու համար անհրաժեշտ է էլիտիզմի գաղափարի հիման վրա իշխանության ներկայացուցիչների ընտրություն՝ կոմպետենտության ու պրոֆեսիոնալիզմի հատկանիշները հիմքում ունենալով:

²⁹ St' u Krasnoluzckij G. N. Politicheskaya альтернатива России: элитизм или элитаризм? // Управленческое консультирование. 2011. № 1, էջ 89-92:

Ամփոփելով վերը շարադրվածը՝ նշենք, որ ժողովրդավարության համար առանցքային հատկանիշն այն է, որ վերջինիս պարագայում իշխանության աղբյուրը ժողովուրդն է, իշխանությունն իրականացվում է ժողովրդի կողմից և ժողովրդի համար՝ հիմքում ունենալով մարդուն՝ որպես բարձրագույն արժեք և նպատակ ունենալով անհատի համար երաշխավորել ինքնարտահայտման ու ինքնադրսևորման հնարավորություններն ու վերջինիս արժևորման պահանջի իրացումը:

Ավելին, թեև ներկայացուցչական տարրը ժողովրդավարության ժամանակակից դոկտրինի պարտադիր առանձնահատկություններից է, սակայն վերջինիս առանցքը պետք է լինի ոչ թե գուտ իշխանության իրականացումը պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց կողմից, այլ վերջիններիս կողմից իշխանության՝ *մասնագիտացված* ձևաչափով իրականացումը: Այդ տեսանկյունից կարևոր է, որ իշխանություն իրականացնող անձանց համար իշխանություն ձեռք բերելը չպետք է լինի ինքնանպատակ, նրանք պետք է օժտված լինեն բարձր պրոֆեսիոնալիզմով՝ անկախ նրանից՝ իրականացնում են իշխանական լիազորություններ, թե ոչ, իսկ այդ լիազորությունների իրականացման հիմքում պետք է լինի մարդը՝ որպես բարձրագույն արժեք, իշխանության նպատակը պետք է լինի անհատի համար ինքնարտահայտման ու ինքնադրսևորման հնարավորությունների երաշխավորումն ու վերջինիս արժևորման պահանջի իրացումը, որպիսի հանգամանքներով էլ, ինչպես նաև մարդու հիմնական իրավունքներով և ազատություններով պետք է սահմանափակված լինի նաև նշված իշխանությունը:

Հետևաբար, թեև ժողովրդավարության առանցքը կազմող հատկանիշները ժամանակի ընթացքում կարող են փոփոխվել, սակայն հասարակական համակարգը ժողովրդավարական բնութագրելու համար անհրաժեշտ է, որպեսզի անփոփոխ մնա վերջինիս առանցքային առանձնահատկությունը՝ այն, որ իշխանության իրականացումը ինքնանպատակ չէ, դրա հիմքում մարդն է՝ որպես բարձրագույն արժեք, իշխանության նպատակն էլ անհատի համար ինքնարտահայտման ու ինքնադրսևորման հնարավորությունների երաշխավորումն ու վերջինիս արժևորման պահանջի իրացումն է: Նշված նպատակի ձևախեղումը կարող է հանգեցնել հենց ինստիտուտի էության ձևախեղման, ինչն իր հերթին ընդհանրապես անիմաստ կդարձնի վերջինիս գոյության անհրաժեշտությունը:

ԳԼՈՒԽ 2.
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ
ԱՐԺԵԲԱՆԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

§ 1. Սահմանադրական կայունությունը և դրա
իրավական բնույթը

Կայունությունը ժամանակակից սահմանադրական համակարգերի կարևորագույն հատկանիշներից է, որը հանդես է գալիս որպես սահմանադրականության ամրապնդման ու զարգացման կարևորագույն գրավական: Դա պատահական չէ, քանզի վերջին հարյուրամյակների ընթացքում **համակարգային կայունության** երաշխավորի դերը գերազանցապես վերապահվել է պետության Հիմնական օրենքին՝ «գրված» Սահմանադրությանը: Պատճառն այն է, որ հենց վերջինս է ամրագրում կոնկրետ հասարակության քաղաքակրթական արժեքների ամբողջականությունից բխող նպատակներն ու հասարակական կեցության հիմնարար սկզբունքները, սահմանում հասարակական վարքագծի հիմնական կանոնները, անհատի ու պետության փոխհարաբերությունների բնույթը, իշխանության իրականացման կարգն ու սահմանները՝ հասարակական համաձայնությամբ անհրաժեշտ միջավայր ստեղծելով մարդու ստեղծարար էության լիարժեք դրսևորման ու առաջընթացի համար³⁰: Սահմանադրությունը հանդիսանում է պետականության յուրօրինակ ատրիբուտ՝ արտացոլելով ոչ միայն ամբողջ համաշխարհային հանրության, այլ նաև կոնկրետ հասարակության և

պետության զարգացման մակարդակն ու միտումները, հասարակական հարաբերությունների հիմքը կազմող սկզբունքներն ու կանոնները, տվյալ միջավայրում իշխանության իրականացման կարգն ու սահմանները և անհատի ու պետության փոխհարաբերությունների բնույթը: Հետևաբար, «Սահմանադրությունը հանդիսանում է **կենսագոյի հիմնական կանոնների** շուրջ հասարակական համաձայնություն»³¹ և, որպես այդպիսին, ամրագրում է իրավական այն հիմնարար արժեքներն ու սկզբունքները, որոնք բնորոշ են սոցիալական հանրության պատմական տվյալ փուլին ու կազմում են **վերջինիս շրջանակներում առաջացող հարաբերությունների «միջուկը», էությունը**, որպիսի հանգամանքը ենթադրում է ինչպես հիշյալ կարգավորումների, այնպես էլ ընդհանուր առմամբ սահմանադրական համակարգերի կայունության անհրաժեշտություն:

Նշենք, որ գրականության մեջ հավասարապես օգտագործվում են ինչպես «Սահմանադրության կայունություն», այնպես էլ «սահմանադրական կայունություն» հասկացությունները: Ընդ որում՝ դրանք, որպես կանոն, օգտագործվում են նույնական բովանդակությամբ՝ բնութագրելու համար սահմանադրական նորմերի երկարակեցությունը³²: Նախկինում իրա-

³¹ Տե՛ս նույն տեղում, էջ 30:

³² Mittal S., Weingast R. B. Constitutional Stability and the Deferential Court // Journal of Constitutional Law, Vol. 13:2, <https://scholarship.law.upenn.edu/cgi/viewcontent.cgi?article=1077&context=jcl>, /Վերջին մուտք՝ 16.06.2018/, Rasch E. B., Congleton D. R. Amendment Procedures and Constitutional Stability, [http://www.rdc1.org/forthcoming/DCD%20\(Chap%2012,%20Amendment%20Procedures,%20Congleton%20and%20Rausch\).pdf](http://www.rdc1.org/forthcoming/DCD%20(Chap%2012,%20Amendment%20Procedures,%20Congleton%20and%20Rausch).pdf), /Վերջին մուտք՝ 16.06.2018/, Румянцев О. Г. Основы конституционного строя России (понятие, содержание, вопросы становления). 1994, <http://jurisprudence.club/konstitutsionnoe-uchebnik/ustoychivost-osnov-konstitutsionnogo-57906.html>, /Վերջին մուտք՝ 16.06.2018/:

³⁰ Տե՛ս Հարությունյան Գ. Սահմանադրական մշակույթ. պատմության դասերը և ժամանակի մարտահրավերները, Վերահրատարակություն՝ լրամշակումներով, Երևան, 2016, էջ 22-23:

կանացրած մեր հետազոտությունների շրջանակներում մենք նույնպես օգտագործել ենք «Սահմանադրության կայունություն» եզրույթը: Սակայն, նկատի ունենալով այն, որ հիշյալ եզրույթի շրջանակներում քննարկում ենք ոչ թե սուսկ Սահմանադրությամբ ամրագրված նորմերի՝ երկարատև ժամանակահատվածում գործողության, այլ նաև փաստացի կյանքում դրանց արդյունավետ գործողության, հետևաբար, ոչ թե Սահմանադրության՝ որպես գուտ իրավական փաստաթղթի, այլ ընդհանուր առմամբ սահմանադրական համակարգերի կայունության հարցերը, միասնական եզրութաբանություն ապահովելու նպատակով այսուհետ նպատակահարմար ենք համարում օգտագործել «սահմանադրական կայունություն» եզրույթը: Մեր կարծիքով, վերջինս առավել ամբողջական է արտացոլում քննարկվող հարցադրումների էությունն ու բնույթը³³:

Հատկանշական է, որ իրավաբանական գրականության մեջ միանշանակ տեսակետ գոյություն չունի քննարկվող հասկացության բովանդակության առնչությամբ, և կարելի է հանդիպել այդ առումով առկա բազմապիսի բնորոշումների: Հեղինակների մի մասի կարծիքով, Սահմանադրության կայունությունը սահմանադրական կարգավորումների անփոփոխելիությունն է³⁴, Սահմանադրության բովանդակության կայունությունն, ինչպես նաև ընթացիկ օրենքների համեմատությամբ սահմանադրական նորմերի փոփոխման առավել բար-

³³ Մինույն ժամանակ, մասնագիտական գրականությունից բառացի մեջբերումներ կատարելիս կօգտագործենք այն եզրույթը, որ տեղ է գտել կոնկրետ հեղինակի դատողություններում:

³⁴ Տե՛ս Михалева Н. А. Конституционное право зарубежных стран СНГ. М., 1999, http://pravo.xpcc.ru/book_z1019_page_23.html, /Վերջին մուտք՝ 15.04.2016/:

դեցված կարգը³⁵: Մեկ այլ տեսակետի համաձայն՝ վերջինս Սահմանադրության հիմնական դրույթների անփոփոխելիությունն է հասարակության անփոփոխ սոցիալ-քաղաքական միջավայրի պայմաններում³⁶: Իրավաբանական գրականության մեջ սահմանադրական համակարգերի հիշյալ հատկանիշը բնորոշվում է նաև որպես Սահմանադրության սկզբնական տեքստի՝ իրավական առումով երկարակեցություն³⁷, ժամանակի ընթացքում սահմանադրական կարգավորումների կենսունակություն³⁸: Որոշ հեղինակներ էլ կարծում են, որ կայունությունը Սահմանադրության երկարատև գործողությունն է՝ առանց վերջինիս շրջանակներում էական փոփոխություններ կատարելու³⁹: Հետաքրքիր է Հիմնական օրենքի կայունության առնչությամբ ներկայացված և այն տեսակետը, համաձայն որի՝ վերջինս երկրի հիմնական համակարգերի կայունությունն է, ինչը հանդիսանում է քաղաքական տևական կայունության

³⁵ Տե՛ս Балагурова Н. Н. Стабильность конституционных норм и обеспечение их соответствия складывающимся общественно-политическим отношениям // Вестник Челябинского государственного университета, 2009, № 15 (153), էջ 16, www.lib.csu.ru/vch/153/003.pdf, /Վերջին մուտք՝ 15.04.2016/:

³⁶ Տե՛ս Червонюк В. Конституционное право России. М., 2004, <http://pravoznavec.com.ua/books/97/5891/24/>, /Վերջին մուտք՝ 15.04.2016/:

³⁷ Տե՛ս Negretto G. L. The Durability of Constitutions in Changing Environments: A Study on Constitutional Stability in Latin America, <http://verfassungswandel.files.wordpress.com/2008/10/14-negretto-paper.pdf>, /Վերջին մուտք՝ 15.04.2016/:

³⁸ Տե՛ս L. Van den Hauwe. Public Choice, Constitutional Political Economy and Law and Economics. Brussels, Belgium, Copyright 1999 Ludwig Van den Hauwe, էջ 632, encyclo.findlaw.com/0610book.pdf, /Վերջին մուտք՝ 15.04.2016/:

³⁹ Տե՛ս Авакьян С.А. Конституционное право России. Том 1. М., 2010, էջ 189:

նախապայմանը⁴⁰: Հետևաբար, քննարկվող հատկանիշն իր արտահայտությունն է գտնում սահմանադրական կարգավորումների անփոփոխելիության, կայունության բարձր մակարդակի պահպանման և իշխանության եկող փոփոխվող քաղաքական ուժերի ազդեցությանը ենթակա չլինելու մեջ⁴¹: Իսկ ՌԴ Պետական դումայի նախկին նախագահ Բորիս Գրիգորովի խոսքերով «Սահմանադրության կայունությունը սոցիալական կյանքի կայունությունն է, այն ներդրումային գրավչությունն է, իրավական համակարգի թափանցիկությունը»⁴²:

Վերը շարադրված բնորոշումների բազմազանությունը հիմք է տալիս եզրակացնելու, որ իրավաբանական գրականության մեջ միանշանակ տեսակետ գոյություն չունի սահմանադրական կայունության բովանդակության առնչությամբ, որպիսի հանգամանքի վերլուծությանը հարկ ենք համարում անդրադառնալ աշխատանքի հիշյալ հատվածում⁴³:

Առաջին հերթին նշենք, որ սոցիոլոգիայում հասարակության կայունության առնչությամբ ընկալումների զարգացումը պայմանականորեն բաժանվում է երեք փուլերի: Առաջին փուլին բնորոշ է կայունության և փոփոխելիության փոխբացառումը: Այս փուլում համակարգի հիշյալ երկու չափանիշների հա-

րաբերակցությունը դիտարկվում է որպես խիստ սիմետրիկ, իսկ առավելությունը տրվում է **ստատիկ կայունությանը**: Երկրորդ փուլում սկսում է քննարկվել **դինամիկ կայունության** գաղափարը: Չնայած «կայունություն» և «հավասարակշռություն» հասկացությունների առնչությամբ առկա խառնաշփոթին՝ առաջինն արդեն չի բացառում փոփոխությունների հնարավորությունը, և առաջնահերթ նշանակություն է ձեռք բերում դինամիկ, այլ ոչ ստատիկ կայունության գաղափարը: Երրորդ փուլում արդեն կայունությունը սկսում է ընկալվել որպես համակարգի պահպանման և նրա փոփոխելիության միասնություն: Կայունությունը և շարժունակությունը այլևս չեն դիտարկվում որպես անհաշտելի հակադրություններ, անհամատեղելի երևույթներ⁴⁴:

Ժամանակակից գիտության մեջ կայունությունը դիտարկվում է որպես համակարգի պարամետրերի պահպանում և վերադարձ դեպի այդ պարամետրերը հարկադրված շեղումների դեպքում, ինչպես նաև միաժամանակյա փոփոխության, «կանոնակարգված ու կազմակերպված փոփոխության» գործընթաց⁴⁵: Այն արտահայտում է համակարգի հնարավորությունը՝ երկարատև ժամանակահատվածում պահպանելու **դինամիկ հավասարակշռություն**⁴⁶ և ժամանակի մեջ մնալու անփոփոխ **սահմանված կամ ողջամտորեն ակնկալվող պայմաններում**⁴⁷:

⁴⁰ Տե՛ս Advance with the Times // 10th National People's Congress and Chinese People's Political Consultative Conference, <http://www.china.org.cn/english/10th/88511.htm>, /Վերջին մուտք՝ 15.04.2016/:

⁴¹ Տե՛ս Правоведение: Учебник /под ред. Мальцева Г. М., 2003, http://lawtoday.ru/razdel/biblio/pravoved/DOC_064.php, /Վերջին մուտք՝ 15.04.2016/:

⁴² Տե՛ս Грызлов Б. Конституция останется неизменной, <http://gryzlov.ru/index.php?page=smi&id=223>, /Վերջին մուտք՝ 15.04.2016/:

⁴³ Հարկ է նկատել, որ աշխատանքի շրջանակներում հիշյալ հատկանիշն ուսումնասիրվում է, այսպես կոչված, «զրված Սահմանադրությունների» տեսանկյունից:

⁴⁴ Տե՛ս Гуц А. Глобальная этносоциология: Учебное пособие. Омск, 1997, <http://www.univer.omsk.su/MEP/ch7st.win.htm>, /Վերջին մուտք՝ 15.04.2016/:

⁴⁵ Տե՛ս նույն տեղում:

⁴⁶ Տե՛ս Политология: энциклопедический словарь / общ. ред. и сост. Аверьянов Ю.И. М., 1993, էջ 281:

⁴⁷ Տե՛ս <http://www.businessdictionary.com/definition/stability.html>, /Վերջին մուտք՝ 15.04.2016/:

Հաշվի առնելով վերը շարադրվածը՝ կարծում ենք, որ Սահմանադրության և ընդհանուր առմամբ սահմանադրական համակարգերի տեսանկյունից նույնպես «կայունությունն» ու «փոփոխելիությունը» կամ «գարգացումը» միմյանց բացառող հասկացություններ չեն: Կայունության էության հիմքում ընկած է ոչ թե համակարգը այլ համակարգերից մեկուսացնելու ու տեղի ունեցող փոփոխություններից պաշտպանելու, այլ այդ փոփոխությունները կանոնակարգված ձևով հաշվի առնելու համար հնարավորություններ ստեղծելու կարողությունը: Իսկ դա նշանակում է, որ եթե նույնիսկ կայունությունը ենթադրում է անփոփոխելիություն, ապա միայն չփոփոխվող հասարակական հարաբերությունների պայմաններում: Մինչդեռ նույնը չի կարելի ասել հակառակ իրավիճակի մասին, որպիսի պայմաններում համակարգը, տվյալ պարագայում Սահմանադրությունը, պետք է ունենա տեղի ունեցող փոփոխություններին արձագանքելու ու դրանք հաշվի առնելու ունակություն, ինչն իր հերթին պահանջում է, որպեսզի քննարկվող հատկանիշը ենթադրի նաև փոփոխությունների հնարավորություն: Հակառակ պարագայում Հիմնական օրենքը կվերածվի «մեռած իրավական ակտի», փաստացի հարաբերություններից անկախ գործող սոսկ փաստաթղթային մի լուծումի, որն իրականում ի վիճակի չէ իրականացնելու իր գործառույթները և կարգավորելու հասարակական հարաբերությունները, ինչը, բնականաբար, կհանգեցնի համակարգի լճացման: Այդ առումով հիշատակման է արժանի գրականության մեջ արտահայտված այն տեսակետը, որ մարդկային հասարակությանը հատուկ է ինքնապահպանման ձգտումը, որն իրացվում է ոչ թե գոյություն ունեցող հարաբերություններն անփոփոխ վիճակում

պահպանելու, այլ դրանց զարգացման, հասարակական հարաբերությունների և ինստիտուտների փոփոխման միջոցով⁴⁸: Հետևաբար, Սահմանադրությունը նույնպես չի կարող լինել քարացած, չարձագանքել հասարակական առաջընթացին՝ դրա խթանից վերածվելով այն արգելակողի: Սահմանադրությունը չի կարող սահմանադրական փակուղիների հանգեցնել, այն քաղաքացիական հասարակության զարգացման ամենագործուն խթանը պետք է լինի: Ձևախեղված քաղաքացիական հասարակության առկայությունը պայմանավորվում է նաև նրանով, որ սահմանադրական ոչ լիարժեք լուծումները դրա համար պարարտ հող են ստեղծում⁴⁹: Ավելին, գրականության մեջ բազմիցս ընդգծվել է, որ հաջողության են հասնում այն սահմանադրական համակարգերը, որոնցում համադրված են ընթացակարգային կայունությունն ու նյութական ճկունությունը, այսինքն՝ այն համակարգերը, որոնցում քաղաքական գործընթացների ընդհանուր կանոնները փոխանցվում են սերնդեսերունդ՝ միննույն ժամանակ հարմարեցվելով ներքին ու արտաքին տնտեսական, սոցիալական, մշակութային և իշխանական հարաբերությունների փոփոխվող պայմաններին⁵⁰:

Հետևաբար, սահմանադրական կայունության առնչությամբ առաջին կարևոր եզրահանգումն այն է, որ վերջինս չպետք է դիտարկվի որպես Սահմանադրությամբ ամրագրված

⁴⁸ Տե՛ս у Прякина Т. Конституционная доктрина РФ. М., 2006, էջ 302:

⁴⁹ Տե՛ս у Հարությունյան Գ. Սահմանադրությունից՝ սահմանադրականություն, Երևան, 2004, էջ 67, 96:

⁵⁰ Տե՛ս у Encyclopaedia Britannica, Vol. 5, 1977, էջ 84-88, 93-98, Constitutional Law, http://www.vanuatu.usp.ac.fj/courses/LA207_Public_Law_1/Readings/la207_encybrit_constitutional_law.html, Վերջին մուտք՝ 15.04.2016:

կարգավորումների անփոփոխելիություն⁵¹:

Միևնույն ժամանակ հարկ է հաշվի առնել այն, որ քննարկվող հանգամանքը չի ենթադրում համակարգի «միջուկը», էությունը հիմնավորապես փոփոխելու հնարավորություն: Պատճառն այն է, որ ցանկացած ամբողջական համակարգ ունի մի ինտեգրատիվ որակ, որի հիմքի վրա էլ ձևավորվում է հիշյալ ամբողջ համակարգը և այն ելակետային վիճակը, որից կատարվում են անցումները նոր վիճակների: Հետևաբար, այդ որակական առանձնահատկության բացակայության պայմաններում օբյեկտը դադարում է քննարկվող կոնկրետ համակարգը լինելուց, որպիսի պայմաններում, բնականաբար, հնարավոր չէ խոսել նաև վերջինիս կայունության ու զարգացման մասին: Վերը շարադրվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ «Սահմանադրության կայունություն» հասկացությունը ենթադրում է փոփոխությունների հնարավորություն, սակայն այնպիսի փոփոխությունների, որոնց պայմաններում պահպանվում է համակարգի հիմնական որակը, Սահմանադրության «միջուկը»⁵²:

⁵¹ Վերջին տարիներին իրավաբանական գրականության մեջ նույնպես գերակշռող է դառնում այն տեսակետը, որ կայունությունը չի նշանակում օրենսդրության (նաև Սահմանադրության) անփոփոխելիություն, ինչն այն կարող է դարձնել կարծրացած, իրականությանը չհամապատասխանող (տե՛ս Кашанина Т. Юридическая техника. М., 2011, էջ 156, Negretto G. L., նշված աշխատությունը): Ավելին, սահմանադրություններն ընկալվում ու գրվում են եթե ոչ ընդմիջտ, ապա առնվազն ապագայի անորոշ ժամանակահատվածի ընթացքում գոյատևելու նպատակով (տե՛ս How Constitutions Change (A Comparative Study) / edited by Oliver D., Fusaro C. Oxford and Portland, Oregon, 2011, էջ 172):

⁵² Այդ առումով հիշատակման է արժանի ՀՀ Սահմանադրության 203 հոդվածը, համաձայն որի՝ Սահմանադրության 1-ին, 2-րդ, 3-րդ և 203-րդ հոդվածները փոփոխման ենթակա չեն: Հետևաբար, սահմանադիրը հենց այդ դրույթներն է համարել հասարակական հարաբերությունների միջուկը՝ արգելելով դրանց փոփոխումը, որպիսի հանգամանքն առավել մանրամասն կվերլուծենք Սահմանադրության զարգացմանն առնչվող հիմնախնդիրներին անդրադառնալիս:

Անփոփելով ներկայացված վերլուծությունը՝ նշենք, որ կայուն է ոչ թե այն Սահմանադրությունը, որը չի ենթարկվում փոփոխությունների, այլ այն, որում կատարվող փոփոխությունները չեն խարխուլում Սահմանադրության հիմքում ընկած հիմնարար սկզբունքներն ու արժեքները: Հետևաբար, Սահմանադրության հիշյալ հատկանիշի հիմքում ընկած է դինամիկ, այլ ոչ ստատիկ կայունության գաղափարը, և կայունության հատկանիշը ոչ միայն չի բացառում, այլև ենթադրում է Հիմնական օրենքի զարգացում, որպիսի պայմաններում միայն Սահմանադրությունը կարող է հանդես գալ որպես «կենդանի փաստաթուղթ»⁵³ և լինեն հասարակական հարաբերությունների ելակետային կարգավորիչ:

Վերը շարադրվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ սահմանադրական կայունությունը սահմանադրական համակարգի այն հատկանիշն է, որ ենթադրում է կենսագոյի հիմնական կանոնների շուրջ հասարակական համաձայնություն հանդիսացող Սահմանադրության կենսունակություն և անփոփոխելիություն չփոփոխվող հասարակական հարաբերությունների պայմաններում՝ հաշվի առնելով այն, որ տվյալ պարագայում խոսքը ոչ թե ստատիկ, այլ դինամիկ կայունության մասին է, երբ հիմնարար փոփոխությունների չի ենթարկվում Սահմանադրության «միջուկը», էությունը, սակայն Սահմանադրությունն ինքնին ունակ է հարմարվելու զարգացող հասարակական հարաբերություններին՝ հանդիսանալով դրանց ելակետային կարգավորիչը:

⁵³ Ամերիկյան սահմանադրական դոկտրինի շրջանակներում լայնորեն տարածված է այն տեսակետը, որ հիշյալ հասկացությունը Սահմանադրությունը համեմատելի է դարձնում կենդանի օրգանիզմի հետ, որը զարգանում և փոփոխվում է իրականության պահանջներին զուգընթաց (տե՛ս Balkin J. Living Originalism. London, 2011, էջ 278):

§ 2. Սահմանադրական կայունությունը պայմանավորող գործոններն ու դրանց արժեքանական բնութագիրը

Ակնհայտ է, որ սահմանադրական կայունության ձևավորումն ու ամրապնդումը պահանջում են սահմանադրական նորմերի ամրագրման ու իրացման համար անհրաժեշտ որոշակի կառուցակարգերի առկայություն, որոնց հարկ ենք համարում անդրադառնալ ստորև:

Նշենք, որ գրականության մեջ միանշանակ տեսակետ գոյություն չունի այդ կառուցակարգերի առնչությամբ, և հեղինակների մեծ մասը քննարկվող հիմնախնդրին անդրադառնալիս շեշտադրում է հիշյալ հատկանիշի առկայությունը պայմանավորող գործոններից ու չափանիշներից կոնկրետ մեկի կարևորությունը: Այսպես, գիտնականների մի մասի կարծիքով, Սահմանադրության կայունության հատկանիշի առկայությունն առաջին հերթին պայմանավորված է Սահմանադրության հիման վրա ձևավորվող առանձին ինստիտուտների առկայությամբ: Նրանք նշում են, որ իշխանությունների տարանջատման սկզբունքի արտահայտությունը հանդիսացող այնպիսի ինստիտուտներ, ինչպիսիք են ընտրությունները, խորհրդարանական երկպալատ համակարգը, գործադիր իշխանության ղեկավարի ունեցած վետոյի իրավունքը, ֆեդերալիզմը և այլն, կարող են դրական ազդեցություն ունենալ Սահմանադրության երկարակեցությունն ապահովելու տեսանկյունից, քանզի դրանց արդյունքում, որպես կանոն, քաղաքական գործիչների մոտ չեն ձևավորվում գոյություն ունեցող կարգավորումները փոխելու շարժառիթներ: Նշված հեղինակ-

ների կարծիքով, նույն դերակատարությունը կարող են ունենալ նաև Սահմանադրության՝ որպես բարձրագույն օրենքի պաշտպանության համար նախատեսված այնպիսի ինստիտուտներ, ինչպիսիք են փոփոխման բարդեցված կարգը կամ սահմանադրական արդարադատությունը՝ սահմանադրական փոփոխությունները վերածելով բարդ գործընթացի և ստեղծելով Սահմանադրությունը քաղաքական, սոցիալական կամ տնտեսական միջավայրի զարգացումներին հարմարեցնելու ոչ պաշտոնական կառուցակարգեր:

Ամփոփելով շարադրված տեսակետները՝ նշենք, որ դրանց էությունը կայանում է հետևյալում՝ սահմանադրական այն դրույթների առկայության պայմաններում, որոնք վերաբերում են իշխանությունների տարանջատմանը կամ նախատեսված են Սահմանադրության՝ որպես բարձրագույն օրենքի պաշտպանության համար, առավել փոքրանում է Սահմանադրությունը փոփոխելու (կամ ինչպես նրանք են նշում, փոխարինելու) վտանգը⁵⁴:

Անկասկած, Սահմանադրությամբ տարատեսակ ժողովրդավարական ինստիտուտների ամրագրումը կարևոր նշանակություն ունի վերջինիս կայունությունն ապահովելու տեսանկյունից: Սակայն, մեր կարծիքով, այն սահմանադրական համակարգերի հիշյալ հատկանիշի առկայությունը պայմանավորող ելակետային ու միանշանակ գործոնը չէ: Պատճառն այն է, որ երբեմն Հիմնական օրենքն ամրագրում է հիշատակված արժեքներն ու սկզբունքները, սակայն այդ կարգավորումը համարժեք չի լինում իրականում գոյություն ունեցող հասարակական հարաբերություններին, իսկ Սահմանադրության

⁵⁴ St' u Negretto G. L., նշված աշխատությունը:

տեքստի՝ որոշակի ժամանակահատվածում անփոփոխելիությունը պայմանավորված է լինում ոչ թե վերը նշված ինստիտուտների ամրագրմամբ, այլ տարատեսակ քաղաքական, սոցիալական, տնտեսական և այլ հանգամանքներով: Հնարավոր են նաև իրավիճակներ, երբ Հիմնական օրենքով սահմանված չլինեն հիշատակված ինստիտուտների առանձին տարրեր, սակայն դրանք արմատավորվեն Սահմանադրությամբ նախատեսված այլ եղանակներով, օրինակ, պաշտոնական մեկնաբանության միջոցով: Հետևաբար, մեր կարծիքով, թեև ներկայացված հանգամանքների սահմանադրական ամրագրումը կարևոր նշանակություն ունի Հիմնական օրենքի կայունությունն ապահովելու տեսանկյունից, սակայն բոլոր դեպքերում չէ, որ հենց վերջինս է միանշանակորեն վկայում քննարկվող հատկանիշի առկայության մասին:

Սահմանադրության փոփոխման բարդեցված կարգի առնչությամբ հիշատակված հեղինակները գտնում են, որ այն, ժամանակի և ռեսուրսների տեսանկյունից մեծացնելով փոփոխությունների համար անհրաժեշտ ծախսերի ծավալը, հանգեցնում է կայունության հատկանիշի ձևավորմանը: Նույն հեղինակները կարծում են, որ ծավալուն սահմանադրություններն ավելի երկարակյաց են, քան համառոտ սահմանադրությունները, և որ սահմանադրական նորմերի ամրագրման առաջին տարբերակը հանդես է գալիս որպես Սահմանադրության կենսունակության վրա դրական ազդեցություն ունեցող գործոն⁵⁵:

⁵⁵ Տե՛ս, օրինակ, Negretto G. L., նշված աշխատությունը, *How Constitutions Change (A Comparative Study)* / edited by Oliver D., Fusaro C., Oxford and Portland, Oregon, 2011:

Հարկ է նկատի ունենալ, որ հիշատակված եզրահանգումը ներկայացվում է այն հետազոտողների կողմից, որոնք Սահմանադրության կայունության գաղափարը հանգեցնում են վերջինիս երկարակեցությանը՝ դրա ուժի մեջ մտնելու և այլ Սահմանադրությամբ ձևական առումով փոխարինելու միջև ընկած ժամանակահատվածի առումով: Մինչդեռ Սահմանադրության կայունության առնչությամբ մեր կողմից ներկայացված տեսակետը որպես ելակետ ընդունելու դեպքում հանգում ենք այն եզրակացության, որ քննարկվող գործոնները նույնպես չեն հանդիսանում սահմանադրական կայունության հատկանիշի առկայության միանշանակ վկայություն:

Պատճառն այն է, որ հնարավոր են իրավիճակներ, երբ Սահմանադրության տեքստն անփոփոխ մնա փոփոխված հասարակական հարաբերությունների պայմաններում՝ չզարգանալով նաև փոփոխություններից զատ նախատեսված այլ եղանակներով: Տվյալ պարագայում, սակայն, Սահմանադրությունը չի ունենա փոփոխվող հասարակական հարաբերությունների պայմաններին հարմարվելու ունակություն, այդ հարաբերությունները կարտացոլի քարացած վիճակում, հանդես չի գա որպես դրանց ելակետային կարգավորիչ, հետևաբար, օժտված չի լինի կենսունակության հատկանիշով ու չի լինի կայուն: Պատահական չէ իրավաբանական գրականության մեջ արտահայտված այն տեսակետը, որ կոշտ Սահմանադրության պարագայում բարդանում է ոչ միայն բացասական, այլ նաև բարենպաստ փոփոխություններ կատարելու հնարավորությունը⁵⁶:

⁵⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 425:

Հետաքրքրական է և այն, որ գրականության մեջ հավասարապես հանդիպում է ինչպես այն տեսակետը, որ ծավալուն սահմանադրություններն են երկարակյաց, այնպես էլ այն մտտեցումը, որ առավել երկար գործում են համառոտ սահմանադրությունները: Ընդ որում՝ միևնույն պատճառաբանությունն է մեծամասամբ դրվում հիշյալ երկու հակառակ տեսակետների հիմնավորման հիմքում, այն է՝ կարգավորումների մանրամասն բնույթը հանգեցնում է Սահմանադրության երկարակեցության, և հակառակը՝ կարգավորումների մանրամասն բնույթը հանգեցնում է Սահմանադրության չափազանց հաճախակի փոփոխությունների⁵⁷: Միևնույն ժամանակ, հիմնախնդրին առնչվող միջազգային պրակտիկայի հետազոտությունը հիմք է տալիս եզրակացնելու, որ կան ճկուն և համառոտ սահմանադրություններ, որոնք հազվադեպ են ենթարկվում փոփոխությունների, և դրանց հետ մեկտեղ՝ փոփոխման բարդեցված կարգով աչքի ընկնող և ծավալուն սահմանադրություններ, որոնք փոփոխվում են բավականին հաճախ: Չնայած փոփոխման բարդ ընթացակարգին՝ Սահմանադրության փոփոխությունների մեծաքանակությամբ աչքի է ընկնում, օրինակ՝ Գերմանիան⁵⁸: Մեքսիկայի 1917թ. Սահմանադրությունը, որն ամենաձավալուն և կոշտ սահմանադրություններից է, 1917-2006թթ.-ի ընթացքում փոփոխվել է ավելի քան 65 անգամ՝ կրելով շուրջ 500 տարբեր փոփոխություններ:

⁵⁷ Այդ մասին տե՛ս Tsebelis G., Nardi J. D. A Long Constitution is a (Positively) Bad Constitution: Evidence from OECD Countries, https://sites.lsa.umich.edu/tsebelis/wpcontent/uploads/sites/246/2015/05/BJPS_final_april2.pdf, /Վերջին մուտք՝ 30.01.2019/:

⁵⁸ Տե՛ս How Constitutions Change (A Comparative Study) / edited by Oliver D., Fusaro C., Oxford and Portland, Oregon, 2011, էջ 145-146:

Մինչդեռ Իսլանդիայի Սահմանադրությունը, որն ամենահամառոտ և համեմատաբար ճկուն սահմանադրություններից է, 1944թ.-ից փոփոխվել է ընդամենը յոթ անգամ, ընդ որում՝ փոփոխությունների մեծ մասն առնչվել է ընտրական իրավունքին և իրավունքների պաշտպանությանը⁵⁹:

Ավելին, տարբեր երկրների սահմանադրական փոփոխությունների առնչությամբ բազմաթիվ ուսումնասիրություններ վկայում են, որ դրանց քանակի և հաճախականության տեսանկյունից քաղաքական և սոցիալական համատեքստն ունեցել է շատ ավելի մեծ նշանակություն, քան Սահմանադրության փոփոխություններին առնչվող ձևական նորմերը, իսկ ճկուն կամ կոշտ, համառոտ կամ ձավալուն լինելու հանգամանքը չի կանխորոշել սահմանադրական փոփոխությունների փաստացի շեմը, փոփոխությունների քանակը և բարեփոխումների կարևորությունը⁶⁰:

Կարծում ենք, որ Սահմանադրության՝ ճկուն կամ կոշտ, համառոտ կամ ձավալուն լինելու հանգամանքը պայմանավորված է կոնկրետ հասարակական համակարգի քաղաքական, սոցիալական, սահմանադրական ավանդույթներով և առանձնահատկություններով, և ինչպես վկայում է ներկայացված վերլուծությունը, չի կարող սահմանադրական կայունությամբ

⁵⁹ Տե՛ս Tsebelis G., Nardi J. D. A Long Constitution is a (Positively) Bad Constitution: Evidence from OECD Countries, https://sites.lsa.umich.edu/tsebelis/wpcontent/uploads/sites/246/2015/05/BJPS_final_april2.pdf, /Վերջին մուտք՝ 30.01.2019/:

⁶⁰ Տե՛ս CDL-AD(2010)001, Report on Constitutional Amendment, Adopted by the Venice Commission at its 81st Plenary Session (Venice, 11-12 December 2009), <http://www.venice.coe.int/docs/2010/CDL-AD%282010%29001-e.pdf>, (Վերջին մուտք՝ 20.01.2018):

յան հատկանիշի առկայությունը պայմանավորող միանշանակ գործոն հանդիսանալ:

Հաշվի առնելով վերը շարադրվածը՝ կարծում ենք, որ Սահմանադրության փոփոխման բարդեցված կարգը, ինչպես նաև համառոտ կամ ծավալուն բնույթը կարող են հանդես գալ որպես սահմանադրական կայունության հատկանիշի առկայության համար կարևորություն ունեցող գործոն սույլ այն դեպքում, եթե նախատեսված լինեն զարգացող հասարակական հարաբերություններին հարմարվելու համար անհրաժեշտ այլ կառուցակարգեր⁶¹:

Ինչ վերաբերում է սահմանադրական արդարադատությանը, նշենք, որ գրականության մեջ Հիմնական օրենքի կենսունակության էական պայմաններից է դիտարկվում Սահմանադրության հարմարվողականությունն⁶² ու պաշտոնական մեկնաբանության ինստիտուտի առկայությունը, որպիսի հանգամանքին կանդրադառնանք աշխատանքի հետագա շարադրանքի ընթացքում:

Վերը շարադրվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ ներկայացված հանգամանքներից որևէ մեկն ինքնին հանդես չի գալիս որպես սահմանադրական կայունության առկայությունը պայմանավորող միանշանակ գործոն: Հետևաբար, հիշյալ համատեքստում անհրաժեշտություն է առաջանում բացահայտել սահմանադրական նորմերի ամրագրման ու իրացման այն հիմնական կառուցակարգերը, որոնց ամբողջությունն անհրա-

ժեշտ ու բավարար է Հիմնական օրենքի քննարկվող հատկանիշի առկայության համար:

Ամերիկացի հայտնի սոցիոլոգ Պարսոնսը, անդրադառնալով այն հիմնախնդրին, թե ինչպես է համակարգը պահպանում իր կառուցվածքի կայունությունը, հանգում է այն եզրակացության, որ դա իրականացվում է «այն մեխանիզմների շնորհիվ, որոնք ապահովում են համակարգի միտումը դեպի կարգավորվածություն»: Սոցիոլոգը դրանք անվանում է կառուցվածքի պահպանման հիմնական գործառույթներ, որոնք պետք է իրականացվեն կայուն մնացող յուրաքանչյուր սոցիալական համակարգում: Դրանք են 1. ադապտացիան (սոցիալական համակարգերը պետք է հարմարեցվեն շրջակա միջավայրին, այդ թվում՝ դրա ակտիվ փոփոխություններին), 2. նպատակաուղղվածությունը (սոցիալական համակարգերը պետք է ունակ լինեն առաջ քաշելու կոնկրետ նպատակներ), 3. ինտեգրացիան (սոցիալական համակարգերը պետք է ապահովեն իրենց տարրերի համախմբվածությունը (ինտեգրացիան), ինչը ենթադրում է սոլիդարության որոշակի նվազագույն չափ), 4. լատենտ կառուցվածքի պահպանումը (սոցիալական համակարգերը պետք է ունենան ամրության ներքին պահուստներ և դիմակայեն նույնիսկ մասնակիցների միջև լարված հարաբերություններին, ինչն ապահովվում է սոցիալական ինստիտուտների միջոցով, որոնք պահպանում են հասարակական հարաբերությունների կայուն լատենտ կառուցվածքը)⁶³:

⁶¹ Օրինակ՝ Սահմանադրության պաշտոնական մեկնաբանության ինստիտուտը:

⁶² St' u Ginsburg T., Melton J., Elkins Z. The Lifespan of Written Constitutions/ American Law & Economics Association Annual Meetings, <http://law.bepress.com/cgi/viewcontent.cgi?article=1934&context=alea>, /Վերջին մուսք՝ 15.04.2016/:

⁶³ St' u Абельс X. Проблема социального порядка в социологии Талкотта Парсонса, 2002, Перевод Минакова А. / под ред. Головина Н. А., http://siblibio.com/biblio/archive/abels_social_order_problem/, /Վերջին մուսք՝ 15.04.2016/:

Կարծում ենք, որ ներկայացված կառուցակարգերի վերլուծությունն արդյունավետ է նաև սահմանադրական կայունության առկայությունը ենթադրող չափանիշների տեսանկյունից, հետևաբար, այդ չափանիշներին հարկ ենք համարում անդրադառնալ դրանց համատեքստում:

Աշխատանքի շրջանակներում արդեն ներկայացրել ենք մեր այն տեսակետը, որ Սահմանադրության «կայունությունն» ու «զարգացումը» միմյանց բացառող հասկացություններ չեն, և Հիմնական օրենքի կայունությունը պետք է ենթադրի զարգացող հասարակական հարաբերություններին արձագանքելու ու դրանց պայմաններին հարմարվելու ունակություն: Հետևաբար, սահմանադրական կայունության տեսանկյունից նույնպես կարևորվում է համակարգի պահպանման՝ վերը նշված առաջին գործառույթի անհրաժեշտությունը:

Ինչ վերաբերում է համակարգի կայունությունն ապահովող այլ կառուցակարգերին, արդեն նշեցինք, որ հիշյալ նպատակի իրականացման համար անհրաժեշտ է, որպեսզի համակարգն ունենա ամրության ներքին պահուստներ և կարողանա դիմակայել իր տարրերի միջև առաջացող հակասություններին ու դրանց հետևանքներին: Սահմանադրության պարագայում նույնպես կարևոր է, որպեսզի վերջինս օժտված լինի հիշյալ առանձնահատկությամբ, ինչը, մեր կարծիքով, ենթադրում է, որ կայուն լինելու համար Սահմանադրությունը պետք է ինքնաբավ լինի: Այդ առումով իրավաբանական գրականության մեջ կարծիք է արտահայտվել այն մասին, որ ինքնաբավ սահմանադրությունները կայունություն են պահպանում երկար ժամանակահատվածի ընթացքում՝ ստեղծելով, այսպես կոչված, «հարմարվողական արդյունավետություն», այսինքն՝

առաջացող ցնցումային իրավիճակներում սահմանադրական կարգի ընձեռած հնարավորություններին համապատասխան հարմարվելու և փոփոխված իրականության պայմաններում արդյունավետորեն գործելու համար կառուցակարգեր ձևավորելու ունակություն⁶⁴:

Քննարկվող հատկանիշի տեսանկյունից կարևոր է, որպեսզի Սահմանադրության իրացման ու պահպանության, ինչպես նաև հասարակական հարաբերությունների կարգավորման համար անհրաժեշտ կառուցակարգերը ընդգրկված լինեն հենց Սահմանադրության շրջանակներում՝ հնարավորություն ստեղծելով սահմանադրական նորմերի հիման վրա լուծելու առաջացող տարատեսակ հիմնախնդիրները: Հակառակ պարագայում առաջացող յուրաքանչյուր հիմնախնդրի պայմաններում Սահմանադրությունը ենթակա կլինի անընդհատ փոփոխությունների կամ թղթի վրա կմնա անփոփոխ՝ վերածվելով ձևական փաստաթղթի ու հետ մնալով զարգացող հասարակական հարաբերություններից: Իսկ նմանատիպ իրավիճակներում կբացակայեն սահմանադրական կայունության հատկանիշի առկայությունը ենթադրող վերը նշված կարևորագույն հանգամանքները, այն է՝ Սահմանադրությունը չի լինի կենսունակ կամ ի վիճակի չի լինի հարմարվելու զարգացող հասարակական հարաբերություններին ու հանդես գալու որպես դրանց ելակետային կարգավորիչ:

Հիշյալ համատեքստում հիշատակման է արժանի գրականության մեջ արտահայտված այն տեսակետը, որ ինքնաբավ Սահմանադրությունը կայունություն է ապահովում այն հան-

⁶⁴ St' u Mittal S. Constitutional Stability in a Changing World, էջ 1, http://politicalscience.stanford.edu/cooperationcolloqpapers/Mittal_cooperationmemo.pdf, /Վերջին մուտք՝ 15.04.2016/:

գամանքի շնորհիվ, որ ամրագրում է իր նորացման համար անհրաժեշտ կառուցակարգեր՝ հասարակական զարգացման խոչընդոտ չդառնալու նպատակով⁶⁵: Միևնույն ժամանակ, փոփոխություններն անխուսափելի են անգամ այն պայմաններում, երբ Սահմանադրությունը չի նախատեսում նմանատիպ կառուցակարգեր: Սակայն այդ իրավիճակում դրանք ընթանում են անկանխատեսելի և սահմանադրական համաձայնության հիմքում ընկած հիմնարար արժեքներին հակասող եղանակով⁶⁶:

Միևնույն ժամանակ հարկ է հաշվի առնել և այն, որ Սահմանադրության ինքնաբավության էությունը կայանում է ոչ թե նրանում, որ Սահմանադրությամբ ամրագրված լինեն հասարակական հարաբերությունների կարգավորման բոլոր մանրամասնությունները, այլ նրանում, որպեսզի Հիմնական օրենքն ընձեռնի քննարկվող բնագավառում առաջացող տարատեսակ հիմնախնդիրների լուծման համար անհրաժեշտ կարգավորումներ գտնելու հնարավորություն⁶⁷, այլ կերպ՝ ունենան երեսահմանադրական ինքնապաշտպանության անհրաժեշտ ու բավարար համակարգ⁶⁸:

⁶⁵ Տե՛ս у Пряжина Т., նշված աշխատությունը, էջ 320:

⁶⁶ Տե՛ս у How Constitutions Change (A Comparative Study) / edited by Oliver D., Fusaro C., Oxford and Portland, Oregon, 2011, էջ 432-433:

⁶⁷ Օրինակ՝ սահմանադրությունները, որպես կանոն, ուղղակիորեն չեն սահմանում, թե ինչպես է անհրաժեշտ ընկալել սահմանադրական այս կամ այն նորմը: Սակայն նրանք նախատեսում են Սահմանադրության պաշտոնական մեկնաբանություն իրականացնող մարմնի ձևավորման պահանջ կամ ամրագրում են դրույթներ, որոնք անհրաժեշտ է որպես ելակետ ընդունել հիշյալ նորմերի մեկնաբանության ընթացքում՝ հնարավորություն տալով անհրաժեշտության դեպքում լուծելու առաջացող կոնկրետ հիմնախնդիրները:

⁶⁸ Այդ մասին տե՛ս у Հարությունյան Գ. Սահմանադրությունից՝ սահմանադրականություն, Երևան, 2004, էջ 96:

Ինքնաբավությունը ենթադրում է նաև, որ գոյություն ունեցող հասարակական հարաբերությունները կարգավորելուց բացի Սահմանադրությունը պետք է առաջ քաշի դրանց զարգացումը պայմանավորող համապատասխան նպատակներ, որոնց պետք է ձգտի տվյալ սոցիալական հանրությունը⁶⁹: Հիշյալ նորմ-նպատակներն ապահովում են կոնկրետ սոցիալական հանրության շրջանակներում ձևավորվող հարաբերությունների զարգացումը, ինչի բացակայության պայմաններում կայուն չի կարող լինել հասարակությունը, հետևաբար՝ նաև **համակարգային կայունության** երաշխավորի դերը ստանձնած Սահմանադրությունը, քանզի այն չի կարողանա ապահովել **դինամիկ** հավասարակշռություն և հասարակական հարաբերությունները կարտացոլի քարացած վիճակում:

Քննարկվող հիմնախնդրի տեսանկյունից կարևոր է և այն, որ կայուն լինելու համար սահմանադրական նորմերը պետք է կազմեն փոխկապակցված, համակարգային ամբողջություն: Այն դեպքում, երբ Սահմանադրությունն ամրագրի նորմեր, որոնք, թեկուզ առանձին վերցրած նախատեսեն արդյունավետ կարգավորում, սակայն, միասին վերցրած, որպես ամբողջություն չկարողանան պատշաճ մակարդակով կարգավորել հասարակական հարաբերությունները, Հիմնական օրենքն ի վիճակի չի լինի իրականացնելու իր գործառույթները, հետևաբար նաև՝ լինելու կայուն: Օրինակ՝ ՀՀ Սահմանադրության 2 հոդվածը նախատեսում է, որ Հայաստանի Հանրապետությունում իշխանությունը պատկանում է ժողովրդին: Ժողովուրդն

⁶⁹ Հարկ է նկատել, որ դրանք կարող են պայմանավորված լինել նաև հասարակական հարաբերությունների զարգացման համաշխարհային միտումներով:

իր իշխանությունն իրականացնում է ազատ ընտրությունների, հանրաքվեների, ինչպես նաև Սահմանադրությամբ նախատեսված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց միջոցով: Ակնհայտ է, որ հիշյալ նորմը հանդիսանում է ժողովրդավարական պետության ձևավորման ու կայացման հիմնաքարային արժեքը և այդ առումով ունի բացառիկ կարևորություն: Սակայն, եթե սահմանադրական մյուս նորմերը չերաշխավորեն, օրինակ, ազատ ընտրությունների, հանրաքվեների հնարավորություն, կիմաստագրկվի նաև այդ դրույթի առկայությունը՝ փոխելով համապատասխան հասարակական հարաբերությունների էությունն ու դրանց զարգացման միտումները⁷⁰: Միննույն ժամանակ, անկախ սահմանադրական նորմերի **ամրագրմանն** առնչվող վերը շարադրված տեխնիկայի կարևորությունից, դրանց **իրացման** ընթացքում որպես ելակետ պետք է ընդունել այն տրամաբանությունը, որ սահմանադրական կարգավորումների միջև չկան և չեն կարող լինել հակասություններ: Այլ կերպ՝ վերջիններս անհրաժեշտ է մեկնաբանել ոչ թե միմյանցից մեկուսացված ու միմյանց հակասող եղանակով, այլ դրանց միջև տրամաբանական կապերի վերաբերյալ գիտելիքների կիրառման հիման վրա՝ Սահմանադրությունը դիտարկելով որպես միասնական, ամբողջական փաստաթուղթ, որպիսի հանգա-

⁷⁰ Հաշվի առնելով վերը շարադրվածը՝ հիշյալ աշխատանքի շրջանակներում «սահմանադրական կայունություն» հասկացությունը դիտարկում ենք մակրոմակարդակում, այսինքն՝ ամբողջ Սահմանադրության տեսանկյունից՝ չնայած այն հանգամանքին, որ գրականության մեջ վերջինս դիտարկվում է նաև միկրոմակարդակում՝ ելակետ ընդունելով սահմանադրական առանձին դրույթները (տե՛ս Vermeule A. Selection Effects in Constitutional Law. VERMUELEBOOK, <http://www.virginialawreview.org/content/pdfs/91/953.pdf>, /Վերջին մուտք՝ 15.04.2016/):

մանքին կանդրադառնանք աշխատանքի հետագա շարադրանքի ընթացքում: Այդ առումով հետաքրքիր է Լիտվայի Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումը, համաձայն որի՝ Սահմանադրությունը չի կարող ունենալ և չունի բացեր⁷¹: Հունգարիայի սահմանադրական դոկտրինի շրջանակներում նույնպես տարածված է այն տեսակետը, որ Սահմանադրության միասնականությունն ու ամբողջականությունը ենթադրում են, որ Սահմանադրության շրջանակներում չկան իրավական բացեր, իսկ Սահմանադրության հողվածների միջև չեն կարող լինել հակասություններ⁷²:

Ամփոփելով վերը շարադրվածը՝ նշենք, որ, մեր կարծիքով, կայուն կարող է լինել սուսկ այն սահմանադրական համակարգը, իսկ կենսունակ՝ հասարակական հարաբերությունների կարգավորմանը նպատակաուղղված սուսկ այն նորմերը, որոնք ունակ են երաշխավորելու հասարակական հարաբերությունների կարգավորման և զարգացման կանխատեսելիությունն ու որոշակիությունը, ինչն իր հերթին հնարավոր է սուսկ սահմանադրական նորմերի ամրագրման առնչությամբ հիշատակված առանձնահատկությունների առկայության պայմաններում: Հարկ է նկատել, որ իրավաբանական գրականության մեջ նույնպես կանխատեսելիությունը ներկայացվում է որպես Սահմանադրության կայունության հատկանիշի առկայությունը ենթադրող կարևորագույն պահանջներից մեկը: Այդ առումով նշվում է, որ, քանզի գրեթե բոլոր գործողություն-

⁷¹ St' u Ruling No. No. 24/04 of The Constitutional Court of the Republic of Lithuania of 25 May 2004, <http://www.lrkt.lt/dokumentai/2004/r040525.htm>, /Վերջին մուտք՝ 05.04.2014/:

⁷² St' u The Basic Law of Hungary (A First Commentary) / edited by Csink L., Schanda B., Varga ZS. A. Dublin: Clarus Press, 2012, էջ 160:

ները կախված են քաղաքական գործընթացների արդյունքներից, վերջիններս պետք է օժտված լինեն կանխատեսելիության միևնույն աստիճանով: Սահմանադրական կարգը պետք է ապահովի կառավարական, ինչպես նաև ոչ կառավարական գործողությունների առնչությամբ կայուն սպասումների հնարավորություն: Միևնույն ժամանակ ընդգծվում է, որ, քանզի բոլորը շահագրգռված են ունենալու գործընթացների և արդյունքների առնչությամբ միևնույն քոչակություն, Սահմանադրությունը, որը չի ապահովում կայուն և ինքնաիրացվող սպասումների հնարավորություն, չի կարող գոյատևել երկար⁷³:

Ներկայացված վերլուծությունը հիմք է տալիս եզրակացնելու, որ սահմանադրական կայունությունը երաշխավորելու տեսանկյունից չի կարող լինել սահմանադրական նորմերի ամրագրման որևէ նմուշային լավագույն օրինակ: Ուստի, մեր կարծիքով, հիմնական չափանիշն այդ ընթացքում պետք է լինի սահմանադրական նորմերի ամրագրման այնպիսի տարբերակի ընտրությունը, որը հնարավորություն կտա յուրաքանչյուր կոնկրետ իրավիճակում հավասարակշռություն գտնելու սահմանադրական կայունության հիմքում ընկած արժեքների, սահմանադրական համակարգի կանխատեսելիության ու քոչակության և սահմանադրական զարգացումների անհրաժեշտության ու դրա հիմքում ընկած արժեքների միջև:

Շարունակելով սահմանադրական կայունությունը պայմանավորող գործոններին առնչվող վերլուծությունը՝ նշենք,

⁷³ St' u Ordeshook P. C. Constitutional Stability. Pasadena, California, October, 1991, <http://www.hss.caltech.edu/SSPapers/sswp779.pdf>, /Վերջին մուտք՝ 15.04.2016/, էջ 9, 11:

որ, չնայած քննարկվող հիմնախնդրի տեսանկյունից հիշյալ ներսահմանադրական լուծումներն ունեն բացառիկ կարևորություն, սակայն միայն դրանք չեն, որ պայմանավորում են կոնկրետ սահմանադրական համակարգերի կայունությունը: Պատճառն այն է, որ սահմանադրական կարգավորումներն իմաստագուրկ կլինեն, ուստի Սահմանադրությունը կենսունակ ու կայուն չի լինի այն բոլոր դեպքերում, երբ ի վիճակի չլինի իրականացնելու իր գործառնությունները, քանզի սովյալ պարագայում վերջինս հանդես չի գա **համակարգային կայունության** երաշխավորի դերում՝ վերածվելով սոսկ ձևական փաստաթղթի ու չհանդիսանալով զարգացող հասարակական հարաբերությունների ելակետային կարգավորիչ: Այդ առումով իրավաբանական գրականության մեջ կարծիք է արտահայտվել այն մասին, որ կայուն Սահմանադրությունը պետք է հանգեցնի արդյունավետ սոցիալական հետևանքների, հակառակ պարագայում հասարակությունը կնախընտրի այլ կարգավորում⁷⁴: Ավելին, որոշ հեղինակների կարծիքով, օրենքի կենսունակությունը ոչ այնքան տրամաբանության մեջ է, որքան պրակտիկայի⁷⁵:

Վերը շարադրվածը նկատի ունենալով՝ կարծում ենք, որ բացի ներկայացվածից, սահմանադրական կայունությունը ենթադրում է նաև այլ հանգամանքների առկայության անհրաժեշտություն: Մասնավորապես, մեր կարծիքով, սահմանադրական համակարգերը կարող են կայուն համարվել սոսկ այն դեպքում, երբ Սահմանադրությունը, այլ հանգամանքների

⁷⁴ St' u նույն տեղում, էջ 11:

⁷⁵ St' u Gillman H. Political Development and the Origins of the "Living Constitution", 2007, <http://www.acslaw.org/files/Gillman-Vanderbilt%20Paper%209-2007.pdf>, /Վերջին մուտք՝ 15.04.2016/, էջ 5:

թվում, ի վիճակի լինի իրականացնելու իր գործառույթները, ինչը պայմանավորված է ոչ միայն վերը նշված ներսահմանադրական անհրաժեշտ լուծումների առկայությամբ, այլ նաև մի շարք արտաքին գործոններով:

Հաշվի առնելով վերը շարադրվածը՝ հիշյալ համատեքստում հարկ ենք համարում անդրադառնալ այն հեղինակների տեսակետին, որոնք սահմանադրական կայունության առկայությունը պայմանավորում են քաղաքական համակարգի առանձնահատկություններով:

Քաղաքագիտության բնագավառում ավանդաբար ընդունված է այն տեսակետը, որ պաշտոնական ինստիտուտները ձևավորվում և զարգանում են որպես քաղաքական ու սոցիալական փոփոխությունների կողմնակի արդյունք: Պատահական չէ գրականության մեջ արտահայտված այն տեսակետը, որ Սահմանադրության նշանակությունը կայանում է նրանում, որ վերջինս հանդիսանում է քաղաքական պայքարի իրական մրցանակը⁷⁶: Այդ տեսանկյունից քաղաքական գործիչները պահպանում են Սահմանադրության հավասարակշռությունը միայն այնքան ժամանակ, քանի դեռ դրա հիմքում ընկած և հավասարակշռությունն ապահովող շահերի ու լիազորությունների պատկերը կայուն է: Երբ փոխվում են հիշյալ գործիչների շահերն ու նրանց ունեցած ռեսուրսները, փոխ-

⁷⁶ St' u Calvert R. Coordination and Constitutional Change. Washington University in St. Louis, էջ 11, <http://calvert.wustl.edu/downloads/CoordConstChg.MPSA.pdf>, /Վերջին մուտք՝ 15.04.2016/, Overview of Law and Politics // The Oxford Handbook of Political Science, Edited by Goodin R., 2011, <http://www.oxfordhandbooks.com/view/10.1093/oxfordhb/9780199604456.001.0001/oxfordhb-9780199604456-e-012?print=pdf>, /Վերջին մուտք՝ 16.06.2018/:

վում է նաև գոյություն ունեցող սահմանադրական կարգը⁷⁷: Ավելին, լայն տարածում է ստացել այն տեսակետը, որ սահմանադրությունները ենթակա են քաղաքական գործիչներին ու իրադարձություններին և գոյատևում են այնքան ժամանակ, քանի դեռ քաղաքական առումով նպատակահարմար են, և ոչ ավելի⁷⁸: Հետևաբար, քաղաքական ու սոցիալական կյանքում տեղի ունեցող կարևոր փոփոխությունները մեծացնում են նաև Սահմանադրության փոփոխության վտանգը:

Բազմաթիվ ուսումնասիրություններ վկայում են, որ ժամանակակից սահմանադրությունների կայունությունը մեծապես պայմանավորված է հենց քաղաքական կայունությամբ⁷⁹, և որ զինված հեղաշրջումների, քաղաքացիական խռովությունների կամ հեղափոխությունների արդյունքում պետական իշխանության հավասարակշռության ընդհատումը ամենամեծ ազդեցությունն է ունենում Սահմանադրության կենսունակությունը կրճատելու վրա: Հիշյալ իրադարձությունների տարիներին է փոփոխվել, օրինակ, 1946-2000թթ. ընթացքում Լատինական Ամերիկայի երկրներում գործողությունը դադարեցրած սահմանադրությունների 66%-ը⁸⁰:

Հիշյալ համատեքստում հիշատակման է արժանի իրավաբանական գրականության մեջ արտահայտված այն տեսակե-

⁷⁷ St' u Negretto G. L., նշված աշխատությունը:

⁷⁸ St' u How Constitutions Change (A Comparative Study) / edited by Oliver D., Fusaro C., Oxford and Portland, Oregon, 2011, էջ 115:

⁷⁹ Պատահական չէ, որ ԱՄՆ Սահմանադրության երկարակեցության պատճառներից մեկն այն է, որ ամերիկյան քաղաքական կյանքը զարգանում է վերջինիս շուրջ և հարմարվում է Սահմանադրության ծայրահեղ առանձնահատուկ կարգավորումներին (տե՛ս Ginsburg T., Melton J., Elkins Z., նշված աշխատությունը):

⁸⁰ St' u Negretto G. L., նշված աշխատությունը:

տը, որ Սահմանադրությունն ունի խառը՝ քաղաքական-իրավական բնույթ, և քաղաքական ու իրավականը Սահմանադրությունում սերտորեն փոխկապված են⁸¹: Ավելին, առանձին հեղինակների կարծիքով, սահմանադրականությունը Սահմանադրության բովանդակության մեջ արտահայտություն գտած քաղաքականությունը փաստացի կյանքի կոչելն է⁸²: Այդ հանգամանքը նկատի ունենալով՝ գրականության մեջ Սահմանադրության էության առանցքային տարրերը ձևակերպվում են հետևյալ հարցադրումների տեսքով՝ 1. ո՞ր քաղաքական ուժերի կամքն է ամրագրվել սահմանադրական նորմերում, 2. հասարակական ո՞ր շերտերի շահերն են արտահայտված սահմանադրական դրույթներում և պաշտպանվում նրանց կողմից և այլն⁸³: Մի շարք հեղինակների կարծիքով էլ, իրավունքն ընդհանրապես չի կարող գոյություն ունենալ առանց քաղաքականության, քանի որ քաղաքականությունն իրավունքի շարժիչ ուժն է և «կոպիտ բովանդակությունը», էությունը, որն իրավունքն ադապտացնում է իր ինքնավար շրջանակներին և ձևակերպում է նրա վերջնական ձևը՝ արտահայտելով այն հատուկ նորմատիվ տեսքով⁸⁴:

Մեր կարծիքով նույնպես, ուսումնասիրվող հիմնախնդրի տեսանկյունից քաղաքականությունը հանդիսանում է կարևորագույն գործոն, քանզի քաղաքական միջավայրն անհերքելի

⁸¹ Sե՛ u Кравец И. А. Российский конституционализм: проблемы становления, развития и осуществления. СПб., 2005, էջ 148, How Constitutions Change (A Comparative Study) / edited by Oliver D., Fusaro C., Oxford and Portland, Oregon, 2011, էջ 242:

⁸² Sե՛ u Витрук Н. Конституционное правосудие. М., 2005, էջ 144:

⁸³ Sե՛ u Кравец И. А., նշված աշխատությունը, էջ 154-155:

⁸⁴ Sե՛ u Cerar M. The Relationship Between Law and Politics // Annual Survey of International & Comparative Law, Volume 15, Issue 1, 2009, էջ 33:

ազդեցություն է ունենում, իսկ ավելի կոնկրետ ասած՝ հենց այն է մեծապես պայմանավորում սահմանադրական լուծումների ընտրությունն ու դրանց փաստացի իրացումը: Նման եզրահանգման պատճառն ակնհայտ է, քանզի ժամանակակից գրեթե բոլոր սահմանադրական համակարգերում սահմանադրություններն ընդունվում և փոփոխվում են քաղաքական ուժերի անմիջական մասնակցության արդյունքում՝ անկախ այն հանգամանքից, թե սահմանադրական կարգավորումներն ընդունող մարմինը խորհրդարանն է⁸⁵, այդ նպատակով հատուկ ստեղծվող մարմինը⁸⁶, թե ժողովուրդը⁸⁷:

ՀՀ Սահմանադրության 202 հոդվածն, օրինակ, նախատեսում է, որ Սահմանադրությունը և Սահմանադրության 1-3-րդ, 7-րդ, 10-րդ և 15-րդ գլուխներում, ինչպես նաև Սահմանադրության 88-րդ հոդվածում, 89-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին նախադասությունում, 90-րդ հոդվածի 1-ին մասում, 103-րդ հոդվածի 2-րդ մասում, 108-րդ, 115-րդ, 119-120-րդ, 123-125-րդ, 146-րդ, 149-րդ և 155-րդ հոդվածներում, 200-րդ հոդվածի 4-րդ մասում փոփոխություններն ընդունվում են միայն հանրաքվեի միջոցով: Սահմանադրությունն ընդունելու կամ փոփոխելու նախաձեռնության իրավունք ունեն ***պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդը, Կառավարությունը կամ***

⁸⁵ Օրինակ՝ Հունգարիայում, այժմ նաև մասնակիորեն Հայաստանի Հանրապետությունում:

⁸⁶ Օրինակ՝ Ռուսաստանի Դաշնությունում հիշյալ մարմինը կոչվում է Սահմանադիր ժողով:

⁸⁷ Մինչ 06.12.2015թ. սահմանադրական փոփոխությունները ՀՀ Սահմանադրությունն ընդունվում և դրանում փոփոխություններ կատարվում էին միայն հանրաքվեի միջոցով: Սահմանադրական բարեփոխումներից հետո ՀՀ Սահմանադրությունը նախատեսեց սահմանադրական առանձին կարգավորումները նաև Ազգային ժողովի կողմից փոփոխելու հնարավորություն:

ընտրական իրավունք ունեցող երկու հարյուր հազար քաղաքացի: Ազգային ժողովը նախագիծը հանրաքվեի դնելու վերաբերյալ որոշումն ընդունում է պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երկու երրորդով: Բացառությամբ նշված հոդվածների, Սահմանադրության մյուս հոդվածներում փոփոխություններն ընդունում է **Ազգային ժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երկու երրորդով:** Համապատասխան նախաձեռնության իրավունք ունեն պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ քառորդը, **Կառավարությունը կամ ընտրական իրավունք ունեցող հարյուր հիսուն հազար քաղաքացի:** Եթե նշված հոդվածի 2-րդ մասով նախատեսված Սահմանադրության փոփոխությունների նախագիծն Ազգային ժողովը չի ընդունում, ապա **պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով ընդունված որոշմամբ այն կարող է դրվել հանրաքվեի:** Ավելին, ՀՀ Սահմանադրության 206 հոդվածի համաձայն՝ Ազգային ժողովի կողմից հանրաքվե անցկացնելու մասին որոշումն ընդունվելուց հետո՝ եռօրյա ժամկետում, **Հանրապետության նախագահը** նշանակում է հանրաքվե:

Ավելին, սահմանադրական կարգավորումների բնույթն ինքնին այնպիսին է, որ դրանց մեծամասնությունը⁸⁸ չի կարող կյանքի կոչվել առանց քաղաքական ուժերի անմիջական մասնակցության:

Ներկայացված իրավակարգավորումները հիմք են տալիս եզրակացնելու, որ ինչպես սահմանադրական փոփոխություն-

⁸⁸ Օրինակ՝ պետական իշխանության մարմինների կազմակերպման և գործունեության, մարդու հիմնական սահմանադրական իրավունքների և ազատությունների առնչությամբ սահմանադրական կարգավորումները:

ների ընդունման, այնպես էլ հանրաքվեի նշանակման հարցերում քաղաքական ուժերն ունեն անմիջական դերակատարություն: Այդ դերակատարությունն ակնհայտ է նաև սահմանադրական նորմերի իրացման առումով:

Հարկ է նկատի ունենալ, որ ի տարբերություն այլ ինստիտուտների և խմբերի՝ քաղաքական ուժերի համար սահմանադրական զարգացումներն առաջին հերթին անհրաժեշտ են իշխանություն ձեռք բերելու, այն փաստացի պահպանելու և իշխանությունների բաժանման ու հավասարակշռման ցանկալի մոդել ձևավորելու ու զարգացնելու նպատակով, ինչն էական է դառնում սահմանադրական զարգացումների ընթացքում նրանց ամբողջ դերակատարության տեսանկյունից: Ուստի, ակնհայտ է, որ նշված ուժերի համար որպես շարժիչ ուժ են հանդես գալիս երեք հիմնական գործոններ՝ 1. քաղաքական ուժերը ներկայացնող անձանց անհատական, մասնավոր շահեր⁸⁹, 2. կուսակցական շահեր⁹⁰, 3. հանրային շահեր: Նկատի ունենալով քաղաքական ուժերի գործունեության ընդհանուր նպատակները՝ բնականաբար, անհնար է բացառել այդ ուժերի գործունեության ընթացքում անհատական կամ կուսակցական շահի առկայությունն ու դերակատարությունը: Հետևաբար, ակնհայտ է, որ հիշյալ համատեքստում կարևորագույն խնդիրը անհատական և կուսակցական նշված գործոնների և հանրային շահի միջև պատշաճ հավասարակշռություն

⁸⁹ Օրինակ՝ վերջին տարիներին չափազանց հաճախ հանդիպող՝ նախագահների պաշտոնավարման ժամկետների երկարացման փորձերը:

⁹⁰ Օրինակ՝ իշխանության համակարգում կոնկրետ քաղաքական ուժի դերակատարությունը պահպանելու նպատակով կառավարման կոնկրետ ձևի, ընտրական կոնկրետ համակարգի ընտրությունը և այլն:

գտնելն է այն առումով, որ անհատական և կուսակցական շահերը երկրորդացված, ածանցված լինեն հանրային շահից՝ ծառայելով հասարակական համակարգերի գլխավոր նպատակին՝ այն հանգամանքին, որ բոլոր հասարակական համակարգերի առանցքը, հիմքը մարդն է՝ որպես բարձրագույն արժեք, ում համար իրավունքի գերակայության հաստատման ու ամրապնդման միջոցով պետք է երաշխավորվեն ինքնարտահայտման ու ինքնադրսևորման հնարավորություններն ու վերջինիս արժևորման պահանջի իրացումը⁹¹:

Հիշյալ համատեքստում կարևորվում է նաև այն հանգամանքը, որ եթե սահմանադրական զարգացումներն իրականացվում են Սահմանադրության տեքստում փոփոխություններ կատարելու եղանակով, ապա այդ ընթացքում անհրաժեշտ է բացառել քաղաքական ուժերի, առաջին հերթին, իշխող քաղաքական ուժի մեկուսացումը քաղաքական այլ ուժերից և հանրությունից, և այդ համատեքստում սահմանադրական լուծումների միանձնյա փնտրտուքը, քանզի այդ հանգամանքը հանգեցնում է սահմանադրական կարգավորումների և դրանց իրացման գործընթացի նկատմամբ վստահության անկման, հետևաբար նաև՝ սահմանադրական կայունության բացակա-

⁹¹ Պատահական չէ, որ միջազգային-իրավական փաստաթղթերը հանրաքվեի առումով կարևորագույն սկզբունքներից մեկը դիտարկում են վարչական մարմինների չեզոքությունը և հանրաքվեի դրված նախագծի նախաձեռնությամբ հանդես եկած կողմի և ընդդիմախոսների համար հավասար հնարավորությունների երաշխավորումը (տե՛ս CDL-AD(2007)008, Code of Good Practice on Referendums // adopted by the Council for Democratic Elections at its 19th meeting (Venice, 16 December 2006) and the Venice Commission at its 70th plenary session (Venice, 16-17 March 2007), [http://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=cdl-ad\(2007\)008-e](http://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=cdl-ad(2007)008-e), /Վերջին մուտք՝ 16.06.2018/):

յության: Այդ առումով հետաքրքիր է գրականության մեջ ներկայացվող Հարավ-Աֆրիկյան Հանրապետության սահմանադրական բարեփոխումների օրինակը, որի հաջողությունը, ըստ որոշ հեղինակների, պայմանավորված էր ոչ միայն հանրային մեծ ներգրավվածության հանգամանքով, այլ նաև միջկուսակցական «բավարար կոնսենսուսի» առկայությամբ⁹²:

Վերը շարադրվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ քաղաքական միջավայրն անհերքելի ազդեցություն է ունենում, իսկ ավելի կոնկրետ ասած՝ հենց այն է մեծապես պայմանավորում սահմանադրական լուծումների ընտրությունն ու դրանց փաստացի իրացումը:

Սակայն քննարկվող համատեքստում անհրաժեշտ է հաշվի առնել և այն, որ հիշյալ ազդեցությունը միակողմանի չէ, քանզի Սահմանադրությունն իր հերթին սահմանում է այն կանոնները, որոնց շրջանակներում պետք է գործի պետական, հետևաբար՝ նաև քաղաքական իշխանությունը: Այդ առումով հետաքրքիր են ֆրանսիացի հայտնի իրավագետ Պյեր Սանդեվուարի խոսքերն այն մասին, որ «Հենց քաղաքականությունն է ձևավորում իրավունքը, սակայն միննույն ժամանակ, իրավունքն իր հերթին արձագանքում է քաղաքականությանը՝ նրանում ներդնելով կարգավորող տարր և քաղաքական գործիչներին ստիպելով գործել բաց, արդար և պատասխանատու եղանակով»⁹³: Հետաքրքիր է նաև գրականության մեջ արտա-

⁹² St' u Vliet M. van, Wahiu W., Magolowondo A. Constitutional Reform Processes and Political Parties: Principles for Practice, էջ 42, <https://openaccess.leidenuniv.nl/bitstream/handle/1887/30222/ASC-075287668-3333-01.pdf?sequence=1>, /Վերջին մուտք՝ 16.06.2018/:

⁹³ St' u Сандевуар П. Введение в право / Пер. с франц. М., 1994, էջ 61–64:

հայտված այն տեսակետը, որ սոցիալական հիմնարար փոփոխությունները հնարավոր են սոսկ սահմանադրական այնպիսի զարգացումների միջոցով, որոնք արտացոլում են սահմանադրականության, մարդու և քաղաքացու իրավունքների նկատմամբ հարգանքի և իրավունքի գերակայության արմատավորմանն ուղղված քաղաքական մշակույթի համապատասխան փոփոխությունները⁹⁴:

Հետևաբար, սահմանադրական կայունությունը պայմանավորված է ոչ թե սոսկ քաղաքական ուժերի հարաբերակցության այս կամ այն փոփոխություններով, այլ ընդհանրապես հասարակության սահմանադրական և քաղաքական մշակույթի համապատասխան մակարդակով: Վերջինս է կանխորոշում ինչպես սահմանադրական ներքին լուծումների բնույթը, այնպես էլ դրանց ամրագրման ու կենսունակության վրա ազդեցություն ունեցող արտաքին գործոններն ու վերջիններիս արձագանքելու մեթոդները: Պատահական չէ, որ գրականության մեջ հենց մշակույթի ու քաղաքականության ազդեցությամբ է պայմանավորվում այն հանգամանքը, որ երկրների մի մասում նույնիսկ կոշտ սահմանադրությունների պայմաններում տեղի են ունենում Հիմնական օրենքի բազմաթիվ տեքստային փոփոխություններ, ինչպես, օրինակ, Գերմանիայում, Չեխիայում, Հնդկաստանում, Հարավ-Աֆրիկյան Հանրապետությունում: Մինչդեռ այլ երկրների մշակույթն ու քաղաքականությունը Սահմանադրության տեքստային փոփոխությունները դարձնում են չափազանց բարդ կամ նույնիսկ անհ-

⁹⁴ Sté u Vliet M. van, Wahiu W., Magolowondo A. նշված աշխատությունը, էջ 13, <https://openaccess.leidenuniv.nl/bitstream/handle/1887/30222/ASC-075287668-3333-01.pdf?sequence=1>, /Վերջին մուտք՝ 16.06.2018/:

նար, օրինակ, Իտալիայում և Իսպանիայում⁹⁵: Այդ առումով հիշատակման է արժանի իրավաբանական գրականության մեջ արտահայտված և այն տեսակետը, որ Սահմանադրության իրացումն ու կայունությունը կախված են այն հանգամանքից, թե որքանով է այն ընդունվում ու պահպանվում պետական իշխանության և, որ ամենակարևորն է, հասարակության տարբեր խմբերի կողմից⁹⁶:

Հետևաբար, կարծում ենք, որ սահմանադրական կայունության հատկանիշի առկայության համար հասարակության սահմանադրական և քաղաքական մշակույթն ունի առանցքային նշանակություն:

Մինևույն ժամանակ, հիշյալ համատեքստում անհրաժեշտ է առաջնորդվել այն տրամաբանությամբ, որ իրավունքն ու քաղաքականությունը պետք է ունենան մեկ ընդհանուր հիմնական նպատակ՝ իրավունքի գերակայության սկզբունքի երաշխավորմամբ հասարակական հարաբերությունները կարգավորելը: Իսկ այդ պայմաններում ակնհայտ է, որ Սահմանադրությունը քաղաքականության համար պետք է ոչ թե գործիք, այլ սահման լինի, իսկ սահմանադրական զարգացումները պետք է արտահայտեն ոչ թե ընթացիկ քաղաքական նախապատվություններն ու շահերը, այլ վեր կանգնած լինեն դրան-

⁹⁵ Sté u How Constitutions Change (A Comparative Study) / edited by Oliver D., Fusaro C., Oxford and Portland, Oregon, 2011, էջ 396-397:

⁹⁶ Sté u Inquiry to Review New Zealand's Existing Constitutional Arrangements // Report of the Constitutional Arrangements Committee, Presented to the House of Representatives, Forty-seventh Parliament (Hon Peter Dunne, Chairperson), August 2005, http://www.parliament.nz/NR/rdonlyres/575B1B52-5414-495A-9BAF-C9054195AF02/15160/DBSCH_SCR_3229_2302.pdf, /Վերջին մուտք՝ 04.02.2014/, էջ 7:

ցից և հիմնարար իրավական շրջանակներ սահմանեն քաղաքական գործիչների ու իրադարձությունների համար⁹⁷: Այլ կերպ՝ սահմանադրական քաղաքականությունը պետք է հստակորեն տարանջատվի ընթացիկ քաղաքականությունից, իսկ Սահմանադրությունը պետք է ոչ թե ընթացիկ քաղաքական խաղի մաս կազմի, այլ այդ խաղի կանոնները սահմանելու դերակատարություն ունենա: Պատահական չէ, որ «Սահմանադրություն» հասկացությունն ինքնին ստուգաբանվում է նաև «սահման դնելու» առումով, իշխանության սահմանները հստակեցնելու և «անճշտությունից որոգայթ» ստեղծելու բոլոր նրանց համար, ովքեր կփորձեն դուրս գալ օրենքով սահմանված իրենց լիազորությունների շրջանակներից⁹⁸: Հիշյալ հասկացությունում ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ կատարված ուսումնասիրությունները վկայում են, որ բոլոր այն իրավիճակներում, երբ քաղաքական էլիտաները փորձել են Սահմանադրությունն օգտագործել՝ քաղաքական դրամանատություն ձեռք բերելու նպատակով, վերջնարդյունքը եղել է «Սահմանադրություն՝ առանց սահմանադրականության» պարադոքսը⁹⁹, ինչը, կարծում ենք, անընդունելի է սահմանադրական կայունության և կայուն ժողովրդավարության երաշխավորման տեսանկյունից:

⁹⁷ Այդ մասին տե՛ս նաև CDL-AD(2010)001, նշված փաստաթուղթը, Papuashvili G. Problems of the Constitutional Stability in Georgia // Альманах (Конституционное правосудие в новом тысячелетии), Ереван, 2009, էջ 48:

⁹⁸ Տե՛ս Հարությունյան Գ., Սահմանադրական մշակույթ. պատմության դասերը և ժամանակի մարտահրավերները, Երևան, 2005, էջ 24:

⁹⁹ Տե՛ս Vliet M. van, Wahiu W., Magolowondo A. նշված աշխատությունը, էջ 12, <https://openaccess.leidenuniv.nl/bitstream/handle/1887/30222/ASC-075287668-3333-01.pdf?sequence=1>, /Վերջին մուտք՝ 16.06.2018/:

Ամփոփելով վերը շարադրվածը՝ նշենք, որ սահմանադրական կայունության հատկանիշի առկայությունը պայմանավորող գործոնները կարելի է դասակարգել երկու խմբի՝ 1. Էնդոգեն, 2. Էկզոգեն: Առաջին խումբը վերաբերում է Սահմանադրության բովանդակությանն ու սահմանադրական ներքին լուծումների բնույթին, օրինակ՝ Սահմանադրության ինքնաբավությունը: Իսկ երկրորդ խումբն ընդգրկում է այն բոլոր արտաքին գործոնները, որոնք ազդեցություն են ունենում Սահմանադրությամբ նախատեսվող լուծումների ամրագրման ու դրանց կենսունակության համար, օրինակ՝ քաղաքական ուժերի հարաբերակցության փոփոխությունները:

Չնայած Սահմանադրության կայունության հատկանիշի առկայությունը պայմանավորվում է վերը նշված չափանիշներին բավարարելու հանգամանքով՝ իրավաբանական գրականության մեջ տեսակետ է արտահայտվել այն մասին, որ բոլոր դեպքերում հարկ է խուսափել Հիմնական օրենքի «արհեստական կայունությունից»¹⁰⁰: Մեր կարծիքով, սակայն, երբ իրականում բացակայում է հիշյալ հատկանիշը, և, միևնույն ժամանակ, առանձին չափանիշների ձևախեղման միջոցով արհեստականորեն փորձ է արվում տպավորություն ստեղծել վերջինիս առկայության մասին, առավել նպատակահարմար է խոսել ոչ թե «արհեստական կայունության», այլ ընդհանրապես քննարկվող հատկանիշի բացակայության մասին: Սահմանադրության պարագայում նմանատիպ իրավիճակներ հնարավոր են, օրինակ, այն դեպքերում, երբ այն ուժի մեջ է մնում և

¹⁰⁰ Տե՛ս Сорокин В.В. Конституция Российской Федерации 1993 года: критерии стабильности, <http://tigr.wordpress.com/2010/02/01/сорокин-в-в-конституция-российской-фе/>, /Վերջին մուտք՝ 15.04.2016/:

փոփոխությունների չի ենթարկվում երկար ժամանակահատվածի ընթացքում, սակայն ամրագրում է հասարակական հարաբերությունների կարգավորման այնպիսի կանոններ, որոնք բնորոշ չեն սոցիալական հանրության պատմական տվյալ փուլին, իրականում չի ամրագրում այն արժեքներն ու սկզբունքները, որոնք հիմնարար են կոնկրետ հասարակության համար, չի ամրագրում այնպիսի կառուցակարգային լուծումներ, որոնք անհրաժեշտ են հանրային կյանքը սահմանադրական նորմերին ու սկզբունքներին համապատասխան վերակազմակերպելու համար, չի նախատեսում որոշակի արժեքների համակարգ արտացոլող այնպիսի նորմ-նպատակներ ու նորմ-սկզբունքներ, որոնց պետք է ձգտի տվյալ սոցիալական հանրությունը, չի հանդիսանում այն իրավական հիմքը, որի վրա զարգանում է տվյալ պետության օրենսդրությունը: Մինչդեռ երկարատև ժամանակահատվածի ընթացքում գործող Սահմանադրությունը սուկ այդ առանձնահատկությունների առկայության պայմաններում կարող է լինել կայուն: Հետևաբար, կարծում ենք, որ տվյալ պարագայում ելակետային պետք է լինի այն, որ «Սահմանադրություն» հասկացությունը հանգում է ոչ միայն գոյություն ունեցող տեքստին կամ առանձին փաստաթղթային լուծումներին, այլև դրանց հիմքում ընկած արժեքներին ու սկզբունքներին, ուստի, այլ հանգամանքների թվում, նաև դրանցով պետք է պայմանավորված լինի Հիմնական օրենքի կայունության հատկանիշի առկայությունը: Պատահական չէ իրավաբանական գրականության մեջ արտահայտված այն տեսակետը, որ «Սահմանադրություն» հասկացությունը հանգում է ռացիոնալ սկզբունքների ամբողջության: Այս տեքստերում ամրագրված իրավունքների իրա-

կանացման վերաբերյալ նորմերը իրենց ուժը ձեռք են բերում ոչ այնքան «ժողովրդի» կողմից հաստատվելու հանգամանքից, որքան ողջամտության սկզբունքներից: Այս նորմերի ուժն է պահպանվում, և այս նորմերն են ձեռք բերում հիմնական օրենքի կարգավիճակ, ոչ թե որովհետև իրենց ուժը ստացել են ժողովրդից, այլ դրանց պահանջների ռացիոնալության ակնհայտության պատճառով¹⁰¹: Հետևաբար, թեև Սահմանադրության կարևորագույն հատկանիշներից մեկը վերջինիս ժողովրդականությունն է, սակայն միայն ժողովրդի կողմից ընդունված լինելու հանգամանքը բավարար չէ երևույթը որպես Սահմանադրություն բնորոշելու և վերջինիս գործառույթների իրականացումն արդյունավետ բնութագրելու համար: Դրա համար անհրաժեշտ է ոչ թե սուկ անհրաժեշտ այս կամ այն հատկանիշի, այլ անհրաժեշտ ու բավարար հատկանիշների ամբողջության առկայությունը, և որ ամենակարևորն է՝ համարժեք սահմանադրական ու քաղաքական մշակույթ¹⁰²: Պատահական չէ, որ իրենց գործառույթներն արդյունավետորեն իրականացնում են մի շարք այնպիսի սահմանադրություններ, որոնք ընդունվել են խորհրդարանի կամ այդ նպատակով

¹⁰¹ See 'u The Twilight of Constitutionalism / edited by Dobner P. and Loughlin M. Oxford, 2010, էջ 61:

¹⁰² Նշենք, որ թեև գրականության մեջ նշվում է, որ Սահմանադրության կենսունակությունը մեծանում է՝ պայմանավորված ինչպես մշակման, այնպես էլ հաստատման փուլերում հասարակության ներգրավման մակարդակով, սակայն միևնույն ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել և այն, որ հասարակության կողմից հաստատման հանգամանքը մեծացնում է Սահմանադրության կենսունակությունը ժողովրդավարական, բայց ոչ բռնապետական համակարգերում: Պատճառն այն է, որ բռնապետության պայմաններում հանրաքվեն իրականում չի հանգեցնում լեգիտիմության և չի նպաստում սահմանադրական դրույթների կոլեկտիվ իրացմանը (այդ մասին տե՛ս Ginsburg T., Melton J., Elkins Z., նշված աշխատությունը):

ընտրված կամ հրավիրված հատուկ մարմնի կողմից¹⁰³, ինչի առնչությամբ Վենետիկի հանձնաժողովը դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ «Սահմանադրական փոփոխությունների համար չկա ընդհանուր Եվրոպական «լավագույն մոդել» և պարտադիր իրավական պահանջներ: ... Նմանատիպ հիմնախնդիրների տեսանկյունից ներկայացուցչական ժողովրդավարությունն անկասկած նույնքան լեգիտիմ է, որքան անմիջականը...»¹⁰⁴: Ավելին, սահմանադրական զարգացումների առնչությամբ տարբեր երկրների փորձի ուսումնասիրությունը վկայում է, որ չկա սահմանադրական բարեփոխումների այնպիսի «լավագույն փորձ», որն անմիջականորեն ռելեվանտ (համարժեք, համապատասխան) լինի այլ սահմանադրական համակարգերի համար¹⁰⁵:

§ 3. Սահմանադրական կայունությունը և սահմանադրական փոփոխությունների հաճախականությունն արդի սահմանադրաիրավական մտածողության համատեքստում

Հիշյալ համատեքստում առաջանում է ևս մի կարևոր հիմնախնդրի, այն է՝ սահմանադրական կայունության և ժամանակի միջև կապի վերլուծության անհրաժեշտություն: Հատկանշական է, որ կան հեղինակներ, որոնց կարծիքով, հենց

¹⁰³ Օրինակ՝ ԱՄՆ Սահմանադրությունը, Գերմանիայի Հիմնական օրենքը:

¹⁰⁴ Sté u CDL-AD(2010)001, նշված փաստաթուղթը:

¹⁰⁵ Sté u Vliet M. van, Wahiu W., Magolowondo A. նշված աշխատությունը, էջ 45, [79](https://openaccess.leidenuniv.nl/bitstream/handle/1887/30222/ASC-075287668-3333-01.pdf?sequence=1, /Վերջին մուտք՝ 16.06.2018/:</p></div><div data-bbox=)

վերջինս է հանդիսանում սահմանադրական համակարգերի քննարկվող հատկանիշի առկայությունը պայմանավորող էլակետային չափանիշը: Նրանք գտնում են, որ սահմանադրական համակարգերի կայունությունը պայմանավորված է ժամանակի մեջ Սահմանադրության գործողության երկարատևությամբ, այսինքն՝ այն հանգամանքով, թե որքան երկար է այն մնում ուժի մեջ: Հիշյալ հեղինակների կարծիքով, երբ քաղաքական գործիչները նախատեսում են որոշակի սահմանադրական կարգավորում, նրանց շահերից չի բխում դրանից հրաժարվելը՝ նորից համաձայնության գալու համար անհրաժեշտ հավաքական գործողությունների ու դրա համար պահանջվող ներքին ծախսերի պատճառով: Քննարկվող տեսությունը ենթադրում է Հիմնական օրենքի կենսունակության դրական կախվածություն ժամանակից, ինչը նշանակում է, որ երբ Սահմանադրության հեղինակները համաձայնության են գալիս որոշակի կարգավորման առնչությամբ, դրա փոփոխման հավանականությունը ժամանակի մեջ փոքրանում է¹⁰⁶: Հետևաբար, հիշյալ տեսակետի կողմնակիցները, այլ հանգամանքների թվում, սահմանադրական կայունությունը պայմանավորում են ժամանակային գործոնով կամ Սահմանադրության գործողության ժամանակահատվածով:

Անդրադառնալով ներկայացված մոտեցմանը՝ նշենք, որ, մեր կարծիքով, Սահմանադրության՝ երկարատև ժամանակահատվածի ընթացքում գործողությունը կարող է պայմանավորված լինել ոչ միայն այն հանգամանքով, որ վերջինս հանդիսանում է կենսագոյի հիմնարար կանոնների շուրջ հասարակական համաձայնություն և ամրագրում է իրավական այն

¹⁰⁶ Sté u Negretto G. L., նշված աշխատությունը, էջ 6-7:

հիմնարար արժեքներն ու սկզբունքները, որոնք բնորոշ են սոցիալական հանրության պատմական տվյալ փուլին, այլ մի շարք քաղաքական, սոցիալական, տնտեսական և այլ գործոններով: Օրինակ՝ Կոլումբիայի 1886թ. Սահմանադրությունը փոփոխվեց միայն 1991թ.՝ ուժի մեջ մնալով 105 տարի, սակայն դրա հիմնական պատճառը ոչ թե Սահմանադրության հեղինակությունն էր, այլ սահմանադիր ժողով հրավիրելու անհաջող փորձերը, որոնք միևնույն ժամանակ ուղեկցվում էին Սահմանադրության հիմնական գաղափարների առնչությամբ գոյություն ունեցող սուր քննադատությամբ: Իսպանիայի Սահմանադրությունը նույնպես իր գործողության 30 տարիների ընթացքում կրել է ընդամենը երկու տեքստային փոփոխություն: Դրա պատճառը, սակայն, քաղաքական համաձայնության բացակայությունն է, և ոչ այն, որ Սահմանադրությունը չունի զարգացման անհրաժեշտություն¹⁰⁷: Ռումինիայի 1991թ. Սահմանադրությունն իր գործողության 27 տարիների ընթացքում կրել է ընդամենը մեկ փոփոխություն՝ 2003թ.-ին: Սահմանադրական երկրորդ փոփոխությունների անհրաժեշտության հարցը բարձրացվեց 2012թ. քաղաքական ճգնաժամից հետո, հանրային քննարկումներն սկսվեցին 2013թ.¹⁰⁸: 2015թ. պետք է տեղի ունենար նշված հարցով սահմանադրական հանրաքվե, սակայն այն նախաձեռնած կառավարությունը հրաժարական տվեց, ինչի արդյունքում հանրաքվեն այդպես էլ տեղի չունե-

¹⁰⁷ Քանզի այն զարգանում է տեքստային փոփոխություններից տարբերվող այլ եղանակներով, օրինակ՝ մեկնաբանության միջոցով (տե՛ս How Constitutions Change (A Comparative Study) / edited by Oliver D., Fusaro C., Oxford and Portland, Oregon, 2011, էջ 282-283):

¹⁰⁸ Տե՛ս Enache M. The Constitutional Reform in Romania // US-China Law Review, Vol. 12, N 8, 2015, էջ 633-646:

ցավ: Բելառուսի Հանրապետության 1994թ. Սահմանադրությունը իր գործողության 24 տարիների ընթացքում ընդամենը երկու անգամ է ենթարկվել փոփոխությունների: Առաջին անգամ Բելառուսի Սահմանադրության տեքստում փոփոխություններ կատարվել են Սահմանադրության ընդունումից ընդամենը երկու տարի հետո՝ 1996թ.-ին: Ընդ որում՝ Սահմանադրությունում կատարված փոփոխություններն այնքան էական էին, որ հաճախ գրականության մեջ խոսվում է Բելառուսի երկու տարբեր՝ 1994թ. և 1996թ. Սահմանադրությունների առկայության մասին: Նշված փոփոխությունների արդյունքում փոփոխվեց իշխանությունների բաժանման ու հավասարակշռման համակարգը, էականորեն ավելացան Հանրապետության Նախագահի լիազորությունները, ստեղծվեց երկպալատ խորհրդարան, Նախագահը ձեռք բերեց խորհրդարանն արձակելու, օրենքի ուժ ունեցող դեկրետներ ընդունելու լիազորություններ և այլն¹⁰⁹: Նախագահ Լուկաշենկոյի և խորհրդարանի միջև այդ ժամանակահատվածում առկա քաղաքական կոնֆլիկտի պայմաններում սահմանադրական նշված փոփոխությունների քաղաքական պատճառներն ակնհայտ էին¹¹⁰: Ակնհայտ էր նաև սահմանադրական երկրորդ փոփոխության քաղաքական համատեքստը, երբ 2004թ.-ին Սահմանադրության տեքստից հանվեց նույն անձի կողմից երկուսից ավելի անգամ Հանրապետության Նախագահի պաշտոնը զբաղեցնելու ար-

¹⁰⁹ Տե՛ս Левская Л. Конституционное развитие Республики Беларусь, http://mogilev-region.gov.by/files/konstitucionnoe_razvitie_respubliki_bielarus.doc, /Վերջին մուտք՝ 16.06.2018/:

¹¹⁰ Տե՛ս <https://www.hrw.org/reports/1999/belarus/Belrus99-04.htm>, /Վերջին մուտք՝ 16.06.2018/:

գելքը¹¹¹: Կարծում ենք, որ Բելառուսի Հանրապետության պարագայում նույնպես Սահմանադրության անփոփոխ տեքստի երկարատև գործողության հիմնական պատճառը ոչ թե Սահմանադրության հեղինակությունն է, այլ այդ երկրում ստեղծված քաղաքական իրավիճակն ու դրանից բխող սոցիալական ու տնտեսական տարատեսակ գործոնները:

Հավելենք նաև, որ որոշ դեպքերում սահմանադրական փոփոխությունների հաճախականության տարբերությունները սուսկ առաջին հայացքից են՝ պայմանավորված որոշակի օբյեկտիվ հանգամանքներով: Այն երկրներում, օրինակ, որտեղ սահմանադրական փոփոխությունները կարող են կատարվել գլխավորապես հանրաքվեի միջոցով, սովորաբար նախապատրաստվում է անհրաժեշտ փոփոխությունների մեկ ամբողջական փաթեթ, և սահմանադրական բարեփոխումն իրականացվում է Սահմանադրության ամբողջ տեքստն ընդգրկող մեկ փաթեթի տեսքով: Օրինակ՝ 1995թ. ՀՀ Սահմանադրությունը, որում փոփոխությունները հնարավոր էին միայն հանրաքվեի միջոցով, տեքստային փոփոխությունների է ենթարկվել երկու անգամ՝ 2005թ. և 2015թ.: Երկու դեպքում էլ փոփոխությունները ներկայացվել են Սահմանադրության ամբողջ տեքստն ընդգրկող մեկ միասնական փաթեթի տեսքով: Նույնը կարելի է ասել նաև մեկ անգամ՝ 2003թ.-ին, փոփոխված Ռուսիայի 1991թ. Սահմանադրության մասին:

Մինչդեռ այն երկրներում, որտեղ սահմանադրական փոփոխություններ կարող են կատարվել նաև խորհրդարանի կողմից, դրանք, որպես կանոն, կատարվում են՝ ըստ կոնկրետ ոլորտում առաջացած անհրաժեշտության, յուրաքանչյուր

հարցի համար ինքնուրույն, չի ներկայացվում Սահմանադրության ամբողջ տեքստն ընդգրկող փոփոխությունների մեկ միասնական փաթեթ, և բնականաբար, առաջին հայացքից տպավորություն է ստեղծվում, որ նշված երկրներում փոփոխությունները կատարվում են առավել մեծ հաճախականությամբ: Օրինակ՝ Խորվաթիայի Հանրապետության Սահմանադրությունն, ըստ վերջինիս 138 հոդվածի, կարող է փոփոխվել Խորհրդարանի պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երկու երրորդով: Խորվաթիայի Հանրապետության 1990թ. Սահմանադրությունը փոփոխվել է 1997թ.-ին, 2000թ.-ին, 2001թ.-ին, 2010թ.-ին, և քաղաքացիական նախաձեռնության կարգով մեկ անգամ Սահմանադրության տեքստում փոփոխություն է կատարվել 2013թ.-ին¹¹²: Լիտվայի Հանրապետության 1992թ. Սահմանադրությունը փոփոխվել է՝ 1996թ.-ին՝ երկու անգամ, 2002թ.-ին, 2003թ.-ին՝ երկու անգամ, 2004թ.-ին, 2006թ.-ին: Ընդ որում՝ ըստ Սահմանադրության 148 հոդվածի՝ Սահմանադրության փոփոխությունները, բացառությամբ Սահմանադրության 1-ին հոդվածի, 1-ին և 14-րդ գլուխների (որոնք կարող են փոփոխվել միայն հանրաքվեով), Սեյմում քննարկվում և քվեարկվում են երկու անգամ և ընդունվում են Սեյմի անդամների ձայների առնվազն երկու երրորդով¹¹³: Չեխիայի Հանրապետության 1993թ. Սահմանադրությունը փոփոխությունների է ենթարկվել 1997թ.-ին, 2000թ.-ին,

¹¹² Տե՛ս Խորվաթիայի Հանրապետության 1990թ. Սահմանադրություն, <http://concourt.am/armenian/constitutions/index2015.htm>, /Վերջին մուտք՝ 16.06.2018/:

¹¹³ Տե՛ս Լիտվայի Հանրապետության 1992թ. Սահմանադրություն, <http://www.lrkt.lt/en/about-the-court/legal-information/the-constitution/192>, /Վերջին մուտք՝ 16.06.2018/:

¹¹¹ Տե՛ս http://president.gov.by/ru/constitution_ru/, /Վերջին մուտք՝ 16.06.2018/:

2001թ.-ին՝ երկու անգամ, 2002թ.-ին, 2009թ.-ին, 2012թ.-ին, 2013թ.-ին¹¹⁴:

Նշենք, որ ներկայացված բոլոր փոփոխությունները վերաբերել են առանձին կոնկրետ հարցադրումների, և ոչ սահմանադրական ընդհանուր տրամաբանությանն ու Սահմանադրության ամբողջ տեքստին: Օրինակ՝ Չեխիայի 2009թ.-ի սահմանադրական փոփոխությունները վերաբերել են Պատգամավորների պալատի ինքնավարության հնարավորության նախատեսմանը, Լիտվայի 2002թ.-ի սահմանադրական փոփոխությունները՝ տեղական ինքնակառավարման իրավունքին և այլն:

Վերը շարադրվածի առումով հարկ է նկատել նաև, որ մի շարք երկրներում Սահմանադրությունը զարգանում է ոչ այնքան տեքստային փոփոխությունների միջոցով, որքան սահմանադրական զարգացումների տեսանկյունից ընդունելի այլ եղանակներով՝ օրինակ, մեկնաբանության: ԱՄՆ 1787թ. Սահմանադրությունն, օրինակ, իր գործողության ավելի քան երկու հարյուրամյակների ընթացքում ենթարկվել է ընդամենը 27 տեքստային փոփոխությունների¹¹⁵: Ըստ ԱՄՆ Սահմանադրության 5 հոդվածի՝ Սահմանադրության տեքստային փոփոխությունները պետք է ընդունվեն Կոնգրեսի երկու պալատներից յուրաքանչյուրի ձայների առնվազն երկու երրորդով, այնուհետև 50 նահանգային օրենսդիր մարմինների առնվազն երեք քառորդը պետք է հավանություն տա նշված փոփոխության:

¹¹⁴ St' u Չեխիայի Հանրապետության 1993թ. Սահմանադրություն, <http://www.psp.cz/en/docs/laws/constitution.html>, /Վերջին մուտք՝ 16.06.2018/:

¹¹⁵ Ընդ որում՝ վերջին փոփոխության առնչությամբ առկա են բազմաթիվ վեճեր, քանի որ շատերի կարծիքով, այդ փոփոխությունը սահմանված կարգով չի վավերացվել:

յուններին: Այդ է պատճառը, որ ԱՄՆ Սահմանադրությունը համարվում է աշխարհի ամենակոշտ սահմանադրություններից մեկը, որում չափազանց բարդ է տեքստային փոփոխություններ կատարելը: Միևնույն ժամանակ, չնայած տեքստային փոքրաթիվ փոփոխություններին, ԱՄՆ Սահմանադրությունը բազմաթիվ փոփոխություններ է կրել կիրառման ընթացքում՝ անընդհատ զարգանալով մեկնաբանության միջոցով¹¹⁶:

Վերը շարադրվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ սուսկ երկարատև ժամանակահատվածի ընթացքում Սահմանադրության տեքստի անփոփոխելիությունը ինքնին չի վկայում սահմանադրական համակարգի կայունության մասին: Միևնույն ժամանակ, սահմանադրական կայունության համար այլ անհրաժեշտ հանգամանքների պայմաններում այն հանդես է գալիս որպես հիշյալ հատկանիշի առկայության արտահայտություն:

Այլ կերպ՝ տրամաբանությունը պետք է այն լինի, որ սահմանադրական համակարգը կայուն է ոչ թե այն պատճառով, որ Սահմանադրությունը չի փոփոխվում երկար ժամանակահատվածի ընթացքում, այլ հակառակը՝ վերջինս չի ենթարկվում հաճախակի փոփոխությունների, քանի որ ամրագրում է սոցիալական հանրության պատմական տվյալ փուլին բնորոշ իրավական հիմնարար արժեքներն ու սկզբունքները, այնպիսի կառուցակարգային լուծումներ, որոնք անհրաժեշտ են հանրային կյանքը սահմանադրական նորմերին ու սկզբունքներին համապատասխան վերակազմակերպելու, ինչպես նաև սահ-

¹¹⁶ St' u Balkin J. M. Constitutional Interpretation and Change in the United States: The Official and the Unofficial, <http://juspoliticum.com/article/Constitutional-Interpretation-and-Change-in-the-United-States-The-Official-and-the-Unofficial-1088.html>, /Վերջին մուտք՝ 16.06.2018/:

մանադրական նորմերն ու սկզբունքները զարգացող հասարակական հարաբերություններին համապատասխանեցնելու համար: Նշվածն էլ, իր հերթին, այդ նորմերի պատշաճ իրացման պայմաններում հանգեցնում է Սահմանադրության կենսունակության: Այդ առումով հիշատակման է արժանի գրականության մեջ արտահայտված այն տեսակետը, որ ժամանակը կարող է մեծացնել Սահմանադրության կենսունակությունը միայն այն դեպքում, երբ վերջինս ընկալվում է որպես հասարակական բարեկեցության վրա դրական ազդեցություն ունեցող պարտադիր փաստաթուղթ¹¹⁷:

Հետևաբար, կարծում ենք, որ ոչ թե գործողության երկարատև ժամանակահատվածն է վկայում սահմանադրական կայունության մասին, այլ հիշյալ հատկանիշի ու դրան բնորոշ առանձնահատկությունների առկայությունն է նպաստում Սահմանադրության երկարակեցությանն ու կենսունակությանը:

Քննարկվող համատեքստում հարկ ենք համարում անդրադառնալ նաև այն հանգամանքին, թե կա արդյոք որոշակի ժամանակահատված, որի ընթացքում Սահմանադրությունը պետք է մնա ուժի մեջ, որպեսզի համարվի կայուն: Գրականության մեջ այդ առնչությամբ արտահայտվել են տարբեր տեսակետներ: Ջեֆերսոնը, օրինակ, հակված էր օրենքների, այդ թվում՝ Սահմանադրության ուժը մեխանիկորեն կորցնելու գաղափարին՝ որպես ելակետ ընդունելով այն հանգամանքը, որ այսօրվա մեծամասնությունը կարող է սահմանափակել իրեն և այսօրվա փոքրամասնությանը, բայց այն չի կարող սահ-

մանափակել ապագա մեծամասնությանը կամ փոքրամասնությանը: Նրա կարծիքով, սահմանադրությունների համար գործողության օպտիմալ ժամանակահատվածը տասնինը տարի է՝ հիմք ընդունելով այդ տարիներին Եվրոպայում կյանքի միջին տևողությունն ու մեծահասակների ակտիվ կյանքի միջին ժամկետը¹¹⁸:

Վերը շարադրվածի առումով հարկ է նկատել, որ կատարված ուսումնասիրությունները վկայում են, որ ընդհանուր առմամբ սահմանադրությունները երկար չեն գործում: Աշխարհում դրանց գործողության միջին տևողությունը, սկսած 1789 թվականից, 17 տարի է: Սահմանադրությունների կեսը սովորաբար գործում է 18 տարի, և միայն 19%-ն է գործում մինչև 50 տարի: Բավական շատ են գործողության կարճատև ժամանակահատված ունեցող սահմանադրությունները. մոտավորապես 7%-ը նույնիսկ չի գործում մինչև երկրորդ տարին: Լատինական Ամերիկայի և Աֆրիկայի երկրներում Հիմնական օրենքի գործողության միջին տևողությունը համապատասխանաբար 12.4 և 10.2 տարի է, և դա այն պայմաններում, երբ հիշյալ տարածաշրջանների սահմանադրությունների մոտավորապես 15%-ը ուժը կորցնում է գործողության առաջին տարվա ընթացքում: Արևմտյան Եվրոպայի և Ասիայի երկրներում սահմանադրությունները գործում են համապատասխանաբար 32 և 19 տարի: Հարկ է նկատել նաև, որ սահմանադրությունների

¹¹⁸ St. u Thomas Jefferson to James Madison, September 6, 1789; Letter to Samuel Kercheval, July 12, 1816, <http://etext.virginia.edu/etcbin/toccer-new2?id=JefLett.sgm&images=images/modeng&data=/texts/english/modeng/parsed&tag=public&part=244&division=div1, /Վերջին մուտք՝ 13.03.2014/>, Ginsburg T., Melton J., Elkins Z., նշված աշխատությունը:

¹¹⁷ St. u Negretto G. L., նշված աշխատությունը, էջ 27:

գործողության միջին տևողությունը վերջին 200 տարվա ընթացքում չի մեծացել, ընդհակառակը՝ կրճատվել է: Մինչև առաջին համաշխարհային պատերազմն այն 21 տարի էր, մինչդեռ այդ ժամանակահատվածից հետո դարձել է 12 տարի¹¹⁹:

Հետաքրքիր է նաև սահմանադրական փոփոխությունների հաճախականությունը 1991թ.-ից հետո ընկած ժամանակահատվածում: 1991-2014թթ. ընթացքում, օրինակ, Ալբանիայում ընդունվել է երկու Սահմանադրություն, երեք անգամ կատարվել են սահմանադրական փոփոխություններ և լրացումներ, Բելառուսում ընդունվել է մեկ Սահմանադրություն, երկու անգամ կատարվել են սահմանադրական փոփոխություններ և լրացումներ, Բոսնիա և Հերցեգովինայում ընդունվել է մեկ Սահմանադրություն, մեկ անգամ կատարվել են սահմանադրական փոփոխություններ և լրացումներ, Խորվաթիայում ընդունվել է մեկ Սահմանադրություն, չորս անգամ կատարվել են սահմանադրական փոփոխություններ և լրացումներ, Չեխիայում ընդունվել է մեկ Սահմանադրություն, յոթ անգամ կատարվել են սահմանադրական փոփոխություններ և լրացումներ, Լիտվայում ընդունվել է մեկ Սահմանադրություն, հինգ անգամ կատարվել են սահմանադրական փոփոխություններ և լրացումներ, Մոլդովայում ընդունվել է մեկ Սահմանադրություն, ութ անգամ կատարվել են սահմանադրական փոփոխություններ և լրացումներ, Ռուսաստանում ընդունվել է մեկ Սահմանադրություն, հինգ անգամ կատարվել են սահմանադրական փոփոխություններ և լրացումներ, Ռումինիայում ընդունվել է մեկ Սահմանադրություն, մեկ անգամ կատարվել են

¹¹⁹ St' u Ginsburg T., Melton J., Elkins Z., նշված աշխատությունը:

սահմանադրական փոփոխություններ և լրացումներ և այլն¹²⁰:

Վերը շարադրվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ սահմանադրական փոփոխությունների հաճախականությունը տարբերվում է տարատեսակ սահմանադրական համակարգերում, և չնայած առկա միջինացված վիճակագրական տվյալներին՝ չկա այդ առնչությամբ մեկ ընդհանուր մոտեցում և մոդել՝ նկատի ունենալով քննարկվող փոփոխությունների հաճախականությունը պայմանավորող տարատեսակ գործոնները:

Ամփոփելով վերը շարադրվածը և հաշվի առնելով սահմանադրական կայունության ու ժամանակի միջև կապի առնչությամբ ներկայացված մեր մոտեցումը՝ կարծում ենք, որ նպատակահարմար չէ մատնանշել կոնկրետ ժամանակահատված, որի ընթացքում ուժի մեջ մնալու պարագայում Սահմանադրությունն ու սահմանադրական համակարգը կարող են համարվել կայուն: Բնականաբար, երկարատև ժամանակահատվածի ընթացքում Սահմանադրության գործողությունը, երբ այն միաժամանակ հանդես է գալիս որպես հասարակական հարաբերությունների ելակետային կարգավորիչ՝ համապատասխանելով դրանց զարգացման միտումներին, վկայում է Սահմանադրության կենսունակության, հետևաբար՝ նաև կայունության մասին: Սակայն այդ հանգամանքը տեսականորեն չի բացառում այնպիսի իրավիճակի առաջացումը,

¹²⁰ St' u Ginsburg T., Melton J., Elkins Z. Chronology of Constitutional Events, Version 1.2 // Comparative Constitutions Project, <http://comparativeconstitutionsproject.org/download-data/>, /Վերջին մուտք՝ 16.06.2018/,

Հարությունյան Գ., Սարգսյան Հ., Գևորգյան Ռ. Սահմանադրականություն. Ախտորոշման, մշտադիտարկման և կառավարման խնդիրներ, Երևան, Զանգակ, 2017, էջ 16-19:

երբ, գործելով նույնիսկ չափազանց կարճ ժամանակահատվածի ընթացքում, Հիմնական օրենքին բնորոշ լինի քննարկվող հատկանիշը: Դա կարող է տեղի ունենալ, օրինակ, այն դեպքում, երբ վերը նշված առանձնահատկություններով օժտված Սահմանադրության փոփոխության հիմնական պատճառը լինի պետական իշխանության ներկայացուցիչների փոփոխությունը: Հնարավոր է նաև հակառակ իրավիճակը, երբ երկարատև ժամանակահատվածի ընթացքում սահմանադրական տեքստի անփոփոխելիության պատճառը լինեն տարատեսակ քաղաքական և այլ գործոնները, ինչին արդեն անդրադարձանք աշխատանքի շրջանակներում: Վերը շարադրվածն իր հերթին հիմք է տալիս եզրակացնելու, որ քննարկվող հիմնախնդրի տեսանկյունից նույնպես հասարակության սահմանադրական և քաղաքական մշակույթն ունի առանցքային նշանակություն:

Ուստի, կարծում ենք, որ քննարկվող համատեքստում ելակետային պետք է լինի այն, որ նպատակահարմար չէ խոսել որևէ չափանիշային ժամանակահատվածի մասին, որն ինքնին ենթադրում է սահմանադրական կայունության հատկանիշի առկայությունը: Սակայն, բնականաբար, առավել ընդունելի են այն իրավիճակները, երբ երկարատև ժամանակահատվածի ընթացքում գործող Սահմանադրությունը միաժամանակ հանդես է գալիս որպես հասարակական հարաբերությունների ելակետային կարգավորիչ՝ համապատասխանելով դրանց զարգացման ընթացքին, որպիսի պայմաններում Սահմանադրությունը դառնում է կենսունակ, հետևաբար նաև՝ կայուն:

Կարևոր է և այն, որ, մեր կարծիքով, Սահմանադրությունը չպետք է փոփոխության ենթակա լինի երկրի քաղաքական ի-

րավիճակի յուրաքանչյուր փոփոխությանը կամ նոր քաղաքական մեծամասնության ձևավորմանը զուգընթաց: Սահմանադրությունը հասարակական հարաբերությունների կարգավորման տեսանկյունից ունի հիմնաքարային նշանակություն և չի կարող օգտագործվել որպես սոսկ ընթացիկ քաղաքական խնդիրները լուծելու միջոց: Ավելին, Սահմանադրությունը, բացի բարձրագույն իրավաբանական ուժ ունեցող փաստաթուղթ լինելուց, հանդես է գալիս նաև որպես կոնկրետ սահմանադրական համակարգի խորհրդանիշ և այդ տեսանկյունից ունի խորհրդանշական դերակատարություն: Հետևաբար, Հիմնական օրենքը պետք է հասարակության համար իրականում ընկալվի որպես հիմնարար փաստաթուղթ, սահմանադրական համակարգի խորհրդանիշ, փաստացի գոյություն ունեցող սահմանադրականության զգացողություն առաջացնի, այլ ոչ յուրաքանչյուր քաղաքական իրադարձությանը զուգընթաց պատահականորեն ընդունվող կամ փոփոխվող քաղաքական հռչակագրի: Ուստի, սահմանադրական փոփոխությունների հաճախականությունը չի կարող պայմանավորված լինել սոսկ քաղաքական ուժերի հարաբերակցությամբ և դրա մաթեմատիկական հաշվարկով: Սահմանադրության ընդունման եղանակն ու նրա իրացման ընթացքը պետք է հասարակությունում համոզմունք ձևավորեն, որ այն կայուն փաստաթուղթ է, կոնկրետ սահմանադրական համակարգի սիմվոլ և չի կարող փոփոխվել՝ սոսկ օրվա մեծամասնության քաղաքական կամքով պայմանավորված: Հակառակ իրավիճակը կարող է անհնար դարձնել սահմանադրական նորմերի պատշաճ իրացումն ու հանգեցնել սահմանադրական կայունության հիմքում ընկած արժեքների ձևախեղման, ինչպես նաև իրավական պետության

հիմքում ընկած այնպիսի արժեքների խաթարման, ինչպիսիք են կանխատեսելիությունը և իրավական որոշակիությունը՝ բացառելով նաև Սահմանադրության՝ որպես կոնկրետ սահմանադրական համակարգի խորհրդանիշի ընկալումը:

Քննարկվող հիմնախնդրի առումով Վենետիկի հանձնաժողովը բազմիցս արձանագրել է, որ Սահմանադրության չափազանց հաճախակի փոփոխությունները բացասական ազդեցություն են ունենում սահմանադրական ու քաղաքական կայունության տեսանկյունից¹²¹: Ավելին, Խորվաթիայի սահմանադրական փոփոխությունների առնչությամբ Հանձնաժողովը ցավով ընդգծել է, որ չափազանց կարճ ժամանակահատվածի ընթացքում¹²² Սահմանադրությունը փոփոխվել է երկու անգամ՝ հնարավորություն չտալով լիարժեք արդյունավետությամբ օգտվելու առաջին փոփոխության ընձեռած հնարավորություններից¹²³:

Մինևույն ժամանակ, նկատի ունենալով կատարված եզրահանգումները՝ կարծում ենք, որ արդարացված չէ նաև հակառակ ծայրահեղությունը, երբ սահմանվում է կոնկրետ ժամանակահատված, որի ընթացքում Սահմանադրությունը չի կարող ենթարկվել փոփոխությունների: Օրինակ՝ Հունաստանի Սահմանադրության 110 հոդվածը սահմանում է, որ Սահմանադրության փոփոխությունն արգելված է նախորդ փոփո-

¹²¹ Տե՛ս CDL-AD(2010)001, նշված փաստաթուղթը:

¹²² Խոսքը 2000թ. և 2001թ. սահմանադրական փոփոխությունների մասին է:

¹²³ Տե՛ս CDL-PI(2015)023, Compilation of Venice Commission Opinions concerning Constitutional Provisions for Amending the Constitution // European Commission for Democracy through Law (Venice Commission), Strasbourg, 22 December 2015, [93](http://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-PI(2015)023-e, /Վերջին մուտք՝ 16.06.2018/:</p></div><div data-bbox=)

խություններից հետո հինգ տարվա ընթացքում¹²⁴:

Ներկայացված վերլուծությունը հիմք է տալիս եզրակացնելու, որ անհնար է խոսել որևէ չափանիշային ժամանակահատվածի մասին, որն ինքնին ենթադրում է սահմանադրական կայունության հատկանիշի առկայությունը կամ մատնանշում է սահմանադրական փոփոխությունների հնարավոր հաճախականությունը: Մինևույն ժամանակ, կարծում ենք, որ քննարկվող խնդրի լուծման հիմնական բանալին պետք է լինի սահմանադրական համակարգի կայունության էությունը կազմող արժեքների և սահմանադրական զարգացումների անհրաժեշտության ու դրա հիմքում ընկած արժեքների միջև յուրաքանչյուր կոնկրետ իրավիճակում հավասարակշռություն գտնելը:

* * *

Հիշյալ գլխի շրջանակներում ներկայացված վերլուծությունը հիմք է տալիս եզրակացնելու, որ հեղինակների մեծ մասը սահմանադրական կայունության առկայության մասին խոսելիս շեշտադրում է այս կամ այն գործոնի կամ չափանիշի կարևորությունը: Մեր կարծիքով, սակայն, սահմանադրական համակարգը կարող է կայուն լինել ոչ թե դրանցից մեկի, այլ այնպիսի անհրաժեշտ ու բավարար հանգամանքների առկայության պայմաններում, որոնք մատնանշեցինք աշխատանքի հիշյալ հատվածի շրջանակներում:

Ամփոփելով ներկայացված վերլուծությունը՝ նշենք, որ կայունությունը սահմանադրական համակարգի այն հատկա-

¹²⁴ Տե՛ս Հունաստանի Հանրապետության Սահմանադրություն, [94](https://www.hellenicparliament.gr/UserFiles/f3c70a23-7696-49db-9148-f24dce6a27c8/001-156%20aggliko.pdf, /Վերջին մուտք՝ 16.06.2018/:</p></div><div data-bbox=)

նիշն է, որը ենթադրում է Հիմնական օրենքի կենսունակություն վերափոխվող հասարակական հարաբերությունների պայմաններում: Ընդ որում՝ տվյալ պարագայում խոսքը ոչ թե ստատիկ, այլ դինամիկ կայունության մասին է, երբ հիմնարար փոփոխությունների չի ենթարկվում կենսագոյի հիմնական կանոնների շուրջ հասարակական համաձայնություն հանդիսացող Սահմանադրության «միջուկը», էությունը, սակայն Հիմնական օրենքն ինքնին ունակ է հարմարվելու զարգացող հասարակական հարաբերություններին, դառնալու դրանց զարգացման խթանը, ինչը ենթադրում է, որ վերջինս պետք է լինի ինքնաբավ, սահմանադրական նորմերը պետք է կազմեն փոխկապակցված, համակարգային ամբողջություն, կարգավորեն ոչ միայն գոյություն ունեցող հասարակական հարաբերությունները, այլև առաջ քաշեն դրանց զարգացումը պայմանավորող համապատասխան նպատակներ, որոնց պետք է ձգտի տվյալ սոցիալական հանրությունը, իսկ Սահմանադրությունն արդյունքում պետք է ի վիճակի լինի իրականացնելու իր առաքելությունն ու գործառույթները:

Ընդ որում՝ հարկ է նկատի ունենալ, որ Սահմանադրությունը քաղաքականության համար պետք է ոչ թե գործիք, այլ սահման լինի, իսկ սահմանադրական զարգացումները պետք է արտահայտեն ոչ թե ընթացիկ քաղաքական նախապատվություններն ու շահերը, այլ վեր կանգնած լինեն դրանցից և հիմնարար իրավական շրջանակներ սահմանեն քաղաքական գործիչների ու իրադարձությունների համար: Այլ կերպ՝ սահմանադրական քաղաքականությունը պետք է հստակորեն տարանջատվի ընթացիկ քաղաքականությունից, իսկ Սահմանադրությունը պետք է ոչ թե ընթացիկ քաղաքական խաղի

մաս կազմի, այլ այդ խաղի կանոնները սահմանելու դերակատարություն ունենա:

Ավելին, սուկ երկարատև ժամանակահատվածի ընթացքում Սահմանադրության տեքստի անփոփոխելիությունը ինքնին չի վկայում սահմանադրական համակարգի կայունության մասին: Միննույն ժամանակ, սահմանադրական կայունության համար այլ անհրաժեշտ հանգամանքների պայմաններում այն հանդես է գալիս որպես հիշյալ հատկանիշի առկայության արտահայտություն: Ուստի, նպատակահարմար չէ խոսել որևէ չափանիշային ժամանակահատվածի մասին, որն ինքնին ենթադրում է սահմանադրական կայունության առկայությունը: Սակայն, բնականաբար, առավել ընդունելի են այն իրավիճակները, երբ երկարատև ժամանակահատվածի ընթացքում գործող Սահմանադրությունը միաժամանակ հանդես է գալիս որպես հասարակական հարաբերությունների ելակետային կարգավորիչ՝ համապատասխանելով դրանց զարգացման ընթացքին, որպիսի պայմաններում Սահմանադրությունը դառնում է կենսունակ, հետևաբար նաև՝ կայուն:

ԳԼՈՒԽ 3.

ՄԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՁԱՐԳԱՑՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊԼՆԴՄԱՆ ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ԳՐԱՎԱԿԱՆ

§ 1. Սահմանադրության զարգացումն ու դրա արժեքանական նկարագիրը

Այն հանգամանքը, որ իրականությունն անընդհատ փոփոխվում ու զարգանում է, կասկածից վեր է: Իրականությունը դրա համար էլ իրականություն է, որպեսզի փոփոխվի¹²⁵: Հետևաբար, հասարակական հարաբերությունների կարգավորման համար նախատեսված մեխանիզմները, առաջին հերթին Սահմանադրությունը, պետք է ի վիճակի լինեն համարժեքորեն արձագանքելու հասարակական հարաբերությունների հիշյալ առաջընթացին: Հենց այդ է պատճառը, որ սահմանադրական կայունության հատկանիշի էության հիմքում ընկած է ոչ թե ստատիկ, այլ դինամիկ կայունության գաղափարը, ինչը ենթադրում է զարգացող հասարակական հարաբերություններին արձագանքելու ու դրանց պայմաններին հարմարվելու ունակություն: Հետևաբար, կայուն լինելու համար Սահմանադրությունը, այլ հանգամանքների թվում, զարգանալու ունակություն պետք է ունենա, որպիսի պայմաններում միայն այն կարող է հանդես գալ որպես «կենդանի փաստաթուղթ» և լինել հասարակական հարաբերությունների ելակետային կարգա-

¹²⁵ St' u Комментарий к Конституции РФ / Под ред. Зорькина В. Д., Лазарева Л. В. М., 2009, էջ 24:

վորիչ: Հակառակ պարագայում այն կվերածվի «մեռած իրավական ակտի», փաստացի հարաբերություններից անկախ գործող սոսկ փաստաթղթային մի լուծումի, որն իրականում ի վիճակի չէ իրականացնելու իր գործառույթները և կարգավորելու հասարակական հարաբերությունները: Հիշյալ համատեքստում հիշատակման են արժանի Ջեյմս Մեդիսոնի խոսքերն այն մասին, որ «Եթե ցանկանում ենք ձևավորել այնպիսի համակարգ, որը կգոյատևի դարերի ընթացքում, անհրաժեշտ է հաշվի առնել այն փոփոխությունները, որոնք այդ դարերը կարող են առաջացնել»¹²⁶: Պատահական չէ, որ Հնդկաստանի Սահմանադրության (որն Ասիայում երկրորդն է երկարատևության առումով Ճապոնիայի Սահմանադրությունից հետո) երկարատևության պատճառներից մեկն է դիտարկվում փոփոխվող պայմաններին ու իրավիճակներին վերջինիս հարմարվողականությունը¹²⁷: Նույնը եզրահանգումը կարելի է իրականացնել նաև ԱՄՆ 1787թ. Սահմանադրության մասին¹²⁸:

Հաշվի առնելով վերը շարադրվածը՝ հիշյալ համատեքստում կանդրադառնանք Սահմանադրության զարգացմանն առնչվող հիմնախնդիրներին՝ առաջին հերթին բացահայտե-

¹²⁶ St' u Peltason J.W. The Development of the Constitution, <http://www.america.gov/st/usg-english/2008/April/20080416002922eaifas0.5097315.html>, /Վերջին մուտք՝ 15.04.2016/:

¹²⁷ St' u How Constitutions Change (A Comparative Study) / edited by Oliver D., Fusaro C., Oxford and Portland, Oregon, 2011, էջ 169:

¹²⁸ St' u Balkin J. M. Constitutional Interpretation and Change in the United States: The Official and the Unofficial, <http://juspolicum.com/article/Constitutional-Interpretation-and-Change-in-the-United-States-The-Official-and-the-Unofficial-1088.html>, /Վերջին մուտք՝ 16.06.2018/:

լով քննարկվող հասկացության բովանդակությունը:

Փիլիսոփայության մեջ «գարգացում» հասկացությունը բնորոշում են համակարգի ուղղորդված, անդառնալի որակական փոփոխությունները¹²⁹: Հետևաբար, ցանկացած բնույթի փոփոխություն չէ, որ կարող է կոչվել գարգացում, և այդպիսին հանդիսանալու համար այն պետք է օժտված լինի վերը նշված անհրաժեշտ և բավարար հատկանիշների ամբողջությամբ, որպիսիք հնարավորություն են տալիս քննարկվող փոփոխությունները տարանջատելու քառասային, մեխանիկական շարժումներից և այլ բնույթի փոփոխություններից:

Սահմանադրության տեսանկյունից նույնպես անհրաժեշտ է հաշվի առնել այն, որ Հիմնական օրենքի շրջանակներում կատարվող ցանկացած փոփոխություն չէ, որ նույնանում է «Սահմանադրության գարգացում» հասկացությանը: Հետևաբար, վերջինիս բովանդակությունը բացահայտելու համար հարկ ենք համարում անդրադառնալ այն չափանիշներին և վեր հանել այն հատկանիշները, որոնք բնորոշում են քննարկվող հասկացությունը:

Առաջին հերթին նշենք, որ «Սահմանադրության գարգացում» հասկացությունը վերլուծելիս որպես ելակետ ենք ընդունում Հիմնական օրենքի գարգացումը **մակրոմակարդակում**: Այդ առումով հիշատակման է արժանի այն հանգամանքը, որ եթե միկրոմակարդակում, առանձին նորմերի փոփոխությունների տեսանկյունից դրանք կարող են ամբողջական լինել, ապա ամբողջ համակարգի, տվյալ պարագայում Սահմանադրության համատեքստում, փոփոխությունները կարող են օժտ-

ված չլինել ներքին փոխկապվածությամբ ու համակարգվածությամբ և ունենալ անկանոն բնույթ, որպիսի հանգամանքը թույլ չի տա դրանք բնորոշել որպես Սահմանադրության գարգացում¹³⁰: Հետևաբար, կարծում ենք, որ գարգացում հանդիսանալու համար Սահմանադրության փոփոխություններին պետք է բնորոշ լինի ամբողջականությունն ու ներքին փոխկապվածությունը: Այդ առումով հարկ ենք համարում անդրադառնալ, օրինակ, ՀՀ Սահմանադրության 55 և 95 հոդվածների առանձին դրույթներում 2005թ. նոյեմբերի 27-ի հանրաքվեի արդյունքում կատարված փոփոխություններին: ՀՀ Սահմանադրության 55 հոդվածը 1995թ. հուլիսի 5-ի խմբագրությամբ նախատեսում էր, որ Հանրապետության նախագահը՝ ... 11) Սահմանադրության 95 հոդվածով նախատեսված կարգով նշանակում է վճռաբեկ դատարանի և նրա պալատների, վերաքննիչ, առաջին աստիճանի և այլ դատարանների նախագահներին ու դատավորներին, գլխավոր դատախազի տեղակալներին և դատախազության կառուցվածքային ստորաբաժանումները գլխավորող դատախազներին, **կարող է դադարեցնել դատավորի լիազորությունները, համաձայնություն տալ կալանավորել, դատական կարգով վարչական կամ քրեական պատասխանատվության ենթարկել դատավորին** (ընդգծումը մերն է՝ Ա.Մ.), ազատում է իր կողմից նշանակված դատախազներին..., իսկ 95 հոդվածը սահմանում էր, որ Արդարադատության խորհուրդը՝ 6) առաջարկ է ներկայացնում դատավորի լիազորությունները դադարեցնելու, դատավորին կալանավոր-

¹³⁰ Հարկ է նկատել, որ փիլիսոփայության մեջ նույնպես անկանոն փոփոխությունները չեն ընդգրկվում «գարգացում» հասկացության ընկալման շրջանակներում (տե՛ս նույն տեղում, էջ 525):

¹²⁹ Сѐ'у Алексеев П.В., Панин А.В. Философия: Классический университетский учебник. М., 2005, էջ 526:

րելու, դատական կարգով վարչական կամ քրեական պատասխանատվության ենթարկելու համաձայնություն տալու մասին: 2005թ. նոյեմբերի 27-ի փոփոխությունների արդյունքում ՀՀ Սահմանադրության 55 հոդվածն ամրագրեց, որ 11) Հանրապետության Նախագահը՝ ... արդարադատության խորհրդի առաջարկությամբ նշանակում է վճռաբեկ դատարանի և նրա պալատների նախագահներին և դատավորներին, վերաքննիչ, առաջին ատյանի և մասնագիտացված դատարանների նախագահներին, դադարեցնում է նրանց լիազորությունները, համաձայնություն է տալիս նրանց՝ որպես մեղադրյալ ներգրավելու, կալանավորելու կամ նրանց նկատմամբ դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու հարց հարուցելու վերաբերյալ, արդարադատության խորհրդի եզրակացությամբ նշանակում է վերաքննիչ, առաջին ատյանի և մասնագիտացված դատարանների դատավորներին, իսկ 95 հոդվածը նախատեսեց, որ Արդարադատության խորհուրդը՝ ... 5) դատավորներին ենթարկում է կարգապահական պատասխանատվության, **առաջարկ է ներկայացնում Հանրապետության Նախագահին դատավորի լիազորությունները դադարեցնելու մասին, դատավորին կալանավորելու, նրան որպես մեղադրյալ ներգրավելու կամ նրա նկատմամբ դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու համաձայնություն տալու մասին** (ընդգծումը մերն է՝ Ա.Մ.): Հետևաբար, թեև ՀՀ Սահմանադրության (2005թ. նոյեմբերի 27-ի խմբագրությամբ) 95 հոդվածի համաձայն՝ Արդարադատության խորհրդի կողմից հիշյալ առաջարկը պետք է ներկայացվեր Հանրապետության Նախագահին, սակայն 55 հոդվածին համապատասխան՝ դատավորի լիազորությունները դադարեց-

նելու, դատավորին կալանավորելու, նրան որպես մեղադրյալ ներգրավելու կամ նրա նկատմամբ դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու համաձայնություն տալու բնագավառում Հանրապետության Նախագահի լիազորությունները վերաբերում էին սույլ վճռաբեկ դատարանի և նրա պալատների նախագահներին և դատավորներին, վերաքննիչ, առաջին ատյանի և մասնագիտացված դատարանների նախագահներին և ոչ վերաքննիչ, առաջին ատյանի և մասնագիտացված դատարանների դատավորներին: Ուստի, Հանրապետության Նախագահի՝ կոնկրետ բնագավառին առնչվող լիազորության բացակայության պայմաններում ՀՀ Սահմանադրությունը նախատեսում էր հիշյալ բնագավառին վերաբերող առաջարկը Արդարադատության խորհրդի կողմից վերջինիս ներկայացնելու պահանջ, ինչը հանգեցնում էր սահմանադրական նորմերի, իսկ տվյալ պարագայում՝ նաև դրանց փոփոխությունների ներքին փոխկապվածության և ամբողջականության բացակայության: Ընդ որում՝ հիշյալ դրույթներն ամրագրվել են ՀՀ Սահմանադրության՝ 1995թ. խմբագրությամբ տեքստի վերը նշված կարգավորումների շրջանակներում փոփոխություններ կատարելու արդյունքում, որոնք, ինչպես արդեն նշեցինք, նախատեսում էին Հանրապետության Նախագահի՝ դատավորի լիազորությունները դադարեցնելու, դատավորին կալանավորելու, դատական կարգով վարչական կամ քրեական պատասխանատվության ենթարկելու համաձայնություն տալու առնչությամբ կոնկրետ լիազորություն:

Քննարկվող հիմնախնդրի տեսանկյունից կարևոր է և այն, որ զարգացում հանդիսանալու համար Սահմանադրության փոփոխությունները պետք է կրեն որակական բնույթ, այ-

սինքն՝ տեղի ունենա անցում համակարգի մի որակից մեկ այլ որակի¹³¹, և առաջանա համակարգի, տվյալ պարագայում Սահմանադրության, որակապես նոր վիճակ¹³²:

Այդ առումով հետաքրքիր ենք համարում, օրինակ, երկբևեռ քաղաքական համակարգի ձևավորմանն ուղղված սահմանադրական զարգացումները 2015թ.-ի սահմանադրական փոփոխությունների ընթացքում: Այդ առումով ՀՀ սահմանադրական բարեփոխումների հայեցակարգը նախատեսեց, որ «Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ կայուն ընտրական համակարգ ապահովելու համար դրա հիմնական գծե-

¹³¹ Փիլիսոփայության մեջ նաև փոփոխությունների անդառնալիության հատկանիշն է ներկայացվում որպես նախկինում գոյություն չունեցած որակական նոր հնարավորությունների ձևավորում: Միննույն ժամանակ, հաշվի առնելով այն, որ չկա բացարձակ դառնալիություն, ինչպես չկա բացարձակ անդառնալիություն, ընդգծվում է, որ զարգացումը **հիմնականում** անդառնալի գործընթաց է (տե՛ս Алексеев П.В., Панин А.В., նշված աշխատությունը, էջ 524-525): Կարծում ենք, որ Սահմանադրության պարագայում նույնպես կարող է ընդունելի լինել հիշյալ տեսակետը, և զարգացում հանդիսանալու համար փոփոխությունները, որպես կանոն, պետք է կրեն անդառնալի բնույթ: Այսինքն՝ որպես կանոն, Սահմանադրության զարգացումը ենթադրում է նախկինում գոյություն չունեցած որակական նոր սահմանադրական լուծումների ձևավորում: Սակայն անհրաժեշտ է հաշվի առնել և այն, որ հնարավոր են իրավիճակներ, երբ պրակտիկայում հիմնավորվի նախկին կարգավորման նպատակահարմարությունը, և սահմանադրական հետագա զարգացումը ընթանա հենց վերջինիս ուղղությամբ:

¹³² Փիլիսոփայության մեջ հիշյալ փոփոխությունները ենթադրում են անցում որակական մի կառուցվածքից մեկ այլ կառուցվածքի, երբ դրանց արդյունքում փոփոխվում է համակարգի սկզբնական որակը, առաջանում է որակապես նոր վիճակ (այդ առումով տե՛ս, օրինակ, Алексеев П.В., Панин А.В., նշված աշխատությունը, էջ 526, Бучило Н. Ф., Чумаков А. Н. *Философия: Учебное пособие*. М., 2001, էջ 94, Новая философская энциклопедия / Под ред. В. С. Стёпина. М., 2001 (http://dic.academic.ru/dic.nsf/enc_philosophy/1013/%D0%A0%D0%90%D0%97%D0%92%D0%98%D0%A2%D0%98%D0%95, /Վերջին մուտք՝ 10.03.2015/):

րը պետք է ամրագրվեն հենց Սահմանադրությամբ: ...: Խորհրդարանի քաղաքական դերի բարձրացումը կնպաստի կուսակցությունների կողմից իրենց բուն գործառույթների իրականացմանը և երկրում աստիճանաբար երկբևեռ դասական քաղաքական համակարգի ձևավորմանը: ...: Ընտրական համակարգի բարեփոխումները պետք է անհրաժեշտ նախադրյալներ ստեղծեն ու խթան հանդիսանան կուսակցությունների կայացմանն ու ժողովրդավարացման, կայուն քաղաքական համակարգի ամրապնդման համար: Կուսակցությունների խոշորացման և կուսակցական համակարգի կայունության համար անհրաժեշտ է նախատեսել առանձին արգելապատնեշներ կուսակցությունների և կուսակցությունների դաշինքների համար»¹³³:

Նշված հայեցակարգային մոտեցումներին համապատասխան՝ ՀՀ Սահմանադրության 89 հոդվածը նախատեսեց. «3. Ազգային ժողովն ընտրվում է համամասնական ընտրակարգով: Ընտրական օրենսգիրքը երաշխավորում է կայուն խորհրդարանական մեծամասնության ձևավորումը: Եթե ընտրության արդյունքով կամ քաղաքական կռախիցիա կազմելու միջոցով կայուն խորհրդարանական մեծամասնություն չի ձևավորվում, ապա կարող է անցկացվել ընտրության երկրորդ փուլ: Երկրորդ փուլի անցկացման դեպքում թույլատրվում է նոր դաշինքների ձևավորումը: Քաղաքական կռախիցիա կազմելու սահմանափակումները, պայմանները և կարգը սահմանվում

¹³³ Տե՛ս նաև Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգ / մշակվել է Հայաստանի Հանրապետության Նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի կողմից, Երևան, 2014թ. հոկտեմբեր, <http://www.parliament.am/library/sahmanadrakan%20barepoxumner/hayecakarg.pdf>, /Վերջին մուտք՝ 16.06.2018/:

են Ընտրական օրենսգրքով»:

Այնուհետև ընդունվեց ՀՀ ընտրական օրենսգիրքը, որն ամրագրեց կայուն խորհրդարանական մեծամասնության ձևավորմանն ուղղված կառուցակարգեր:

Նշենք, որ թեև մեր կարծիքով, այս առումով ՀՀ սահմանադրական բարեփոխումների հայեցակարգի առանցքային հայեցակարգային հիմնադրույթներն էին կայուն քաղաքական համակարգի ամրապնդումը, կուսակցական համակարգի կայունությունը, կուսակցությունների կայացումն ու ժողովրդավարացումը, իսկ **կուսակցությունների խոշորացումն ու երկրնեռ քաղաքական համակարգի ձևավորումը** սուսկ նշված հիմնական նպատակներին հասնելու միջոցներն էին, սակայն ակնհայտ է, որ դրանք ենթադրում էին անցում համակարգի մի որակից մեկ այլ որակի և սահմանադրական համակարգի որակապես նոր վիճակի ձևավորում: Այդ հանգամանքն ինքնին ենթադրում է Սահմանադրության զարգացման համար անհրաժեշտ քննարկվող չափանիշի առկայություն: Այլ հարց է պրակտիկայում նշված դրույթների փաստացի իրացումը, ինչն անհրաժեշտ է նաև ընդհանուր առմամբ սահմանադրական համակարգի զարգացումը երաշխավորելու տեսանկյունից, և բացի օրենսդրական ամրագրումից, պայմանավորված է նաև քաղաքական, սոցիալական և մի շարք այլ գործոններով:

Շարունակելով որակական փոփոխություններին առնչվող վերլուծությունը՝ նշենք, որ այդ համատեքստում անհրաժեշտ է հաշվի առնել այն, որ «Սահմանադրության զարգացում» հասկացությունը ենթադրում է այնպիսի որակական փոփոխություններ, որոնց պայմաններում պահպանվում է համակարգի հիմնական որակը, Սահմանադրության «միջուկը»: Պատճառն

այն է, որ ցանկացած ամբողջական համակարգ ունի մի ինտեգրատիվ որակ, որը ձևավորում է այն ելակետային վիճակը, որից էլ կատարվում են անցումները նոր վիճակների: Հետևաբար, այդ որակական առանձնահատկության բացակայության պայմաններում օբյեկտը դադարում է քննարկվող կոնկրետ համակարգը լինելուց, որպիսի պայմաններում, բնականաբար, հնարավոր չէ խոսել նաև վերջինիս զարգացման մասին: Սահմանադրության կայունության հատկանիշը ևս ենթադրում է, որ կենսագոյի «միջուկը» հանդիսացող հիմնական կանոնները չպետք է ենթարկվեն **հիմնարար** փոփոխությունների, ինչին կանդրադառնանք աշխատանքի հետագա շարադրանքի ընթացքում:

Անդրադառնալով «Սահմանադրության զարգացում» հասկացությունը բնորոշող այլ չափանիշներին՝ նշենք, որ զարգացում հանդիսանալու համար Սահմանադրության փոփոխությունները պետք է նպատակաուղղված լինեն: Նպատակաուղղվածության առումով գրականության մեջ նշվում է, որ զարգացումը կարող է լինել ինչպես պրոգրեսիվ, այնպես էլ ռեգրեսիվ: Ընդ որում՝ պրոգրեսիվ զարգացումը ենթադրում է անցում ավելի կատարյալ որակների՝ ի տարբերություն ռեգրեսիվ զարգացման, որին բնորոշ է հակառակ միտումը: Հետևաբար ակնհայտ է, որ Սահմանադրության զարգացման պարագայում հենց վերջինս պետք է ընկած լինի քննարկվող հատկանիշի ընկալման հիմքում:

Վերը շարադրվածի առումով կարևոր է և այն, որպեսզի որակական փոփոխություններին բնորոշ լինի իրավահաջորդությունը, նախկինի և ապագայի միջև ակումուլյատիվ (կու-

տակային) կապի առկայությունը¹³⁴ և հենց դրա հիման վրա համակարգի նոր հնարավորությունների ու սահմանադրական նոր լուծումների ձևավորումը: Այդ առումով կարելի է հիշատակել, օրինակ, ՀՀ Սահմանադրության՝ մարդու իրավունքներին և ազատություններին առնչվող դրույթները: ՀՀ Սահմանադրության 4 հոդվածի՝ 1995թ. հուլիսի 5-ի խմբագրությամբ տեքստը նախատեսում էր, որ պետությունն ապահովում է մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանությունը Սահմանադրության և օրենքների հիման վրա՝ միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան: Ակնհայտ է, որ հիշյալ սահմանադրական տեքստում բացակայում էր հստակ վերաբերմունքը մարդու՝ որպես բարձրագույն արժեքի սահմանադրական հոչակման և ճանաչման առումով, մարդու արժանապատվությունը որպես պաշտպանության առարկա էր ամրագրված սոսկ քրեաիրավական հարաբարությունների, և ոչ սահմանադրական իրավունքի շրջանակներում:

2005թ.-ին ՀՀ Սահմանադրությունում փոփոխություններ կատարելուց հետո վերջինս (3 հոդվածը) ամրագրեց, որ **մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները** բարձրագույն արժեքներ են: **Պետությունն**

¹³⁴ Հարկ է նկատել, որ իրավաբանական գրականության մեջ Ֆրանսիայի սահմանադրական կարգի խրոնիկ անկենսունակության պատճառ է դիտարկվում հենց այն հանգամանքը, որ սահմանադրական կարգի շարունակականությունը գրեթե նշանակություն չի տրվում և որպես նոր սահմանադրությունների իրավականության չափանիշ է ընկալվում անցյալից հետո մաքուր էջի վրա ձևավորվելու հանգամանքը (տե՛ս How Constitutions Change (A Comparative Study) / edited by Oliver D., Fusaro C., Oxford and Portland, Oregon, 2011, էջ 118):

ապահովում է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը՝ միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան: **Պետությունը** սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք: Ակնհայտ է, որ նշված փոփոխությունների արդյունքում ձևավորվեց քննարկվող հիմնախնդրի առնչությամբ կոնցեպտուալ նոր մոտեցում, որի շրջանակներում մարդն այլևս չի կարող դիտարկվել որպես պետական իշխանության համար միջոց, գործիք, այլ հանդիսանում է ինքնին նպատակ, ինքնարժեքություն: Ավելին, նշված տեսանկյունից մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները կոնցեպտուալ և հիմնարար դեր են խաղում պետության և հասարակության բնականոն կենսագործունեությունը երաշխավորելու տեսանկյունից և որպես անմիջականորեն գործող իրավունք՝ սահմանափակում են վերջիններիս: Հետևաբար, նշված սահմանադրական դրույթն առանցքային նշանակություն ձեռք բերեց սահմանադրական կարգավորումների արժեքանության և մեթոդաբանության տեսանկյունից:

2015թ.-ի սահմանադրական փոփոխությունների արդյունքում ևս շարունակվեց սահմանադրական նշված դրույթի զարգացումը, և Սահմանադրության 3 հոդվածն ամրագրեց, որ Հայաստանի Հանրապետությունում **մարդն է բարձրագույն արժեք**: Մարդու անօտարելի արժանապատվությունն իր իրավունքների և ազատությունների անքակտելի հիմքն է: Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների հարգումն ու պաշտպանությունը **հանրային իշխանության**

պարտականություններն են: **Հանրային իշխանությունը** սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք: Ակնհայտ է նաև նշված դրույթների հետևողական զարգացումը և դրանց դերի ու նշանակության նորովի արժևորումը:

Կարևորագույն նշանակություն ունեին նաև 2015թ. սահմանադրական փոփոխությունների արդյունքում մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների սահմանադրական ամրագրման առնչությամբ ձևավորված մոտեցումը, այդ իրավունքների սահմանափակման համար անհրաժեշտ չափանիշների, այն է՝ համաչափության, որոշակիության սկզբունքների, հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ դրույթների էության անխախտելիությանն առնչվող և համանման այլ կարգավորումների սահմանումը Սահմանադրությամբ¹³⁵:

¹³⁵ **Հոդված 78. Համաչափության սկզբունքը**

Հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար: Սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է համարժեք լինեն սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը:

Հոդված 79. Որոշակիության սկզբունքը

Հիմնական իրավունքները և ազատությունները սահմանափակելիս օրենքները պետք է սահմանեն այդ սահմանափակումների հիմքերը և ծավալը, լինեն բավարար չափով որոշակի, որպեսզի այդ իրավունքների և ազատությունների կրողները և հասցեատերերն ի վիճակի լինեն դրսևորելու համապատասխան վարքագիծ:

Հոդված 80. Հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ դրույթների էության անխախտելիությունը

Հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ սույն գլխում ամրագրված դրույթների էությունն անխախտելի է:

Ամփոփելով քննարկվող օրինակներն ու դրանց առնչությամբ մեր վերլուծությունը՝ նշենք, որ ներկայացված փոփոխությունները նպատակաուղղված էին որակապես նոր մակարդակի բարձրացնելու հիշյալ արժեքների դերն ու նշանակությունը՝ պահպանելով կարևորություն ունեցող ու նախկին տեքստում ամրագրված դրույթները և դրանով ապահովելով իրավահաջորդությունը սահմանադրական նախկին ու նոր կարգավորումների միջև:

Ամփոփելով վերը շարադրվածը՝ նշենք, որ Սահմանադրության զարգացումը Սահմանադրության՝ ներքին փոխկապվածության ու ամբողջականության հատկանիշով օժտված այն որակական, նպատակաուղղված ու, որպես կանոն, անդառնալի փոփոխություններն են, որոնց պայմաններում պահպանվում է համակարգի հիմնական որակը, Սահմանադրության «միջուկը»: Նման փոփոխությունների պատշաճ իրացումն էլ, իր հերթին, հանգեցնում է սահմանադրական համակարգի զարգացման:

Հոդված 81. Հիմնական իրավունքներն ու ազատությունները և միջազգային իրավական պրակտիկան

1. Հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ Սահմանադրությունում ամրագրված դրույթները մեկնաբանելիս հաշվի է առնվում Հայաստանի Հանրապետության վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան:

2. Հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակումները չեն կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված սահմանափակումները:

**§2. Սահմանադրական զարգացումների
սահմանադրականությունը՝ որպես կայուն
ժողովրդավարության կարևորագույն գրավական**

Առաջին հայացքից «սահմանադրական զարգացումների սահմանադրականության» գաղափարը կարող է պարադոքսալ թվալ, քանզի վերջինիս առնչությամբ առաջին տպավորությունն այն է, որ խոսքը տվյալ պարագայում նույն իրավաբանական ուժն ու նշանակությունն ունեցող երևույթների կամ ակտերի մասին է: Հետևաբար, հիմնական ընկալումը, որն առաջին հայացքից քննարկվող գաղափարն առաջացնում է, այն է, որ հնարավոր չէ երաշխավորել սահմանադրական փոփոխությունների սահմանադրականությունը, և որ վերջինս անբովանդակ հասկացություն է:

Կարծում ենք, սակայն, որ աշխատանքի շրջանակներում ներկայացված եզրահանգումները Սահմանադրության հիմնարար արժեքների, հիմնական որակի, «միջուկի» և դրանց անփոփոխելիության վերաբերյալ հանգեցնում են բոլորովին այլ եզրակացության, և որքան էլ պարադոքսալ չթվա «սահմանադրական զարգացումների սահմանադրականության» գաղափարը, վերջինս սահմանադրականության երաշխավորման կարևորագույն բաղադրատարրերից է, ունի հստակ բովանդակություն և բացառիկ կարևորություն կայուն ժողովրդավարության երաշխավորման տեսանկյունից:

Աշխատանքի շրջանակներում արդեն նշել ենք, որ զարգացում հանդիսանալու համար Սահմանադրության փոփոխությունները պետք է կրեն որակական բնույթ, այսինքն՝ տեղի ունենա անցում համակարգի մի որակից մեկ այլ որակի, և առաջանա համակարգի, տվյալ պարագայում Սահմանադրության,

որակապես նոր վիճակ: Մինևույն ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել և այն, որ «Սահմանադրության զարգացում» հասկացությունը ենթադրում է այնպիսի որակական փոփոխություններ, որոնց պայմաններում պահպանվում է համակարգի հիմնական որակը, Սահմանադրության «միջուկը»:

Ուստի, սահմանադրական կայունությունը ենթադրում է, որ կենսագոյի «միջուկը» հանդիսացող հիմնական կանոնները չպետք է ենթարկվեն հիմնարար փոփոխությունների, քանզի նման փոփոխությունները կհանգեցնեն սահմանադրականության վիճակի խաթարման:

Այդ առումով հիշատակման է արժանի ՀՀ Սահմանադրության 203 հոդվածը, համաձայն որի՝ Սահմանադրության 1-ին, 2-րդ, 3-րդ և 203-րդ հոդվածները փոփոխման ենթակա չեն: Հետևաբար, սահմանադիրը հենց այդ դրույթներն է համարել հասարակական հարաբերությունների «միջուկը»՝ արգելելով դրանց փոփոխումը:

Վերը շարադրվածի առումով հարկ ենք համարում նկատել, որ քիչ թվով սահմանադրություններ են պարունակում նորմեր որոշակի դրույթների անփոփոխելիության մասին: Առավել տարածված է այն տեխնիկան, երբ Սահմանադրության որոշակի սկզբունքներ են հռչակվում անփոփոխելի¹³⁶: Կարծում ենք, որ վերջինն առավել նպատակահարմար մոտեցում է, քանզի թույլ է տալիս պահպանել հիշյալ սկզբունքների հիմքում ընկած ելակետային տարրերը՝ միաժամանակ թողնելով հասարակական հարաբերությունների զարգացմանը զուգընթաց դրանց ընկալմանն առնչվող առանձին փոփոխությունների հնարավորություն: Գաղտնիք չէ, որ այնպիսի հասկացությո-

¹³⁶ Տե՛ս CDL-AD(2010)001, նշված փաստաթուղթը:

յուններ, ինչպիսիք են, օրինակ, «ժողովրդավարությունը», «ինքնիշխանությունը», «մարդու հիմնական իրավունքները և ազատությունները» և այլն, տարիների ընթացքում ապրել են և կշարունակեն ապրել անընդհատ զարգացում: 21-րդ դարում դրանց ընկալումը նույնը չէ, ինչ, օրինակ, 19-րդ կամ 20-րդ դարերում: Մի շարք հասկացությունների ընկալումն էապես փոխվել է նույնիսկ մի քանի տասնամյակների ընթացքում: Հետևաբար, մեր կարծիքով, հիշյալ տեսանկյունից ելակետային պետք է լինի այն, որ վերը նշված սկզբունքները ենթակա են **դինամիկ մեկնաբանության**, որպիսի պայմաններում հնարավոր են վերջիններիս առանձին տարրերի ընկալման փոփոխություններ, սակայն միևնույն ժամանակ անփոփոխ պետք է մնան այդ սկզբունքների «միջուկը» կազմող տարրերը:

Քննարկվող հիմնախնդրի առումով հետաքրքիր է Հնդկաստանի պրակտիկան: Չնայած այն հանգամանքին, որ Սահմանադրությունը նախատեսում է սահմանադրական բոլոր դրույթները փոփոխելու հնարավորություն, Հնդկաստանի Գերագույն դատարանն իր որոշումներից մեկում արձանագրել է, որ հիշյալ փոփոխությունները պետք է կատարվեն այնպես, որպեսզի չփոփոխվի Սահմանադրության «հիմնական կառուցվածքն ու համակարգը»¹³⁷: Գրականության մեջ ևս նշվում է, որ անփոփոխելի նորմերի հիմնական նպատակը սահմանադրական հիմնական արժեքների պահպանությունն է¹³⁸:

¹³⁷ St' u Twomey A. The Involvement of Sub-national Entities in Direct and Indirect Constitutional Amendment within Federations, <http://camlaw.rutgers.edu/statecon/workshop11greece07/workshop11/Twomey.pdf> /Վերջին մուտք՝ 15.04.2016/, էջ 14:

¹³⁸ St' u Roznai Y. Unconstitutional Constitutional Amendments: A Study of the Nature and Limits of Constitutional Amendment Powers. London, The London School of Economics and Political Science, 2014, էջ 34:

Անդրադառնալով ՀՀ Սահմանադրությանը՝ նշենք, որ վերջինիս 1 հոդվածը սահմանում է ՀՀ սահմանադրաիրավական բնութագրիչները, որոնք ելակետային են ինչպես սահմանադրական նորմերի ամրագրման, այնպես էլ հասարակական հարաբերությունների կարգավորման համար: Հետևաբար, մեր կարծիքով, հենց դրանք են ընկած սահմանադրական մյուս բոլոր նորմերի հիմքում, և, որպես այդպիսին, ենթադրում են այդ բնութագրիչների հատկանիշներն արտացոլող ու տարրերն ամրագրող այլ դրույթների առկայություն: Իսկ դա նշանակում է, որ սահմանադրաիրավական բնութագրիչներին վերաբերող նորմերի անփոփոխ լինելու դեպքում անփոփոխ կմնան նաև հիշյալ այն դրույթները, որոնք ձևավորում են այդ բնութագրիչների «միջուկն» ու էությունը: Միևնույն ժամանակ, կարծում ենք, որ հնարավոր են փոփոխություններ դրանց այլ տարրերի ընկալման շրջանակներում: Օրինակ՝ եթե ՀՀ Սահմանադրության 2 հոդվածով ամրագրված՝ Հայաստանի Հանրապետությունում իշխանությունը ժողովրդին պատկանելու վերաբերյալ դրույթը, որը հանդիսանում է ժողովրդավարական պետության կարևորագույն հատկանիշներից մեկը, ըստ էության, չի կարող փոփոխվել, ապա, մեր կարծիքով, նույն հոդվածով նախատեսված այն նորմի ընկալումը, թե ինչպես ու ինչ մարմինների միջոցով է ժողովուրդն իրականացնում իր իշխանությունը, քարացած չէ, և հասարակական հարաբերությունների զարգացմանը զուգընթաց կարող է ենթարկվել որոշակի փոփոխությունների: Դա հնարավոր է մասնավորապես այն դեպքերում, երբ, օրինակ, որպես անմիջական ժողովրդաիշխանության իրականացման ձևեր ամրագրվեն նաև հանրահավաքները, երթերը և այլն, ինչն այլ անհրաժեշտ հանգամանքները հաշվի առնելու պարագայում չի խաթարի հիշյալ

բնութագրիչի էությունը, սակայն միևնույն ժամանակ կհանդիսանա վերը նշված դրույթի փոփոխման արտահայտություն:

Վերը շարադրվածը նկատի ունենալով՝ կարծում ենք, որ թեև ՀՀ Սահմանադրության 203 հոդվածով ամրագրված անփոփոխելիության վերաբերյալ դրույթն ինքնին խնդրահարույց չէ, սակայն առավել նպատակահարմար է Սահմանադրությանը նախատեսել վերջինիս 1 և 203 հոդվածների անփոփոխելիությունը՝ միևնույն ժամանակ ելակետային համարելով այն, որ 1 հոդվածով ամրագրված սահմանադրաիրավական բնութագրիչները ենթակա են դինամիկ մեկնաբանության:

Հիշյալ համատեքստում հարկ ենք համարում անդրադառնալ քննարկվող հիմնախնդրին առնչվող ևս մի կարևոր հանգամանքի՝ Սահմանադրության նախաբանի փոփոխության հնարավորություններին:

Նշենք, որ աշխարհում գրեթե չկան երկրներ, որոնք հատուկ կարգավորումներ են նախատեսում Սահմանադրության նախաբանի փոփոխության կամ անփոփոխելիության մասին: Նույնիսկ այն երկրներում, որտեղ սահմանվում են սահմանադրական անփոփոխելի կարգավորումներ, դրանց շրջանակներում հատուկ անդրադարձ չի կատարվում Սահմանադրության նախաբանին¹³⁹: Սահմանադրության նախաբանին անդրադարձ չի կատարվում նաև սահմանադրական տարբեր դրույթների փոփոխություններին առնչվող առանձնահատկությունները սահմանող սահմանադրական նորմերում:

¹³⁹ Տե՛ս CDL-DEM(2008)002add, Constitutional Provisions for Amending the Constitution: Limits to Constitutional Amendments // European Commission for Democracy through Law (Venice Commission), Strasbourg, 9 October 2008, [http://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-DEM\(2008\)002add-e](http://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-DEM(2008)002add-e), /Վերջին մուտք՝ 16.06.2018/:

Մեր կողմից ուսումնասիրված երկրներից կարող ենք հիշատակել Սերբիայի Հանրապետությունը, որի Սահմանադրությունը հատուկ կարգավորումներ նախատեսում նախաբանի փոփոխության վերաբերյալ: Վերջինիս Սահմանադրության 203 հոդվածը, մասնավորապես, սահմանում է, որ Ազգային ժողովը Սահմանադրությունը փոփոխելու վերաբերյալ ակտը պետք է ներկայացնի հանրապետական հանրաքվեի, եթե փոփոխությունը վերաբերում է Սահմանադրության նախաբանին, մարդու և փոքրամասնությունների իրավունքներին և ազատություններին, իշխանության համակարգին, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելուն, ռազմական և արտակարգ դրության ժամանակ մարդու և փոքրամասնությունների իրավունքներից շեղումներին կամ Սահմանադրությունը փոփոխելու ընթացակարգերին¹⁴⁰:

Սահմանադրությունների նախաբանների առնչությամբ, որպես կանոն, ընդգծվում է վերջիններիս գաղափարական դերակատարությունը, որը, մեր կարծիքով ևս, անկասկած ունի առաջնահերթ նշանակություն: Միևնույն ժամանակ, կարծում ենք, որ նախաբաններն ունեն նաև ոչ պակաս կարևոր իրավական նշանակություն, որը չի կարող անտեսվել վերջիններիս առանձնահատկությունների և հնարավոր զարգացումների վերլուծության համատեքստում:

Առաջին հերթին նշենք, որ աշխարհում կա շուրջ 54 երկիր, որոնց սահմանադրություններն ընդհանրապես չունեն նախաբան, օրինակ՝ Իտալիան, Ավստրիան, Բելգիան, Մալ-

¹⁴⁰ Տե՛ս Սերբիայի Հանրապետության Սահմանադրություն, <http://www.ustavni.sud.rs/page/view/en-GB/235-100028/constitution>, /Վերջին մուտք՝ 16.06.2018/:

թան, Լյուքսեմբուրգը, Հորդանանը և այլն¹⁴¹:

Ինչ վերաբերում է նախաբան ունեցող սահմանադրություններին, հարկ է նկատել, որ այդ նախաբաններն ունեն բազմաթիվ առանձնահատկություններ՝ պայմանավորված ինչպես վերջիններիս ծավալով, այնպես էլ բովանդակությամբ և իրավական ուժով:

Կատարված ուսումնասիրությունները վկայում են, որ շուրջ երկու հարյուր սահմանադրությունների նախաբաններից 103-ը պարունակում է մինչև 300 բառ, 26-ը՝ 300-500, 12-ը՝ 500-ից ավելի բառ¹⁴²: Ընդ որում՝ աշխարհի ամենաերկար Սահմանադրության նախաբանը Իրանի Իսլամական Հանրապետության 1979թ. Սահմանադրության նախաբանն է, որն ունի երեք հազարից ավելի բառ: Ծավալուն է նաև Չինաստանի Սահմանադրության նախաբանը՝ 1000 բառից ավելի: Մինչդեռ ամենակարճ նախաբանը Հունաստանի Սահմանադրության նախաբանն է, որն ընդամենը 11 բառ է պարունակում¹⁴³:

¹⁴¹ St' u Kutlesic V. Preambles of Constitutions - a comparative study of 194 current constitutions. Belgrade Bussines School, Serbia, <https://constitutional-change.com/preambles-of-constitutions-a-comparative-study-of-194-current-constitutions/>, /Վերջին մուտք՝ 16.06.2018/, Իտալիայի Հանրապետության 1947թ. Սահմանադրություն, https://www.cortecostituzionale.it/documenti/download/pdf/The_Constitution_of_the_Italian_Republic.pdf, /Վերջին մուտք՝ 16.06.2018/:

¹⁴² St' u Kutlesic V. Preambles of Constitutions - a comparative study of 194 current constitutions. Belgrade Bussines School, Serbia, <https://constitutional-change.com/preambles-of-constitutions-a-comparative-study-of-194-current-constitutions/>, /Վերջին մուտք՝ 16.06.2018/:

¹⁴³ St' u Frosini O. J. Constitutional Preambles at a Crossroads between Politics and Law. Titanlito S.p.A. Dogana (Repubblica di San Marino), 2012, էջ 29-30, Հունաստանի Հանրապետության Սահմանադրություն, <https://www.hellenicparliament.gr/UserFiles/f3c70a23-7696-49db-9148-f24dce6a27c8/001-156%20aggliko.pdf>, /Վերջին մուտք՝ 16.06.2018/:

Ակնհայտ է, որ նախաբանները տարբերվում են նաև իրենց բովանդակության տեսանկյունից: Հետազոտողներն առանձնացնում են թվով 15 սահմանադրությունների նախաբաններ, որոնք, ըստ նշված հեղինակների, ընդամենը հանդիսավոր տեքստ են հիշեցնում՝ առանց ներքին բովանդակության, օրինակ՝ Հունաստանի, Մոնակոյի, Լիբանանի, Լիխտենշտեյնի սահմանադրությունների նախաբանները:

Միևնույն ժամանակ, սահմանադրական նախաբանների մեծամասնությունն ունի շատ ավելի կոնկրետ բովանդակություն, որը, որպես կանոն, պարունակում է հետևյալ հիմնական տարրերին առնչվող տեղեկատվություն՝ նպատակներ, արժեքներ, պատմություն, ազգային ինքնություն, Աստված և կրոն, այլ ակտերին հղումներ¹⁴⁴:

Հետաքրքիր է, որ միջազգային պրակտիկայում առանձին բացառիկ իրավիճակներում հանդիպում են Սահմանադրության նախաբանների փոփոխության դեպքեր: Որպես օրինակ կարելի է հիշատակել Լատվիայի Սահմանադրության նախաբանում 2014թ. կատարված փոփոխությունը¹⁴⁵: Նշենք, որ Լատվիայի Հանրապետությունում այժմ գործում է 1922թ.-ին ընդունված և 1993թ.-ին վերականգնված Սահմանադրությունը: Հնդկաստանի Սահմանադրության նախաբանը ևս փոփոխվել է 1976թ.-ին, երբ վերջինիս տեքստում «ինքնիշխան» և «ժողովրդավարական» բառերի միջև ավելացվեցին «սոցիալիստիկ» բառերը:

¹⁴⁴ St' u Kutlesic V. նշված աշխատությունը, <https://constitutional-change.com/preambles-of-constitutions-a-comparative-study-of-194-current-constitutions/>, /Վերջին մուտք՝ 16.06.2018/, Frosini O. J. նշված աշխատությունը, էջ 47:

¹⁴⁵ St' u Լատվիայի Հանրապետության Սահմանադրություն, <http://www.satv.tiesa.gov.lv/en/2016/02/04/the-constitution-of-the-republic-of-latvia/>, /Վերջին մուտք՝ 16.06.2018/:

տական» և «աշխարհիկ» բառերը¹⁴⁶: Փոփոխվել է նաև Ֆրանսիայի Հանրապետության 1958թ. Սահմանադրության նախաբանը, երբ վերջինիս շրջանակներում հղում ավելացվեց 2004թ. Շրջակա միջավայրի վերաբերյալ խարտիայով նախատեսված իրավունքներին և պարտականություններին¹⁴⁷:

Կարծում ենք, որ քննարկվող հարցադրման տեսանկյունից անհրաժեշտ է վերլուծել այն հանգամանքը, թե արդյո՞ք Սահմանադրության նախաբանն ունի կիրառական նշանակություն, կարո՞ղ է իրացվել հասարակական հարաբերությունները կարգավորելու նպատակով, թե՞ այն հանդես է գալիս որպես պարզապես հռչակագրային բնույթ կրող տեքստ:

Նշենք, որ Սահմանադրության նախաբանի իրավական ուժի առնչությամբ գրականության մեջ առկա են տարբեր տեսակետներ, ինչը պայմանավորված է միջազգային պրակտիկայում նախաբանի ունեցած իրավական կիրառության տարբեր օրինակներով: Ամերիկայի Միացյալ Նահանգներում, օրինակ, թեև Սահմանադրության նախաբանն ուսումնասիրվում է սահմանադրական իրավունքի գիտության շրջանակներում, սակայն այն չի հանդիսանում սահմանադրական տեքստի՝ ինքնուրույն իրավաբանական ուժ ունեցող մաս և չափազանց հազվադեպ է հանդիպում դատական ակտերում¹⁴⁸: Չնայած ԱՄՆ Գերագույն դատարանի որոշ ակտերում կարելի է հան-

դիպել Սահմանադրության նախաբանին հղումների, սակայն ինչպես գրականության մեջ է նշվում, դա իրացվում է, այսպես կոչված, «բալ խմորեղենի վրա» տեխնիկայի համատեքստում: Այլ կերպ՝ որոշման հիմքում ընկած են Սահմանադրության այլ նորմերը («խմորեղեն»), սակայն պատճառաբանությունն առավել համոզիչ դարձնելու նպատակով հղում է կատարվում նաև նախաբանին՝ որպես մեկնաբանման լրացուցիչ գործիք: Հետևաբար, այդ հղումների հիմնական նպատակը պատճառաբանությունն առավել համոզիչ դարձնելն է, որոշումն ամրապնդելը, իսկ նախաբանը չի դիտարկվում որպես ինքնուրույն իրավական ուժ ունեցող աղբյուր: Գերմանական սահմանադրական իրավունքում ընդունված է, որ Գերմանիայի Հիմնական օրենքի նախաբանը ևս չունի ինքնուրույն իրավաբանական ուժ, սակայն վերջինս երբեմն օգտագործվում է Գերմանիայի Սահմանադրական դատարանի որոշումներում՝ որպես մեկնաբանման գործիք¹⁴⁹:

Նույնը չի կարելի ասել Ֆրանսիայի Սահմանադրության նախաբանի մասին, քանզի Ֆրանսիայի Սահմանադրական խորհուրդը, 1970-ական թթ.-ից սկսած, իր որոշումների պատճառաբանական մասի հիմքում բազմիցս դրել է Սահմանադրության նախաբանը՝ այն դիտարկելով որպես նորմերի սահմանադրականության գնահատման չափանիշ և փաստացի ինքնուրույն սահմանադրական արժեք տալով վերջինիս: Պատճառը, հավանաբար, Ֆրանսիայի Սահմանադրության նախաբանի բովանդակությունն ու ձևն են, ինչի արդյունքում նշված նախաբանը գրականության մեջ անվանվում է «մատրյոշկա տիկնիկ», քանզի այն հղում է կատարում **1946թ. Սահ-**

¹⁴⁶ Տե՛ս Frosini O. J. նշված աշխատությունը, էջ 140:

¹⁴⁷ Տե՛ս Ֆրանսիայի Հանրապետության 1958թ. Սահմանադրություն, https://www.constituteproject.org/constitution/France_2008.pdf?lang=en, /Վերջին մուտք՝ 16.06.2018/:

¹⁴⁸ Տե՛ս Ginsburg T., Rockmore D., Foti N. We the Peoples: The Global Origins of Constitutional Preambles // University of Chicago Law School Chicago Unbound, Journal Articles, 2014, էջ 105:

¹⁴⁹ Տե՛ս Frosini O. J. նշված աշխատությունը, էջ 53-64, 80:

մանադրության նախաբանով հաստատված և լրացված **1789թ. Մարդու և քաղաքացու իրավունքների հռչակագրով** ամրագրված մարդու իրավունքներին և ազգային ինքնիշխանության սկզբունքներին և **2004թ. Շրջակա միջավայրի վերաբերյալ խարտիայով** նախատեսված իրավունքներին ու պարտականություններին: Լեհաստանում ևս Սահմանադրության նախաբանն ունի առանցքային դերակատարություն և բազմիցս դրվել է Սահմանադրական տրիբունալի որոշումների և դրանց հիմնավորումների հիմքում: Հնդկաստանի Գերագույն դատարանը ևս ընդգծել է, որ նախաբանը «Սահմանադրության մասն է», և իր բազմաթիվ որոշումներ հիմնավորել է՝ հենց նախաբանը հիմք ընդունելով¹⁵⁰: Թուրքիայի Հանրապետության Սահմանադրության 176 հոդվածն ուղղակիորեն նախատեսում է, որ նախաբանը, որը սահմանում է Սահմանադրության հիմքում ընկած տեսակետներն ու սկզբունքները, Սահմանադրության բաղկացուցիչ մասն է¹⁵¹:

Ինչ վերաբերում է ՀՀ Սահմանադրության նախաբանին, նշենք, որ այն ունի հետևյալ բովանդակությունը. «Հայ ժողովուրդը, հիմք ընդունելով Հայաստանի անկախության մասին հռչակագրում հաստատագրված հայոց պետականության հիմնարար սկզբունքները և համազգային նպատակները, իրականացրած ինքնիշխան պետության վերականգնման իր ազատասեր նախնիների սուրբ պատգամը, նվիրված հայրենիքի հզորացմանը և բարգավաճմանը, ապահովելու համար սերունդների ազատությունը, ընդհանուր բարեկեցությունը, քա-

¹⁵⁰ Sté u Frosini O. J. նշված աշխատությունը, էջ 64-76, 92-99:

¹⁵¹ Sté u Թուրքիայի Հանրապետության Սահմանադրություն, https://global.tbmm.gov.tr/docs/constitution_en.pdf, /Վերջին մուսք՝ 20.08.2018/:

ղաքացիական համերաշխությունը, հավաստելով հավատարմությունը համամարդկային արժեքներին, ընդունում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը»:

Ակնհայտ է, որ նախաբանի տեքստը պարունակում է տարատեսակ բովանդակություն ունեցող դրույթներ, որոնց շրջանակներում անդրադարձ է կատարված ինչպես պատմական, ազգային ինքնությանն առնչվող ասպեկտներին, կոնկրետ սոցիալական հանրության առջև դրվող նպատակներին ու արժեքներին, այնպես էլ հղում է կատարված այլ ակտի՝ Հայաստանի անկախության մասին հռչակագրին՝ ավելի կոնկրետ՝ վերջինիս կողմից հաստատագրված հայոց պետականության հիմնարար սկզբունքներին և համազգային նպատակներին: Կարծում ենք, որ բացառությամբ վերջինի, մնացած բոլոր նորմերն ունեն ընդհանուր բնույթ և արձանագրում են համընդհանուր ճանաչում ու դերակատարություն ունեցող գաղափարներ: Նույնը չի կարելի ասել Հայաստանի անկախության մասին հռչակագրի և դրանում հաստատագրված հայոց պետականության հիմնարար սկզբունքների և համազգային նպատակների վերաբերյալ, քանզի դրանք ունեն կոնկրետ հարցադրումներին ուղղված բովանդակություն և հստակ ուղղվածություն, ինչը ներկայացնում ենք ստորև.

«Հ Ռ Չ Ա Կ Ա Գ Ի Ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդը՝
արտահայտելով Հայաստանի ժողովրդի միասնական կամքը,

գիտակցելով իր պատասխանատվությունը հայ ժողովրդի ճակատագրի առջև համայն հայության իղձերի իրականաց-

ման և պատմական արդարության վերականգնման գործում,

ելնելով մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի սկզբունքներից և միջազգային իրավունքի հանրաճանաչ նորմերից,

կենսագործելով ազգերի ազատ ինքնորոշման իրավունքը, հիմնվելով 1989 թվականի դեկտեմբերի 1-ի «Հայկական ԽՍՀ-ի և Լեռնային Ղարաբաղի վերամիավորման մասին» Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի և Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհրդի համատեղ որոշման վրա,

գարգացնելով 1918 թվականի մայիսի 28-ին ստեղծված անկախ Հայաստանի Հանրապետության ժողովրդավարական ավանդույթները,

խնդիր դնելով ժողովրդավարական, իրավական հասարակարգի ստեղծումը,

Հ Ռ Չ Ա Կ Ո Ի Մ Է

անկախ պետականության հաստատման գործընթացի սկիզբը:

1. Հայկական ԽՍՀ-ն վերանվանվում է Հայաստանի Հանրապետություն՝ կրճատ՝ Հայաստան:

Հայաստանի Հանրապետությունն ունի իր դրոշը, զինանշանը և հիմնը:

2. Հայաստանի Հանրապետությունը ինքնիշխան պետություն է՝ օժտված պետական իշխանության գերակայությամբ, անկախությամբ, լիիրավությամբ:

Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում գործում են միայն Հայաստանի Հանրապետության սահմանադրությունը և օրենքները:

3. Հայոց պետականության կրողը Հայաստանի Հանրապետության ժողովուրդն է, որն իր իշխանությունը իրագործում է անմիջականորեն և ներկայացուցչական մարմինների միջոցով՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրության և օ-

րենքների հիման վրա:

Հանրապետության ժողովրդի անունից հանդես գալու իրավունքը պատկանում է բացառապես Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդին:

4. Հայաստանի Հանրապետության տարածքում բնակվող բոլոր քաղաքացիների համար սահմանվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն:

Արտերկրի հայությունը Հայաստանի Հանրապետության քաղաքացիության իրավունք ունի: Հայաստանի Հանրապետության քաղաքացիները գտնվում են նրա պաշտպանության և աջակցության ներքո:

Հայաստանի Հանրապետությունը ապահովում է իր քաղաքացիների ազատ ու իրավահավասար զարգացումը՝ անկախ ազգությունից, ռասայական պատկանելությունից և դավանանքից:

5. Հայաստանի Հանրապետությունը իր անվտանգությունը և սահմանների անձեռնմխելիությունը ապահովելու նպատակով ստեղծում է Գերագույն խորհրդին ենթակա սեփական զինված ուժեր, ներքին զորքեր, պետական և հասարակական անվտանգության մարմիններ:

Հայաստանի Հանրապետությունը ունի ԽՍՀՄ սպառազինության իր մասնաբաժնի իրավունքը:

Հայաստանի Հանրապետությունն ինքն է որոշում իր քաղաքացիների զինվորական ծառայության կարգը:

Այլ երկրների զորամիավորումները, նրանց ռազմական բազաները և շինությունները կարող են տեղաբաշխվել Հայաստանի Հանրապետության տարածքում միայն նրա Գերագույն խորհրդի որոշմամբ:

Հայաստանի Հանրապետության զինված ուժերը կարող են օգտագործվել միայն նրա Գերագույն խորհրդի որոշմամբ:

6. Հայաստանի Հանրապետությունը, որպես միջազգային իրավունքի սուբյեկտ, վարում է անկախ արտաքին քաղաքա-

կանություն, անմիջական հարաբերություններ է հաստատում այլ պետությունների, ԽՍՀՄ ազգային-պետական կազմավորումների հետ, մասնակցում է միջազգային կազմակերպությունների գործունեությանը:

7. Հայաստանի Հանրապետության ազգային հարստությունը՝ հողը, ընդերքը, օդային տարածությունը, ջրային և այլ բնական պաշարները, տնտեսական, մտավոր, մշակութային կարողությունները, նրա ժողովրդի սեփականությունն է: Դրանց տիրապետման, օգտագործման և տնօրինման կարգը որոշվում է Հայաստանի Հանրապետության օրենքներով:

Հայաստանի Հանրապետությունը ունի ԽՍՀՄ ազգային հարստության, այդ թվում՝ ոսկու պաշարների, ավնաստի և վալյուտային ֆոնդերի մասնաբաժնի իրավունք:

8. Հայաստանի Հանրապետությունը սեփականության բազմաձևության հիման վրա որոշում է իր տնտեսավարման սկզբունքները և կարգը, հիմնում սեփական դրամ, ազգային բանկ, ֆինանսավարկային համակարգ, հարկային և մաքսային ծառայություններ:

9. Հայաստանի Հանրապետությունը իր տարածքում ապահովում է՝

խոսքի, մամուլի, խղճի ազատություն.

օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների տարանջատում.

բազմակուսակցություն, կուսակցությունների իրավահավասարություն, իրավապահ մարմինների և զինված ուժերի ապաքաղաքականացում:

10. Հայաստանի Հանրապետությունը ապահովում է հայերենի, որպես պետական լեզվի, գործառությունը հանրապետության կյանքի բոլոր ոլորտներում, ստեղծում կրթության, գիտության և մշակույթի սեփական համակարգ:

11. Հայաստանի Հանրապետությունը սատար է կանգնում 1915 թվականին Օսմանյան Թուրքիայում և Արևմտյան Հայաստանում

տանում հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործին:

12. Սույն Հռչակագիրը հիմք է ծառայում Հայաստանի Հանրապետության սահմանադրության մշակման, իսկ գործող սահմանադրության մեջ՝ փոփոխությունների և լրացումների կատարման, պետական մարմինների գործունեության, հանրապետության նոր օրենսդրության մշակման համար»:

Տվյալ պարագայում հարց է առաջանում այն մասին, թե արդյո՞ք անկախության հռչակագիրն ինքնին Սահմանադրության մաս է կազմում և արդյո՞ք վերջինիս կարգավորումները Սահմանադրության նախաբանի ուժով ձեռք են բերում սահմանադրական նորմերի արժեք:

Առաջին հերթին նշենք, որ Սահմանադրության նախաբանի տեքստում խոսքը ոչ թե Անկախության հռչակագրի մասին է, այլ դրանում հաստատագրված հայոց պետականության հիմնարար սկզբունքների և համազգային նպատակների: Հռչակագրի ուսումնասիրությունը հիմք է տալիս եզրակացնելու, որ վերջինիս շրջանակներում ամրագրված կարգավորումների մեծամասնությունը հենց նման սկզբունքների և նպատակների արձանագրում է: Միևնույն ժամանակ, Հռչակագրի տեքստում հանդիպում են նաև այնպիսի դրույթներ, որոնք ունեն սուսկ պատմական որոշակի փուլում կոնկրետ ընթացիկ խնդիրը լուծելու նպատակ, նախատեսում են բոլորովին այլ կարգավորում, քան սահմանված է գործող Սահմանադրությամբ, վկայակոչում են մարմիններ, որոնք այժմ, ըստ Սահմանադրության, գոյություն չունեն, ուստի՝ այդ տեսանկյունից հիմնարար սկզբունք կամ համազգային նպատակ չեն ամրագրում: Օրինակ՝ Հռչակագրի 3 հոդվածը սահմանում է, որ Հան-

րապետության ժողովրդի անունից հանդես գալու իրավունքը պատկանում է բացառապես Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդին: 5 հոդվածը նախատեսում է, որ Հայաստանի Հանրապետության զինված ուժերը կարող են օգտագործվել միայն նրա Գերագույն խորհրդի որոշմամբ և այլն: Մինևույն ժամանակ, կարծում ենք, որ նմանատիպ դրույթների բովանդակությունը բազմաշերտ է, ու թեև պարունակում է առավելապես ընթացիկ խնդիրների կոնկրետ լուծումներ, սակայն կարևոր է նաև այդ լուծումների հիմքում դրվող տրամաբանությունը, որն ինքնին դրսևորվում է հայոց պետականության հիմնարար սկզբունքների և համազգային նպատակների ձևով: Հոչակագրի այն դրույթի հիմքում, օրինակ, որ ՀՀ զինված ուժերը կարող են օգտագործվել միայն նրա Գերագույն խորհրդի որոշմամբ, ընկած է ոչ միայն կոնկրետ մարմինը սահմանելու տրամաբանությունը, այլ այն գաղափարը, որ զինված ուժերն օգտագործելու իրավասությամբ օժտված է միայն Հանրապետության ժողովրդին ներկայացնող մարմինը, և ոչ արտաքին կամ այլ մարմիններ:

Ամեն դեպքում ակնհայտ է, որ կան Հոչակագրով ամրագրված առանձին կարգավորումներ, որոնք այս փուլում գործել չեն կարող, ուստի՝ չեն էլ կարող ունենալ սահմանադրական արժեք:

Հավելենք, որ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 2 հոդվածի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտ է հանդիսանում Հայաստանի Հանրապետության ժողովրդի, ինչպես նաև Սահմանադրությամբ նախատեսված մարմինների կամ պաշտոնատար անձանց ընդունած գրավոր իրավական ակտը, որը պարունակում է վարքագծի պարտադիր կա-

նոններ անորոշ թվով անձանց համար: Կարծում ենք, որ քննարկվող օրենքի տեսանկյունից Հայաստանի անկախության մասին հոչակագիրը չի հանդիսանում նորմատիվ իրավական ակտ, և Հոչակագրի իրավական ուժը բխում է Սահմանադրության նախաբանի կողմից վերջինիս տրված փաստացի իրավական դերակատարությունից, որպիսի համատեքստում Հոչակագրում հաստատագրված հայոց պետականության հիմնարար սկզբունքներին և համազգային նպատակներին տրվել է սահմանադրական արժեք: Մինևույն ժամանակ, հարկ ենք համարում ընդգծել, որ, մեր կարծիքով, բացի նշված իրավական նշանակությունից, Հայաստանի անկախության մասին հոչակագիրը Հայաստանի Հանրապետության սահմանադրական համակարգի համար միանշանակ ունի կարևորագույն խորհրդանշական դերակատարություն, որպիսի հանգամանքն անհրաժեշտ է նկատի ունենալ ինչպես վերջինիս իրացման, այնպես էլ Սահմանադրության զարգացման հիմնախնդիրները դիտարկելիս:

Ամփոփելով վերը շարադրվածը՝ նշենք, որ, անկախ ներկայացված նորմերի ու դրանց բովանդակության առանձնահատկություններից, մի բան ակնհայտ է՝ Սահմանադրության նախաբանի տրամաբանությունը Հոչակագրի տեսանկյունից դրանում հաստատագրված հայոց պետականության հիմնարար սկզբունքներին և համազգային նպատակներին սահմանադրական արժեք հաղորդելն է, ինչն անհրաժեշտ է նկատի ունենալ ինչպես Սահմանադրության նախաբանի և Հայաստանի Անկախության մասին հոչակագրի իրավական արժեքը գնահատելիս, այնպես էլ Սահմանադրության զարգացման հիմնախնդիրները դիտարկելիս:

Նշենք, որ ՀՀ սահմանադրական դատարանի որոշումներում Սահմանադրության նախաբանին հղումները հաճախակի բնույթ չեն կրում: Միննույն ժամանակ, առանձին դեպքերում կարելի է հանդիպել նման վկայակոչումների: Օրինակ՝ 12 հունվարի 2010թ. ՄԴՈ-850 որոշման մեջ ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրեց. «ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է նաև, որ «Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև հարաբերությունների զարգացման մասին» արձանագրության դրույթները Հայաստանի Հանրապետության օրինաստեղծ ու իրավակիրառական պրակտիկայում, ինչպես նաև միջպետական հարաբերություններում չեն կարող մեկնաբանվել ու կիրառվել այնպես, որը կհակասի **ՀՀ Սահմանադրության նախաբանի դրույթներին և Հայաստանի անկախության մասին հռչակագրի 11-րդ կետի պահանջներին** (ընդգծումը մերն է – Ա.Մ.)»:

Ի՞նչ է ենթադրում ՀՀ Սահմանադրական դատարանի նշված եզրութաբանությունը, ի՞նչ դերակատարություն է այն նախանշում Սահմանադրության նախաբանի համար:

Կարծում ենք, որ նշված ձևակերպումներով ՀՀ սահմանադրական դատարանը Սահմանադրության նախաբանը դիտարկել է որպես սահմանադրական այլ դրույթների հետ մեկտեղ սահմանադրականության գնահատման չափանիշ՝ այդպիսով նախաբանին հռչակագրային դերակատարությունից բացի հաղորդելով Սահմանադրության այլ նորմերին համարժեք իրավաբանական ուժ և սահմանադրական արժեք:

Միննույն ժամանակ, հիշյալ համատեքստում ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ Սահմանադրական դատարանն ինքնուրույն վկայակոչել է ինչպես Սահմանադրու-

յան նախաբանն, այնպես էլ Անկախության մասին հռչակագիրը: Նկատի ունենալով ներկայացված վերլուծությունը՝ կարծում ենք, որ նման տեխնիկայի կիրառման հիմնական նպատակը ոչ թե նշված դրույթները միմյանցից հստակորեն տարանջատելն է, այլ Հռչակագրի կոնկրետ հոդվածի մատնանշման անհրաժեշտությունը:

Անդրադառնալով նախաբանի փոփոխման հնարավորությանը՝ նշենք, որ ՀՀ Սահմանադրությունը, ամրագրելով Սահմանադրության ընդունմանն ու փոփոխմանն առնչվող կարգավորումները, որևէ անդրադարձ չի կատարում Հիմնական օրենքի նախաբանին: Ընդ որում՝ դա վերաբերում է ինչպես սահմանադրական անփոփոխելի հոդվածներին, այնպես էլ սահմանադրական տարբեր նորմերի փոփոխության առանձնահատկություններին: Տվյալ պարագայում հարց է առաջանում այն մասին, թե արդյոք Սահմանադրության նախաբանը կարող է ենթակա լինել փոփոխության՝ ինչպես տեքստային փոփոխություններ կատարելու, այնպես էլ այլընտրաբանային եղանակներով վերջինիս բովանդակությունը զարգացնելու տեսանկյունից:

Կարծում ենք, որ ներկայացված սահմանադրական կարգավորումների վերլուծությունը հիմք է տալիս եզրակացնելու, որ դրանց հիմքում ընկած է այն տրամաբանությունը, որ ընդհանրապես խոսք չի կարող լինել նախաբանի փոփոխության մասին:

Ավելին, ՀՀ Սահմանադրության նախաբանի բովանդակությունը, դրա տրամաբանությունն ու եզրութաբանությունը հանգեցնում են այն եզրակացության, որ Սահմանադրության նախաբանում թվարկված են պատմական, ազգային ինքնուր-

յանն առնչվող ասպեկտները, կոնկրետ սոցիալական հանրության առջև դրվող նպատակներն ու արժեքները, հղում է կատարված Հայաստանի անկախության մասին հռչակագրում հաստատագրված հայոց պետականության հիմնարար սկզբունքներին և համազգային նպատակներին, և այդ ամենի թվարկման հիմնական նպատակն է՝ մատնանշել, թե ինչը հիմք ընդունելով է հայ ժողովուրդն ընդունում ՀՀ Սահմանադրությունը:

Մեր կարծիքով, այն առանձնահատուկ կարգավորումները, որոնք նախատեսում է ՀՀ Սահմանադրության նախաբանը, կազմում են Սահմանադրության առանցքը, «միջուկը», հետևաբար, բովանդակային տեսանկյունից դրանք ինքնին չեն կարող ենթակա լինել հիմնարար փոփոխությունների: Ակնհայտ է նաև, որ Հիմնական օրենքի նախաբանն արձանագրում է այն արժեքները ու տվյալ սոցիալական հանրության առջև դրվող նպատակները, որոնք ընկած են Սահմանադրության ընդունման հիմքում, և Հիմնական օրենքի ընդունումից հետո ժամանակագրական տեսանկյունից տրամաբանական սխալ է դրանք փոփոխելու մասին խոսելը: Ուստի, նախաբանը հանդիսանում է ՀՀ Սահմանադրության այն որակական առանձնահատկությունը, որի բացակայության պայմաններում հնարավոր չէ խոսել քննարկվող կոնկրետ համակարգի, այն է՝ կոնկրետ Սահմանադրության մասին:

Միևնույն ժամանակ, չնայած նախաբանի տեքստային փոփոխության արգելքին նշված եզրահանգմանը, կարծում ենք, որ նախաբանը, հռչակագրային դերակատարությունից բացի ունենալով նաև սահմանադրական արժեք, կիրառական նշանակություն, կարող է զարգանալ այլընտրանքային

այլ եղանակներով, օրինակ՝ մեկնաբանության միջոցով: Ընդ որում՝ ինչպես սահմանադրական այլ անփոփոխելի հոդվածների, այնպես էլ նախաբանի պարագայում ելակետային պետք է լինի այն, որ չնայած տեքստային փոփոխությունների արգելքին, վերը նշված կարգավորումները ենթակա են դինամիկ մեկնաբանության, որպիսի պայմաններում հնարավոր են վերջիններիս առանձին տարրերի ընկալման փոփոխություններ, սակայն միևնույն ժամանակ անփոփոխ պետք է մնան այդ սկզբունքների «միջուկը» կազմող տարրերը:

Անփոփելով վերը շարադրվածը՝ նշենք նաև, որ, մեր կարծիքով, Սահմանադրության նախաբանի անփոփոխելիության, այն սահմանադրական անփոփոխելի հոդվածների թվում վկայակոչելու ու դրա հետ կապված այլ հանգամանքները պայմանավորված են վերջինիս բովանդակային առանձնահատկություններով և գնահատման են ենթակա յուրաքանչյուր կոնկրետ իրավիճակում: ՀՀ Սահմանադրության նախաբանի պարագայում, օրինակ, կարծում ենք, որ խնդրահարույց չէ այն Սահմանադրության 203 հոդվածով սահմանված անփոփոխելի դրույթների թվում չվկայակոչելը, քանզի վերջինիս բովանդակային առանձնահատկությունները ինքնին ենթադրում են նախաբանի տեքստային անփոփոխելիություն:

Վերոշարադրյալի արդյունքում հանգում ենք այն եզրակացության, որ «Սահմանադրության զարգացում» հասկացությունը ենթադրում է այնպիսի որակական փոփոխություններ, որոնց պայմաններում պահպանվում է համակարգի հիմնական որակը, Սահմանադրության «միջուկը»: Վերջիններս հանդիսանում են այն որակական առանձնահատկությունը, որի բացակայության պայմաններում օբյեկտը դադարում է

քննարկվող կոնկրետ համակարգը լինելուց, որպիսի պայմաններում, բնականաբար, հնարավոր չէ խոսել նաև վերջինիս զարգացման մասին: Այդ հանգամանքն իր հերթին վկայում է, որ հիշյալ արժեքները չեն կարող ենթարկվել հիմնարար փոփոխությունների, ուստի նման փոփոխությունները կհանգեցնեն սահմանադրականության վիճակի խաթարման:

Վերը շարադրվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ «սահմանադրական զարգացումների սահմանադրականության» գաղափարը բոլորովին էլ պարադոքսալ չէ, սահմանադրականության երաշխավորման կարևորագույն բաղադրատարրերից է և ունի բացառիկ կարևորություն կայուն ժողովրդավարության երաշխավորման տեսանկյունից:

Հետևաբար, հիշյալ համատեքստում հարկ ենք համարում անդրադառնալ այն կառուցակարգային լուծումներին, որոնք անհրաժեշտ են նշված գործընթացի արդյունավետությունը երաշխավորելու տեսանկյունից:

Նշենք, որ 2015թ. սահմանադրական բարեփոխումների արդյունքում ՀՀ Սահմանադրության 168 հոդվածը նախատեսեց, որ մինչև Սահմանադրության փոփոխությունների նախագծի, ինչպես նաև հանրաքվեի դրվող իրավական ակտերի նախագծերի ընդունումը սահմանադրական դատարանը որոշում է դրանց համապատասխանությունը Սահմանադրությանը: Այլ կերպ՝ Սահմանադրության փոփոխությունների նախագծի սահմանադրականության որոշումը դարձավ սահմանադրական պարտադիր նախնական վերահսկողության օբյեկտ, ինչը չափազանց կարևոր և հետաքրքիր նշանակություն կարող է ունենալ սահմանադրական փոփոխությունների սահմանադրականության, հետևաբար նաև՝ Սահմանադրությո-

յան կայունության ու կայուն ժողովրդավարության երաշխավորման տեսանկյունից:

Նշենք, որ նման լիազորություն ունեցող սահմանադրական դատարանների թիվն աշխարհում այնքան էլ մեծ չէ: Սահմանադրական փոփոխությունների՝ որևէ առումով Սահմանադրության համապատասխանությունը որոշելու լիազորություն ունեն, օրինակ, Մոլդովայի, Ադրբեջանի, Թուրքիայի, Ուկրաինայի սահմանադրական դատարանները¹⁵²: Դրանցից յուրաքանչյուրն ունի հիշյալ գործերի քննության իր առանձնահատկությունները, ինչին հարկ ենք համարում անդրադառնալ ստորև:

Թուրքիայի Հանրապետության սահմանադրական դատարանն, օրինակ, նշված գործերը կարող է քննել միայն ըստ ձևի սահմանադրական վերահսկողության շրջանակներում: Մասնավորապես, սահմանադրական փոփոխությունների սահմանադրական վերահսկողությունը սահմանափակվում է՝ այն հանգամանքները պարզելով, թե արդյոք ձեռք է բերվել առաջարկը ներկայացնելու և քվեարկության համար անհրաժեշտ մեծամասնություն, և արդյոք պահպանվել է արագացված ընթացակարգերի պարագայում դեբատների արգելքը¹⁵³: Հունգարիայի Սահմանադրության 24 հոդվածի համաձայն ևս՝ Հիմնական օրենքը կամ Հիմնական օրենքի փոփոխությունները Սահմանադրական դատարանում կարող են քննության առարկա

¹⁵² Տե՛ս CDL-AD(2010)001, Report on Constitutional Amendment, Adopted by the Venice Commission at its 81st Plenary Session (Venice, 11-12 December 2009), <http://www.venice.coe.int/docs/2010/CDL-AD%282010%29001-e.pdf>, /Վերջին մուտք՝ 20.01.2018/:

¹⁵³ Տե՛ս Թուրքիայի Հանրապետության Սահմանադրության 148 հոդված, https://global.tbmm.gov.tr/docs/constitution_en.pdf, /Վերջին մուտք՝ 20.01.2018/:

դառնալ միայն դրանց ընդունմանը, փոփոխմանը և հրապարակմանը վերաբերող Հիմնական օրենքում ամրագրված ընթացակարգային պահանջների տեսանկյունից¹⁵⁴:

Ուկրաինայի Սահմանադրության 159 հոդվածի համաձայն՝ Ուկրաինայի Սահմանադրությունում փոփոխություններ կատարելու վերաբերյալ օրենքի նախագիծը Գերագույն Ռադայում քննարկվում է Սահմանադրության 157 և 158 հոդվածների պահանջներին օրենքի նախագծի համապատասխանության վերաբերյալ Ուկրաինայի սահմանադրական դատարանի եզրակացության առկայության դեպքում: Հետևաբար, ակնհայտ է, որ Ուկրաինայի Սահմանադրությունը հստակ սահմաններ է նախատեսում նշված գործերի քննության համար, մասնավորապես՝ Սահմանադրության 157 և 158 հոդվածների պահանջները: Սահմանադրության 157 հոդվածը սահմանում է, որ Ուկրաինայի Սահմանադրությունը չի կարող փոփոխվել, եթե փոփոխությունները նախատեսում են մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների վերացում կամ սահմանափակում կամ ուղղված են Ուկրաինայի անկախության կամ տարածքային ամբողջականության խախտմանը: Ուկրաինայի Սահմանադրությունը չի կարող փոփոխվել ռազմական կամ արտակարգ դրության պայմաններում: 158 հոդվածն իր հերթին սահմանում է, որ Ուկրաինայի Գերագույն Ռադայի կողմից քննարկված և չընդունված՝ Ուկրաինայի Սահմանադրությունում փոփոխություններ կատարելու վերաբերյալ օրենքի նախագիծը կարող է ներկայաց-

¹⁵⁴ Տե՛ս Հունգարիայի Հիմնական օրենքի 24 հոդված, https://hunconcourt.hu/uploads/sites/3/2018/07/fundamental_law_of_hungary_7-1.pdf, /Վերջին մուտք՝ 20.01.2018/:

վել Ուկրաինայի Գերագույն Ռադա ոչ շուտ, քան հիշյալ օրենքի նախագծի առնչությամբ որոշման ընդունման օրվանից հետո մեկ տարվա ընթացքում: Իր լիազորությունների ժամկետի ընթացքում Ուկրաինայի Գերագույն Ռադան չի կարող երկու անգամ փոփոխել Սահմանադրության նույն դրույթները:

Հիշյալ համատեքստում հատկանշական է Մոլդովայի Հանրապետության օրինակը, որի սահմանադրական դատարանը հիշյալ գործերի քննության ընթացքում ընդունում է ***խորհրդատվական եզրակացություն***¹⁵⁵:

Ներկայացված օրինակները վկայում են, որ նշված գործերի քննության համար նախատեսված են համապատասխանության որոշման կոնկրետ չափանիշներ կամ սահմաններ: Այլ կերպ՝ խոսքը նախագծի՝ սահմանադրական սուկ կոնկրետ նորմերին ու պահանջներին համապատասխանության մասին է: Ինչ վերաբերում է Մոլդովայի օրինակին, ապա վերջինիս սահմանադրական դատարանը հիշյալ գործերի քննության արդյունքում ընդունում է սուկ ***խորհրդատվական եզրակացություն***:

Անդրադառնալով Հայաստանի Հանրապետության օրինակին՝ նշենք, որ 17 հունվարի 2018թ. ընդունված «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 72 հոդվածը նախատեսեց Սահմանադրության փոփոխությունների նախագծի, ինչպես նաև հանրաքվեի դրվող իրավական ակտերի նախագծերի՝ Սահմանադրությանը համապատ-

¹⁵⁵ Տե՛ս Մոլդովայի Հանրապետության Սահմանադրության 135, 141 հոդվածներ, http://www.constcourt.md/public/files/file/Baza%20legala/Constitutia_engl___13.1.17.pdf, /Վերջին մուտք՝ 20.01.2018/:

տասխանությունը որոշելու վերաբերյալ գործերի քննության առանձնահատկությունները՝ սահմանելով.

«1. Մինչև Սահմանադրության փոփոխությունների նախագծի, ինչպես նաև հանրաքվեի դրվող իրավական ակտերի նախագծերի ընդունումը վերաբերող միջազգային կազմակերպություններին անդամակցության կամ տարածքի փոփոխությանը վերաբերող հարցերով Սահմանադրական դատարան է դիմում Ազգային ժողովը:

2. Քաղաքացիական նախաձեռնության կարգով հանրաքվեի դրվող օրենքի նախագծի հարցով Սահմանադրական դատարան է դիմում քաղաքացիական նախաձեռնության լիազոր ներկայացուցիչը:

3. Սույն հոդվածում նշված գործերով Սահմանադրական դատարանը որոշում է ընդունում դիմումը մուտքագրելուց ոչ ուշ, քան երեք ամիս հետո: Սահմանադրական դատարանի պատճառաբանված աշխատակարգային որոշմամբ գործի քննության ժամկետը կարող է երկարաձգվել, բայց ոչ ավելի, քան երեք ամսով:

4. Սույն հոդվածում նշված գործերով Սահմանադրական դատարանն ընդունում է հետևյալ որոշումներից որևէ մեկը.

1) նախագիծը Սահմանադրությանը համապատասխանող ճանաչելու մասին.

2) նախագիծը ամբողջությամբ կամ մասամբ Սահմանադրությանը հակասող ճանաչելու մասին:

5. Սույն հոդվածով նշված գործերը Սահմանադրական դատարանը քննում է գրավոր ընթացակարգով, բացառությամբ այն դեպքերի, երբ տվյալ գործը Սահմանադրական դատարանի գնահատմամբ ձեռք է բերել հասարակական մեծ

հնչեղություն, կամ դրա բանավոր դատաքննությունը կնպաստի գործի հանգամանքների առավել արդյունավետ բացահայտմանը:

6. Սույն հոդվածով սահմանված ընթացակարգով ընդունված օրենքը հետագայում սույն օրենքի 68-րդ հոդվածով սահմանված կարգով վերանայելու համար գործը քննության ընդունելու վերաբերյալ Սահմանադրական դատարանի աշխատակարգային որոշումն ընդունվում է Սահմանադրական դատարանի դատավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երկու երրորդով»:

Նշված կարգավորումները հիմք են տալիս եզրակացնելու, որ օրենքը չի հստակեցնում Սահմանադրության փոփոխությունների նախագծի սահմանադրականության գնահատման կոնկրետ չափանիշները: Մինչդեռ կարծում ենք, որ հիշյալ գործերի քննությունն ունի հստակ սահմաններ և քննարկվող նախագծի սահմանադրականությունը չի կարող գնահատվել Սահմանադրության բոլոր նորմերին համապատասխանության տեսանկյունից: Հակառակ պարագայում կարող է ձևախեղվել սահմանադրական փոփոխությունների ամբողջ գաղափարը, որի էությունն էլ հենց սահմանադրական նորմերը փոփոխելն է: Այլ հարց է, որ նշված փոփոխությունները, ինչպես արդեն շեշտեցինք, չեն կարող վերաբերել Սահմանադրության «միջուկը» կազմող հիմնարար արժեքներին, որպիսի հանգամանքն էլ, մեր կարծիքով, պետք է ընկած լինի քննարկվող հիմնախնդրի ուղենիշային լուծումների հիմքում:

Հետևաբար, կարծում ենք, որ Սահմանադրության փոփոխությունների նախագծի սահմանադրականությունը կարող է գնահատվել երկու հիմնական չափանիշների տեսանկյունից՝

1. Սահմանադրության փոփոխության առնչությամբ Սահմանադրությամբ նախատեսված կարգավորումներին դրանց համապատասխանության, 2. Սահմանադրության հիմնարար արժեքների, հիմնական որակի անխախտելիության (որոնք, ինչպես արդեն նշել ենք, իրենց արտահայտությունն են գտնում Սահմանադրության անփոփոխելի հոդվածներում, իսկ առավել ամփոփ՝ պետության սահմանադրաիրավական բնութագրիչներում, ինչպես նաև նախաբանի տեքստում) դիտանկյունից:

Կարծում ենք, որ հիշյալ հանգամանքները պետք է հաշվի առնվեն սահմանադրական դատարանում նշված գործերի քննության ընթացքում, և Սահմանադրության փոփոխությունների նախագծի սահմանադրականությունը պետք է գնահատվի հենց վերոհիշյալ հանգամանքների տեսանկյունից: Ավելին, մեր կարծիքով, նպատակահարմար է նշված հանգամանքներն ամրագրել «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքով:

Ամփոփելով վերոշարադրյալը՝ նշենք, որ որքան էլ պարարոքսալ չթվա «սահմանադրական զարգացումների սահմանադրականության» գաղափարը, վերջինս անբովանդակ հասկացություն չէ, սահմանադրականության երաշխավորման կարևորագույն բաղադրատարրերից է, ունի հստակ բովանդակություն և բացառիկ կարևորություն կայուն ժողովրդավարության երաշխավորման առումով:

§ 3. Սահմանադրության զարգացման եղանակների արդյունավետ իրացումը սահմանադրական կայունության երաշխավորման համատեքստում

Ժողովրդավարության դոկտրինի առանձնահատկություններին անդրադառնալիս նշեցինք, որ ներկայացուցչական ինստիտուտների ներմուծումը «ժողովրդավարություն» երևույթի ընկալման շրջանակներում դեռ 18-րդ դարում փիլիսոփաների կողմից դիտարկվել է որպես նոր ձև և որակ ձեռք բերելու՝ ժողովրդավարությանը տրված հնարավորություն: Հիշյալ ինստիտուտների ներմուծումը նպատակուղղված է եղել ժողովրդի իշխանության իրականացման արդյունավետ կառուցակարգերի ձևավորմանն ու զարգացմանը, և այդ տեսանկյունից ակնհայտ է ժողովրդավարության՝ սկզբնական ժամանակաշրջանում գոյություն ունեցած և հետագայում ձևավորված ընկալումների միջև ակումուլյատիվ կապի առկայությունը: Ավելին, այդ փոփոխությունները կրել են որակական, նպատակաուղղված բնույթ, նպատակաուղղված են եղել ժողովրդի իշխանության իրականացման որակապես նոր մակարդակի ձևավորմանը, օժտված են եղել ներքին փոխկապվածության և ամբողջականության հատկանիշով: Հետևաբար, ժողովրդավարության առանցքը կազմող գաղափարի, այն է՝ մարդուն որպես բարձրագույն արժեք ընկալելու, նրա համար ինքնարտահայտման ու ինքնադրսևորման հնարավորություններն ու վերջինիս արժևորման պահանջի իրացումը երաշխավորելու, իշխանությունը մարդու հիմնական իրավունքներով և ազատություններով սահմանափակելու պարագայում ներկայացուցչական ինստիտուտներն ու *մասնագիտացված* կառավարումը

հասարակական համակարգի համար ունեն նույնպիսի առանցքային նշանակություն, ինչպիսին ունի անմիջական ժողովրդավարությունը:

Սահմանադրական կայունության ու զարգացման տեսանկյունից ևս ներկայացուցչական ժողովրդավարության կառուցակարգերն ունեն բացառիկ կարևորություն պրոֆեսիոնալ լուծումների ընտրության, պրոֆեսիոնալ որոշումների կայացման և էլիտար կառավարման առումով, հետևաբար, դրանց առկայությունը սահմանադրական զարգացումների գործընթացին շատ ավելի մասնագիտացված և արդյունավետ բնույթ է հաղորդում:

Այդ առումով կարևոր ենք համարում 2015թ. ՀՀ սահմանադրական բարեփոխումների արդյունքում որդեգրված այն մոտեցումը, որը ենթադրում է Սահմանադրության փոփոխությունների իրականացման գործընթացում անմիջական և ներկայացուցչական ժողովրդավարության կառուցակարգերի զուգակցում: Մասնավորապես, ՀՀ Սահմանադրության 202 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Սահմանադրությունը և Սահմանադրության 13-րդ, 7-րդ, 10-րդ և 15-րդ գլուխներում, ինչպես նաև Սահմանադրության 88-րդ հոդվածում, 89-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին նախադասությունում, 90-րդ հոդվածի 1-ին մասում, 103-րդ հոդվածի 2-րդ մասում, 108-րդ, 115-րդ, 119-120-րդ, 123-125-րդ, 146-րդ, 149-րդ և 155-րդ հոդվածներում, 200-րդ հոդվածի 4-րդ մասում փոփոխություններն **ընդունվում են միայն հանրաքվեի միջոցով**: Սահմանադրություն ընդունելու կամ փոփոխելու նախաձեռնության իրավունք ունեն պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդը, Կառավարությունը կամ ընտրական իրավունք ունեցող երկու

հարյուր հազար քաղաքացի: Ազգային ժողովը նախագիծը հանրաքվեի դնելու վերաբերյալ որոշումն ընդունում է պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երկու երրորդով:

Մինևույն ժամանակ, նույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ բացառությամբ հիշյալ հոդվածի 1-ին մասում նշված հոդվածների, **Սահմանադրության մյուս հոդվածներում փոփոխություններն ընդունում է Ազգային ժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երկու երրորդով**: Համապատասխան նախաձեռնության իրավունք ունեն պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ քառորդը, Կառավարությունը կամ ընտրական իրավունք ունեցող հարյուր հիսուն հազար քաղաքացի:

Ավելին, եթե հիշյալ հոդվածի 2-րդ մասով նախատեսված Սահմանադրության փոփոխությունների նախագիծն Ազգային ժողովը չի ընդունում, ապա պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով ընդունված որոշմամբ այն կարող է դրվել հանրաքվեի:

Կարծում ենք, որ ներկայացուցչական և անմիջական ժողովրդավարության կառուցակարգերի զուգակցման նման մոդելը կարևոր նշանակություն ունի մասնագիտացված որոշումների կայացման, կառավարման արդյունավետության բարձրացման, ժողովրդի իշխանության և վերջինիս նպատակների արդյունավետ իրականացման տեսանկյունից, և այլ հանգամանքների երաշխավորման պայմաններում կարող է լավագույնս նպաստել կայուն ժողովրդավարական համակարգի ձևավորմանն ու ամրապնդմանը:

Հիշյալ համատեքստում հարկ ենք համարում անդրադառ-

նալ նաև այն հանգամանքին, որ Սահմանադրության զարգացման հիմնախնդիրները վերլուծելիս իրավաբանական գրականության մեջ առավել հաճախ խոսվում է Սահմանադրության տեքստում փոփոխություններ կատարելու մասին: Մինչդեռ աշխատանքի շրջանակներում ներկայացված վերլուծությունը հիմք է տալիս եզրակացնելու, որ զարգացում հանդիսանալու համար պարտադիր չէ, որպեսզի փոփոխությունը կատարվի իրավական ակտի տեքստի շրջանակներում, և այն կարող է վերաբերել նաև նորմի ընկալմանը: Հետևաբար, Սահմանադրության տեքստում փոփոխություններ կատարելը Սահմանադրության զարգացման միակ եղանակը չէ, որպիսի հանգամանքի հիմքում ընկած պատճառները բազմաթիվ են:

Առաջին հերթին հարկ է հիշատակել, որ փոփոխման կոշտ կարգի դեպքում Սահմանադրությունը զարգացող հասարակական հարաբերությունների պայմաններին սուսկ վերջինիս տեքստում փոփոխություններ կատարելու միջոցով համապատասխանեցնելը օժտված չէ բավարար արդյունավետությամբ, քանզի այն չի հանդիսանում գործուն միջոց: Հիմնախնդրի լուծում չէ նաև ճկուն սահմանադրությունների առկայությունը, քանզի վերջինս, որպես կանոն, հնարավորություն է տալիս հեշտությամբ փոփոխելու սահմանադրական կարգավորումները: Մինչդեռ, ինչպես նշեցինք, Սահմանադրությունը հանդիսանում է կենսագոյի հիմնական կանոնների շուրջ հասարակական համաձայնություն և, որպես այդպիսին, ամրագրում է կոնկրետ հասարակության քաղաքակրթական արժեքների ամբողջականությունից բխող նպատակներն ու հասարակական կեցության հիմնարար սկզբունքները, սահմանում է հասարակական վարքագծի հիմնական կանոնները,

անհատի ու պետության փոխհարաբերությունների բնույթը, իշխանության իրականացման կարգն ու սահմանները՝ հասարակական համաձայնությամբ անհրաժեշտ միջավայր ստեղծելով մարդու ստեղծարար էության լիարժեք դրսևորման ու առաջընթացի համար: Ուստի, ճկուն սահմանադրությունների պայմաններում առավել մեծանում է կենսագոյի վերը նշված հիմնական կանոններն առանց հասարակական համաձայնության փոփոխելու, իսկ մի շարք դեպքերում նաև՝ հիշյալ հասարակական համաձայնությունը ձևախեղելու հավանականությունը, ինչն իր հերթին հանգեցնում է «Սահմանադրություն» հասկացության հիմքում ընկած հատկանիշային արժեքների ձևախեղման¹⁵⁶:

Կարևոր է և այն, որ հաճախ Սահմանադրության զարգացումը պայմանավորված է լինում ոչ թե այս կամ այն նորմի շրջանակներում տեքստային փոփոխություններ կատարելու, այլ վերջինիս բովանդակության բացահայտման անհրաժեշտությամբ: Այդ առումով ակնհայտ է, որ Սահմանադրության տեքստը չի կարող գոյություն ունենալ «ինքն իրեն»՝ վերացարկված շրջապատող իրականությունից: Գաղտնիք չէ և այն, որ վերջինս իրացվում է առօրյա կյանքում, պրակտիկայում: Այդ առումով հիշատակման է արժանի իրավաբանական գրականության մեջ արտահայտված այն տեսակետը, որ Սահմանադրության առկայությունն ինքնին որևէ խնդիր չի լուծում: Էականը համարժեք սահմանադրական կարգի առկայությունն է: Սահմանադրությունը կյանքի կոչելը, սահմանադրական

¹⁵⁶ Հաշվի առնելով այն, որ սահմանադրական տեքստային փոփոխությունների հաճախականությունը վեր ենք լուծել աշխատանքի այլ հատվածում, ուստի հիշյալ համատեքստում այդ հանգամանքի այլ մանրամասներին այլևս չենք անդրադառնա:

նորմատիվ բնույթի արժեքներն իրական կյանքի կանոն դարձնելը միայն հնարավորություն կտա երաշխավորել իրավունքի գերակայությունն ու համակարգային կայունությունը: Գերխնդիրը եղել ու շարունակում է մնալ հանրային կյանքի իրողությունները սահմանադրական լուծումներին ներդաշնակելը¹⁵⁷:

Հետևաբար, եթե ստատիկ առումով տեքստի բովանդակությունը կարող է բացահայտման կարիք չունենալ, ապա նույնը դժվար է ասել հիշյալ տեքստային լուծումների ու իրականության փոխառնչության դեպքերի մասին, երբ, որպես կանոն, սահմանադրական նորմերի իրացման համար պահանջվում է վերջիններիս բովանդակության վերհանում: Իսկ դա նպատակահարմար է իրականացնել ոչ թե նորմի շրջանակներում փոփոխություններ կատարելու, այլ վերջինիս մեկնաբանության միջոցով: Հակառակ տարբերակը կարող է հանգեցնել չափազանց ծավալուն սահմանադրական տեքստի առկայության, որի համապատասխանեցումը զարգացող հասարակական հարաբերությունների պայմաններին կպահանջի վերջինիս շրջանակներում անընդհատ փոփոխությունների իրականացում, ինչը հնարավոր չի լինի արդյունավետորեն ապահովել կոշտ սահմանադրությունների պարագայում, իսկ ճկուն սահմանադրությունների դեպքում կմեծանա սահմանադրությունների հիշյալ տեսակի առնչությամբ ներկայացված վերը նշված իրավիճակի առաջացման, այն է՝ «Սահմանադրություն» հասկացության հիմքում ընկած հատկանիշային արժեքների ձևախեղման հավանականությունը:

¹⁵⁷ Տե՛ս Հարությունյան Գ. Սահմանադրականության գումարելիները՝ իրավունքի գերակայություն, կայուն զարգացում, <http://concourt.am/armenian/structure/president/articles/harutyunyan2011.pdf>, /Վերջին մուտք՝ 20.01.2016/:

Սահմանադրության զարգացման այլընտրանքային եղանակների, մասնավորապես, Սահմանադրության մեկնաբանության ինստիտուտի արմատավորումը պայմանավորող հանգամանքների առումով հարկ ենք համարում ընդգծել և այն, որ ներկայումս սահմանադրությունները, որպես կանոն, սահմանադրական արդարադատության միջոցով ուղղակիորեն ենթակա են դատական պաշտպանության, որպիսի հանգամանքի արդյունավետ իրականացումը դժվար է պատկերացնել առանց վերջինիս դրույթների մեկնաբանության: Ակնհայտ է, որ անհնար է կիրառել սահմանադրական նորմը կամ իրականացնել դրա դատական պաշտպանությունը առանց վերջինիս բովանդակության բացահայտման:

Վերը շարադրված հանգամանքներն արդեն իսկ բավարար են փաստելու, որ Սահմանադրության զարգացումը հնարավոր չէ արդյունավետորեն իրականացնել սոսկ վերջինիս տեքստում փոփոխություններ կատարելու միջոցով, և որ Սահմանադրության մեկնաբանությունը հանդիսանում է Սահմանադրության զարգացման կարևորագույն եղանակներից մեկը: Ընդ որում՝ հիշյալ համատեքստում խոսքը պաշտոնական մեկնաբանության մասին է, քանզի վերջինս, ի տարբերություն ոչ պաշտոնական մեկնաբանության, **ունի համապարտադիր բնույթ** և տրվում է դրա համար լիազորված հատուկ մարմնի կողմից:

Հավելենք, որ Սահմանադրության զարգացմանն առնչվող վերլուծությունները ևս վկայում են, որ պետությունների ճնշող մեծամասնությունում Սահմանադրության տեքստային փոփոխությունները Հիմնական օրենքի զարգացման միակ եղանակը չեն: Ավելին, զարգացման այլ ուղիներն այդ առումով ունեն ա-

ռավել մեծ ու առանցքային նշանակություն¹⁵⁸: Կարծում ենք, որ դրանք հնարավորություն են տալիս հաղթահարել ժամանակակից սահմանադրական համակարգերին բնորոշ «նորմատիվ ֆետիշիզմը»: Այդ առումով հիշատակման է արժանի իրավաբանական գրականության մեջ արտահայտված այն տեսակետը, որ արդի քաղաքակրթությունը տառապում է մի հիվանդությամբ, որը կոչվում է «նորմատիվ ֆետիշիզմ»: Նրա գլխավոր ախտանիշը կայուն պատկերացումն է այն մասին, որ հասարակական առաջընթացը ձեռք է բերվում սոսկ գոյություն ունեցող ձևական նորմերի կատարելագործմամբ ու նորերը ստեղծելով: Պարադոքսն այն է, որ թեև նորմատիվ ֆետիշիզմի անկենսունակությունն անընդհատ հաստատվում է տարբեր մասշտաբի բազմաթիվ կոնկրետ օրինակներով, սակայն այդ հիվանդությունը շարունակում է գոյություն ունենալ¹⁵⁹:

Տվյալ պարագայում կարող է հարց առաջանալ այն մասին, թե արդյոք հստակորեն սահմանազատված են այն դեպքերը, երբ ՀՀ Սահմանադրության զարգացումը անհրաժեշտ է իրականացնել վերջինիս տեքստում փոփոխություններ կատարելու եղանակով, իրավիճակներից, երբ քննարկվող նպատակին կարելի է հասնել մեկնաբանության միջոցով:

Հաշվի առնելով այն, որ Սահմանադրությունը հանդիսանում է կենսագոյի հիմնական կանոնների շուրջ հասարակական համաձայնությունն և, որպես այդպիսին, ամրագրում է իրավական այն հիմնարար արժեքներն ու սկզբունքները, որոնք բնորոշ են սոցիալական հանրության պատմական տվյալ փո-

¹⁵⁸ See 'u How Constitutions Change (A Comparative Study) / edited by Oliver D., Fusaro C., Oxford and Portland, Oregon, 2011, էջ 9-378:

¹⁵⁹ See 'u Право и правоприменение в России: междисциплинарные исследования / под ред. Волкова В. М., 2011, էջ 139:

լին ու կազմում են դրա շրջանակներում առաջացող հարաբերությունների «միջուկը», էությունը, սահմանադիրը նախատեսել է այլ իրավական ակտերի համեմատությամբ ՀՀ Սահմանադրության ընդունման ու փոփոխման տարբերակված կարգ՝ հստակորեն սահմանելով հիշյալ գործընթացի շրջանակներում ընդգրկված սուբյեկտներին¹⁶⁰: Այդ հանգամանքը կարող է հանգեցնել այնպիսի եզրակացության, որ ՀՀ Սահմանադրության զարգացումն անհնար է վերջինիս տեքստում փոփոխություններ կատարելու նշված եղանակից տարբերվող այլ եղանակով: Սակայն, հաշվի առնելով ներկայացված վերլուծությունը, կարծում ենք, որ վերը նշված կարգավորումն ամրագրելով՝ սահմանադիրը նպատակ է հետապնդել ոչ թե ընդհանրապես արգելել Սահմանադրության զարգացումն այլընտրանքային եղանակներով, այլ բացառել է այլ սուբյեկտների կողմից Սահմանադրության փոփոխումը **գործող սահմանադրական կարգավորումներից չբխող նոր կարգավորում ստեղծելու** միջոցով: Իսկ դա հիմք է տալիս եզրակացնելու, որ ՀՀ Սահմանադրության զարգացումը կարելի է իրականացնել նաև, այսպես կոչված, այլընտրանքային եղանակների, մասնավորապես, վերջինիս մեկնաբանության միջոցով:

Միննույն ժամանակ, կարծում ենք, որ քննարկվող հիմնախնդրի առումով հիմնական չափանիշը պետք է լինի այն, որ Սահմանադրության կայունությունն ապահովելու տեսանկյունից նպատակահարմար է Սահմանադրության տեքստում փոփոխություններ չկատարել այն բոլոր դեպքերում, երբ հնարավոր է վերջինիս զարգացումն ապահովել առանց հիշա-

¹⁶⁰ See 'u ՀՀ Սահմանադրության 15-րդ գլուխը, որը վերնագրված է «Սահմանադրության ընդունումը, փոփոխությունը և հանրաքվեն»:

տակված տեքստային փոփոխությունների, **գործող սահմանադրական կարգավորումների շրջանակներում** մեկնաբանություն իրականացնելու միջոցով: Հայաստանի Հանրապետության տեսանկյունից դրանք, մասնավորապես, այն դեպքերն են, երբ առաջանում է ոչ թե այս կամ այն նորմի վերափոխման, այլ վերջինիս բովանդակության բացահայտման անհրաժեշտություն:

Այսպիսով, կարելի է փաստել, որ մեկնաբանությունը հանդիսանում է ՀՀ Սահմանադրության զարգացման կարևորագույն եղանակներից մեկը, և որ նպատակահարմար է Սահմանադրության տեքստում փոփոխություններ չկատարել այն բոլոր դեպքերում, երբ հնարավոր է վերջինիս զարգացումն ապահովել հիշատակված եղանակի միջոցով¹⁶¹:

Ամփոփելով վերը շարադրվածը՝ նշենք, որ, չնայած ՀՀ Սահմանադրության 167 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Սահմանադրական արդարադատությունն իրականացնում է Սահմանադրական դատարանը՝ ապահովելով **Սահմանադրության գերակայությունը**, սակայն, կարծում ենք, որ վերջինս Սահմանադրության միակ հատկանիշը չէ, որի ապահովմանը նպատակառոտված է ՀՀ սահմանադրական դատարանի գործունեությունը: Սահմանադրական կայունության ու Սահմանադրության զարգացման առնչությամբ ներկայացված վերլու-

¹⁶¹ Այդ առումով հարկ ենք համարում հիշատակել ԱՄՆ Սենատի անդամ Ջորջ Նորիսի հետևյալ խոսքերը՝ «Մենք ունենք օրենսդիր մարմին, որը կոչվում է Ներկայացուցիչների պալատ՝ կազմված 400 հոգուց: Մենք ունենք մեկ այլ օրենսդիր մարմին, որը կոչվում է Սենատ՝ կազմված մոտ 100 հոգուց: Մենք իրականում ունենք ևս մեկ այլ օրենսդիր մարմին, որը կոչվում է Գերագույն դատարան՝ կազմված 9 հոգուց, և նրանք ավելի գորեղ են, քան մենք բոլորս միասին վերցրած» (տե՛ս Նազարյան Ն. ԱՄՆ դատական համակարգը, Երևան, 1997, էջ 25-26):

ծությունը հիմք է տալիս եզրակացնելու, որ ՀՀ սահմանադրական դատարանի գործունեության էությունն ընդգծվում է հատկապես վերջիններիս ապահովման բնագավառում: Սահմանադրագիտության զարգացման ժամանակակից միտումները վկայում են, որ արդի փուլում սահմանադրական դատարանի որոշումներն այլևս չեն ընկալվում որպես սոսկ իրավական ակտերի սահմանադրականությունը կամ հակասահմանադրականությունն արձանագրող փաստաթուղթ, այլ առավել շեշտադրվում է վերջիններիս՝ միասնական սահմանադրական դոկտրինի ձևավորման ու Սահմանադրության զարգացման կարևորագույն միջոց հանդիսանալու հանգամանքը: Հետևաբար, Սահմանադրության կայունության ու զարգացման ապահովումը հանդիսանում է սահմանադրական արդարադատությունն իրականացնող մարմնի կարևորագույն խնդիրներից մեկը, որպիսի հանգամանքը, մեր կարծիքով, քննարկվող մարմնի գործունեության նպատակառոտվածությունը մատնանշելու նպատակով պետք է նույնպես իր արտահայտությունը գտնի ՀՀ Սահմանադրության վերը նշված դրույթի շրջանակներում: Մինևնույն ժամանակ, առավել կարևոր ենք համարում հիշյալ նպատակի իրականացման համար համապատասխան մշակույթի ձևավորումը, երբ սահմանադրական դատարանի որոշումներն ընկալվեն ոչ թե սոսկ որպես իրավական ակտերի սահմանադրականությունը կամ հակասահմանադրականությունն արձանագրելու, այլ նաև որպես Սահմանադրության կայունությունն ու զարգացումն ապահովելու կարևորագույն միջոց:

Ամփոփելով վերը շարադրվածը՝ նշենք, որ սահմանադրական կայունության և զարգացման տեսանկյունից ներկայա-

ցուցական և անմիջական ժողովրդավարության կառուցակարգերի զուգակցման ներկայացված մոդելը կարևոր նշանակություն ունի մասնագիտացված որոշումների կայացման, կառավարման արդյունավետության բարձրացման, ժողովրդի իշխանության և վերջինիս նպատակների արդյունավետ իրականացման առումով, և այլ հանգամանքների երաշխավորման պայմաններում կարող է լավագույնս նպաստել կայուն ժողովրդավարական համակարգի ձևավորմանն ու ամրապնդմանը:

ԳԼՈՒԽ 4.

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԱՐԺԵԲԱՆԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐՆ ՈՒ ԴՐԱ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

§ 1. Սահմանադրական ինքնության արժեքանական նկարագիրը

Սահմանադրական ինքնությունը սահմանադրական կայունության և կայուն ժողովրդավարության տեսանկյունից կարևորագույն նշանակություն ունեցող գաղափարներից է: Վերջինիս առնչությամբ գրականության մեջ առկա են բազմապիսի բնորոշումներ, որոնցից յուրաքանչյուրը, սակայն, սահմանադրական ինքնությունը դիտարկում է սոսկ այս կամ այն չափանիշի դիտանկյունից: Արդյունքում՝ ինչպես հայ, այնպես էլ արտասահմանյան իրավական մտքի շրջանակներում բացակայում է միասնական մոտեցումը քննարկվող հասկացության և վերջինիս բովանդակության առնչությամբ:

Լոուրենս Թրայբը, օրինակ, հետևյալ կերպ է բնորոշում «սահմանադրական ինքնությունը». «տեքստուալ և պատմական հանգամանքների ամբողջություն, որոնցից պետք է բխեն հիմնարար սահմանադրական նորմերը և որոնցով պետք է առաջնորդվել դրանց իրացման ընթացքում...»¹⁶²: Գ. Յակոբսոնի կարծիքով էլ, Սահմանադրությունն ինքնություն է ձեռք բերում

¹⁶² St' u Tribe L. A Constitution We Are Amending: In Defense of a Restrained Judicial Role, 97 Harvard Law Rev 433, 440 (1983):

փորձի արդյունքում, ինքնությունը գոյություն չունի որպես հայտնագործության արդյունք կամ հասարակության մշակույթի մեջ ընկղմված էություն, որն ընդամենը պետք է գտնել: Այն ձևավորվում է երկխոսությամբ և արտահայտում է ժողովրդի անցյալը ներկայացնող և արդեն իսկ հասարակության մեջ ներմուծված քաղաքական ձգտումների ու պարտավորությունների ամբողջություն, որը որոշ դեպքերում այդ նույն հասարակությունը փորձում է հաղթահարել¹⁶³:

Մ. Ռոզենֆելդը ևս, Սահմանադրության մշակման և սահմանադրական բարեփոխումների առանձնահատկությունները հետազոտելիս անդրադառնում է «ինքնություն» հասկացությանը: Ինքնությունը վերջինս դիտարկում է որպես սահմանադրական փոփոխությունների անհրաժեշտությունը պայմանավորող ներքին և արտաքին գործոնների ինքնատիպություն, անկրկնելիություն, ինչպես նաև յուրաքանչյուր երկրի սոցիալտնտեսական, հասարակական-քաղաքական և հոգևոր-մշակութային առանձնահատկությունները՝ ընդհանուր վերցրած¹⁶⁴: Նա տարբերակում է հինգ հիմնական սահմանադրական մոդելներ՝ ֆրանսիական, գերմանական, ամերիկյան, իսպանական և Եվրոպական միության մոդելները¹⁶⁵: Ընդ որում՝ շեշտվում է ազգային և վերազգային ինքնությունը տարբերակելու անհրաժեշտությունը (օրինակ՝ ԵՄ և ԵՄ անդամ-պե-

¹⁶³ St' u Jacobsohn G. Constitutional Identity // The Review of Politics, University of Notre Dame. 2006, 68 (3), էջ 361-397:

¹⁶⁴ St' u Rosenfeld M. The Problem of "Identity" in Constitution-making and Constitutional Reform // Working Paper. 2005. N 143, էջ 24:

¹⁶⁵ St' u Rosenfeld M. Constitution-making, Identity Building, and Peaceful Transition to Democracy: Theoretical Reflections Inspired by the Spanish Example // Cardozo Law Review. 1998. Vol. 19, էջ 1891:

տությունների):

Ներկայացված բնորոշումները հիմք են տալիս եզրակացնելու, որ գրականության մեջ բացակայում է միասնական մոտեցումը «սահմանադրական ինքնություն» հասկացության և վերջինիս բովանդակության առնչությամբ: Ավելին, ակնհայտ է, որ քննարկվող հասկացության վերլուծության համատեքստում նույնացվում են սահմանադրական և ազգային ինքնություն հասկացությունները: Ընդ որում՝ գրականության մեջ որոշ դեպքերում կարելի է հանդիպել հիշյալ հասկացությունների ուղղակի նույնացման¹⁶⁶: Մինչև նույն ժամանակ, ինչպես վկայում են սահմանադրական ինքնության առնչությամբ ներկայացված բնորոշումները, միասնական չէ մոտեցումը նաև այն հարցի առնչությամբ, թե արդյո՞ք ինքնությունը սահմանադրական համակարգին ի սկզբանե պատկանող երևույթ է, թե՞ ձևավորվում է ժամանակի ընթացքում՝ տվյալ համակարգին բնորոշ հասարակական հարաբերությունների զարգացմանը զուգընթաց:

Հետևաբար, հիշյալ համատեքստում անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ այն հարցադրումներին, թե արդյո՞ք իրականում նույնանում են ազգային և սահմանադրական ինքնություն հասկացությունները, ի՞նչ բովանդակություն ունի «սահմանադրական ինքնություն» գաղափարը, արդյո՞ք ինքնությունը սահմանադրական համակարգին ի սկզբանե պատկանող, վերջինիս էությունը կազմող և դրա հիմքում ընկած

¹⁶⁶ St' u Исполинов А. Приоритет права Европейского Союза и национальная (конституционная) идентичность в решениях Суда ЕС и конституционных судов государств – членов ЕС, https://zakon.ru/publication/prioritet_prava_evropejskogo_soyuza_i_nacionalnaya_konstitucionnaya_identichnost_v_resheniya_h_suda_e/, /Վերջին մուտք՝ 18.04.2018/:

անփոփոխ երևույթ է, թե՛ ձևավորվում է ժամանակի ընթացքում՝ տվյալ համակարգին բնորոշ հասարակական հարաբերությունների զարգացմանը զուգընթաց, ի՞նչ նշանակություն կարող է ունենալ ինքնությունը սահմանադրական կայունությունը երաշխավորելու և սահմանադրական զարգացումների բնականոն ընթացքն ապահովելու տեսանկյունից:

Հանրագիտարանային ձևակերպմամբ «ինքնություն» հասկացությունը բնորոշվում է որպես «ինքը լինել», «եզակի լինել», «տեսակ ունենալ», «իրեն հատուկ գծերի ամբողջություն», «գոյություն», «էություն», «ինքնատիպություն», «անհատականություն» և այլն¹⁶⁷:

Հետևաբար, կարծում ենք, որ ինքնությունը բոլոր դրսևորումների պարագայում էլ առաջին հերթին ենթադրելու է կոնկրետ երևույթի «ինքը լինելը», «եզակի լինելը», «ինքնատիպությունը», «անհատականությունը»: Համանմանորեն, սահմանադրական ինքնությունն ընդհանուր բնորոշմամբ կոնկրետ սահմանադրական համակարգի ինքնատիպությունն է, անհատականությունը, եզակիությունը, այն ամենը, ինչ տարբերակում է տվյալ համակարգը մյուսներից:

Գրականության մեջ ընդգծվում է, որ ինքնությունը ոչ թե անհատին ի սկզբանե պատկանող հատկանիշ է, այլ հարաբերություն, որը ձևավորվում, ձևակերպվում և վերափոխվում է միայն սոցիալական փոխազդեցությունների ընթացքում: Ընդ որում՝ բառի բուն իմաստով ինքնությունը կարող է բնորոշ լինել միայն անհատներին, քանի որ միայն անհատներին է բնորոշ

սուբյեկտայնությունը, և համապատասխանաբար, միայն անհատները կարող են իրենց վերագրել կամ չվերագրել որոշակի հատկանիշներ և բնորոշումներ: Ուստի՝ խմբերին ինքնություն վերագրել կարելի է միայն փոխաբերական, մետաֆորիկ առումով¹⁶⁸:

Ինքնությունը կարելի է տարանջատել երկու մակարդակների՝ անհատական (ներքին) և սոցիալական (արտաքին): Ի տարբերություն անհատական ինքնության, որն իրենից ներկայացնում է անհատին եզակիության որակ հաղորդող բնութագրիչ առանձնահատկությունների ամբողջություն, սոցիալական ինքնությունը անհատի՝ իր սոցիալական միջավայրի ակնկալիքներին և նորմերին իրեն նույնականացնելու արդյունքն է: Միևնույն ժամանակ, գրականության մեջ ընդգծվում է, որ հիշյալ երկու մակարդակները միմյանցից բացարձակ առումով տարանջատել հնարավոր չէ, քանզի անհատի պատկերացումներն ինքն իր մասին, որոնք նրա կողմից ընկալվում են որպես իր սեփականը և իր ինքնությունից անբաժանելի, ի վերջո հանդիսանում են սոցիալական նորմերի ինտերիորիզացիայի արդյունք: Միևնույն ժամանակ, անհատի սեփական նորմերը կարող են չհամընկնել սոցիալական փոխհարաբերությունների ընթացքում իր կողմից ընդունվող կամ շրջապատի կողմից մատուցվող նորմերի և դերերի հետ: Հետևաբար, անհատական «ես»-ը ձևավորվում է անհատական և սոցիալական ինքնության միջև որոշակի հավասարակշռություն գտնելու արդյունքում: Սոցիալական ինքնությունն իր հերթին դա-

¹⁶⁷ Տե՛ս Հարությունյան Գ. Մարդու սահմանադրական ինքնության իմացաբանական ու արժեքանական բնութագրիչները, <http://concourt.am/armenian/structure/president/articles/article-january2018.pdf>, /Վերջին մուտք՝ 18.04.2018/:

¹⁶⁸ Տե՛ս Новая философская энциклопедия: В 4 тт. М.: Мысль. Под ред. Стёпина В. С. 2001, https://dic.academic.ru/dic.nsf/enc_philosophy/419, /Վերջին մուտք՝ 18.04.2018/:

սակարգվում է մի քանի տարատեսակների՝ մասնագիտական, էթնիկ, տարածաշրջանային, քաղաքական, ազգային և այլն¹⁶⁹:

Վերը շարադրվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ սահմանադրական ինքնությունն ինքնին անհատին բնորոշ հատկանիշ է և որպես խմբային առանձնահատկություն կարող է օգտագործվել սուկ պայմանական առումով: Հետևաբար, նկատի ունենալով այն, որ հիշյալ համատեքստում սահմանադրական ինքնությունը վերլուծում ենք որպես կոնկրետ սոցիալական հանրությանը բնորոշ կատեգորիա, ակնհայտ է, որ քննարկվող հասկացությունն օգտագործում ենք պայմանական առումով:

Վերոշարադրյալ վերլուծությունը նկատի ունենալով՝ կարծում ենք, որ սահմանադրական ինքնությունը բնորոշում է կոնկրետ սահմանադրական համակարգի ինքնատիպությունը, անհատականությունը և եզակիությունը: Ընդ որում՝ վերջինիս անհատական մակարդակը իրենից ներկայացնում է կոնկրետ սահմանադրական համակարգին եզակիության որակ հաղորդող բնութագրիչ առանձնահատկությունների ամբողջությունը, իսկ սոցիալականը՝ տվյալ սահմանադրական համակարգի կողմից այն առավել մեծ համակարգերի առանձնահատկություններին իրեն նույնականացնելու արդյունքը, որոնց մաս է կազմում վերջինս: Ընդ որում՝ կարևոր է նկատի ունենալ, որ, ինչպես վերը նշվեց, որևէ համակարգի մասը կազմող կոնկրետ սահմանադրական համակարգի հատկանիշները կարող են որոշակի դեպքերում չհամընկնել առաջինների հետ փոխհարաբերությունների ընթացքում իր կողմից փոխառվող առանձնահատկությունների հետ: Սակայն ինք-

նությունը համապատասխանաբար ձևավորվում է հիշյալ երկու մակարդակների միջև որոշակի հավասարակշռություն գտնելու արդյունքում:

Հետևաբար, սահմանադրական ինքնությունը կոնկրետ սահմանադրական համակարգի ինքնատիպությունը, անհատականությունը և եզակիությունն է, ինչը ներառում է ոչ միայն ի սկզբանե գոյություն ունեցող և տվյալ համակարգին եզակիության որակ հաղորդող բնութագրիչ առանձնահատկությունները, այլ նաև վերոնշյալ առավել մեծ համակարգերի այն առանձնահատկությունները, որոնք փոխառում է տվյալ սահմանադրական համակարգն ու որոնց հետ սկսում է իրեն նույնականացնել:

Վերը շարադրվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ սահմանադրական ինքնությունն անհրաժեշտ է ընկալել ոչ որպես տվյալ սոցիալական համակարգին ի սկզբանե պատկանող հատկանիշ, այլ հատկանիշ, որը ձևավորվում և վերափոխվում է սոցիալական փոխազդեցությունների արդյունքում: Ընդ որում՝ անհրաժեշտ է նկատի ունենալ, որ բոլոր նոր ձևավորվող առանձնահատկությունները, այդ թվում՝ այլ համակարգերի կողմից փոխառվող, ևս դառնում են տվյալ համակարգի ինքնատիպությունն ու անհատականությունը բնորոշող հատկանիշներ:

Հետևաբար, տվյալ պարագայում ընդհանուր եզրահանգումն այն է, որ միմյանց հետ անընդհատ փոխազդեցության մեջ են գտնվում ինչպես հավասարաբաժնի համակարգերը, այնպես էլ նշված համակարգերն իրենց ընդգրկող առավել մեծ համակարգերի հետ: Եվ քանի որ կոնկրետ համակարգի ինքնությունն էլ ձևավորվում է անհատական և սոցիալական ինք-

¹⁶⁹ Տե՛ս նույն տեղում՝ էլեկտրոնային ռեսուրս, /Վերջին մուտք՝ 18.04.2018/:

նության միջև որոշակի հավասարակշռություն գտնելու արդյունքում, կարծում ենք, որ այդ գործընթացում անհրաժեշտ է նկատի ունենալ հետևյալ կարևոր հանգամանքները՝ 1. փոխառել սոսկ այն առանձնահատկությունները, որոնք կարող են ընդունելի լինել կոնկրետ համակարգի տեսանկյունից, 2. հրաժարվել փոխառված այն առանձնահատկություններից, որոնց հետ կոնկրետ համակարգը չի կարողանում իրեն նույնականացնել: Ընդ որում՝ կարևոր է հաշվի առնել այն, որ թեև տարատեսակ համակարգերը փոխազդեցության մեջ են գտնվում նաև հավասարաբժեք համակարգերի հետ, սակայն ինքնության ձևավորման համար դրանք ազդեցություն են ունենում սոսկ այնքանով, որքանով այդ համակարգերից փոխառված առանձնահատկությունները դառնում են կոնկրետ համակարգի եզակիությունը բնութագրող հատկանիշներ: Միննույն ժամանակ, կոնկրետ համակարգերն իրենց կարող են նույնականացնել ոչ թե հավասարաբժեք համակարգերի, այլ իրենց ընդգրկող առավել մեծ համակարգերի հետ:

Կարծում ենք, որ սահմանադրական ինքնության տեսանկյունից վերը շարադրվածն առաջին հերթին վերաբերում է տարատեսակ սահմանադրական համակարգերի և դրանք ընդգրկող միջազգային ու տարածաշրջանային համակարգերի փոխազդեցությանը: Այդ տեսանկյունից անհրաժեշտ է նկատի ունենալ, որ կոնկրետ սահմանադրական համակարգի սահմանադրական ինքնությունը ձևավորվում է այդ համակարգին եզակիության որակ հաղորդող բնութագրիչ առանձնահատկությունների և այլ համակարգերից փոխառված առանձնահատկությունների միջև հավասարակշռություն գտնելու արդյունքում: Հետևաբար, որևէ միջազգային կամ տարածաշրջա-

նային կառույցի կամ որևէ այլ պետության սահմանադրաիրավական առանձնահատկությունները փոխառելու ընթացքում անհրաժեշտ է նկատի ունենալ վերոնշյալ հանգամանքը և այն, որ տարատեսակ առանձնահատկությունների մեխանիկական ներմուծումը կամ մեխանիկորեն ներմուծված որևէ հատկանիշի չընդունումն ու արհեստական պահպանումը որևէ կերպ չեն նպաստելու կոնկրետ սահմանադրական համակարգի և նշված համակարգերից փոխառված առանձնահատկությունների միջև հավասարակշռություն գտնելուն և հանգեցնելու են սահմանադրական ինքնության գաղափարի ամբողջական ձևախեղմանը:

Նշված հիմնախնդիրը քննարկելով Հայաստանի Հանրապետության օրինակով՝ նշենք, որ, օրինակ, Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու, Հայաստանի Հանրապետության խորհրդանիշերի, մայրաքաղաքի առնչությամբ սահմանադրական կարգավորումները հանդես են գալիս որպես ՀՀ սահմանադրական համակարգին ի սկզբանե եզակիության որակ հաղորդող բնութագրիչ առանձնահատկություններ: Մինչդեռ, օրինակ, հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար որպես ելակետ ընդունվող սկզբունքները՝ համաչափության, որոշակիության, հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ դրույթների էության անխախտելիության, փոխառվել են այլ համակարգերից, միջազգային-իրավական պրակտիկայից: Միննույն ժամանակ, հարկ է նկատի ունենալ, որ դրանց փոխառման փաստն արդեն իսկ պետք է վկայի կոնկրետ սահմանադրական համակարգի կողմից իր անհատական և սոցիալական ինքնության միջև հավասարակշռություն գտնելու, հետևաբար նաև՝ իրեն նշված

փոխառված առանձնահատկությունների հետ նույնականացնելու փաստի մասին: Այդ առումով պետք է փաստել, որ այլ իրավական համակարգերից փոխառված և ներկայումս ՀՀ սահմանադրական համակարգի մասը կազմող արժեքներից շատերը, օրինակ՝ մարդու արժանապատվությանը, իշխանությունների բաժանմանն ու հավասարակշռմանը, կյանքի իրավունքին, տեղական ինքնակառավարման երաշխավորմանը և այլն, վերաբերող սահմանադրական կարգավորումները, արդեն իսկ ընկալվում են որպես ՀՀ սահմանադրական համակարգի անբաժանելի մասն ու վերջինիս եզակիություն հաղորդող հատկանիշներ: Վերոհիշյալ հանգամանքն ինքնին ենթադրում է, որ նշված փոխառված առանձնահատկությունները այդ փաստի ուժով ևս դառնում են կոնկրետ համակարգի, տվյալ պարագայում՝ ՀՀ սահմանադրական համակարգի անհատականությունն ու եզակիությունը բնութագրող հատկանիշներ և բնականոն իրավիճակում չեն կարող այլ կերպ ընկալվել վերջինիս կողմից: Հակառակ պարագայում, երբ ակնհայտ է դառնում կոնկրետ համակարգի կողմից փոխառված առանձնահատկություններին իրեն նույնականացնելու անհնարինությունը, վերջինս պետք է հրաժարվի դրանք արհեստականորեն պահպանելու գաղափարից:

Կարծում ենք, որ հենց վերը շարադրված հանգամանքներն ու եզրահանգումներն են հանդիսանում սահմանադրական կայունությունն ու կայուն ժողովրդավարությունը երաշխավորելու, սահմանադրական զարգացումների բնականոն ընթացքն ապահովելու հիմնական գրավականը:

Հիշյալ համատեքստում հարկ ենք համարում անդրադառնալ նաև գրականության մեջ լայնորեն քննարկվող՝ միջազգա-

յին և վերազգային տարատեսակ համակարգերի կողմից անդամ-պետությունների պետական-ազգային ինքնությունը հարգելու հիմնախնդիրներին, ինչը բացառիկ կարևորություն ունի ոչ միայն միջազգային բնականոն իրավահարաբերությունների, այլ նաև ժամանակակից սահմանադրագիտության տեսանկյունից:

Ներկայացված հիմնախնդրի առնչությամբ առաջացող հիմնական հարցադրումները հետևյալն են՝ արդյո՞ք կոնկրետ սահմանադրական համակարգի սահմանադրական ինքնությունը բացարձակ երևույթ է, գործնականում իրատեսական է արդյո՞ք խոսել հիշյալ կազմակերպությունների կողմից վերջինիս նկատմամբ հարգանքի մասին, ի՞նչ կառուցակարգեր են անհրաժեշտ հիշյալ հիմնախնդրի պատշաճ կանոնակարգման և կոնկրետ սահմանադրական համակարգերի սահմանադրական ինքնության պաշտպանության տեսանկյունից:

Վերոշարադրյալ հարցադրումների վերլուծության նպատակով առաջին հերթին հարկ ենք համարում անդրադառնալ միջազգային պրակտիկայում առկա մի քանի կոնկրետ օրինակներին:

ՌԴ Սահմանադրական դատարանն, օրինակ՝ իր՝ 2016թ. ապրիլի 19-ի 12-Ո/2016 որոշման մեջ ընդգծել է, որ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի նորմերի արդյունավետությունը պայմանավորված է Եվրոպական դատարանի կողմից *ազգային սահմանադրական ինքնության հարգանքով* (ընդգծումը մերն է – Ա.Մ.)¹⁷⁰:

¹⁷⁰ Տե՛ս ՌԴ Սահմանադրական դատարանի՝ 2016թ. ապրիլի 19-ի 12-Ո/2016 որոշում, <http://doc.kstrf.ru/decision/KSRFDDecision230222.pdf>, /վերջին մուտք՝ 18.04.2018/:

Եվրոպական իրավունքի շրջանակներում էլ «ազգային ինքնություն» և «սահմանադրական ինքնություն» հասկացությունների փոխառնչությունների քննարկումն իրականացվում է՝ Միության կողմից անդամ-պետությունների ազգային ինքնությունը հարգելու պարտականությանն առնչվող հիմնախնդիրները ներկայացնելու նպատակով: Մասսոբիխտի պայմանագրի 6 (3) հոդվածը նախատեսում էր, որ ... Միությունը պետք է հարգի իր **անդամ-պետությունների ազգային ինքնությունները** (ընդգծումը մերն է – Ա.Մ.): Լիսաբոնի պայմանագրում անդամ-պետությունների ազգային ինքնությունը հարգելու վերաբերյալ դրույթը վերաձևակերպվեց հետևյալ բովանդակությամբ. Միությունը պետք է հարգի պայմանագրերի առաջ անդամ-պետությունների հավասարությունը, ինչպես նաև նրանց ազգային ինքնությունները՝ ներմուծված նրանց հիմնարար կառուցվածքները, քաղաքական և սահմանադրական, ինչպես նաև տարածքային և տեղական ինքնակառավարման¹⁷¹: Միևնույն ժամանակ, կարևոր է հիշատակել, որ թեև ԵՄ անդամ-պետությունների բոլոր սահմանադրական դատարաններն ընդունում են ԵՄ իրավունքի գերակայությունն ու առաջնայնությունը ազգային օրենսդրության նկատմամբ, սակայն նրանց մեծամասնությունը չի ճանաչում դրա գերակայությունը վերջիններիս սահմանադրությունների նկատմամբ¹⁷²:

¹⁷¹ St. u National Identity, Nationalism and Constitutional Change / Edited by *Bechhofer F. and McCrone D.* Palgrave Macmillan, 2009, http://www.law.ed.ac.uk/_data/assets/pdf_file/0011/35939/chap1_intro.pdf, /վերջին մուտք՝ 18.04.2018/, Besselink L. National and Constitutional Identity before and after Lisbon // *Utrecht Law Review*, Volume 6, Issue 3, 2010:

¹⁷² St. u Besselink L. National and Constitutional Identity before and after Lisbon // *Utrecht Law Review*, Volume 6, Issue 3, 2010, էջ 44-49:

Բնականաբար, հարցի առնչությամբ մոտեցումները բազմազան են տարատեսակ սահմանադրական համակարգերում: Նպատակ չունենալով բացահայտել դրանցից յուրաքանչյուրի մանրամասները՝ սույն հետազոտության նպատակով հարկ ենք համարում ընդգծել, որ, մեր կարծիքով, այդ մոտեցումների վերլուծության հիմքում պետք է ընկած լինի այն հանգամանքը, թե կոնկրետ պետությունն ինչ ծավալով և ինչպես է սահմանափակում իր ինքնիշխանությունը որևէ միջազգային կամ վերազգային կազմակերպության օգտին:

Անդրադառնալով քննարկվող հարցադրման առնչությամբ Հայաստանի Հանրապետության օրինակին՝ նշենք, որ ՀՀ Սահմանադրության համաձայն՝ Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ: Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերի և օրենքների նորմերի միջև հակասության դեպքում կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը¹⁷³: Սահմանադրությանը հակասող միջազգային պայմանագրերը չեն կարող վավերացվել¹⁷⁴:

Վերը շարադրվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ Սահմանադրությունն առանձնահատուկ կարգավիճակ ունի ինչպես իրավական նորմերի աստիճանակարգության, այնպես էլ ընդհանուր առմամբ Հայաստանի Հանրապետության սահմանադրական համակարգում ունեցած իր առանցքային դերակատարության տեսանկյունից:

Այդ հանգամանքը նկատի ունենալով՝ Սահմանադրությունը նախատեսել է, որ Սահմանադրական դատարանը Սահ-

¹⁷³ ՀՀ Սահմանադրության 5 հոդված:

¹⁷⁴ ՀՀ Սահմանադրության 116 հոդված:

մանադրական դատարանի մասին օրենքով սահմանված կարգով՝ մինչև միջազգային պայմանագրի վավերացումը որոշում է դրանում ամրագրված պարտավորությունների համապատասխանությունը Սահմանադրությանը¹⁷⁵:

Վերը շարադրվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ վավերացման ենթակա միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերի քննությունը *նախնական պարտադիր* սահմանադրական վերահսկողության օրինակ է, և նպատակաուղղված է կանխելու Սահմանադրությանը հակասող պարտավորություններ ամրագրող միջազգային պայմանագրերի վավերացումը Հայաստանի Հանրապետության կողմից: Այդ հանգամանքն իր հերթին բացառում է մեր սահմանադրական ինքնության էությունը խաթարող միջազգային պայմանագրերի վավերացումն ու համապատասխան պարտավորությունների ստանձնումը:

Հիշյալ համատեքստում հարկ ենք համարում ընդգծել, որ ի տարբերության աշխարհում գործող սահմանադրական դատարանների մեծամասնության, որոնք չունեն հիշյալ գործերի քննության հարուստ պրակտիկա, ՀՀ սահմանադրական դատարանի կողմից քննվող գործերի համատեքստում չափազանց մեծ թիվ են կազմում հենց վերոնշյալ գործերը: Պատճառն, ինչպես արդեն նշեցինք, քննարկվող վարույթի նախնական ու պարտադիր լինելն է:

Ավելին, թեև վերը նշված գործերի քննության մեծ մասի արդյունքում Սահմանադրական դատարանը որոշում է ընդունել դրանցում ամրագրված պարտավորությունների՝ ՀՀ Սահ-

¹⁷⁵ ՀՀ Սահմանադրության 168 հոդված:

մանադրությանը համապատասխանելու մասին, սակայն հիշյալ մարմնի պրակտիկային հայտնի են դեպքեր, երբ նշված գործերի քննության արդյունքում ընդունվել է բացասական որոշում կամ Սահմանադրական դատարանը, Սահմանադրությանը համապատասխանող ճանաչելով միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունները, արտահայտել է Հայաստանի Հանրապետության կողմից վերջիններիս ընկալման, հետևաբար նաև՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխան դրանց մեկնաբանության առնչությամբ հիմնարար իրավական դիրքորոշումներ, որոնք առանցքային են դարձել դրանց վավերացման հետագա ամբողջ գործընթացի ու վերջինիս ընթացքի կանխորոշման տեսանկյունից: Որպես նմանատիպ որոշումների օրինակներ կարելի է հիշատակել համապատասխանաբար ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 13 օգոստոսի 2004թ. ՄԴՈ-502 որոշումը 1998թ. հուլիսի 17-ին Հռոմում ստորագրված՝ Միջազգային քրեական դատարանի կանոնադրության մասին համաձայնագրում (կից հայտարարությամբ) ամրագրված պարտավորությունների՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով և ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 12 հունվարի 2010թ. ՄԴՈ-850 որոշումը 2009 թվականի հոկտեմբերի 10-ին Տյուրիի քաղաքում ստորագրված՝ «Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատելու մասին» և «Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև հարաբերությունների զարգացման մասին» արձանագրություններում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համա-

պատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով¹⁷⁶:

Նշված օրինակները վկայում են, որ այն բոլոր դեպքերում, երբ վտանգվել է մեր սահմանադրական ինքնության էությունը, պետությունն ինքն է մերժել համապատասխան պարտավորությունների ստանձնումը, հետևաբար նաև՝ այլ համակարգերից համապատասխան առանձնահատկությունների փոխառումն ու դրանք որպես իր եզակիությունը բնութագրող հատկանիշներ ընկալելը:

Ավելին, հիշյալ համատեքստում ուշադրության է արժանի նաև 2015թ. դեկտեմբերի 6-ի սահմանադրական փոփոխությունների արդյունքում ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված այն կարգավորումը, համաձայն որի՝ վերապետական միջազգային կազմակերպություններին Հայաստանի Հանրապետության անդամակցության, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածքի փոփոխությանը վերաբերող հարցերը լուծվում են հանրաքվեների միջոցով: Նշված դեպքում հանրաքվե անցկացնելու վերաբերյալ որոշումը Կառավարության առաջարկությամբ ընդունում է Ազգային ժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ¹⁷⁷:

Հիշյալ համատեքստում հարկ ենք համարում ընգծել նաև, որ միջազգային իրավունքն ինքնին հիմնված է «պետությունների համաձայնության» գաղափարի վրա, և առանց համաձայնության միջազգային իրավունքը չի կարող պետությանը պարտավորեցնել: Թեև նման եզրահանգումը որոշակի առումով կարող է ծայրահեղ թվալ, սակայն վերջինս մատնանշում է այն հիմնարար դերակատարությունը, որը համաձայնության

ինստիտուտն ունի միջազգային իրավական համակարգում: Այլ կերպ՝ ժամանակակից միջազգային իրավունքի հիմքում «պետությունների համաձայնության» սկզբունքն է¹⁷⁸: Թեև վերազգային կազմակերպությունների պարագայում հիշյալ սկզբունքի մասին կարելի է խոսել սոսկ որոշ վերապահումներով, սակայն, կարծում ենք, որ վերջինս ամբողջությամբ տարածելի է նաև հիշյալ հարաբերությունների նկատմամբ, երբ խոսքը ինքնիշխանության սահմանափակման ծավալի, ձևաչափի և եղանակների մասին է:

Վերը շարադրվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ բոլոր դեպքերում պետությունն ինքն է որոշում ինքնիշխանության սահմանափակման այն ծավալը, որն իր սահմանադրական ինքնության տեսանկյունից իր համար կարող է ընդունելի լինել միջազգային կամ վերազգային կազմակերպությունների հետ փոխհարաբերություններում: Ընդ որում՝ նշվածը վերաբերում է ինչպես համապատասխան պարտավորությունների ստանձնման գործընթացին ու դրա համար կոնկրետ սահմանադրական համակարգում առկա հնարավոր լուծումներին, այնպես էլ փոխառված առանձնահատկություններից հրաժարվելու համար առկա հնարավոր լուծումներին բոլոր այն դեպքերում, երբ կոնկրետ սահմանադրական համակարգը չի կարողանում դրանց հետ իրեն նույնականացնել:

Վերոշարադրյալի արդյունքում ակնհայտ է դառնում, որ տարատեսակ միջազգային կամ վերազգային կազմակերպությունների կողմից կոնկրետ սահմանադրական համակարգի

¹⁷⁸ St' u Guzman A. The Consent Problem in International Law, UC Berkeley // Berkeley Program in Law and Economics, Working Paper Series, էջ 4-5, <https://escholarship.org/content/qt04x8x174/qt04x8x174.pdf>, /Վերջին մուտք՝ 18.04.2018/:

¹⁷⁶ St' u www.concourt.am, /Վերջին մուտք՝ 18.07.2018/:

¹⁷⁷ ՀՀ Սահմանադրության 205 հոդված:

ինքնությունը հարգելու պահանջի մասին խոսելն ինքնին իրատեսական է, սակայն հիշյալ համատեքստում անհրաժեշտ է նկատի ունենալ մի կարևոր հանգամանք՝ այն, որ, այսպես կոչված, ազգային սահմանադրական ինքնության նկատմամբ հարգանքի սահմանները արդեն իսկ կանխորոշված են, ընդ որում՝ կանխորոշված են այն ծավալով, որով կոնկրետ սահմանադրական համակարգը համաձայնել է սահմանափակել իր ինքնիշխանությունը:

§ 2. «Ազգի ինքնություն» և «պետական ինքնություն» հասկացությունների բովանդակությունն ու դրանց հարաբերակցությունը «սահմանադրական ինքնություն» հասկացության հետ

Հաջորդ հարցադրումը, որին հիշյալ համատեքստում հարկ ենք համարում անդրադառնալ, այն է, թե արդյո՞ք նույնանում են «ազգի ինքնություն» և «սահմանադրական ինքնություն» հասկացությունները: Ակնհայտ է, որ ազգն ու Սահմանադրությունը, ազգն ու սահմանադրական համակարգը միմյանց հետ նույնանալ չեն կարող: Հետևաբար, հիշյալ համատեքստում վերլուծության ենթակա հիմնական հանգամանքն այն է, թե կարող է արդյո՞ք «սահմանադրական ինքնություն» հասկացությունը չունենալ ինքնուրույն բովանդակություն և ամբողջությամբ համընկնել «ազգի ինքնություն» հասկացության բովանդակությանը:

Առաջին հերթին հարկ ենք համարում անդրադառնալ գրականության մեջ արտահայտված այն դիրքորոշմանը, որ

մենք սովոր ենք «պետություն» և «ազգ» հասկացություններն օգտագործել որպես հոմանիշներ՝ մոռանալով, որ դրանք պատկանում են տարբեր հարթությունների՝ համապատասխանաբար քաղաքական և մշակութային¹⁷⁹: Հետևաբար, տվյալ պարագայում հարց է առաջանում այն մասին, թե հիշյալ համատեքստում խոսքը պետական, թե ազգային ինքնության մասին է:

Ընդգծենք, որ բնականաբար, «պետություն» և «ազգ» հասկացությունները հոմանիշներ չեն և բովանդակային առումով միմյանց հետ նույնանալ չեն կարող: Մի պետության շրջանակներում կարող են միավորվել տարբեր ազգեր և համանմանորեն կարող են գոյություն ունենալ, այսպես կոչված, «ազգեր առանց պետության»: Հետևաբար, ակնհայտ է, որ բացարձակ առումով միմյանց հետ նույնանալ չեն կարող նաև «պետական ինքնություն» և «ազգային ինքնություն» հասկացությունները:

Հարկ է նկատել, որ «պետական ինքնություն» հասկացությունն օգտագործվում է առավելապես ռուսալեզու գրականության շրջանակներում¹⁸⁰: Ավելին, վերջին տարիների ռուսալեզու հրապարակումներում երբեմն կարելի է հանդիպել նույնիսկ

¹⁷⁹ St' u National Identity, Nationalism and Constitutional Change / Edited by Bechhofer F. and McCrone D. Palgrave Macmillan, 2009, http://www.law.ed.ac.uk/_data/assets/pdf_file/0011/35939/chap1_intro.pdf, /Վերջին մուտք՝ 18.04.2018/, Besselink L. National and Constitutional Identity before and after Lisbon // Utrecht Law Review, Volume 6, Issue 3, 2010, էջ 42:

¹⁸⁰ St' u, օրինակ, Санина А., Павлов А. Государственная идентичность: содержание понятия и постановка проблемы // Управленческое консультирование. № 9, 2015, Рубцова М., Санина А. Государственная идентичность как фактор управляемости современным обществом // Журнал социологии и социальной антропологии. 2012. № 3 (62):

«պետական-ազգային ինքնություն» գաղափարին¹⁸¹: Ինչ վերաբերում է անգլալեզու գրականությանը, ապա վերջինիս շրջանակներում գրեթե չի հանդիպում «պետական ինքնություն» հասկացությունը, և քննարկվող հիմնախնդրին առնչվող հարցերը վերլուծության են ենթարկվում «ազգային ինքնություն» գաղափարի շրջանակներում: Ընդ որում՝ դրանց բովանդակության ուսումնասիրությունից ակնհայտ է դառնում, որ քննարկվող համատեքստում խոսքը ոչ թե դասական առումով ազգային ինքնության մասին է, այլ ազգ-պետություն երևույթների, այսպես կոչված, «համընկնման» պարագայում ազգային ինքնության: Միևնույն ժամանակ, կարծում ենք, որ նշված եզրույթների հիշյալ ոչ միանշանակ օգտագործման պատճառնան լեզվական է, քանզի անգլերենում «state» (պետություն) բառը ներկայացվում է որպես «nation» բառի հոմանիշ¹⁸²: Միևնույն ժամանակ, հաշվի առնելով գրականության մեջ առկա դիրքորոշումներն ու վերլուծությունները *սահմանադրական ինքնության հետ ազգային ինքնության փոխառնչությունների հետ կապված*, կարծում ենք, որ այդ համատեքստում «պետական ինքնություն» և «ազգային ինքնություն» հասկացություններն օգտագործվում են որպես հոմանիշներ: Ավելին, այդ մասին հաճախ ուղղակիորեն ընդգծվում է գիտական տա-

¹⁸¹ Տե՛ս, օրինակ, Бушуев В., Титов В. Национально-государственная идентичность в современном мире и роль исторической политики в ее формировании (теоретико-методологический анализ), <https://cyberleninka.ru/article/v/natsionalno-gosudarstvennaya-identichnost-v-sovremennom-mire-i-rol-istoricheskoy-politiki-v-ee-formirovanii-teoretiko>, /Վերջին մուտք՝ 18.04.2018/:

¹⁸² Տե՛ս <https://en.oxforddictionaries.com/thesaurus/state>, /Վերջին մուտք՝ 18.04.2018/:

րատեսակ աշխատությունների շրջանակներում¹⁸³:

Վերը նշված համատեքստում «ազգային ինքնություն» գաղափարը գրականության մեջ բնութագրվում է որպես պետության բնակչության մեծամասնության գիտակցությունում ներքոհիշյալ երեք հիմնական գաղափարների ամբողջության առկայությունը՝ 1. հասարակական գիտակցության կողմից դրական ընկալվող ընդհանուր անցյալ և/կամ պետականության ընդհանուր փորձ, 2. տվյալ սոցիալական հանրության համար ընդհանուր արժեքների ամբողջություն, 3. որպես այդ հանգամանքների հետևանք հանդիսացող՝ պետության ապագայի համար ընդհանուր պատասխանատվություն: Իսկ ինքնությունը բնութագրվում է որպես անհատների կամ մարդկանց խմբի կողմից առավել մեծ և էական խմբի հետ իրենց նույնականացում: Ընդ որում՝ ինքնությունն ազդում է անձի ինքնագիտակցության վրա՝ նրան օժտելով այն ընկալմամբ, որ այն խումբը, որի հետ վերջինս իրեն նույնականացնում է, օժտված է այլ խմբերից իրեն տարբերակող առանձնահատուկ հատկանիշներով¹⁸⁴:

Հետևաբար, ակնհայտ է, որ «պետական ինքնություն» և «ազգային ինքնություն» հասկացությունները կարող են համընկնել սոսկ որոշ իրավիճակներում՝ ազգ-պետություն երևույթների, այսպես կոչված, «համընկնման» պարագայում, սակայն բոլոր դեպքերի համար դրանք բացարձակ առումով նույնական համարել չի կարելի:

Վերը շարադրվածը նկատի ունենալով՝ չենք ցանկանում

¹⁸³ Տե՛ս Կузнецов К.А., Щелин П.А. Национальная идентичность и устойчивая государственность // Сравнительная политика, 1 (14) / 2014, էջ 32:

¹⁸⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 31-32:

խորանալ սույն աշխատանքի առարկան չկազմող հիմնախնդրի քննարկման հարցերում՝ վերջինիս անդրադառնալով սոսկ սահմանադրական ինքնության հետ նշված հասկացությունների հարաբերակցության տեսանկյունից: Այդ առումով ակնհայտ է, որ եթե խոսքը դասական առումով ազգային ինքնության մասին է, ապա վերջինս չափազանց լայն հասկացություն է և «սահմանադրական ինքնություն» գաղափարի հետ նույնանալ չի կարող: Այդ հանգամանքը նկատի ունենալով՝ հիշյալ համատեքստում օգտագործում ենք «պետական ինքնություն» եզրույթը՝ որպես պայմանական հասկացություն, լայն կատեգորիա՝ բնութագրելու համար կոնկրետ պետության շրջանակներում իրավաչափ հիմքերով բնակվող անձանց կողմից միմյանց հետ իրենց նույնականացնելու գաղափարն ու դրան առնչվող հարցերը:

Ինչ վերաբերում է վերը նշված առումով «պետական ինքնություն» և «սահմանադրական ինքնություն» գաղափարների փոխառնչություններին, ապա նշենք, որ, մեր կարծիքով, սահմանադրագիտության զարգացման արդի փուլում նախընտրելի է պարզապես հիշյալ հասկացությունները քննարկել տարբեր հարթությունների տեսանկյունից: Ինչպես արդեն իսկ նշել ենք աշխատանքի շրջանակներում, Սահմանադրություն, սահմանադրական կայունություն հասկացություններն ինքնին անհրաժեշտ է ընկալել ոչ թե պարզապես Սահմանադրության գրված տեքստի, այլ շատ ավելի լայն դիտանկյունից՝ սահմանադրական արժեքների և իրական կյանքում դրանց կենսագործման: Հետևաբար, եթե նույնիսկ նախկինում՝ սահմանադրական համակարգը սոսկ Սահմանադրության տեքստի համատեքստում դիտարկվելու պարագայում, պետություն և սահ-

մանադրական համակարգ հասկացությունները կարելի էր դիտարկել որպես համապատասխանաբար ամբողջի և մասի հարաբերակցություն, արդյունքում նույն եզրահանգումն իրականացնել պետական ինքնություն և սահմանադրական ինքնություն գաղափարների առումով, ապա սահմանադրագիտության զարգացման ժամանակակից փուլում նման միանշանակ եզրակացությունը կարող է խնդրահարույց լինել: Մասնավորապես, ակնհայտ է, որ պետության հիմնական բնութագրիչներին՝ մշտական բնակչություն, սահմանված տարածք, պետական իշխանության առկայություն, այլ պետությունների հետ փոխհարաբերություններ ձևավորելու հնարավորություն¹⁸⁵, ինքնիշխանություն, պետության ակտերի համընդհանուր բնույթ¹⁸⁶ և այլն, առնչվող հիմնադրույթները իրենց արտահայտությունն են ստանում սահմանադրական տեքստի շրջանակներում: Հետևաբար, եթե հիմնախնդրին գուտ սահմանադրական տեքստի տեսանկյունից անդրադառնալու պարագայում ամբողջի և մասի առնչությամբ վերը շարադրված եզրահանգումը կարող է հիմնավորված լինել, ապա նույնը չի կարել ասել Սահմանադրությունն ու սահմանադրական համակարգը սահմանադրական արժեքների և իրական կյանքում դրանց կենսագործման տեսանկյունից դիտարկվելու պարագայում:

Հետևաբար, կարծում ենք, որ պետական ինքնությունն ու սահմանադրական ինքնությունը չեն կարող դիտարկվել հա-

¹⁸⁵ St' u Crawford J. The Criteria for Statehood in International Law, <https://www.ilsa.org/jessup/jessup13/British%20Yearbook%20of%20International%20Law-1977-Crawford-93-182.pdf>, /Վերջին մուտք՝ 18.04.2018/, էջ 111:

¹⁸⁶ St' u Морозова Л. Теория государства и права. 4-ое издание. М. Эксмо. 2010, էջ 46-47:

մապատասխանաբար ամբողջի և մասի հարաբերակցության տեսանկյունից: Ավելին, թեև դրանք կարող են ունենալ հատման կոնկրետ կետեր և բովանդակային համընկնումներ, սակայն կարծում ենք, որ վերջիններս տարբեր հարթություններում գտնվող գաղափարներ են, ուստի դրանց դիտարկումը ևս անհրաժեշտ է իրականացնել տարբեր հարթությունների տեսանկյունից:

* * *

Ամփոփելով ներկայացված վերլուծությունը՝ նշենք, որ սահմանադրական ինքնությունը կոնկրետ սահմանադրական համակարգի ինքնատիպությունը, անհատականությունը և եզակիությունն է, այն ամենը, ինչը նշված սահմանադրական համակարգը տարբերակում է այլ համակարգերից: Ընդ որում՝ սահմանադրական ինքնությունը ներառում է ոչ միայն ի սկզբանե գոյություն ունեցող և տվյալ համակարգին եզակիության որակ հաղորդող բնութագրիչ առանձնահատկությունները, այլ նաև վերոնշյալ առավել մեծ համակարգերի այն առանձնահատկությունները, որոնք փոխառում է տվյալ սահմանադրական համակարգն ու որոնց հետ սկսում է նույնականացնել իրեն: Այլ կերպ՝ կոնկրետ սահմանադրական համակարգի սահմանադրական ինքնությունը ձևավորվում է այդ համակարգին եզակիության որակ հաղորդող բնութագրիչ առանձնահատկությունների և այլ համակարգերից փոխառված առանձնահատկությունների միջև հավասարակշռություն գտնելու արդյունքում:

ԳԼՈՒԽ 5.

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԱՐԴԱՐԱԴՍՏՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳ

§ 1. ՀՀ Սահմանադրության պաշտոնական մեկնաբանությունը՝ որպես Հիմնական օրենքի գարգացման կարևորագույն գրավական

Իրավական մտքի գարգացման արդի փուլում սահմանադրական կայունության երաշխավորումն ու պետության սահմանադրական կարգի ամրապնդումը մեծապես պայմանավորվում են սահմանադրական դատարանի որոշումների ընդունման ու կատարման արդյունավետ համակարգի առկայությամբ: Վերջիններս բացառիկ կարևորություն ունեն հասարակական կյանքի բոլոր բնագավառներում: Ու չնայած այն հանգամանքին, որ քննարկվող որոշումների ուսումնասիրության ընթացքում առավելապես շեշտադրվում է դրանց դերը իրավական ակտերի՝ Սահմանադրությանը համապատասխանությունը կամ անհամապատասխանությունն արձանագրելու գործում, Սահմանադրական դատարանի որոշումների նշանակությունը, ինչպես արդեն նշեցինք, չի սահմանափակվում դրանով: Վերջիններիս կարևորագույն առաքելություններից մեկը Սահմանադրության մեկնաբանությունն է, որի միջոցով երաշխավորվում է սահմանադրական կայունությունն ու Հիմնական օրենքի գարգացումը: Ընդ որում՝ հիշյալ համատեքս-

տում խոսքը պաշտոնական մեկնաբանության մասին է, քանզի վերջինս, ի տարբերություն ոչ պաշտոնականի, ունի համապարտադիր բնույթ և տրվում է դրա համար լիազորված հատուկ մարմնի կողմից:

Հատկանշական է, որ քննարկվող ինստիտուտի ներկայացված տարբերակիչ հատկանիշները հիմք ընդունելով՝ հեղինակների մի մասը հանգում է այն եզրակացության, որ ՀՀ սահմանադրական դատարանը (ինչպես նաև սահմանադրական արդարադատության համանման մարմինները) օժտված չէ Սահմանադրության պաշտոնական մեկնաբանության իրավասությամբ, քանզի ՀՀ Սահմանադրությունն ուղղակիորեն չի ամրագրում Հիմնական օրենքի պաշտոնական մեկնաբանման ինստիտուտ, իսկ ՀՀ սահմանադրական դատարանը չունի վերջինիս վերացական մեկնաբանության լիազորություն:

Մեր կարծիքով, սակայն, այդ հանգամանքը չի ենթադրում, որ համապատասխան պետություններում, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետությունում, բացակայում է հիշյալ ինստիտուտը: Իրավունքի իրացումը, ինչպես ցանկացած նպատակաուղղված գործունեություն, օբյեկտիվորեն պահանջում է վերջինիս բովանդակության ըմբռնում, ինչն իր հերթին ենթադրում է համապատասխան իրավական, այդ թվում՝ նաև սահմանադրական նորմերի մեկնաբանություն: Այդ առումով հիշատակման է արժանի իրավաբանական գրականության մեջ արտահայտված այն տեսակետը, որ տեքստը կարող է ընդգրկել բազմաթիվ իմաստային կառուցվածքներ, և, հետևաբար, բազմաթիվ իրավական նորմեր, որոնցից իրավակիրառ մարմինը պետք է ընտրի այն, որն ինքը կիրառելու է: Մինչ այդ ընտրությունը կիրառվող նորմը գոյություն չունի, գոյություն

ունի միայն տեքստը: Որոշ առումով հենց մեկնաբանությունն է տեքստը հարստացնում կոնկրետ նորմով¹⁸⁷: Ավելին, գրականության մեջ կարծիք է արտահայտվել այն մասին, որ սահմանադրությունները կարելի է համարել «անավարտ պայմանագրեր»: Նրանք նախատեսում են կանոնների, իրավունքների և սկզբունքների ընդհանուր համակարգը, որոնց կոնկրետ բովանդակությունը, սակայն, կախված է քաղաքական գործիչների համաձայնությունից կամ սահմանադրական վերահսկողություն իրականացնող մարմինների մեկնաբանությունից¹⁸⁸: Այսպիսով, Սահմանադրությունը հանդես է գալիս ոչ թե որպես իրավական նորմերի ամբողջություն, այլ որպես կարգավորումների հանրագումար, որոնք պարունակում են նորմերի սուբյեկտիվ իմաստ: Սահմանադիրը չի ընդունում «իրական» նորմեր, նա իր կամքն է արտահայտում անհատական և կոլեգիալ մարմինների կազմավորման կարգի, նրանց համատեղ կամ անհատական ակտերի, նրանց միջև փոխհարաբերությունների հնարավոր տարբերակների առնչությամբ: Ինչպես Խոդյին է այդ առումով նշում, գրված կամ չգրված իրավունքի իրական ստեղծողը նա է, ով օժտված է վերջինիս մեկնաբանության բացարձակ լիազորությամբ, ի տարբերություն նրա, ով սահմանել է համապատասխան նորմերը: Հետևաբար, Սահմանադրությունը մեկնաբանող դատարանը իրականացնում է սահմանադիր իշխանություն¹⁸⁹, ինչի արդյունքում որոշ

¹⁸⁷ St' u Troper M. Проблема толкования и теория верховенства Конституции // Сравнительное конституционное обозрение, N 4(53)2005, էջ 175:

¹⁸⁸ St' u Raadt de J. Contested Constitutions: Constitutional Design, Conflict, and Change in Post-Communist East Central Europe. Enschede: Ipskamp Drukkers, 2009, <http://dare.uvu.vu.nl/bitstream/1871/18202/5/8594.pdf>, էջ 91:

¹⁸⁹ St' u Troper M., նշված աշխատությունը, էջ 175-179:

հեղինակներ հանգում են այն եզրակացության, որ սահմանադրական դատարանի որոշումներն ու դրանցում ընդգրկված պաշտոնական սահմանադրական դոկտրինն է այն նյութը, որը ձևավորում է ամբողջ սահմանադրական իրավունքը, պատկերավոր ասած՝ սահմանադրական իրավունքը գոյություն ունի այնքանով, թե որքան սահմանադրական դրույթներ են մեկնաբանվել սահմանադրական դատարանի կողմից¹⁹⁰:

Հաշվի առնելով վերը շարադրվածը՝ հիշյալ համատեքստում կանդիդատներն այն հիմնախնդրին, թե որ մարմինն է Հայաստանի Հանրապետությունում լիազորված տալու Սահմանադրության պաշտոնական մեկնաբանություն: Առաջին հերթին նշենք, որ ինչպես տեսության մեջ, այնպես էլ երկրների մեծամասնության արդարադատական պրակտիկայում գերակշռում է այն տեսակետը, որ Սահմանադրությունը մեկնաբանելու իրավասությամբ օժտված է սահմանադրական արդարադատությունն իրականացնող մարմինը, և դժվար թե կարելի է հանդիպել հիշյալ մոտեցումը ժխտող տեսակետի: Ընդ որում՝ կարևոր է այն, որ վերը շարադրված եզրահանգումը կախված չէ կոնկրետ պետության օրենսդրությամբ, մասնավորապես, Սահմանադրությամբ, հիշյալ իրավասության ուղղակի ամրագրման առկայությունից: Այդ առումով իրավաբանական գրականության մեջ նշվում է, որ պետությունների մեծամասնությունում սահմանադրություններն ու օրենքները ոչինչ չեն նախատեսում սահմանադրական արդարադատություն իրականացնող մարմնի կողմից Սահմանադրությունը մեկնա-

բանելու առնչությամբ, բայց փաստացիորեն հիշյալ մարմիններից բոլորն էլ իրականացնում են վերջինիս կազուալ մեկնաբանություն կոնկրետ գործերի քննության ընթացքում: Ընդ որում՝ այդպիսի մեկնաբանությունը, հատկապես ընդհանուր իրավունքի երկրներում, կարող է էական ազդեցություն ունենալ երկրի իրավական զարգացման վրա, ինչպես դա տեղի է ունենում ԱՄՆ-ում: Բերվում է նաև Իսպանիայի օրինակը, որի «Սահմանադրական դատարանի մասին» օրենքում (1 հոդված) Սահմանադրական դատարանը բնութագրվում է որպես «Սահմանադրության գերագույն մեկնաբանող», բայց դա ավելի շուտ ոչ թե հատուկ լիազորության ամրագրում է, ինչը Սահմանադրության առաքելությունն է (վերջինս «լռում է» այդ առնչությամբ), այլ Սահմանադրական դատարանի գործունեության էության մատնանշումն է, որն իր բոլոր կոնկրետ դրսևորումներում կապված է Սահմանադրության մեկնաբանության հետ¹⁹¹:

ՀՀ Սահմանադրության 167 հոդվածի համաձայն՝ սահմանադրական արդարադատությունն իրականացնում է Սահմանադրական դատարանը՝ ապահովելով Սահմանադրության գերակայությունը: Ակնհայտ է, որ հիշատակված խնդիրների իրականացումը հնարավոր է սուսկ սահմանադրական նորմերի ընկալման ու կիրառման շրջանակներում միասնականության, այլ կերպ՝ որոշակի միասնական սահմանադրական դոկտրինի առկայության պայմաններում, որպիսի հանգամանքն ապահովվում է սահմանադրական նորմերի մեկնաբանության միջոցով:

¹⁹⁰ St' u Kuris Э. О стабильности конституции, источниках права и мнимом всемогуществе конституционных судов // Сравнительное конституционное обозрение, 2004, N 3(48), էջ 94:

¹⁹¹ St' u Kryazkov B. A., Lazarev L. V. Конституционная юстиция в РФ. М. 1998, էջ 37-38:

Այդ առումով հիշատակման է արժանի այն հանգամանքը, որ ինչպես վերը նշված խնդիրներն ու նպատակները, այնպես էլ Սահմանադրության մեկնաբանությունը, իրենց բնույթով սահմանադրաիրավական հարցեր են, որոնց լուծման բնագավառում մասնագիտացված է **սահմանադրական արդարադատությունն իրականացնող մարմինը**¹⁹²: Հետևաբար, Հիմնական օրենքի մեկնաբանությունը ՀՀ սահմանադրական դատարանի այն կարևորագույն գործառույթն է, առանց որի վերջինիս առաքելության իրականացումը դժվար է պատկերացնել, ինչն իր հերթին հիմք է տալիս եզրակացնելու, որ սահմանադրական արդարադատություն իրականացնելիս սահմանադրական դատարանը մեկնաբանում է ՀՀ Սահմանադրությունը: Ընդ որում, հաշվի առնելով հիշատակված հանգամանքներն ու ՀՀ Սահմանադրության 167 հոդվածով ամրագրված այն կարգավորումը, համաձայն որի՝ Հայաստանի Հանրապետությունում սահմանադրական արդարադատությունն իրականացնում է սահմանադրական դատարանը, հետևաբար, որևէ այլ դատական մարմին իրավասու չէ լուծելու սահմանադրաիրավական հարցեր¹⁹³, կարծում ենք, որ հենց սահմանադրական դատարանն է այն հատուկ մարմինը, որը լիազորված է մեկնաբանելու ՀՀ Սահմանադրությունը:

¹⁹² Իրավաբանական գրականության մեջ նույնպես տարածված է այն տեսակետը, որ սահմանադրական դատարանը արդարադատության այն մարմինն է, որը մասնագիտացված է սահմանադրաիրավական հարցերի լուծման բնագավառում (տե՛ս Арутюнян Г. Конституционный суд в системе государственной власти /сравнительный анализ/. Ереван, 1999, էջ 66):

¹⁹³ Սահմանադրական արդարադատությունը ՀՀ սահմանադրական դատարանի բացառիկ լիազորությունը հանդիսանալու առնչությամբ տե՛ս նաև Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ /ընդհանուր խմբագրությամբ՝ Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի, Երևան, 2010, էջ 918:

Ուստի, ՀՀ սահմանադրական դատարանի քննարկվող իրավական դիրքորոշումները, հանդիսանալով նրա որոշումների կարևորագույն բաղկացուցիչ մաս, պարտադիր են բոլոր պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց պաշտոնատար անձանց, ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանց համար՝ Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում, ուստի, դրանք օժտված են համապարտադիրության հատկանիշով¹⁹⁴:

Հիշյալ համատեքստում հարկ ենք համարում անդրադառնալ նաև այն հանգամանքին, որ «Սահմանադրական դատարանի մասին» 17 հունվարի 2018թ. ՀՀ սահմանադրական օրենքը, ներկայացնելով սահմանադրական մարմինների միջև նրանց սահմանադրական լիազորությունների առնչությամբ առաջացած վեճերի վերաբերյալ գործերի քննության առանձնահատկությունները, նախատեսեց, որ «Սահմանադրական դատարանը, **մեկնաբանելով Սահմանադրության համապատասխան դրույթը** (ընդգծումը մերն է՝ Ա.Մ.), սահմանադրական մարմինների միջև նրանց լիազորությունների վերաբերյալ վեճերով ընդունում է հետևյալ որոշումներից որևէ մեկը...»¹⁹⁵:

Նշենք, որ օրենքի՝ այլ գործերի քննության և լուծման առանձնահատկություններին առնչվող դրույթները չեն նախա-

¹⁹⁴ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 61 հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ Սահմանադրական դատարանի ըստ էության ընդունված որոշումները պարտադիր են բոլոր պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց պաշտոնատար անձանց, ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանց համար Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում:

¹⁹⁵ Տե՛ս «Սահմանադրական դատարանի մասին» 17 հունվարի 2018թ. ՀՀ սահմանադրական օրենքի 75 հոդված:

տեսում հատուկ կարգավորում այն մասին, որ Սահմանադրական դատարանը որոշումն ընդունում է՝ Սահմանադրության համապատասխան դրույթը մեկնաբանելով: Տվյալ պարագայում կարող է հարց առաջանալ այն մասին, թե արդյո՞ք նշված կարգավորմամբ օրենքն ինքնին չի կանխորոշում, որ միայն ներկայացված գործերի պարագայում է Սահմանադրական դատարանը մեկնաբանում Սահմանադրությունը:

Վերը շարադրված վերլուծությունը նկատի ունենալով՝ կարծում ենք, որ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի հիմքում չի կարող ընկած լինել նշված տրամաբանությունը, և ներկայացված նորմի նպատակը ոչ թե այլ գործերի քննության ընթացքում Սահմանադրական դատարանի կողմից Սահմանադրության մեկնաբանությունը բացառելն է, այլ այն հանգամանքն ընդգծելը, որ քննարկվող գործերի քննության հիմնական էությունը սահմանադրական համապատասխան նորմերի մեկնաբանությունն է, ուստի, սահմանադրական մարմինների միջև սահմանադրական լիազորությունների հարցով վեճը պետք է պայմանավորված լինի սահմանադրական համապատասխան նորմի մեկնաբանության անհրաժեշտությամբ:

Վերը նշված եզրահանգման մասին է վկայում նաև այն հանգամանքը, որ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքը որոշակի գործերի քննության և լուծման առումով նախատեսում է վիճարկվող ակտը կամ դրա վիճարկվող դրույթը **Սահմանադրական դատարանի մեկնաբանությամբ** Սահմանադրությանը համապատասխանող ճանաչելու մասին որոշում ընդունելու հնարավորություն¹⁹⁶: Կար-

¹⁹⁶ Տե՛ս «Սահմանադրական դատարանի մասին» 17 հունվարի 2018թ. ՀՀ սահմանադրական օրենքի 68 հոդվածի 9-րդ մաս, 69 հոդվածի 10-րդ մաս:

ծում ենք, որ նշված իրավակարգավորման էությունը վիճարկվող դրույթի սահմանադրաիրավական բովանդակության բացահայտումն է, ինչը, բնականաբար, անհնար է առանց համապատասխան սահմանադրական նորմի բովանդակության բացահայտման, այլ կերպ՝ մեկնաբանության:

Հավելենք, որ ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 18 հոկտեմբերի 2006թ. ՄԴՈ-652 որոշմամբ ևս արձանագրել է, որ «Սահմանադրական դատարանին է Սահմանադրությամբ և «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքով իրավասություն վերապահված Սահմանադրության դրույթների վերաբերյալ վերջնական իրավական դիրքորոշում ներկայացնել՝ նորմատիվ ակտերի սահմանադրականությունը գնահատելիս: Այդ իրավական դիրքորոշումների բովանդակությունը **սահմանադրական նորմի պաշտոնական մեկնաբանությունն է**»¹⁹⁷ (ընդգծումը մերն է՝ Ա.Մ.): Իր որոշումների կատարման վիճակի վերաբերյալ տարեկան հաղորդումներում ևս Սահմանադրական դատարանը բազմիցս արձանագրել է, որ սահմանադրական դատարանն իր որոշման մեջ Սահմանադրության նորմի իրավական բովանդակության բացահայտման կամ օրենքի նորմի սահմանադրական բովանդակության բացահայտման միջոցով ձևակերպում է իր իրավական դիրքորոշումը, որը պարտադիր բնույթ ունի ինչպես իրավակիրառողների, այնպես էլ օրինաստեղծ մարմինների համար¹⁹⁸:

Հետևաբար, հաշվի առնելով ներկայացված վերլուծություն-

¹⁹⁷ Տե՛ս <http://concourt.am/armenian/decisions/common/2006/sdv-652.htm>, /Վերջին մուտք՝ 14.06.2016/:

¹⁹⁸ Տե՛ս, օրինակ, ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2006-2010թթ. ընդունած որոշումների կատարման վիճակի վերաբերյալ հաղորդումները (տե՛ս <http://concourt.am/armenian/report/index.htm>, /Վերջին մուտք՝ 14.06.2016/):

նը և այն, որ պաշտոնական մեկնաբանության հիմնական տարբերակիչ հատկանիշներն են պարտադիր բնույթն այն սուբյեկտների համար, ում հասցեագրված է¹⁹⁹, ու դրա համար լիազորված հատուկ մարմնի կողմից տրված լինելու հանգամանքը²⁰⁰, կարծում ենք, որ սահմանադրական դատարանի կողմից ՀՀ Սահմանադրության մեկնաբանությունն ունի պաշտոնական բնույթ: Ավելին, վերը շարադրված վերլուծությունը հանգեցնում է այն եզրակացության, որ այդ մեկնաբանության պաշտոնական բնույթը պայմանավորված չէ նրանով, թե արդյոք սահմանադրական արդարադատությունն իրականացնող մարմինն ունի Սահմանադրության վերացական մեկնաբանության ինքնուրույն լիազորություն, թե սահմանադրական նորմերի բովանդակությունը բացահայտում ու պարզաբանում է այլ լիազորությունների իրականացման շրջանակներում:

¹⁹⁹ Տե՛ս, օրինակ, Теория государства и права: Академический курс в 2х томах. Том 2 / Отв. ред. Марченко М. Н. М., 1998, էջ 338-339:

²⁰⁰ Տե՛ս, օրինակ, Марченко М. Н. Теория государства и права. М., 2008, էջ 619, Арутюнян Г., Баглай М. Конституционное право: Энциклопедический словарь. М., 2006, էջ 485, Румянцева Ю. Е. Официальное толкование норм уголовнопроцессуального права (Автореферат диссертации на соискание ученой степени кандидата юридических наук). Екатеринбург, 2008, էջ 9, <http://www.usla.ru/structure/dissovet/Rumyancevaaref.pdf>, /Վերջին մուտք՝ 15.03.2014/, Теория государства и права. курс лекций. Изд. второе, переработанное и дополненное / Под ред. Матузова Н. И., Малько А.В., <http://www.bibliotekar.ru/teoriagosudarstvaiprava1/87.htm>, /Վերջին մուտք՝ 15.03.2014/): Ընդ որում՝ հիշյալ սուբյեկտները կարող են մեկնաբանություն իրականացնել միայն իրենց իրավասության շրջանակներում ընդգրկված հարցերով (տե՛ս Новиков Н. И. Нормативное толкование в механизме правового регулирования (Автореферат диссертации на соискание ученой степени кандидата юридических наук). Ростов на Дону, 2009, http://www.dissercat.com/content/normativnoetolkovanievmekhanizmepravovogo-regulirovaniya?_openstat=cmVmZXJ1bi5jb207bm9kZTthZDE7, /Վերջին մուտք՝ 15.03.2014/):

Հետևաբար, թեև ՀՀ սահմանադրական դատարանին վերապահված չէ Հիմնական օրենքի պաշտոնական վերացական մեկնաբանության ինքնուրույն լիազորություն, սակայն իր լիազորությունների իրականացման ընթացքում նա մեկնաբանում է ՀՀ Սահմանադրությունը, ընդ որում՝ այդ մեկնաբանությունն օժտված է պաշտոնական բնույթով:

Տվյալ պարագայում հարց է առաջանում այն մասին, թե կա արդյոք որևէ այլ դատական մարմին, որը կարող է տալ Հիմնական օրենքի պաշտոնական մեկնաբանություն: Հիշյալ հիմնախնդիրն առավել խնդրահարույց է մի շարք երկրների սահմանադրություններով²⁰¹, այդ թվում՝ մինչ 2015թ. դեկտեմբերի 6-ի փոփոխությունները՝ ՀՀ Սահմանադրության 6 հոդվածով սահմանված այն դրույթի գործողության պայմաններում, համաձայն որի՝ Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ, և նրա նորմերը գործում են անմիջականորեն: Վերջինս հաճախ հանգեցնում էր այնպիսի եզրահանգումների, որ նշված նորմը ենթադրում է դատարանների կողմից ՀՀ Սահմանադրության նորմերի անմիջական կիրառում, իսկ այդ հանգամանքն իր հերթին պահանջում է դրանց մեկնաբանում, հետևաբար՝ Հիմնական օրենքի պաշտոնական մեկնաբանություն իրականացնելու իրավասությամբ օժտված են բոլոր դատական աստիճանները:

Ներկայացված հարցադրումը վերլուծելու համար առաջին հերթին հարկ ենք համարում անդրադառնալ այն հանգամանքին, թե ինչ է ենթադրում «Սահմանադրության անմիջական գործողություն» հասկացության բովանդակությունը, և արդյոք

²⁰¹ Օրինակ՝ ՌԴ Սահմանադրության 15 հոդված, Բուլղարիայի Հանրապետության Սահմանադրության 5 հոդված և այլն:

վերջինս նույնանում է «Սահմանադրության անմիջական կիրառում» հասկացությանը:

Նշենք, որ իրավաբանական գրականության մեջ իրավունքի գործողությունը բնութագրվում է որպես իրավունքի հատկանիշ (կարողություն)՝ կոնկրետ միջավայրում ունենալու գաղափարա-մոտիվացիոն ազդեցություն անհատի, անձանց հանրային վրա և արդյունքում իր նպատակներին ու սկզբունքներին համապատասխան՝ ապահովելու մարդու իրավաչափ գործունեությունը և վարքագիծը²⁰²: Այլ կերպ՝ իրավունքի գործողությունը այն ամբողջ ազդեցությունն է, որն իրավունքն ունենում է անձանց գիտակցության և ընդհանուր առմամբ հասարակական հարաբերությունների վրա²⁰³:

Մինչդեռ իրավունքի կիրառումը՝ որպես իրավունքի իրացման ձև, պետության՝ ի դեմս վերջինիս իրավասու մարմինների, ակտիվ իշխանական գործունեությունն է՝ կոնկրետ իրավաբանական գործի լուծման առումով²⁰⁴: Այն օրենքով սահմանված հատուկ ձևերով իրականացվող իրավասու մարմինների պետաիշխանական գործունեության տեսակ է՝ ուղղված կոնկրետ դեպքում իրավունքի նորմերի իրացմանը և իրավունքի կիրառման ակտերի ընդունմանը: Այլ կերպ՝ իրավունքի կիրառումը պետաիշխանական գործունեության տե-

²⁰² Տե՛ս Սեմյուր Է. Элементарные начала общей теории права / под ред. Червонюка В. И. М. 2003, https://elementary_law.academic.ru/92/Действие_права, /Վերջին մուտք՝ 10.08.2018/:

²⁰³ Տե՛ս Иванов А.А., Иванов В.П.. Теория государства и права. М. 2007, <https://textbook.news/gosudarstva-prava-teoriya/deystvie-prava-pravovoe-vozdeystvie-pravovoe-141059.html>, /Վերջին մուտք՝ 10.08.2018/:

²⁰⁴ Տե՛ս Теория государства и права: Учебник / под ред. М. Н. Марченко. М.: Издательство «Зерцало», 2004, <https://dic.academic.ru/dic.nsf/ruwiki/364959>, /Վերջին մուտք՝ 10.08.2018/:

սակ է՝ ուղղված իրավակարգավորումների կյանքի կոչմանը²⁰⁵: Ներկայացված բնորոշումները հիմք են տալիս եզրակացնելու, որ իրավունքի իրացման նշված ձևն օժտված է մի շարք առանձնահատկություններով, որոնցից քննարկվող համատեքստում հարկ ենք համարում հիշատակել այն, որ ի տարբերություն իրավունքի իրացման այլ ձևերի՝ իրավունքը կարող է կիրառվել սոսկ դրա համար իրավասու պետական մարմինների և պաշտոնատար անձանց կողմից: Ավելին, իրավունքի կիրառումը կրում է պետաիշխանական բնույթ, և դրա արդյունքում ընդունվող ակտերն ունեն հստակ իրավաբանական ուժ և պարտադիր են կատարման հասցեատերերի համար²⁰⁶:

Հետևաբար, հիշյալ համատեքստում առաջին հերթին անհրաժեշտ է նկատի ունենալ, որ միմյանցից լիովին տարբերվում է «իրավունքի գործողություն» և «իրավունքի կիրառում», ուստի նաև՝ «Սահմանադրության գործողություն» և «Սահմանադրության կիրառում» հասկացությունների բովանդակությունը:

Վերը շարադրվածը նկատի ունենալով՝ կարծում ենք, որ Սահմանադրության գործողությունը այն ազդեցությունն է, որը Հիմնական օրենքն ունենում է կոնկրետ սոցիալական հանրային և այդ շրջանակներում առաջացող հասարակական հարաբերությունների կանխորոշման ու կարգավորման տեսանկյունից: Մինչդեռ Սահմանադրության կիրառումը սահմանված

²⁰⁵ Տե՛ս Григорьев А.С. Юридическая техника: Учебное пособие. Электронное издание. Тюмень: Издательство Тюменского государственного университета, 2015, <https://lawbook.online/yuridicheskoy-tehniki-osnovyi/primenenie-norm-prava-ponyatie-priznaki-formyi-67556.html>, /Վերջին մուտք՝ 10.08.2018/:

²⁰⁶ Տե՛ս https://dic.academic.ru/dic.nsf/enc_law/1840/ПРИМЕНЕНИЕ, /Վերջին մուտք՝ 10.08.2018/:

հատուկ ձևերով իրականացվող իրավասու մարմինների պետաիշխանական գործունեությունն է՝ ուղղված կոնկրետ դեպքում սահմանադրական նորմերի իրացմանը և դրանց կիրառման համապատասխան ակտերի ընդունմանը: Այլ կերպ՝ Սահմանադրության կիրառումը պետաիշխանական գործունեության տեսակ է՝ ուղղված սահմանադրական կարգավորումների կյանքի կոչմանը:

Ներկայացված բնորոշումների համատեքստում ակնհայտ է Սահմանադրության ազդեցությունը կոնկրետ սոցիալական հանրույթի և այդ շրջանակներում առաջացող հասարակական հարաբերությունների կանխորոշման ու կարգավորման տեսանկյունից: Ակնհայտ է նաև, որ այդ ազդեցությունն անմիջական է և **ամրագրված կարգավորումների շրջանակներում** միջնորդավորված չէ այլ ակտերի ընդունման ու գործարկման անհրաժեշտությամբ: Այլ հարց է, որ Սահմանադրությունն ինքնին կարող է ենթադրել հասարակական հարաբերությունների ամբողջական կարգավորման համար այլ ակտերի ընդունման անհրաժեշտություն: Սակայն նույնիսկ նշված իրավիճակներում էլ Սահմանադրությունն օժտված է անմիջական գործողության հատկանիշով՝ **Հիմնական օրենքով ամրագրված կոնկրետ կարգավորումների շրջանակներում**: Մասնավորապես, այն դեպքերում, երբ Սահմանադրությունը նախատեսում է, որ կոնկրետ հարցերին առնչվող մանրամասները սահմանվում են օրենքով²⁰⁷, չի կարելի եզրահանգել, որ Հիմնական օրենքն այլևս չունի անմիջական գործողություն: Պարզապես նշված դեպքերում վերջինիս անմիջական ազդեցությունը սահմանափակվում է այն կոնկրետ հարաբերություններ

րի կարգավորման շրջանակներով, որոնք հատակորեն ամրագրված են սահմանադրական նորմում: Ավելի կոնկրետ՝ ներկայացված իրավիճակներում Սահմանադրությունն անմիջականորեն ենթադրում է, որ քննարկվող հարցադրումները ենթակա են լրացուցիչ կանոնակարգման, իսկ այդ լրացուցիչ կարգավորումներին առնչվող մանրամասները պետք է ամրագրվեն հենց օրենքով, և ոչ որևէ այլ ակտով:

Հետևաբար, Սահմանադրությունը բոլոր դեպքերում ունի անմիջական ազդեցություն և գործողություն, և **ամրագրված կարգավորումների շրջանակներում** միջնորդավորված չէ այլ ակտերի ընդունման ու գործարկման անհրաժեշտությամբ:

Ինչ վերաբերում է սահմանադրական նորմերի անմիջական կիրառմանը, կարծում ենք, որ տրամաբանական չէր լինի ենթադրել, որ հասարակական հարաբերությունների կարգավորման տեսանկյունից անմիջական ազդեցություն ունեցող նորմերը չեն կարող կիրառվել համապատասխան մարմինների կողմից: Այլ հարց է, որ այդ կիրառման ընթացքում անհրաժեշտ է նկատի ունենալ կոնկրետ չափանիշներ ու սկզբունքներ, և սահմանադրական նորմերն իրացնել սուսկ վերջիններիս համատեքստում:

Մասնավորապես, առաջին կարևոր հանգամանքը, որն այդ առումով պետք է ուշադրության արժանանա, այն է, որ Սահմանադրության կիրառումը **իրավասու սուբյեկտների** կողմից իրականացվող պետաիշխանական գործունեության տեսակ է, և դրանցից բացի ցանկացած այլ մարմնի կողմից վերջինիս իրականացումն իրավաչափ համարվել չի կարող:

Կարևոր է նկատի ունենալ և այն, որ սահմանադրական նորմերը անմիջական ազդեցություն են ունենում սուսկ այն հարաբերությունների տեսանկյունից և հարաբերության այն

²⁰⁷ Օրինակ՝ ՀՀ Սահմանադրության 49, 51, 52 և մի շարք այլ հոդվածներ:

սուբյեկտների նկատմամբ, որոնց առումով կիրառելի ու վերաբերելի են: Հարաբերությունների և դրանց կանոնակարգման առումով օրինակը ներկայացրեցինք կոնկրետ հարցադրմանն առնչվող մանրամասները օրենքով կարգավորելու առնչությամբ սահմանադրական նորմի վերլուծության տեսանկյունից:

Ինչ վերաբերում է իրավահարաբերության կոնկրետ մասնակիցների առումով սահմանադրական նորմերի ազդեցությանն ու վերաբերելիությանը, նշենք, որ որպես կանոն, սահմանադրական նորմի ձևակերպումից ակնհայտ է, թե վերջինս ում նկատմամբ է տարածվում և ում միջև է հարաբերություններ առաջացնում: Միննույն ժամանակ, առկա են այնպիսի սահմանադրական նորմեր, որոնց ազդեցության շրջանակը իրավահարաբերության կոնկրետ մասնակիցների առումով երբեմն միանշանակ չի ընկալվում, տարակարծությունների տեղիք է տալիս, ինչն իր հերթին հանգեցնում է դրանց ոչ տեղին և խնդրահարույց կիրառման:

Խոսքն առաջին հերթին մարդու սահմանադրական իրավունքների և դրանց ազդեցության շրջանակի մասին է: Այդ առումով հարկ է նկատի ունենալ, որ սահմանադրական հիմնարար իրավունքները փոխհարաբերություններ չեն առաջացնում մասնավոր սուբյեկտների միջև, հասցեագրված են սոսկ պետությանը և ուղղակիորեն չեն սահմանափակում մասնավոր սուբյեկտներին:

Մի շարք գործերով ԱՄՆ Գերագույն դատարանը, օրինակ, մատնանշել է, որ սահմանադրական նորմերն, այդ թվում՝ սահմանադրական համապատասխան փոփոխությունները, վերաբերում են բացառապես պետության գործունեությանը և ոչ որևէ մասնավոր սուբյեկտի: Միննույն ժամանակ, հիշյալ

մարմնի դատական պրակտիկան զարգացել է այն ուղղությամբ, որ ոչ պետական սուբյեկտի գործունեությունը որոշակի հանգամանքներում կարող է դիտարկվել որպես «պետական գործունեություն», հետևաբար, սահմանափակված լինել սահմանադրական իրավունքներով: Դրանք, մասնավորապես, այն իրավիճակներն են, երբ ոչ պետական մարմնի գործողություններն անմիջականորեն ուղղորդվում են պետական իշխանության կողմից, երբ իրականացվում են պետական հարկադրանքի կամ էական խրախուսանքի արդյունքում, երբ այդ գործողություններն իրականացվում են պետության մասնակցությամբ, ինչը կարող է արտահայտվել կառավարման, դրամական կամ գույքային միջոցների տրամադրման տեսքով, կամ երբ չնայած ակնհայտ պետական ներգրավվածության բացակայության՝ այդ գործողությունները վերաբերում են այն լիազորություններին և գործառույթներին, որոնք սովորաբար իրականացվում են պետական իշխանության կողմից: Միննույն ժամանակ, հարկ է նկատի ունենալ, որ նշված բոլոր իրավիճակներում սահմանադրական իրավունքների վերաբերելիությունը մասնավոր գործունեությանն անուղղակի է, քանզի բոլոր ներկայացված դեպքերում պետությունն է իրականում պատասխանատու կոնկրետ գործողությունների համար:

Անդրադառնալով քննարկվող հիմնախնդրին՝ Գերմանիայի Դաշնային Սահմանադրական դատարանը ևս նշել է, որ հիմնական իրավունքների առաջնային նպատակը մարդու իրավունքների պաշտպանությունն է պետական իշխանության միջամտություններից: Միննույն ժամանակ, Դատարանը հավասարապես կարևորել է այն հանգամանքը, որ Հիմնական օրենքն արժեքներից գուրկ փաստաթուղթ չէ: Հիմնական իրա-

վունքներին առնչվող բաժինը ստեղծում է արժեքների նպատակային համակարգ, և այդ համակարգը մեծապես ամրապնդում է հիմնական իրավունքների գործողությունը: Այսպիսով, ակնհայտ է, որ հիմնական իրավունքներն ազդում են նաև մասնավոր իրավունքի զարգացման վրա: Մասնավոր իրավունքի ցանկացած կարգավորում պետք է համապատասխան լինի արժեքների այդ համակարգին և ցանկացած դրույթ պետք է մեկնաբանվի արժեքների այդ համակարգի ոգով: Այսպիսով, հիմնական իրավունքները Գերմանիայում կատարում են նաև մասնավոր իրավունքի զարգացման տեսանկյունից ազդեցություն ունեցող կարևոր գործառույթ և որպես այդպիսին՝ անուղղակիորեն սահմանափակում են մասնավոր սուբյեկտներին, ինչը գրականության մեջ արտահայտվում է «հորիզոնական ազդեցություն» կամ «երրորդ կողմի ազդեցություն» եզրույթներով:

Հետևաբար, թեև սահմանադրագիտության շրջանակներում ընդունված ընդհանուր տրամաբանությունն այն է, որ հիմնական իրավունքներն ունեն անմիջական ուղղահայաց ազդեցություն, սակայն կոնկրետ հանգամանքների առկայության պարագայում բացառված չէ նաև դրանց միջնորդավորված հորիզոնական ազդեցությունն ու դերակատարությունը²⁰⁸:

Անդրադառնալով քննարկվող հարցադրմանն առնչվող

²⁰⁸ St' u Chirwa M. D. The Horizontal Application of Constitutional Rights in a Comparative Perspective // Law, Democracy & Development. Vol 10, No 2 (2006), էջեր 21-48, Barak A. Constitutional Human Rights and Private Law // Review of Constitutional Studies, Vol. III, N 2, Yale Law School Legal Scholarship Repository. 1-1-1996, էջ 219-281, Schmitz T. Basic Elements of Fundamental Rights Doctrine, http://www.iuspublicum-thomas-schmitz.uni-goettingen.de/Downloads/Schmitz_FR-Doctrine_Jakarta-2014. Pdf, /Վերջին մուտք՝ 10.08.2018/:

Հայաստանի Հանրապետության օրինակին՝ նշենք, որ թեև 2005թ. խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 3 հոդվածը նախատեսում էր, որ պետությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք, միննույն ժամանակ, 47 հոդվածը սահմանում էր, որ յուրաքանչյուր ոք պարտավոր է պահպանել Սահմանադրությունը և օրենքները, հարգել այլոց իրավունքները, ազատությունները և արժանապատվությունը:

Յուրաքանչյուրի վրա դրված նշված պարտականությունը հաճախ ընկալվում էր որպես հիմնական իրավունքների գործողությունը նաև մասնավոր սուբյեկտների հարաբերությունների նկատմամբ տարածելու հնարավորություն, ինչը, սակայն, ինչպես նշեցինք, հակասում է հիմնական իրավունքների առնչությամբ ավանդական պատկերացումներին:

Վերը շարադրվածը նկատի ունենալով՝ ՀՀ Նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովը 2014թ.-ին ընդունված ՀՀ սահմանադրական բարեփոխումների հայեցակազում արձանագրեց, որ նշված ընկալումը հակասում է հիմնական իրավունքների առնչությամբ ավանդական պատկերացումներին և դիտարկեց վերջինս որպես նոր հայեցակարգային մոտեցումներ պահանջող խնդիր²⁰⁹: Արդյունքում՝ նշված դրույթը տեղ չգտավ 2015թ.

²⁰⁹ St' u Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգ / մշակվել է Հայաստանի Հանրապետության Նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի կողմից, Երևան, 2014թ. հոկտեմբեր, <http://www.parliament.am/library/sahmanadrakan%20barepoxumner/hayecakarg.pdf>:

դեկտեմբերի 6-ի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության տեքստում:

Մինևույն ժամանակ, ինչպես արդեն նշեցինք, թեև ուղղահայաց գործողության դոկտրինի տեսանկյունից հիմնական իրավունքները հասցեագրված են պետությանը, սակայն վերջինս ամբողջանում է միջնորդավորված հորիզոնական գործողության դոկտրինով, համաձայն որի՝ իրավունքի իրացման ընթացքում ամեն դեպքում հարկ է հաշվի առնել սահմանադրական համապատասխան արժեքները:

Հետևաբար, վերը շարադրվածը նկատի ունենալով՝ կարծում ենք, որ Հայաստանի Հանրապետությունում ևս հիմնական իրավունքների առնչությամբ հայեցակարգային մոտեցումների հիմքում պետք է ընկած լինի այն ընկալումը, որ հիմնական իրավունքներն անմիջականորեն հասցեագրված են դրանցով սահմանափակված պետությանը, սակայն մինևույն ժամանակ, մասնավոր իրավահարաբերությունների շրջանակներում համապատասխան լուծումները պետք է գտնել՝ սահմանված սահմանադրական արժեքներին համապատասխան ու դրանց համատեքստում: Այդ առումով հետաքրքիր է օրինակ, Շվեյցարիայի 1999թ. Սահմանադրության 35 հոդվածը, համաձայն որի՝ իշխանությունները հոգ են տանում այն մասին, որպեսզի հիմնական իրավունքները, որքանով որ դա հնարավոր է, իրացվեն նաև մասնավոր անձանց միջև հարաբերություններում:

Հիշյալ համատեքստում կարևոր է նաև նկատի ունենալ, որ որոշակի իրավիճակներում, որոնց արդեն անդրադարձանք քննարկվող հիմնախնդիրը վերլուծելիս, մասնավոր սուբյեկտների գործողությունները կարող են դիտարկվել որպես «պե-

տական գործունեություն» և սահմանափակված լինել հիմնական սահմանադրական իրավունքներով:

Վերը շարադրվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ մարդու սահմանադրական իրավունքների կիրառումն անհրաժեշտ է իրականացնել նշված հանգամանքները նկատի ունենալով, իսկ վերջիններիս անմիջական գործողության ու կիրառման տեսությունները կարող են հիմնված լինել սոսկ այդ հանգամանքները նկատի ունենալու արդյունքում ձևավորվող հայեցակարգային մոտեցումների վրա:

Ամփոփելով՝ նշենք, որ սահմանադրական նորմերն ունեն անմիջական ազդեցություն սոսկ այն հարաբերությունների տեսանկյունից և հարաբերության այն սուբյեկտների նկատմամբ, որոնց առումով կիրառելի ու վերաբերելի են, իսկ նշված նորմերը կարող են կիրառել պետաիշխանական լիազորություններով օժտված սոսկ այն մարմինները, որոնք այդ առումով իրավասու են:

Քննարկվող հիմնախնդրի առումով կարևոր է նաև նկատի ունենալ, որ ՀՀ Սահմանադրությամբ ուղղակիորեն ամրագրվել է Հայաստանի Հանրապետությունում սահմանադրական արդարադատություն իրականացնող դատական մարմինը, այն է՝ ՀՀ սահմանադրական դատարանը: Արդյունքում՝ սահմանադրական արդարադատության իրականացումը հստակորեն առանձնացվել է արդարադատության մյուս տեսակների իրականացումից՝ այդպիսով բացառելով վերջինիս բովանդակության շրջանակներում ընդգրկված գործառնությունների իրականացումը և սահմանադրաիրավական հարցերի լուծումը դատական այլ մարմինների կողմից: Իսկ այդ հանգամանքն ու պաշտոնական մեկնաբանության տարբերակիչ հատկանիշնե-

րը հիմք են տալիս եզրակացնելու, որ հիշյալ դատական մարմինները չեն հանդիսանում ՀՀ Սահմանադրության մեկնաբանություն իրականացնելու համար հատուկ լիազորված մարմիններ և չեն կարող տալ Հիմնական օրենքի **պաշտոնական մեկնաբանություն**: Նշենք, որ Լիտվայի Սահմանադրական դատարանը, նույնպես չունենալով Հիմնական օրենքի վերացական մեկնաբանության լիազորություն, իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ միայն Սահմանադրական դատարանն է իրավասու պաշտոնապես մեկնաբանելու Սահմանադրությունը²¹⁰:

Վերը շարադրվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ որևէ այլ մարմնի կողմից տրված սահմանադրական նորմերի մեկնաբանությունը չի կարող ունենալ **պաշտոնական բնույթ**: Այդ առումով հարկ է հիշատակել նաև իրավաբանական գրականության մեջ արտահայտված այն տեսակետը, որ անհրաժեշտ է Սահմանադրությունը կիրառել Սահմանադրական դատարանի դատական պրակտիկայի համատեքստում: Սահմանադրությունը ժամանակի ընթացքում լրացվում ու մեկնաբանվում է Սահմանադրական դատարանի որոշումներում, որոնք շատ ավելի հեշտ են կիրառվում ընդհանուր դատարանների կողմից, քան Սահմանադրության անհստակ և արժեքային ուղղվածություն ունեցող դրույթները²¹¹: Հենց այդ է պատճառը, որ երբ խոսվում է իշխանության մարմինների կողմից իրենց լիա-

²¹⁰ St' u Ruling No. 21/2003 of The Constitutional Court of the Republic of Lithuania of 30 May 2003, <http://www.lrkt.lt/dokumentai/2003/r030530.htm>, /Վերջին մուտք՝ 11.04.2015/:

²¹¹ St' u Papuashvili G. Problematic Aspects of Interrelationship between the Constitutional and Ordinary Courts, http://www.venice.coe.int/WCCJ/Papers/GEO_Papuashvili_E.pdf, /Վերջին մուտք՝ 11.04.2015/:

զորությունները սահմանադրական կարգավորումներին համապատասխան իրականացնելու մասին, հստակեցվում է, որ դրանք պետք է իրականացվեն «վերահսկողություն իրականացնող մարմնի կողմից մեկնաբանված սահմանադրական կարգավորումներին համապատասխան»²¹²:

Վերը շարադրվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ սահմանադրական նորմերի կիրառման ընթացքում բոլոր պետական մարմինները պետք է պահպանեն «ոչջամիտ ինքնասահմանափակման» սկզբունքը՝ քննարկվող նորմերը կիրառելով սոսկ այն դեպքում, երբ դրա համար իրավասու են, իսկ նշված նորմերը՝ կիրառելի և վերաբերելի կոնկրետ իրավահարաբերության ու դրա սուբյեկտների նկատմամբ՝ մինչև ժամանակ, կիրառման ընթացքում նկատի ունենալով այն, որ Սահմանադրական դատարանն է սահմանադրական նորմերի **պաշտոնական** մեկնաբանություն տվող իրավասու մարմինը, ուստի՝ նման մեկնաբանության առկայության դեպքում քննարկվող դրույթները պետք է կիրառվեն սահմանադրական դատարանի կողմից տրված պաշտոնական մեկնաբանության համատեքստում:

Հաջորդ հիմնախնդիրը, որին հարկ ենք համարում անդրադառնալ հիշյալ համատեքստում, սահմանադրական դատարանի կողմից կիրառվող մեկնաբանության մեթոդների ճիշտ ընտրությունն է ու սահմանների հստակեցումը, քանզի դրանով է մեծապես պայմանավորված մեկնաբանության արդյունավետությունն ու դրա նշանակությունը սահմանադրականության զարգացման գործում:

Հարկ է նկատել, որ, չնայած Սահմանադրության մեկնա-

²¹² St' u Tponep M., նշված աշխատությունը, էջ 177:

բանության նպատակով օգտագործվող մեթոդների բազմազանությանը, վերջինիս սահմանների առնչությամբ գոյություն ունեցող տեսակետները կարելի է ամփոփ ներկայացնել երկու հիմնական մոտեցումների համատեքստում՝ սուբյեկտիվ (ստատիկ) և օբյեկտիվ (դինամիկ): Առաջինը նպատակաուղղված է Սահմանադրության «տառին» համապատասխան նորմերի մեկնաբանությանը, որի հիմնական խնդիրը օրիգինալիզմի կողմնակիցների համար դառնում է նորմի այն բովանդակությունն ու նպատակները բացահայտելը, որոնք ներկայացվում էին դրա ընդունման ընթացքում, այսինքն՝ սահմանադրի անփոփոխ կամքը վերհանելը: Ի տարբերություն հիշյալ տեսակետի՝ օբյեկտիվ տեսությունը հանգում է սահմանադրական նորմերի բովանդակության բացահայտմանը վերջինիս գործողության ընթացքում գոյություն ունեցող իրականության համատեքստում: Ակնհայտ է, որ հասարակական կյանքը փոփոխվում է սահմանադրի կամքից շատ ավելի արագ, ինչի արդյունքում անհամապատասխանություն է առաջանում սահմանադրական նորմի և իրականության միջև: Վերջինս կարող է վերացվել նոր նորմի ընդունմամբ կամ գործող նորմի բովանդակությունն այնպես բացահայտելով, որպեսզի վերացվի հիշատակված անհամապատասխանությունը: Վերջին դեպքում սահմանադրական նորմը որոշակիորեն կտրվում է սահմանադրի կամքից և սկսում է «սեփական կյանքը»:

Ամփոփելով վերը շարադրվածը՝ նշենք, որ, ըստ էության, տեսության մեջ և պրակտիկայում Սահմանադրության մեկնաբանության սահմանների տեսանկյունից առանձնացվում է երկու հիմնական մոտեցում: Առաջինը, այսպես կոչված, «մե-

խանիկական» է, որը Հիմնական օրենքը դիտարկում է որպես «հաստատուն փաստաթուղթ» և որպես ելակետ է ընդունում «հիմնադիր-հայրերի» նպատակների բացահայտումը՝ մեկնաբանության հիմնաքար համարելով Սահմանադրության «տառը», իսկ երկրորդ՝ «կառուցակարգային» մոտեցումը²¹³ Հիմնական օրենքը դիտարկում է որպես «կենդանի փաստաթուղթ» և Սահմանադրության «տառը» սույն որպես ելակետ է դիտարկում հետագա տրամաբանական եզրահանգումների համար²¹⁴:

Հետևաբար, քննարկվող հիմնախնդրի առնչությամբ Հայաստանի Հանրապետության օրինակը վերլուծելիս հարկ ենք համարում անդրադառնալ այն հիմնախնդրին, թե ինչ շրջանակներով պետք է սահմանափակված լինի և այդ առումով ինչ չափանիշներ պետք է հաշվի առնի ՀՀ սահմանադրական դատարանը Սահմանադրությունը մեկնաբանելիս: Մասնավորապես, արդյո՞ք մեկնաբանության նպատակը պետք է լինի սույն

²¹³ Վերը նշված մոտեցումները մատնանշելու նպատակով իրավաբանական գրականության մեջ օգտագործվում են նաև «ակտիվիզմ» և «օրիգինալիզմ» տեսություններ հասկացությունները (տե՛ս Голдобина З. Г. Активизм и оригинализм в деятельности Верховного суда США и в американской политико-правовой доктрине (Автореферат диссертации на соискание ученой степени кандидата юридических наук). Екатеринбург, 2007 (<http://www.usla.ru/structure/dissovet/Goldobinaaref.pdf>):

²¹⁴ Տե՛ս Гаджиев Х. Толкование норм Конституции и закона конституционными судами. Баку, 2002, էջ 128-129, Wolcher L. E. Constitutional Interpretation in the United States and the United Kingdom, http://ivrenc.info/index.php?title=Constitutional_Interpretation_in_the_United_States_and_the_United_Kingdom, /Վերջին մուտք՝ 14.01.2014/, Pavcnik M. Constitutional Interpretation (in Continental Europe), http://ivrenc.info/index.php?title=Constitutional_Interpretation_%28in_Continental_Europe%29, Остапович И. Толкование Конституции: опыт зарубежных стран, <http://elib.gasu.ru/vmu/arhive/2007/01/28.pdf>:

նորմի ընդունման առնչությամբ սահմանադրի նպատակների վերհանումը, թե՛ անհրաժեշտ է հաշվի առնել նաև վերջինիս գործողության պայմանները, կամ կարելի՞ է արդյոք մեկնաբանության արդյունքում նորմի բովանդակությունը բացահայտել դրա տառացի նշանակությունը սահմանափակող կամ ընդլայնող շրջանակներում:

Չենք կարծում, որ սահմանադրական նորմերի բովանդակությունը բացահայտելու հիմնական չափանիշը պետք է լինի լեզվական առումով վերջիններիս տառացի նշանակությունը: Անկասկած, լեզվական մեկնաբանությունից է սկսվում սահմանադրական նորմերի բովանդակության բացահայտումը, և վերջինս, որպես կանոն, նախորդում է մեկնաբանության այլ միջոցներին: Ինչպես նշում էր Կորկուևովը. «Յուրաքանչյուր գրված աղբյուր ներառում է խոսքի միջոցով արտահայտված մարդկային միտք»²¹⁵: Հետևաբար, Սահմանադրությունը հանդես է գալիս որպես խոսքերով արտահայտված մարդկային մտքի արտահայտություն: Այդ միտքը հասկանալու համար առաջին հերթին անհրաժեշտ է ըմբռնել վերջինս արտահայտող բառերի, խոսքերի նշանակությունը, որոնց բացահայտմանը նպատակաուղղված է լեզվական մեկնաբանությունը²¹⁶:

Որպես լեզվական ու տառացի մեկնաբանության օրինակ կարելի է ներկայացնել ՀՀ սահմանադրական դատարանի՝ 23

²¹⁵ Տե՛ս Կորկուևով Н. М. Лекции по общей теории права. СПб., 1909, էջ 343:

²¹⁶ Այդ առումով հարկ է հաշվի առնել այն հանգամանքը, որ Սահմանադրության շրջանակներում օգտագործվում են նաև տարբեր գիտությունների, մասնավորապես տվյալ պարագայում իրավագիտության կողմից մշակված գիտական հասկացություններ, որոնք մեկնաբանելիս անհրաժեշտ է հիմք ընդունել ոչ թե դրանց բառացի, այլ համապատասխան գիտության կողմից տրված նշանակությունը:

նոյեմբերի 2010թ. ՄԴՈ-926 որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումը ՀՀ Սահմանադրության 23 հոդվածի 5-րդ մասի առնչությամբ, համաձայն որի՝ այդ դրույթը սահմանում է նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունքի սահմանափակման երեք համաժամանակյա նախապայման. ա/ օրենքով սահմանված դեպքերում, բ/ օրենքով սահմանված կարգով, գ/ դատարանի որոշմամբ²¹⁷:

Միևնույն ժամանակ հարկ է նկատի ունենալ, որ գուտ լեզվական տեսանկյունից իրավական ակտերի բառերի իմաստի վերհանումը երբեմն բավարար չի լինում միտքը ճիշտ ընկալելու համար, քանզի, թեև վերջինս արտահայտող բառերից յուրաքանչյուրն ունի ինքնուրույն նշանակություն, սակայն միևնույն ժամանակ այլ բառերի հետ գտնվում է տրամաբանական փոխկապվածության մեջ, ինչի արդյունքում ձեռք է բերում որոշակի և կոնկրետ համատեքստի տրամաբանությանը ենթակա իմաստ: Տվյալ պարագայում հարկ ենք համարում հիշատակել իրավաբանական գրականության մեջ արտահայտված տեսակետն այն մասին, որ «չպետք է անտառը կորցնել ծառերի մեջ», այլ կերպ՝ Սահմանադրության ոգին չպետք է կորցնել տառերի ու բառերի հետևում²¹⁸:

Ուստի, տվյալ պարագայում առաջանում է մեկնաբանության այլ եղանակների կիրառման անհրաժեշտություն:

²¹⁷ Տե՛ս www.concourt.am:

²¹⁸ Տե՛ս CDLJU(2004)024, The Application of Different Techniques of Interpretation of the Constitution as a Factor of Its Development // Report by Mr Aivars ENDZIŅŠ (Chairman of the Constitutional Court, Member, Latvia), Strasbourg, 20 February 2004, <http://www.venice.coe.int/docs/2004/CDLJU%282004%29024e.pdf>:

Տեսության մեջ հիշատակվող և պրակտիկայում կիրառվող իրավունքի մեկնաբանության կարևորագույն եղանակներից մեկը պատմական մեկնաբանությունն է, որի էությունը կայանում է նրանում, որ նորմերի իմաստը վերհանելիս հաշվի են առնվում այն կոնկրետ պատմական հանգամանքները, որոնց պայմաններում ընդունվել է համապատասխան նորմը: Իսկ դա կարևոր նշանակություն ունի նորմի ընդունման նպատակներն ու խնդիրները բացահայտելու, հետևաբար նաև՝ վերջինիս իմաստը վերհանելու համար²¹⁹: Մակայն հարկ է հաշվի առնել այն, որ իրականությունն անընդհատ փոփոխվում ու զարգանում է, և Հիմնական օրենքը պետք է ի վիճակի լինի համարժեքորեն արձագանքելու հասարակական հարաբերությունների հիշյալ առաջընթացին: Սահմանադրության շրջանակներում օգտագործվում են այնպիսի հասկացություններ, որոնք տարիների ընթացքում ապրել են և կշարունակեն ապրել անընդհատ զարգացում²²⁰: 21-րդ դարում դրանց ընկալումը նույնը չէ, ինչ, օրինակ, 19-րդ կամ 20-րդ դարերում: Մի շարք հասկացությունների ընկալումն էապես փոխվել է նույնիսկ մի քանի տասնամյակների ընթացքում: Հետևաբար, մեր

²¹⁹ Որոշ հեղինակներ որպես մեկնաբանության ինքնուրույն մեթոդ առանձնացնում են տելեոլոգիական (նպատակային) մեկնաբանությունը: Հաշվի առնելով այն, որ նորմի ընդունման նպատակը բացահայտվում է պատմական մեթոդի կիրառման միջոցով, բացի այդ, իրավակարգավորման առջև դրված նպատակների վերհանմանը կարող են ուղղված լինել մեկնաբանության այլ եղանակները, հիշյալ մեթոդի առանձնացումն ու դրա ինքնուրույն վերլուծությունը նպատակահարմար չենք համարում: Հակառակ պարագայում որպես մեկնաբանության ինքնուրույն մեթոդներ հնարավոր կլինի առանձնացնել, օրինակ, նորմի խնդիրների, գործառնությունների բացահայտմանն ուղղված եղանակները:

²²⁰ Օրինակ՝ «ժողովրդավարություն», «սուվերենություն», «մարդու հիմնական իրավունքներ և ազատություններ» և այլ հասկացությունները:

կարծիքով, դրանք պետք է մեկնաբանվեն այն հանգամանքների համատեքստում, որոնց պայմաններում գործում են:

Սահմանադրության շրջանակներում օգտագործվում են նաև, այսպես կոչված, «գնահատողական» նորմեր և հասկացություններ, որոնց իմաստի բացահայտման համար նույնպես անհրաժեշտ է հաշվի առնել հիշատակված հանգամանքները: Օրինակ՝ ՀՀ Սահմանադրության 82 հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր աշխատող, օրենքին համապատասխան, ունի առողջ, անվտանգ և արժանապատիվ աշխատանքային պայմանների, առավելագույն աշխատաժամանակի սահմանափակման, ամենօրյա և շաբաթական հանգստի, ինչպես նաև ամենամյա վճարովի արձակուրդի իրավունք: Ակնհայտ է, որ առողջ, անվտանգ և արժանապատիվ աշխատանքային պայմանների ընկալումը ժամանակի ընթացքում կարող է էականորեն փոփոխվել: Ուստի հիշյալ սահմանադրական նորմի մեկնաբանությունը պահանջում է այն հանգամանքների ուսումնասիրություն, որոնց շրջանակներում այն գործում է:

Վերը շարադրվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ եթե հիշատակված պայմաններում կոնկրետ իրավակարգավորման առնչությամբ որպես ելակետ ընդունվի սուսկ սահմանադրի կամքը, ապա հնարավոր չի լինի ապահովել Սահմանադրության կայունությունն ու զարգացումը: Տվյալ պարագայում չենք էլ խոսում այն մասին, որ սահմանադրի կամքի բացահայտումը կարող է չափազանց դժվար ու նույնիսկ անհնար լինել, քանզի վերջինս հանդիսանում է հավաքական կամքի արտահայտություն: Այդ առումով իրավաբանական գրականության մեջ դիպուկ կարծիք է արտահայտվել այն մասին, որ որքան

մեկնաբանող գոյություն ունի, գոյություն ունի այնքան էլ անցյալի մեկնաբանություն: Հետևաբար, հղումներն անցյալին ու պատմությանը կախված են ոչ թե օբյեկտիվ հանգամանքներից, այլ մեկնաբանության սուբյեկտի կամայական հայեցողությունից²²¹: Հենց այդ է պատճառը, որ նույնիսկ ամերիկյան սահմանադրական դոկտրինի շրջանակներում օրիգինալիզմը հաճախ ներկայացվում է որպես ռոմանտիկ հեքիաթ և դիտարկվում է որպես դատարաններին առավել մեծ հայեցողություն տվող տեսություն, քանզի վերջինիս պարագայում դատարաններն օժտված են սահմանադրի նպատակները բացահայտելիս հնարավոր տարբերակների միջև ընտրություն կատարելու չափազանց մեծ հայեցողությամբ²²²:

Հետևաբար, Սահմանադրության մեկնաբանության տեսանկյունից բացառիկ կարևորություն ունի այն պայմանների բացահայտումը, որոնց շրջանակներում գործում է մեկնաբանվող նորմը, և նպատակահարմար չէ սահմանադրական նորմերի բովանդակությունը բացահայտելիս որպես հիմք ընդունել սուսկ վերջիններիս ընդունման առնչությամբ սահմանադրի նպատակները, այլ առավել ընդունելի է Սահմանադրության **դինամիկ մեկնաբանության** տեսակետը: Այդ առումով հիշատակման է արժանի Ավստրալիայի Սահմանադրության մեկնաբանության առնչությամբ իրավաբանական գրականության մեջ արտահայտված այն տեսակետը, որ Հիմնադիր-հայրերից շատերն իրենք էին Սահմանադրությունն ընկալում որպես

²²¹ St' u Уитц Р. Об отсутствии определенности в толковании Конституции // Конституционное право: Восточноевропейское обозрение, N1(38)2002, էջ 32-33):

²²² St' u Burgess S. The Founding Fathers, Pop Culture, and Constitutional Law. Ohio University, USA, Ashgate, reprinted 2009, էջ 13, 38:

զարգացող փաստաթուղթ, որն ապագայում կարող է կիրառվել այնպիսի իրավիճակների առնչությամբ, որոնց վերաբերյալ նրանք չէին կարող պատկերացում ունենալ: Հետևաբար, Դատարանը պետք է ապահովի, որպեսզի Սահմանադրությունը «սերնդեսերունդ հարմարեցվի փոփոխվող հանգամանքներին», այլ կերպ՝ «մեկնաբանվի ժամանակի պահանջներին համապատասխան»²²³: Հիշյալ համատեքստում հիշատակման է արժանի նաև Գերմանիայի Դաշնային Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումը, համաձայն որի՝ գրված նորմի մեկնաբանությունը չի կարող միշտ կամ որոշակի անսահմանափակ ժամանակահատվածի համար փոխկապված մնալ նորմի այն նշանակությանը, որը վերջինս ուներ ընդունման պահին: Նորմը միշտ գտնվում է այն սոցիալական հանգամանքների և սոցիալ-քաղաքական տեսակետների համատեքստում, որոնց վրա վերջինիս ազդեցությունը տարածվում է: Երբ հիշյալ հանգամանքներն ու տեսակետները փոփոխվում են, նորմը կարող է, իսկ որոշակի հանգամանքների դեպքում պետք է համապատասխանեցվի այդ փոփոխություններին²²⁴: Ուստի տեղին է գրականության մեջ կատարված այն եզրահանգումը, որ օրենքը (այդ թվում՝ Սահմանադրությունը) պետք է հաշվի առնի անցյալը, գործի ներկայում և ուղղված լինի դեպի ապագան²²⁵:

²²³ St' u Zines L. Dead Hands or Living Tree? Stability and Change in Constitutional Law // [2004] AdelLawRw 2; (2004) 25(1) Adelaide Law Review 3, <http://www.austlii.edu.au/au/journals/AdelLawRw/2004/2.html>:

²²⁴ St' u Kommers D. P., նշված աշխատությունը, էջ 126:

²²⁵ St' u Maruste R. The Role of the Constitutional Court in Democratic Society, <http://www.juridicainternational.eu/theroleoftheconstitutionalcourtindemocraticsociety>:

Վերը շարադրվածը նկատի ունենալով՝ կարծում ենք, որ քննարկվող հիմնախնդրի տեսանկյունից կարևորվում են նաև Սահմանադրության մեկնաբանության այլ եղանակները:

Անդրադառնալով մեկնաբանության համակարգային եղանակին՝ նշենք, որ կասկածից վեր է այն, որ Սահմանադրությունը հանդիսանում է որոշակի ընդհանուր համակարգի բաղկացուցիչ մաս և գործում է ոչ թե այդ համակարգի այլ տարրերից մեկուսացված կերպով, այլ սերտորեն փոխկապված լինելով վերջիններիս հետ, ինչը ենթադրում է նաև դրանց ընկալումների միջև փոխկապվածության առկայություն: Այդ առումով հիշատակման է արժանի Լիտվայի Հանրապետության Սահմանադրության 6 հոդվածը, համաձայն որի՝ Սահմանադրությունն ամբողջական և անմիջական գործողություն ունեցող ակտ է: Անդրադառնալով սահմանադրական հիշյալ դրույթին՝ Լիտվայի Հանրապետության Սահմանադրական դատարանն ընդգծել է, որ սահմանադրական նորմերի «ամբողջականությունն» առաջին հերթին արտահայտվում է նրանում, որ այդ նորմերը փոխկապակցված են ոչ միայն ձևական առումով, ամրագրման կառուցվածքի տեսանկյունից, այլ նաև բովանդակությամբ: Այդ ամբողջականությունը կայանում է նրանում, որ ինչպես Սահմանադրության նախաբանը, այնպես էլ վերջինիս բաժիններն ու հոդվածները կազմում են բովանդակային ամբողջություն: Հետևաբար ակնհայտ է, որ կոնկրետ սահմանադրական նորմի բովանդակությունը բացահայտելիս այն չի կարելի մեկնաբանել սահմանադրական այլ դրույթներից մեկուսացված կերպով²²⁶: 1993թ. մարտի 5-ին ՌԴ Սահմանադրական դատարանի կողմից Գերագույն խորհրդին

ներկայացված «Ռուսաստանի Դաշնությունում սահմանադրական օրինականության վիճակի մասին» հաղորդման մեջ նույնպես ընդգծվել է, որ «չի կարելի հաշվի չառնել այն հանգամանքը, որ Սահմանադրությունը միասնական փաստաթուղթ է, և նրա բոլոր դրույթները պետք է դիտարկվեն փոխկապվածության, համակարգվածության համատեքստում»²²⁷:

Կարծում ենք, որ ՀՀ Սահմանադրության՝ որպես ընդհանուր համակարգի բաղկացուցիչ մաս հանդես գալու հանգամանքը դրսևորվում է մի քանի մակարդակներում, հետևաբար, համակարգային եղանակի կիրառման դեպքում վերջինիս մեկնաբանությունը կարելի է իրականացնել մի քանի հարթությունների տեսանկյունից: Առաջին մակարդակը ՀՀ իրավական համակարգն է: Հաշվի առնելով ՀՀ Սահմանադրության 5 հոդվածը, համաձայն որի՝ Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 1 հոդվածը, որին համապատասխան՝ արդարադատություն իրականացնելիս սահմանադրական դատարանն անկախ է և **ենթարկվում է միայն Սահմանադրությանը**, կարծում ենք, որ Սահմանադրության համակարգային մեկնաբանության տեսանկյունից առաջնային ու կարևորագույն հանգամանքը սահմանադրական նորմերի միջև գոյություն ունեցող կապերն են: Ակնհայտ է, որ սահմանադրական ցանկացած նորմ հանդիսանում է Սահմանադրության միասնական ու ամբողջական համակարգի բաղկացուցիչ մասը՝ սերտորեն փոխկապված լինե-

²²⁷ См. у Теория государства и права. курс лекций / Под ред. Матузова Н. И., Малько А.В., <http://www.bibliotekar.ru/teoriagosudarstvaiprava1/91.htm>, /Վերջին մուտք՝ 14.01.2014/:

²²⁶ См. у Гаджиев Х., նշված աշխատությունը, էջ 117:

լով սահմանադրական այլ դրույթների հետ: Հետևաբար, սահմանադրական յուրաքանչյուր նորմի բովանդակության բացահայտումն իրականացվում է ոչ միայն վերջինիս բառացի ընկալման, այլ հիշատակված նորմերի միջև տրամաբանական կապերի վերաբերյալ գիտելիքների կիրառման հիման վրա: Այլ կերպ՝ նորմի բովանդակությունը ճիշտ ընկալելու համար վերջինիս, այսպես կոչված, «սեփական» իմաստը համադրվում է այլ նորմերի բովանդակության հետ:

Այդ առումով հիշատակման է արժանի իրավաբանական գրականության մեջ արտահայտված այն տեսակետը, որ մեկնաբանության նպատակը ոչ թե Սահմանադրության առանձին սկզբունքների ընկալումն է, այլ դրանց փոխկապվածության կամ առնվազն համակեցության բացահայտումը: Սահմանադրությունն ամրագրում է տարրեր, որոնք պետք է համադրվեն ամբողջության մեջ, բայց այն չի ներկայացնում ամբողջի կազմակերպված պատկերը: Պատկերավոր ասած՝ Սահմանադրությունը՝ որպես ամբողջություն, նախասահմանված երևույթ չէ, այլ հանդիսանում է սահմանադրական քաղաքականության արդյունք²²⁸: Հիշյալ հիմնախնդրի տեսանկյունից հետաքրքիր է նաև Լիտվայի Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումը, համաձայն որի՝ Սահմանադրությունը միասնական ակտ է՝ բաղկացած տարատեսակ դրույթներից՝ սահմանադրական նորմերից և սկզբունքներից, որոնց միջև չի կարող լինել ու չկա որևէ հակասություն, և որոնք կազմում են ներդաշնակ համակարգ, սահմանադրական սկզբունքները բխում են Սահմանադրության ոգին արտահայտող սահմա-

նադրաիրավական կարգավորումների ամբողջականությունից, Սահմանադրության տառը չի կարող մեկնաբանվել կամ կիրառվել Սահմանադրության ոգուն հակասող եղանակով²²⁹:

Հիշյալ հիմնախնդիրը ՀՀ իրավական համակարգի հարթությունում վերլուծելիս անհրաժեշտ է հաշվի առնել և այն, որ մի շարք հարաբերությունների կարգավորման առնչությամբ Սահմանադրությունը հղում է կատարում տարատեսակ օրենքների: Կարծում ենք, որ մեկնաբանության քննարկվող եղանակը ենթադրում է համապատասխան սահմանադրական նորմերի իմաստի վերհանումը վերջիններիս համատեքստում: Այսպես, ՀՀ սահմանադրական դատարանը 4 փետրվարի 2011թ. ՄԴՈ-934 որոշմամբ արձանագրեց, որ, հաշվի առնելով ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի պահանջն առ այն, որ համապատասխան սուբյեկտները կարող են ՀՀ սահմանադրական դատարան դիմել «Սահմանադրությամբ և սահմանադրական դատարանի մասին օրենքով սահմանված կարգով», ինչպես նաև 100-րդ հոդվածի պահանջը, համաձայն որի՝ սահմանադրական դատարանն իրավական ակտերի դրույթների սահմանադրականությունը որոշում է «օրենքով սահմանված կարգով», ներկա իրավակարգավորման շրջանակներում, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածի 3-րդ մասի և 60-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն տվյալ գործի վարույթը ենթակա է կարճման՝ նույն օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ կետի հիմքով:

²²⁹ St' u Ruling No. No. 24/04 of The Constitutional Court of the Republic of Lithuania of 25 May 2004, <http://www.lrkt.lt/dokumentai/2004/r040525.htm>, /Վերջին մուտք՝ 14.01.2014/:

²²⁸ St' u Загребельский Г. Толкование законов: стабильность или трансформация? // Сравнительное конституционное обозрение. N 3(48)2004, էջ 81:

Վերը շարադրվածը, սակայն, չի նշանակում, որ հիշատակված օրենքները կարող են նախատեսել ցանկացած կարգավորում: Բոլոր դեպքերում ելակետային պետք է լինի այն, որ վերջիններս իրենց հերթին համապատասխանեն սահմանադրական պահանջներին ու կոնկրետ իրավակարգավորումն ամրագրեն դրանց շրջանակներում: Հենց այդ է պատճառը, որ Սահմանադրությամբ ամրագրված հիշյալ իրավական ակտերը նույնպես կարող են դառնալ սահմանադրական արդարադատության օբյեկտ: Այսպես, ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 15 ապրիլի 2008թ. ՄԴՈ-751 որոշմամբ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 19 հոդվածի պահանջներին հակասող և անվավեր ճանաչեց «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69 հոդվածի 12-րդ մասի դրույթներն այն մասով, որով սահմանափակվում է նոր հանգամանքների հիմքով այն անձանց իրավունքների վերականգնման հնարավորությունը, որոնց վերաբերյալ վերջնական դատական ակտի կայացման և տվյալ անձի նկատմամբ կիրառված օրենքի դրույթի սահմանադրականության հարցի վերաբերյալ այլ դիմումի (դիմումների) հիման վրա սահմանադրական դատարանում գործի դատաքննություն սկսելու օրվա կամ այդ հարցի վերաբերյալ սահմանադրական դատարանի որոշման ընդունման օրվա միջև ընկած ժամանակահատվածը չի գերազանցում վեց ամիսը:

Քննարկվող համատեքստում հիշատակման են արժանի նաև ՀՀ իրավական համակարգի բաղկացուցիչ մասը հանդիսացող միջազգային-իրավական փաստաթղթերը, մասնավորապես, ՀՀ կողմից վավերացված միջազգային պայմանագրերը՝ հաշվի առնելով վերջիններիս տրված առանձնահատուկ կարգավիճակը, երբ Սահմանադրությանը հակասող միջազ-

գային պայմանագրերը չեն կարող **վավերացվել**, ու եթե **վավերացված միջազգային պայմանագրում** սահմանվում են այլ նորմեր, քան նախատեսված են օրենքներով, ապա կիրառվում են այդ նորմերը: Օրինակ՝ ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 19 հունվարի 2010թ. ՄԴՈ-852 որոշման շրջանակներում անհրաժեշտ համարեց ՀՀ Սահմանադրության 20-րդ մասում ամրագրված՝ անձի՝ իր նկատմամբ կայացված դատավճռի՝ օրենքով սահմանված կարգով վերադաս դատարանի կողմից վերանայման իրավունքի սահմանադրաիրավական բովանդակությունը բացահայտել «... ինչպես նաև նշված իրավունքի կապակցությամբ Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների համատեքստում»՝ Եվրոպական կոնվենցիայի 7-րդ արձանագրության 2-րդ հոդվածում ամրագրված դրույթների վերլուծության և Եվրոպական դատարանի համապատասխան նախադեպային իրավունքի ուսումնասիրության հիման վրա կատարելով այն եզրահանգումը, որ քրեական գործերով բողոքարկման իրավունքի բովանդակությունը հանգում է նրան, որ քրեական գործով անձի դատապարտման կամ նշանակված պատժի վերանայման հնարավորությունը պետք է ապահովվի առնվազն մեկ վերադաս աստիճանով²³⁰:

Նշենք, որ ներկայացված վերլուծությունն առնչվում է նաև սահմանադրական նորմերի մեկնաբանության համար նշանակություն ունեցող հաջորդ հարթությանը, այն է՝ միջազգային իրավունքին: Այդ առումով, բացի հիշատակված միջազգային պայմանագրերից, ՀՀ սահմանադրական նորմերի բովանդակության բացահայտմանը կարող են նպաստել նաև միջազ-

²³⁰ Տե՛ս www.concourt.am:

գային-իրավական այլ փաստաթղթեր, ինչը, սակայն, ներկայացված հանգամանքների համեմատությամբ ունի օժանդակ նշանակություն:

Անդրադառնալով քննարկվող հիմնախնդրի տեսանկյունից կարևորություն ներկայացնող հաջորդ հարթությանը՝ նշենք, որ քանզի ՀՀ իրավական համակարգն ընդգրկված է աշխարհի իրավական քարտեզի շրջանակներում, ՀՀ Սահմանադրության մեկնաբանությունը կարող է իրականացվել նաև վերջինիս համատեքստում, և սահմանադրական նորմերի բովանդակությունը բացահայտելիս որպես օժանդակ միջոցներ կարող են օգտագործվել տարբեր իրավական համակարգերում գտնված լուծումները կոնկրետ հիմնախնդիրներին: Օրինակ՝ ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 30 հունիսի 2009թ. ՄԴՈ-810 որոշմամբ անդրադարձավ, այսպես կոչված, «կուսակցությունների դասալքության» կանխման տարբեր կառուցակարգային լուծումների առնչությամբ գոյություն ունեցող միջազգային պրակտիկային, մասնավորապես, Պորտուգալիայում, Իսպանիայում, ՌԴ-ում, Ուկրաինայում, Նորվեգիայում, Հնդկաստանում, Հարավաֆրիկյան Հանրապետությունում գտնված իրավական լուծումներին²³¹: Հարկ է նկատել, որ հիշյալ տեխնիկան կիրառում են նաև սահմանադրական արդարադատություն իրականացնող այլ մարմիններ, օրինակ՝ Լատվիայի սահմանադրական դատարանը, Էստոնիայի Գերագույն դատարանը²³²:

²³¹ Տե՛ս www.concourt.am:

²³² Տե՛ս CDLJU(2004)031, The Application of Different Techniques of Interpretation of the Constitution as a Factor of Its Development Thereof // Report by Mr Uno LÕHMUS (Chief Justice of the Supreme Court, Estonia), Strasbourg, 25 February 2004, <http://www.venice.coe.int/docs/2004/CDLJU%282004%29031e.pdf>:

Ամփոփելով ներկայացված վերլուծությունը՝ ընդգծենք, որ Սահմանադրության համակարգային մեկնաբանության տեսանկյունից առաջնահերթ նշանակություն ունի սահմանադրական նորմերի բովանդակության բացահայտումը դրանց միջև եղած տրամաբանական կապերի համատեքստում: Հիշատակված այլ հանգամանքները վերջինիս համեմատությամբ ունեն ածանցյալ, օժանդակ նշանակություն և կարող են սուսկ նպաստել քննարկվող նորմերի իմաստը վերհանելուն:

Վերը շարադրվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ համակարգային մեկնաբանությունը հանդիսանում է մեկնաբանության կարևորագույն եղանակներից մեկը, որը հնարավորություն է տալիս ոչ միայն **սահմանադրական նորմերի բովանդակությունը բացահայտել համակարգի այլ տարրերի հետ փոխկապվածության համատեքստում**, այլ մեկնաբանության ընթացքում հաշվի առնել այն պայմանները, որոնց շրջանակներում գործում է կոնկրետ նորմը, և իրականացնել Սահմանադրության **դինամիկ մեկնաբանություն**:

Թեև արդեն ներկայացրեցինք մեր այն տեսակետը, որ սահմանադրի կամքը և սահմանադրական նորմերի տառացի նշանակությունը չպետք է լինեն վերջիններիս բովանդակության բացահայտման միակ ելակետը, և վերլուծեցինք Սահմանադրության դինամիկ մեկնաբանության շրջանակներում կիրառվող մեկնաբանության եղանակները, սակայն այդ համատեքստում շարունակում է վիճահարույց մնալ այն հարցը, թե ինչ սահմաններում պետք է գործի ՀՀ սահմանադրական դատարանը սահմանադրական նորմերի բովանդակությունը բացահայտելիս, մասնավորապես, կարող է արդյոք վերջինս փոփոխություններ մտցնել հիշյալ նորմերի բովանդակության շրջանակներում:

Մեր մի շարք աշխատանքներում անդրադարձել ենք այն հանգամանքին, որ ՀՀ սահմանադրական դատարանն իր գործունեությունն իրականացնելիս, մասնավորապես, Սահմանադրությունը մեկնաբանելիս, ստեղծում է իրավական նորմեր²³³: Սակայն նոր նորմեր ստեղծելու հանգամանքը պարտադիր չէ, որպեսզի ենթադրի գործող կարգավորումներից չբխող նոր կարգավորում ստեղծելու միջոցով դրանց իմաստի փոփոխություն: Մեր կարծիքով, ՀՀ սահմանադրական դատարանի կողմից Սահմանադրության մեկնաբանության արդյունքում ստեղծվող նորմերի նպատակը պետք է լինի գործող սահմանադրական կարգավորումների համատեքստում վերջինիս բովանդակությունը բացահայտելը, սակայն ոչ հիշատակված շրջանակներից դուրս դրանում փոփոխություններ մտցնելը: Դա բխում է ՀՀ սահմանադրական կարգավորումների տրամաբանությունից: Աշխատանքի շրջանակներում խոսել ենք այն մասին, որ, հաշվի առնելով այն, որ Սահմանադրությունը հանդիսանում է կենսագոյի հիմնական կանոնների շուրջ **հասարակական համաձայնություն** և, որպես այդպիսին, ամրագրում է իրավական այն հիմնարար արժեքներն ու սկզբունքները, որոնք բնորոշ են սոցիալական հանրության պատմական տվյալ փուլին, նախատեսվել է այլ իրավական ակտերի համեմատությամբ ՀՀ Սահմանադրության ընդունման ու փոփոխման բավականին բարդեցված կարգ, և հստակորեն սահմանվել են այդ գործընթացի շրջանակներում ընդգրկված սուբյեկտները: Նշել ենք նաև, որ հիշատակված կարգավորմամբ

²³³ Տե՛ս, օրինակ, Մանասյան Ա. Սահմանադրական դատարանի որոշումների տեղը ՀՀ իրավական համակարգում և դրանց դերը Սահմանադրության կայունության ապահովման գործում, Երևան, 2013:

սահմանադիրը նպատակ է հետապնդել ոչ թե ընդհանրապես արգելել Սահմանադրության զարգացումն այլընտրանքային եղանակներով, այլ բացառել է այլ **սուբյեկտների կողմից Սահմանադրության փոփոխումը գործող սահմանադրական կարգավորումներից չբխող նոր կարգավորում ստեղծելու** միջոցով: Իսկ դա հիմք է տալիս եզրակացնելու, որ Սահմանադրությունը մեկնաբանելիս ՀՀ սահմանադրական դատարանը չի կարող ստեղծել գործող սահմանադրական կարգավորումներից չբխող նոր կարգավորում, այլ պետք է սահմանադրական նորմի բովանդակությունը բացահայտի և առաջացած կոնկրետ սահմանադրական հիմնախնդրի լուծումը վեր հանի դրանց համատեքստում՝ պահպանելով «ողջամիտ ինքնասահմանափակման» պահանջը: Այդ առումով հարկ ենք համարում հիշատակել նաև ամերիկյան սահմանադրական դոկտրինի շրջանակներում արտահայտված այն տեսակետը, որ Սահմանադրությունն ինքը պետք է լինի այն սահմանը, որի շրջանակներում մեկնաբանողը կարող է բացահայտել վերջինիս նորմերը²³⁴: Քննարկվող հիմնախնդրի տեսանկյունից հետաքրքիր է նաև Հունգարիայի սահմանադրական դատարանի կողմից Սահմանադրության մեկնաբանության առնչությամբ ձևավորված պրակտիկան, համաձայն որի՝ Սահմանադրական դատարանը գործում է իշխանությունների տարանջատման սկզբունքի հիման վրա. այն իր վրա չի վերցնում օրենսդրական գործունեության գործառույթները, այլ կոնկրետ սահմանադրական հիմնախնդրի պատասխանը փնտրում է Սահմանադ-

²³⁴ Տե՛ս Barber S. A., Fleming J. E. Constitutional Interpretation. Oxford University Press, 2007, էջ 172:

րության շրջանակներում²³⁵: Լիտվայի Սահմանադրական դոկտրինի համաձայն նույնպես՝ Սահմանադրական դատարանը Սահմանադրության շրջանակներում է փնտրում այն հարցերի պատասխանները, որոնք իրենց ուղղակի արտահայտությունը չեն գտել Հիմնական օրենքի տեքստում²³⁶:

Հետևաբար, մեկնաբանության սահմանների առնչությամբ քննարկվող հիմնախնդրի վերաբերյալ հիմնական եզրահանգումն այն է, որ ՀՀ սահմանադրական դատարանը Սահմանադրությունը մեկնաբանելիս հիմք է ընդունում ոչ միայն սահմանադրական նորմերի տառացի նշանակությունը կամ սահմանադրի կամքը, այլ վերջիններիս բովանդակությունը բացահայտում է մեկնաբանության հիշատակված բոլոր եղանակները կիրառելու միջոցով՝ մեկնաբանությունն իրականացնելով գործող սահմանադրական կարգավորումների շրջանակներում, հաշվի առնելով, այսպես կոչված, «ողջամիտ ինքնասահմանափակման» պահանջը և իր գործունեությունն իրականացնելով դրա համատեքստում: Այլ կերպ՝ սահմանադրական դատարանը չի ստեղծում գործող սահմանադրական կարգավորումներից չբխող նոր կարգավորում, չի վերացնում դրանք, այլ մեկնաբանության հիշատակված եղանակների միջոցով

²³⁵ Տե՛ս Հունգարիայի Սահմանադրական դատարանի՝ 45/2005 (XII. 14.) AB որոշումը, http://www.mkab.hu/letoltesek/en_0045_2005.pdf: «Հունգարիայի Սահմանադրական դատարանի մասին» օրենքի 38 հոդվածի համաձայն՝ Սահմանադրական դատարանը նույնիսկ Հիմնական օրենքի վերացական մեկնաբանությունը տալիս է սուկ այն դեպքերում, երբ այդ մեկնաբանությունը կարող է ուղղակիորեն բխեցվել Հիմնական օրենքից (տե՛ս <http://www.mkab.hu/jog/abtorveny/>, /Վերջին մուտք՝ 14.01.2014/):

²³⁶ Տե՛ս Birmontiene T. The Significance of Constitutional Review for the Development of Law // Альманах (Конституционное правосудие в новом тысячелетии). Ереван, 2011, էջ 85:

սահմանադրական նորմի բովանդակությունը բացահայտում և առաջացած կոնկրետ սահմանադրական հիմնախնդրի լուծումը վեր է հանում սահմանադրական գործող կարգավորումներից: Այդ առումով իրավաբանական գրականության մեջ ևս կարծիք է արտահայտվել այն մասին, որ մեկնաբանությունը ավարտվում է այնտեղ, որտեղ այն դուրս է գալիս Սահմանադրության բովանդակության հնարավոր նշանակության շրջանակներից²³⁷:

Վերը նշված հանգամանքի և սահմանադրական կարգավորումները փոփոխող նոր կարգավորում ստեղծելու տարբերություններն առավել հստակ մատնանշելու համար դրանք հարկ ենք համարում վերլուծել Հայաստանի Հանրապետությունում սահմանադրական արդարադատությունն իրականացնող մարմնի պրակտիկայի համատեքստում: ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 4 փետրվարի 2011թ. ՍԴՈ-934 որոշմամբ անդրադառնալով ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետում ամրագրված՝ «գլխավոր դատախազի վարություն գտնվող կոնկրետ գործ» արտահայտության սահմանադրաիրավական բովանդակության բացահայտմանը՝ արձանագրեց, որ քրեադատավարական առումով ՀՀ օրենսդրությունը չի հստակեցրել «ՀՀ գլխավոր դատախազի վարություն գտնվող կոնկրետ գործ» հասկացությունը: Հետևաբար, վերջինս չի կարող մեկնաբանվել ճյուղային-իրավական մեթոդաբանության կիրառման հիման վրա, և անհրաժեշտ է այն մեկնաբանել դրա սահմանադրական նշանակությանը համապատասխան՝ ՀՀ դատախազության սահմանադրական

²³⁷ Տե՛ս M. Constitutional Interpretation (in Continental Europe), http://ivrenc.info/index.php?title=Constitutional_Interpretation_%28in_Continental_Europe%29, /Վերջին մուտք՝ 14.01.2014/:

լիազորությունների շրջանակներում: Դատարանն ընդգծեց, որ կոնկրետ դատական սահմանադրական վերահսկողության ձևի կիրառման շրջանակներում ՀՀ Սահմանադրությունը ՀՀ սահմանադրական դատարանն ղիմող սուբյեկտ ճանաչելով ՀՀ գլխավոր դատախազին՝ առաջին հերթին հաշվի է առել Սահմանադրության 103-րդ հոդվածի 1-ին մասի այն դրույթը, համաձայն որի՝ «Հայաստանի Հանրապետության դատախազությունը միասնական համակարգ է, որը ղեկավարում է գլխավոր դատախազը»: Ուստի սահմանադրաիրավական առումով «գլխավոր դատախազի վարույթ» հասկացությունը համարժեք է «ՀՀ դատախազության վարույթ» հասկացությանը: «Իր վարույթ» հասկացության առնչությամբ սահմանադրական դատարանը նշեց, որ գործող օրենսդրության համաձայն մինչդատական վարույթն իրականացնում են հետաքննության և նախաքննության մարմինները, իսկ դատախազությունը հսկողություն է իրականացնում հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ: Դատական քննության փուլում վարույթն իրականացնում է դատարանը, իսկ դատախազությունը դատարանում պաշտպանում է մեղադրանքը: «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության 2007 թվականի նոյեմբերի 28-ի ՀՕ-270-Ն օրենքի հիման վրա դատախազն այլևս նախաքննություն իրականացնելու իրավասություն չունի, ուստի այս իմաստով չի կարող որևէ գործ իր վարույթ ընդունել կամ իրականացնել: Եթե ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետում օգտագործվող «իր վարույթում գտնվող կոնկրետ գործով» հասկացությունն ընկալվի գուտ դրա քրեադատավարական իմաստով, ապա կստացվի, որ ՀՀ

գլխավոր դատախազի այս լիազորության իրականացումը դառնում է անհնարին, քանի որ այդ լիազորության իրականացման համար ՀՀ գլխավոր դատախազը տվյալ գործը պետք է ընդունի իր վարույթ և հանդես գա որպես վարույթն իրականացնող մարմին, որի իրավասությունը չունի: Հետևաբար, ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրեց, որ ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետում օգտագործվող «իր վարույթում գտնվող կոնկրետ գործով» հասկացությունը մեկնաբանելիս պետք է հիմք ընդունել այդ հասկացության սահմանադրաիրավական նշանակությունը՝ ելնելով ՀՀ Սահմանադրության 103-րդ հոդվածում նախատեսված ՀՀ դատախազության սահմանադրական լիազորությունների բովանդակությունից: Դատարանն ընդգծեց, որ «իր վարույթ» հասկացության առավել լայն մեկնաբանությունը ենթադրում է, որ վերջինս վերաբերում է բոլոր այն դեպքերին, երբ տվյալ փուլում այդ գործով վերջնական իրավական ակտ ընդունելու իրավասությամբ օժտված է հենց այդ մարմինը: ՀՀ Սահմանադրությունը ՀՀ գլխավոր դատախազին ճանաչելով որպես կոնկրետ վերահսկողության շրջանակներում ՀՀ սահմանադրական դատարանն ղիմող սուբյեկտ՝ սահմանադրաիրավական իմաստով «կոնկրետ գործը» դիտարկում է դատախազության լիազորությունների իրականացում բոլոր այն դեպքերում, երբ այդ մարմինն իր սահմանադրական գործառնությունների շրջանակներում իրավասու է կայացնելու վերջնական որոշում:

Հետևաբար, վերը նշված գործի շրջանակներում ՀՀ սահմանադրական դատարանը, կիրառելով մեկնաբանության հիշատակված եղանակները, կոնկրետ սահմանադրական նորմին տվեց դրա տառացի նշանակությունից տարբերվող մեկնաբանություն: Սակայն դրանով դատարանը ոչ թե ստեղծեց

գործող սահմանադրական կարգավորումներից չբխող նոր կարգավորում, այլ նորմի բովանդակությունը բացահայտեց և առաջացած սահմանադրական հիմնախնդրի լուծումը վերհանեց դրանց շրջանակներում: Այլ կլիներ իրավիճակն այն դեպքում, երբ սահմանադրական դատարանն ամրագրեր հիշատակված դիրքորոշումը, սակայն այդ եզրահանգումը չբխեր սահմանադրական այլ նորմերի համադրված վերլուծությունից և հիմնախնդրին առնչվող կարգավորումների տրամաբանությունից: Տվյալ պարագայում խոսք կգնար ոչ թե սահմանադրական նորմի մեկնաբանության, այլ գործող կարգավորումներից չբխող նոր կարգավորում ստեղծելու մասին: Ուստի, հենց վերը նշված հանգամանքն է անհրաժեշտ հաշվի առնել քննարկվող հասկացությունների իմաստն ու դրանց գործողության շրջանակները վերլուծելու ու տարբերակելու ընթացքում²³⁸:

²³⁸ Միննույն ժամանակ հարկ է նկատի ունենալ, որ կան որոշ սահմանադրական դատարաններ, որոնք սահմանադրական նորմերը մեկնաբանելիս առանձին դեպքերում ստեղծում են գործող կարգավորումներից չբխող նոր կարգավորում: Օրինակ՝ ՌԴ Սահմանադրական դատարանը ՌԴ Սահմանադրության 137 հոդվածի 2-րդ մասի մեկնաբանության գործով նշեց, որ հանրապետության, մարզի, երկրամասի, ֆեդերալ նշանակության քաղաքի, ինքնավար մարզի, ինքնավար շրջանի անվանումների փոփոխությունները ՌԴ Սահմանադրության 137 հոդվածի 2-րդ մասին համապատասխան ընդգրկվում են ՌԴ Սահմանադրության 65 հոդվածում ՌԴ Նախագահի կարգադրությամբ՝ սահմանված կարգով ընդունված ՌԴ սուբյեկտի որոշման հիման վրա (տե՛ս ՌԴ Սահմանադրական դատարանի 28 նոյեմբերի 1995թ. որոշումը ՌԴ Սահմանադրության 137 հոդվածի 2-րդ մասի մեկնաբանության գործով

(<http://www.constitution.ru/decisions/10005627/10005627.htm>): Մինչդեռ հարկ է նկատել, որ թեև հիշյալ սահմանադրական դրույթը չի նախատեսում, թե որ սուբյեկտը և ինչպես է ընդգրկվում քննարկվող փոփոխությունը ՌԴ Սահմանադրության 65 հոդվածում, սակայն Սահմանադրության 136 հոդվածը սահմանում է, որ ՌԴ Սահմանադրության 38րդ գլուխների (որոնց շրջանակներ

Վերը շարադրվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ ՀՀ Սահմանադրական դատարանի կողմից Սահմանադրության մեկնաբանությունն ու վերջինիս շրջանակներում «ողջամիտ ինքնասահմանափակման» սկզբունքի պահպանումը ենթադրում են սահմանադրական նորմի բովանդակության բացահայտումն ու առաջացած սահմանադրական հիմնախնդրի լուծման վերհանումը գոյություն ունեցող սահմանադրական կարգավորումներից, և այդ ընթացքում մեկնաբանության եղանակների ոչ թե մեկուսացած, այլ փոխհամաձայնեցված օգտագործում²³⁹: Ընդ որում՝ պարտադիր չէ, որպեսզի Սահմանադրության մեկնաբանությունը լինի տառացի: Այն կարող է լինել նաև տարածական²⁴⁰ կամ սահմանափակ²⁴¹: Սակայն բոլոր

րում ընդգրկված է նաև 65 հոդվածը) փոփոխություններն ընդունվում են ֆեդերալ սահմանադրական օրենքի ընդունման համար նախատեսված կարգով և ուժի մեջ են մտնում ՌԴ սուբյեկտների ոչ պակաս, քան երկու երրորդի օրենսդիր մարմինների կողմից հաստատվելուց հետո, այսինքն՝ բոլորովին այլ կարգ է ամրագրում հիշյալ սահմանադրական նորմերում փոփոխություններ կատարելու համար: Ավելին, ՌԴ Սահմանադրությունը, ամրագրելով ՌԴ Նախագահի լիազորությունները համապատասխան բնագավառներում, չի նախատեսում նմանատիպ լիազորություն: Հետևաբար, կարծում ենք, որ վերը նշված սահմանադրական նորմը մեկնաբանելիս ՌԴ Սահմանադրական դատարանը, ըստ էության, ստեղծել է գործող սահմանադրական կարգավորումներից չբխող նոր կարգավորում:

²³⁹ Այդ առումով հիշատակման է արժանի Շվեյցարիայի Դաշնային Գերագույն դատարանի պրակտիկան, որը կիրառում է «մեկնաբանության մեթոդների պլուրալիզմ» և «դրանք չի դասակարգում որոշակի հիերարխիկ համակարգում՝ ըստ կարևորության աստիճանի» (տե՛ս How Constitutions Change (A Comparative Study) / edited by Oliver D., Fusaro C., Oxford and Portland, Oregon, 2011, էջ 313):

²⁴⁰ Օրինակ՝ ՀՀ Սահմանադրության 101րդ հոդվածի 1ին մասի 7-րդ կետում ամրագրված՝ «զլխավոր դատախազի վարությամբ գտնվող կոնկրետ գործ» արտահայտության հիշատակված մեկնաբանությունը:

²⁴¹ Օրինակ՝ ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 4 մայիսի 2010թ. ՄԴՈ-881 որոշմամբ ՀՀ Սահմանադրության 14.1 հոդվածով ամրագրված օրենքի

դեպքերում այդ մեկնաբանությունը պետք է լինի այնպիսին, որպեսզի վերջինիս շրջանակներում ապահովվի ՀՀ Սահմանադրության կայունությունը, զարգացումը, գերակայությունն ու անմիջական գործողությունը՝ որպես ելակետ ունենալով այն, որ Հայաստանի Հանրապետությունում մարդն է բարձրագույն արժեք, և հիմք ընդունելով իշխանությունների բաժանման ու հավասարակշռման սկզբունքի ապահովման անհրաժեշտությունը:

§ 2. Սահմանադրական մարմինների միջև իրենց սահմանադրական լիազորությունների առնչությամբ առաջացող վեճերն ու դրանց հաղթահարման սահմանադրական ճանապարհները՝ որպես սահմանադրական կայունության կարևորագույն երաշխիք

Սահմանադրական մարմինների միջև իրենց սահմանադրական լիազորությունների առնչությամբ առաջացող վեճերի լուծման իրավական կառուցակարգերն ու դրանց պատշաճ կենսագործումը բացառիկ կարևորություն ունեն սահմանադրական կայունությունն ու կայուն ժողովրդավարությունը ե-

առջև բոլորի հավասարության սահմանադրական սկզբունքին տվեց սահմանափակ մեկնաբանություն՝ իրավական դիրքորոշում արտահայտելով այն մասին, որ վերջինս ենթադրում է օրենքի առջև հավասար պատասխանատվության, պատասխանատվության անխուսափելիության և իրավական պաշտպանության հավասար պայմանների ապահովում, և չի առնչվում իրավական տարբեր կարգավիճակ ունեցող սուբյեկտների համար որևէ իրավաչափ նպատակով պայմանավորված նախադրյալներ՝ տվյալ դեպքում սոցիալական անկախության երաշխիքներ նախատեսելու կամ իրավունքի տվյալ կատեգորիայի սուբյեկտների համար լրացուցիչ պարտականություններ սահմանելուն (տե՛ս www.concourt.am):

րաշխավորելու տեսանկյունից:

Բնական է, որ սահմանադրական մարմինների կողմից իրենց սահմանադրական լիազորությունների իրականացման ընթացքում անխուսափելի են միմյանց հետ անընդհատ փոխհարաբերությունները: Ավելին՝ դրանք հաճախ հետևանք են լիազորությունների խաչաձևման, կոնկրետ մարմնի լիազորության իրացումը մեկ այլ մարմնի լիազորության իրացմամբ պայմանավորված լինելու և այլ նմանատիպ հանգամանքների: Արդյունքում՝ անխուսափելի են նաև տարատեսակ մարմինների միջև հնարավոր տարաձայնությունները նշված լիազորությունների առնչությամբ, որոնք գրականության մեջ քննարկվում են «վեճ» հասկացության ներքո:

Բառարանային ձևակերպմամբ «վեճ» հասկացությունը բնութագրվում է որպես մրցակցություն, որի շրջանակներում կողմերից յուրաքանչյուրն իր կարծիքն է պնդում²⁴²: Իսկ դասական կոնֆլիկտաբանությունը վեճը ներկայացնում է որպես անհատների կամ խմբերի փոխազդեցություն, որը, մի կողմից, դրսևորվում է որպես այդ փոխազդեցության մասնակիցների հակազդեցություն, իսկ մյուս կողմից, որպես նրանց միջև տեսակետների, շահերի առնչությամբ առաջացող հակասությունների լուծման միջոց՝ սոցիալական փոխազդեցության պոզիտիվ գործընթացի շարունակման նպատակով²⁴³:

Առաջին հերթին նշենք, որ, մեր կարծիքով, սահմանադրական վեճերի լուծման քաղաքակիրթ ճանապարհը իրավա-

²⁴² Տե՛ս Ушаков Д. Толковый словарь русского языка Ушакова. 2012, <https://slovar.cc/rus/ushakov/455507.html>, /Վերջին մուտք՝ 10.04.2018/:

²⁴³ Տե՛ս Маврин С. Роль Конституционного Суда Российской Федерации в урегулировании конституционных конфликтов // Альманах (Конституционное правосудие в новом тысячелетии). Ереван, 2017, էջ 79:

կան հարթությունում դրանց հաղթահարման հնարավորությունն է: Պատճառն այն է, որ, ինչպես նշեցինք, իշխանության իրացման ընթացքում հիշյալ վեճերի առաջացումն անուսափելի է, ուստի անուսափելի է նաև վերջիններիս լուծման համար հնարավորությունների փնտրտուքը: Հետևաբար, ակնհայտ է, որ քննարկվող վեճերի հաղթահարման իրավական ճանանապարհների բացակայության պայմաններում դրանց լուծման համար այսպես թե այնպես գտնվելու են լուծումներ, սակայն վերջիններս փնտրվելու են սոսկ քաղաքական հարթությունում, «կուլիսների հետևում»: Այդ է պատճառը, որ բազմաթիվ երկրներում նախատեսված են նմանատիպ վեճերի լուծման իրավական հնարավորություններ, մասնավորապես, սահմանադրական դատարանների կողմից վերջիններիս քննարկման և լուծման հնարավորություն: Որպես օրինակ կարելի է հիշատակել Գերմանիայի, Ավստրիայի, Ռուսաստանի, Բուլղարիայի, Վրաստանի, Հունգարիայի, Չեխիայի, Իտալիայի, Լեհաստանի, Սլովենիայի, Ադրբեջանի, Իսպանիայի և որոշ այլ երկրների սահմանադրական դատարանների կողմից սահմանադրական վեճերի լուծման առանձին լիազորության իրականացման հնարավորության առկայությունը²⁴⁴:

Հիշյալ համատեքստում կարևոր է նկատի ունենալ, որ նույնիսկ այն դեպքերում, երբ Սահմանադրական դատարանը չունի սահմանադրական մարմինների միջև քննարկվող վեճերը լուծելու առնչությամբ առանձին լիազորություն, վերջինս հաճախ անդրադառնում է նման վեճերի՝ իր այլ լիազորությու-

²⁴⁴ Տե՛ս Հարությունյան Գ., Մանասյան Ա. Սահմանադրական վերահսկողություն. Ուսումնական ձեռնարկ բուհերի համար (լրամշակված վերահրատարակություն), Երևան, Իրավունք հրատ. 2015, էջ 137:

յունների իրացման շրջանակներում: Ավելին, հիշյալ ինքնուրույն լիազորության առկայության պայմաններում էլ նման գործերի քննության պրակտիկան էականորեն տարբերվում է տարատեսակ երկրներում:

ՌԴ Սահմանադրական դատարանն, օրինակ, օժտված լինելով իրավասության հարցերով վեճերի լուծման ինքնուրույն լիազորությամբ, ունի հիշյալ գործերի քննության չափազանց սահմանափակ պրակտիկա: 2017թ. դրությամբ վերջինս կայացրել էր հիշյալ գործերով սոսկ մեկ ըստ էության որոշում: Միննույն ժամանակ, Սահմանադրական դատարանը լուծել է սահմանադրական մի շարք վեճեր իր այլ լիազորությունների իրականացման շրջանակներում²⁴⁵: Հիշյալ գործերով բավականին սահմանափակ դատական պրակտիկա է առկա նաև Ավստրիայում, Գերմանիայում, Իտալիայում և այլն²⁴⁶:

Միննույն ժամանակ, առանձին երկրներում Սահմանադրական դատարանի հիշյալ լիազորությունն ունի կարևոր նշանակություն սահմանադրական վեճերի հաղթահարման տեսանկյունից, ուստի, առկա է նաև նշված գործերի քննության բավականին հարուստ պրակտիկա: Ռումինիայում, օրինակ, 2017թ. դրությամբ իրավական վեճերի լուծման հարցով Սահմանադրական դատարան է ներկայացվել 26 դիմում, որոնցից 14-ում որպես վեճի կողմ է հանդես եկել Ռումինիայի Նախագահը: Ընդ որում՝ Սահմանադրական դատարանը նշված 14 գործերից միայն 5-ի դեպքում է արձանագրել սահմանադրաի-

²⁴⁵ Տե՛ս Маврин С. Նշված աշխատությունը, էջ 79-92:

²⁴⁶ Տե՛ս Тохян Ф. Роль и полномочия органов конституционного правосудия в решении компетенционных споров (практика Армении и международный опыт) // Альманах (Конституционное правосудие в новом тысячелетии). Ереван, 2017, էջ 131:

րավական վեճի առկայություն²⁴⁷: Մլովենիայի Սահմանադրական դատարանը միայն 2005թ. ընթացքում լուծել է իրավասությունների հարցով 60 վեճ²⁴⁸: Գրականության մեջ հիշատակվում է նաև Իսպանիայի Սահմանադրական դատարանի օրինակը, որը, լուծելով պետության և ինքնավար համայնքների միջև վեճերը, արդյունավետորեն արբիտրի դեր է կատարել պետության և ինքնավար համայնքների միջև հայտնի լարվածությունը մեղմելու տեսանկյունից²⁴⁹:

Մինչ 2015թ. սահմանադրական փոփոխությունները Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանը չունեի սահմանադրական վեճերի լուծման ինքնուրույն լիազորություն: Միննույն ժամանակ, իր այլ լիազորությունների իրականացման համատեքստում վերջինս առանձին դեպքերում փաստացի լուծել է լիազորությունների հարցով վեճեր: Օրինակ՝ 28 մարտի 2017թ. ՄԴՈ-1359 որոշմամբ ՀՀ Սահմանադրական դատարանն, ըստ էության լուծեց ՀՀ Գլխավոր դատախազի և Վճռաբեկ դատարանի միջև վեճ՝ Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.4-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի՝ «կամ այն ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող, սակայն որոշման եզրափակիչ մասում բացահայտելով դրա

սահմանադրաիրավական բովանդակությունը՝ գտել է, որ այդ դրույթը կիրառվել է այլ մեկնաբանությամբ» դրույթում «եզրափակիչ մասում» բառակապակցությունը այնքանով, որքանով դրա առկայության պայմաններում ՀՀ գլխավոր դատախազի կամ նրա տեղակալների կողմից օրենքով սահմանված կարգով նոր հանգամանքի հիմքով բերված վճռաբեկ բողոքի շրջանակներում Սահմանադրական դատարանի որոշման պատճառաբանական մասում ամրագրված՝ իրավանորմի սահմանադրաիրավական բովանդակությունը բացահայտող իրավական դիրքորոշումները դատական պրակտիկայում հիմք չեն ընդունվում բողոքի ընդունելության և քննության շրջանակներում: Հիշյալ գործով Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչվեցին նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 407-րդ հոդվածի 2.2-րդ մասի 2-րդ կետի և 414.2-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետում **«եզրափակիչ մասում»** բառակապակցությունները, քանի որ իրավակիրառ պրակտիկայում դրանց տրված բովանդակության շրջանակներում նման ձևակերպման առկայությունը նոր հանգամանքի հետ չկապված վճռաբեկ բողոք բերելիս վճռաբեկ բողոք բերելու իրավունք ունեցող անձին հնարավորություն չէր տալիս իր դիրքորոշումը հիմնավորելու համար վկայակոչել Սահմանադրական դատարանի որոշման այլ մասերում (բացի եզրափակիչ մասից) արտահայտված՝ իրավանորմի սահմանադրաիրավական բովանդակությունը բացահայտող իրավական դիրքորոշումները, ինչը հաշվի պետք է առնվի բողոքը քննելիս²⁵⁰:

4 փետրվարի 2011թ. ՄԴՈ-934 որոշմամբ ևս ՀՀ Սահմա-

²⁵⁰ Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 28 մարտի 2017թ. ՄԴՈ-1359 որոշում:

²⁴⁷ St' u Simion M. Constitutional Legal Disputes between the President of Romania and Other Public Authorities in the Case-Law of the Constitutional Court of Romania // Agora International Journal of Juridical Sciences, N 2 (2017), Agora University Press, Oradea, Romania, էջ 90:

²⁴⁸ St' u CDL-JU (2005)066, “Disputes Regarding the Competences Between the State Powers Before the Constitutional Court – International Experience”, by Mavcic A., Strasbourg, 8th January 2006, [²⁴⁹ St' u Тохян Ф. նշված աշխատությունը, էջ 131:](http://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-JU(2005)066-e, /Վերջին մուտք՝ 10.04.2018/:</p></div><div data-bbox=)

նադրական դատարանն, ըստ էության, լուծել է իրավասության հարցով վեճ դատախազության և դատական իշխանության մարմինների միջև: Ավելին, Դատարանն արձանագրել է, որ «ՀՀ սահմանադրական դատարանը, հաշվի առնելով սահմանադրական արդարադատության միջազգային պրակտիկան, գտնում է, որ ստեղծված իրավիճակը դասական առումով պետական իշխանության մարմինների միջև սահմանադրական լիազորությունների շուրջ ծագած վեճ է, որը, որպես կանոն, պետք է լուծվի բացառապես սահմանադրական դատարանների կողմից՝ վերջիններիս Սահմանադրությամբ նախատեսված համարժեք լիազորության առկայության պարագայում: ՀՀ սահմանադրական դատարանը նման լիազորությամբ օժտված չէ, ինչը նաև խոչընդոտում է Սահմանադրության գերակայության լիարժեք երաշխավորումը: ՀՀ սահմանադրական դատարանն այս հիմնախնդրին անդրադարձել է նաև իր տարեկան հաղորդումներում:

Ելնելով հիմնախնդրի կարևորությունից ու արդարադատության արդյունավետության երաշխավորման անհրաժեշտությունից, նկատի ունենալով, որ վեճի առարկայի շրջանակներում հակադիր մոտեցումները հիմնավորելիս վկայակոչվում են ՀՀ սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները, ինչպես նաև հաշվի առնելով հիշյալ գործի քննության կոնկրետ առանձնահատկությունները և «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջները՝ ՀՀ սահմանադրական դատարանը կարևոր է համարում իր սահմանադրական լիազորությունների շրջանակներում անդրադառնալ սույն վեճի առարկային՝ թե՛ ըստ ձևի և թե՛ ըստ բովանդակության վերահսկողության

շրջանակներում»: Արդյունքում՝ ՀՀ Սահմանադրական դատարանը կարճել է համապատասխան գործի վարույթը՝ միննույն ժամանակ արտահայտելով քննարկվող հիմնախնդրի համար առանցքային նշանակություն ունեցող իրավական դիրքորոշումներ, որոնք ուղենիշային են դարձել նշված բնագավառում համարժեք իրավակիրառ պրակտիկայի ձևավորման տեսանկյունից²⁵¹:

Վերը շարադրվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ չունենալով սահմանադրական վեճերի լուծման առանձին լիազորություն, ՀՀ Սահմանադրական դատարանը հաճախ անդրադարձել է նման վեճերի՝ դրանք քննարկելով և համապատասխան լուծումներ առաջարկելով իր այլ լիազորությունների իրացման շրջանակներում:

2015թ. սահմանադրական բարեփոխումների արդյունքում ՀՀ Սահմանադրությամբ սահմանադրական մարմինների միջև սահմանադրական վեճերի լուծման լիազորություն ամրագրվեց նաև ՀՀ սահմանադրական դատարանի համար: ՀՀ Սահմանադրության 168 հոդվածի համաձայն, մասնավորապես, Սահմանադրական դատարանը Սահմանադրական դատարանի մասին օրենքով սահմանված կարգով՝ լուծում է սահմանադրական մարմինների միջև նրանց սահմանադրական լիազորությունների առնչությամբ առաջացող վեճերը: Իսկ Սահմանադրության 169 հոդվածին համապատասխան՝ նշված գործերով Սահմանադրական դատարան կարող են դիմել պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդը, Հանրապետության նախագահը, Կառավարությունը,

²⁵¹ Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 4 փետրվարի 2011թ. ՄԴՈ-934 որոշում:

Բարձրագույն դատական խորհուրդը և տեղական ինքնակառավարման մարմինները: «Սահմանադրական դատարանի մասին» 17.01.2018թ. ՀՀ սահմանադրական օրենքն իր հերթին սահմանեց սահմանադրական դատարանի կողմից հիշյալ լիազորության իրականացման կարգը: Ուստի, հաշվի առնելով սահմանադրական կայունությունն ու կայուն ժողովրդավարությունը երաշխավորելու տեսանկյունից սահմանադրական մարմինների միջև իրենց սահմանադրական լիազորությունների առնչությամբ առաջացող վեճերի հաղթահարման սահմանադրական ճանապարհների առկայության ու դրանց պատշաճ իրացման կարևորությունը, հիշյալ համատեքստում հարկ ենք համարում անդրադառնալ վերջիններիս առանձնահատկությունների ուսումնասիրությանը:

Քննարկվող լիազորության էության ամբողջական բացահայտման համար անհրաժեշտ ենք համարում առաջին հերթին համեմատական վերլուծության ենթարկել ներկայացված սահմանադրական նորմերն ու «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքով ամրագրված համապատասխան իրավակարգավորումները, քանզի հենց դրանք են ամրագրում նշված գործերի քննության առանձնահատկություններն ու հնարավորություն են տալիս լիարժեք պատկերացում ունենալու Հայաստանի Հանրապետությունում սահմանադրական մարմինների միջև իրենց սահմանադրական լիազորությունների առնչությամբ վեճերի հաղթահարման իրավական ճանապարհների մասին: «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 75 հոդվածը, մասնավորապես, նախատեսում է.

«Հոդված 75. Սահմանադրական մարմինների միջև նրանց

սահմանադրական լիազորությունների առնչությամբ առաջացած վեճերի վերաբերյալ գործերի քննությունը

1. Սույն հոդվածում նշված գործերով Սահմանադրական դատարան կարող են դիմել պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդը՝ Ազգային ժողովի և Ազգային ժողովի մարմինների սահմանադրական լիազորությունների առնչությամբ առաջացած վեճերով, Հանրապետության նախագահը, Կառավարությունը, Բարձրագույն դատական խորհուրդը և տեղական ինքնակառավարման մարմինները՝ իրենց սահմանադրական լիազորությունների առնչությամբ առաջացած վեճերով:

2. Սույն հոդվածում նշված գործերով Սահմանադրական դատարան դիմում կարող է ներկայացվել վիճարկվող գործողությունը կատարելու, անգործության մասին հայտնի դառնալու կամ իրավական ակտն ընդունելու օրվանից հետո՝ եռամսյա ժամկետում:

3. Սույն հոդվածում նշված գործերով որպես պատասխանող կողմ կարող է հանդես գալ Հանրապետության նախագահը, Ազգային ժողովը և Կառավարությունը:

4. Սույն հոդվածում նշված գործերով ներկայացված դիմումը պետք է պարունակի հիմնավորումներ առ այն, որ պատասխանողի գործողությունը, անգործությունը կամ իրավական ակտը խախտում է դիմող կողմին կամ նրա կողմից ներկայացված մարմնին Սահմանադրությամբ վերապահված լիազորությունները կամ դրանց խախտման անմիջական վտանգ է ստեղծում:

5. Սույն հոդվածում նշված գործերով դատաքննությունն իրականացվում է գրավոր ընթացակարգով: Սահմանադրա-

կան դատարանի պատճառաբանված աշխատակարգային որոշմամբ գործի դատաքննությունը կարող է իրականացվել բանավոր ընթացակարգով:

6. Սույն հոդվածում նշված գործերով ապացուցման բեռը կրում է դիմող կողմը:

7. Սույն հոդվածում նշված գործերով Սահմանադրական դատարանը որոշում է ընդունում դիմումը մուտքագրելուց ոչ ուշ, քան երեք ամիս հետո: Սահմանադրական դատարանի պատճառաբանված աշխատակարգային որոշմամբ գործի քննության ժամկետը կարող է երկարաձգվել, բայց ոչ ավելի, քան երեք ամսով:

8. Սահմանադրական դատարանը, մեկնաբանելով Սահմանադրության համապատասխան դրույթը, սահմանադրական մարմինների միջև նրանց լիազորությունների վերաբերյալ վեճերով ընդունում է հետևյալ որոշումներից որևէ մեկը.

1) վիճարկվող լիազորության իրականացմամբ պատասխանողի կատարած գործողությունը կամ ցուցաբերած անգործությունը կամ ընդունված իրավական ակտը ճանաչում է Սահմանադրությանը համապատասխանող.

2) վիճարկվող լիազորության իրականացմամբ պատասխանողի կատարած գործողությունը կամ ցուցաբերած անգործությունը ճանաչում է Սահմանադրությանը հակասող, իսկ ընդունված իրավական ակտը՝ ամբողջությամբ կամ մասամբ Սահմանադրությանը հակասող և անվավեր.

3) ճանաչում է վիճարկվող լիազորությունն իրականացնելու իրավասություն ունեցող՝ դատավարության կողմ չհանդիսացող սահմանադրական մարմին և այդ հիմքով կարճում է գործի վարույթը:

9. Սույն հոդվածի 8-րդ մասի 2-րդ կետով նախատեսված դեպքում Սահմանադրական դատարանը գնահատում է նաև Սահմանադրությանը հակասող գործողության, անգործության կամ իրավական ակտի հիմք հանդիսացող նորմատիվ իրավական ակտի կամ դրա որևէ դրույթի սահմանադրականությունը և, հանգելով դրա՝ Սահմանադրությանը հակասելու համոզմանը, իրավասու է այդ նորմատիվ իրավական ակտը կամ դրա համապատասխան դրույթը ճանաչելու Սահմանադրությանը հակասող և անվավեր»:

Ներկայացված սահմանադրական և օրենսդրական կարգավորումները հիմք են տալիս եզրակացնելու, որ նշված գործերով սահմանադրական արդարադատության օբյեկտ են հանդիսանում ***սահմանադրական մարմինների միջև իրենց սահմանադրական լիազորությունների առնչությամբ վեճերը***: Ընդ որում՝ օրենսդրությունը, հստակեցնելով, թե կոնկրետ որ մարմինների միջև վեճերի մասին է խոսքը, այն է՝ պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի, Հանրապետության նախագահի, Կառավարության, Բարձրագույն դատական խորհրդի և տեղական ինքնակառավարման մարմինների, միննույն ժամանակ, ըստ էության, չի հստակեցնում նշված վեճերի բովանդակությունն ու դրան առնչվող առանձնահատկությունները: Որոշ երկրներում, սակայն, հստակ օրենսդրական կարգավորում են ստացել այն հարցերը, թե որ դեպքերում և որ վեճերը կարող են քննարկման առարկա դառնալ սահմանադրական դատարանում: Լեհաստանի Սահմանադրական տրիբունալն, օրինակ, լուծում է իշխանության առնչությամբ առաջացող վեճերը, երբ. 1. առնվազն երկու սահմանադրական մարմիններ իրենց իրավասու են համարում

լուծելու միևնույն հարցը կամ որոշում են կայացրել այդ հարցով, 2. առնվազն երկու սահմանադրական մարմիններ կարծում են, որ իրենք չունեն կոնկրետ հարցը լուծելու իրավասություն²⁵²: Նույն հանգամանքն արձանագրվում է նաև Ռուսի-նիայի Սահմանադրական դատարանի կողմից նշված վեճերի քննության տեսանկյունից: Վերջինս, մասնավորապես, իրավասու է լուծել լիազորությունների հարցերով վեճերը ինչպես դրական վեճերի պարագայում, երբ երկու կամ ավելի պետական մարմիններ հայտարարում են, որ ունեն իրավասություն կարգավորելու կամ լուծելու միևնույն հարցը, այնպես էլ բացասական վեճերի դեպքում, երբ երկու կամ ավելի պետական մարմիններ մերժում են իրենց իրավասության առկայությունը կամ հրաժարվում են իրականացնել իրենց պարտականությունների համատեքստում ընդգրկվող որոշակի գործողություններ: Ավելին, Ռուսիանիայի Սահմանադրական դատարանը նշել է, որ սահմանադրական վեճերի բովանդակությունը վերաբերում է նաև այնպիսի վիճելի իրավական վիճակներին, որոնք ուղղակիորեն բխում են Սահմանադրությունից²⁵³: «Գերմանիայի Դաշնային Սահմանադրական դատարանի մասին» օրենքի 63 հոդվածի համաձայն՝ սահմանադրական մարմինների միջև վեճերի առնչությամբ դիմումները կարող են ընդունվել քննության, եթե դիմողը պնդում է, որ պատասխանողի

²⁵² «Սահմանադրական տրիբունալի կազմավորման և Սահմանադրական տրիբունալում գործերի քննության կարգի մասին» 30 նոյեմբերի 2016թ. Լեհաստանի Հանրապետության օրենքի 85 հոդված, http://trybunal.gov.pl/fileadmin/content/dokumenty/Akty_normatywne/The_Act_on_the_Organisation_of_the_Constitutional_Tribunal_and_the_Mode_of_Proceedings_Before_the_Constitutional_Tribunal_en.pdf, /Վերջին մուտք՝ 10.04.2018/:

²⁵³ Տե՛ս Simion M. նշված աշխատությունը, էջ 89:

գործողությունը կամ անգործությունը խախտում է Հիմնական օրենքով դիմողի կամ դիմողի մարմնի համար նախատեսված իրավունքները կամ պարտականությունները կամ դրանց խախտման ուղղակի վտանգ է ստեղծում: Ավելին, նույն օրենքի 13 հոդվածի համաձայն՝ խոսքը հիշյալ վեճերի առկայության պարագայում Հիմնական օրենքի մեկնաբանություն տալու մասին է²⁵⁴: «Հունգարիայի Սահմանադրական դատարանի մասին» օրենքի 36 հոդվածի համաձայն ևս՝ պետական մարմինների կամ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների միջև լիազորությունների հարցով վեճերի առկայության պարագայում Սահմանադրական դատարանը լուծում է նշված վեճերը *Հիմնական օրենքի մեկնաբանության հիման վրա*²⁵⁵:

Տեսության մեջ ներկայացվում են սահմանադրական վեճերի մի քանի հնարավոր դրսևորումներ՝ 1. երբ պետական մարմինը դուրս է գալիս իր իրավասության շրջանակներից և իրականացնում է այնպիսի լիազորություններ, որոնք ընդհանրապես չեն կարող իրականացվել հանրային իշխանության մարմնի կողմից, 2. երբ պետական մարմինն իրականացնում է այնպիսի լիազորություններ, որոնք ընդգրկված են այլ մարմնի իրավասության շրջանակներում, 3. երբ պետական մարմինը հրաժարվում է իր լիազորությունների իրականացումից²⁵⁶:

Հաշվի առնելով լիազորությունների հարցով վեճերի

²⁵⁴ Տե՛ս http://www.bundesverfassungsgericht.de/SharedDocs/Downloads/EN/Gesetze/BVerfGG.pdf?__blob=publicationFile&v=10, /Վերջին մուտք՝ 10.04.2018/:

²⁵⁵ Տե՛ս <https://hunconcourt.hu/act-on-the-cc/>, /Վերջին մուտք՝ 10.04.2018/:

²⁵⁶ Տե՛ս Брежнев О. Споры о компетенции между органами власти как объект судебного конституционного контроля, <https://www.zonazakona.ru/law/comments/479/>, /Վերջին մուտք՝ 10.08.2018/:

նշված դրսևորումները՝ գրականության մեջ ներկայացվում են դրանց հետևյալ տարատեսակները՝ 1. լիագործության ճանաչման հարցերով վեճեր, երբ պետական իշխանության համապատասխան մարմինը գտնում է, որ պետական իշխանության այլ մարմինների կողմից իրավական ակտի ընդունումը կամ իրավաբանական գործողության կատարումն ընդգրկված են իր իրավասության շրջանակներում, 2. լիագործության ժխտման հարցերով վեճեր, երբ պետական իշխանության համապատասխան մարմինը գտնում է, որ վիճելի լիագործությունները պետք է իրականացվեն այլ մարմինների կողմից, մինչև ժամանակ, վերջիններս ևս ժխտում են հիշյալ բնագավառում իրենց լիագործությունները, 3. լիագործության յուրացման վերաբերյալ վեճեր, երբ պետական մարմինն ընդունում է իրավական ակտ կամ կատարում է գործողություն՝ դուրս գալով իր իրավասության շրջանակներից, 4. տարբեր պետական մարմինների իրավասությունների հակասությունների և համընկնումների վերաբերյալ վեճեր²⁵⁷:

Կարծում ենք, որ վերոշարադրյալ դասակարգումը նշանակություն ունի առավելապես սահմանադրական լիագործությունների հարցով վեճերի տեսական տարբերակման և դրանց գիտական հետազոտության առումով: Մինչև ժամանակ, մեր կարծիքով, նման տարանջատման շրջանակներում վեճերի՝ ներկայացված մի շարք տարատեսակներ կարող են համընկնել: Օրինակ՝ տարբեր պետական մարմինների իրավասությունների հակասությունների և համընկնումների վերաբերյալ վեճերը կարող են իրենց էությամբ լինել լիագործության յուրացման կամ ճանաչման հարցով վեճեր, և այլն: Ավել-

լին, ակնհայտ է, որ գործնական տեսանկյունից առավել մեծ կարևորություն է ներկայացնում այն հարցադրումը, թե հիշյալ տարատեսակի վեճերի առաջացման պարագայում վեճի առաջացման որ փուլում, ինչ պայմանների բավարարման դեպքում կարելի է դիմել Սահմանադրական դատարան կամ որ իրավիճակներում է հնարավոր խոսել սահմանադրական լիագործությունների հարցով վեճի առկայության մասին: Հետևաբար, հիշյալ համատեքստում հարկ ենք համարում անդրադառնալ ներկայացված հարցադրումներին՝ դրանք վերլուծելով Հայաստանի Հանրապետությունում առկա համապատասխան իրավակարգավորումների համատեքստում:

Ինչպես արդեն նշեցինք, Հայաստանի Հանրապետության պարագայում խոսքը սահմանադրական կոնկրետ մարմինների միջև վեճերի մասին է, որոնց բովանդակությունն ու առանձնահատկությունները բացահայտելու համար հարկ ենք համարում վերլուծել ՀՀ իրավակարգավորումների շրջանակներում օգտագործվող եզրութաբանությունը, ինչը, ներկայացված վերլուծության հետ մեկտեղ, թույլ է տալիս կատարել հարցի առնչությամբ որոշակի եզրահանգումներ: «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի՝ քննարկվող հիմնախնդրին առնչվող նորմերում անընդհատ օգտագործվում է «վիճարկվող գործողություն, անգործություն կամ իրավական ակտ» ձևակերպումը: Ավելին, սահմանադրական օրենքը նախատեսում է, որ նշված գործերով ներկայացված դիմումը պետք է պարունակի հիմնավորումներ առ այն, որ *պատասխանողի գործողությունը, անգործությունը կամ իրավական ակտը խախտում է դիմող կողմին կամ նրա կողմից ներկայացված մարմնին Սահմանադրությամբ վերա-*

²⁵⁷ См. у Тохян Ф. նշված աշխատությունը, էջ 129-130:

պահված լիազորությունները կամ դրանց խախտման անմիջական վտանգ է ստեղծում²⁵⁸. Իսկ Սահմանադրական դատարանը, մեկնաբանելով Սահմանադրության համապատասխան դրույթը, սահմանադրական մարմինների միջև նրանց լիազորությունների վերաբերյալ վեճերով ընդունում է հետևյալ որոշումներից որևէ մեկը. 1) վիճարկվող լիազորության իրականացմամբ պատասխանողի կատարած գործողությունը կամ ցուցաբերած անգործությունը կամ ընդունված իրավական ակտը ճանաչում է Սահմանադրությանը համապատասխանող, 2) վիճարկվող լիազորության իրականացմամբ պատասխանողի կատարած գործողությունը կամ ցուցաբերած անգործությունը ճանաչում է Սահմանադրությանը հակասող, իսկ ընդունված իրավական ակտը՝ ամբողջությամբ կամ մասամբ Սահմանադրությանը հակասող և անվավեր, 3) ճանաչում է վիճարկվող լիազորությունն իրականացնելու իրավասություն ունեցող՝ դատավարության կողմ չհանդիսացող սահմանադրական մարմին և այդ հիմքով կարճում է գործի վարույթը²⁵⁹:

Կարծում ենք, որ ներկայացված իրավակարգավորումներն ուղղակիորեն պատասխանում են սուսկ այն հարցին, որ նշված գործողությունը, անգործությունը կամ իրավական ակտը Սահմանադրական դատարանում կարելի է վիճարկել, եթե այն խախտում է դիմող կողմին կամ նրա կողմից ներկայացված մարմնին Սահմանադրությամբ վերապահված լիազորությունները կամ դրանց խախտման անմիջական վտանգ է ստեղծում: Սակայն այդ համատեքստում էլ անպատասխան

²⁵⁸ Տե՛ս «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 75 հոդվածի 4-րդ մաս:

²⁵⁹ Տե՛ս «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 75 հոդվածի 8-րդ մաս:

են մնում այն հարցադրումները, թե որ դեպքերում և որ փուլում դրանք կարող են վիճարկվել, որ գործողության, անգործության կամ իրավական ակտի մասին է խոսքը հիշյալ համատեքստում, և որ դեպքում կարելի է խոսել սահմանադրական լիազորությունների հարցով վեճի առկայության մասին:

Կարծում ենք, որ ներկայացված նորմերի և առկա տեսական դոկտրինների համադրված վերլուծությունից կարելի է կատարել ներկայացված հարցադրումների վերաբերյալ որոշակի եզրահանգումներ: Դրանցից առաջինը վերաբերում է այն հնարավոր իրավիճակներին, որոնց պարագայում կարելի է խոսել սահմանադրական մարմինների միջև սահմանադրական լիազորությունների հարցով վեճերի առկայության մասին: Մեր կարծիքով, նման վեճեր հնարավոր են, երբ. 1. սահմանադրական մարմինն իր ենթադրյալ սահմանադրական լիազորության իրացման արդյունքում խախտել է մեկ այլ սահմանադրական մարմնի սահմանադրական լիազորությունները կամ դրանց խախտման անմիջական վտանգ է ստեղծել, 2. սահմանադրական մարմինն իր ենթադրյալ սահմանադրական լիազորության չիրացման արդյունքում խախտել է մեկ այլ սահմանադրական մարմնի սահմանադրական լիազորությունները կամ դրանց խախտման անմիջական վտանգ է ստեղծել: Ընդ որում՝ կարծում ենք, որ հիշյալ համատեքստում հնարավոր են իրավիճակներ, երբ ինչպես մեկ սահմանադրական մարմին է իր սահմանադրական լիազորությունների շրջանակներում իրեն իրավասու համարում լուծելու կոնկրետ հարցը կամ իրավասու չի համարում լուծելու վերջինս, այնպես էլ, երբ առնվազն երկու սահմանադրական մարմիններ են իրենց սահմանադրական լիազորությունների շրջանակներում

իրենց իրավասու համարում լուծելու կոնկրետ հարցը կամ իրավասու չեն համարում լուծելու վերջինս:

Հիշյալ համատեքստում հարկ ենք համարում անդրադառնալ քննարկվող հիմնախնդրի առումով կարևորություն ներկայացնող ևս մի հարցադրման: «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքը նշված գործերով վիճարկման ենթակա օբյեկտ է դիտարկում ինչպես գործողությունը, անգործությունը, այնպես էլ իրավական ակտը: «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 75 հոդվածի համաձայն, մասնավորապես. «... 2. Սույն հոդվածում նշված գործերով Սահմանադրական դատարանն ղիմում կարող է ներկայացվել վիճարկվող գործողությունը կատարելու, անգործության մասին հայտնի դառնալու կամ **իրավական ակտն ընդունելու** օրվանից հետո՝ եռամսյա ժամկետում: ...»:

4. Սույն հոդվածում նշված գործերով ներկայացված դիմումը պետք է պարունակի հիմնավորումներ առ այն, որ պատասխանողի գործողությունը, անգործությունը կամ **իրավական ակտը** խախտում է դիմող կողմին կամ նրա կողմից ներկայացված մարմնին Սահմանադրությամբ վերապահված լիազորությունները կամ դրանց խախտման անմիջական վտանգ է ստեղծում: ...»:

8. Սահմանադրական դատարանը, մեկնաբանելով Սահմանադրության համապատասխան դրույթը, սահմանադրական մարմինների միջև նրանց լիազորությունների վերաբերյալ վեճերով ընդունում է հետևյալ որոշումներից որևէ մեկը.

1) վիճարկվող լիազորության իրականացմամբ պատասխանողի կատարած գործողությունը կամ ցուցաբերած անգործությունը կամ **ընդունված իրավական ակտը** ճանաչում է Սահմանադրությանը համապատասխանող.

2) վիճարկվող լիազորության իրականացմամբ պատասխանողի կատարած գործողությունը կամ ցուցաբերած անգործությունը ճանաչում է Սահմանադրությանը հակասող, իսկ **ընդունված իրավական ակտը՝** ամբողջությամբ կամ մասամբ Սահմանադրությանը հակասող և անվավեր.

3) ճանաչում է վիճարկվող լիազորությունն իրականացնելու իրավասություն ունեցող՝ դատավարության կողմ չհանդիսացող սահմանադրական մարմնին և այդ հիմքով կարճում է գործի վարույթը: ...»:

Ներկայացված նորմերի վերլուծությունից ակնհայտ է, որ հիշյալ գործերի շրջանակներում սահմանադրական արդարադատության օբյեկտ կարող է հանդիսանալ ոչ միայն վիճարկվող լիազորության իրականացմամբ կատարված գործողությունը կամ ցուցաբերած անգործությունը, այլ նաև ընդունված իրավական ակտը:

Ներկայացված նորմերի վերլուծությունից ակնհայտ է, որ հիշյալ գործերի շրջանակներում սահմանադրական արդարադատության օբյեկտ կարող է հանդիսանալ ոչ միայն վիճարկվող լիազորության իրականացմամբ կատարված գործողությունը կամ ցուցաբերած անգործությունը, այլ նաև ընդունված իրավական ակտը:

Հաշվի առնելով այն, որ ՀՀ Սահմանադրության 168 հոդվածի 1-ին կետով նախատեսված իրավական ակտերի մեծամասնությունն ընդունվում է սահմանադրական մարմինների համապատասխան սահմանադրական լիազորությունների իրականացման արդյունքում, հարց է առաջանում այն մասին, թե ինչպես պետք է տարբերակվեն այն իրավիճակները, երբ Սահմանադրական դատարան է անհրաժեշտ դիմել իրավական ակտի սահմանադրականության հարցով, այն դեպքերից, երբ պետք է ներկայացվի սահմանադրական լիազորությունների հարցով վեճի լուծման առնչությամբ դիմում, երբ բարձրացվում է այդ լիազորության իրականացմամբ ընդունված ի-

րավական ակտի սահմանադրականության խնդիր: Ակնհայտ է, որ նշված անհատականությունը կարող է հանգեցնել նույնատիպ իրավիճակներում Սահմանադրական դատարանի տարբեր լիազորությունների իրացման առնչությամբ դիմումների ներկայացման, արդյունքում նաև՝ նույնատիպ հարցերի հետ կապված յուրաքանչյուր կոնկրետ իրավիճակում տարբեր գործերի քննության համար նախատեսված առանձնահատկությունների գործադրման, ուստի նաև՝ այդ առնչությամբ հակասական պրակտիկայի ձևավորման:

Այդ առումով հարկ է նկատի ունենալ, որ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքը գործերի քննության և լուծման տարատեսակ առանձնահատկություններ է նախատեսում ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված ՄԴ լիազորություններից յուրաքանչյուրի իրացման համար: Մասնավորապես, միմյանցից էականորեն տարբերվում են սահմանադրական լիազորությունների հարցով վեճերի քննության և լուծման և իրավական ակտերի այսպես կոչված, «վերացական ու կոնկրետ վերահսկողության» առանձնահատկությունները: Եթե օրինակ՝ առաջինի պարագայում ապացուցման բեռը կրում է դիմող կողմը, ապա նույնը չի կարելի ասել երկրորդ իրավիճակում ապացուցման բեռի բաշխման մասին: Իրավական ակտերի վերացական վերահսկողության պարագայում դիմումի ընդունելիության պայման չի դիտարկվում գործի քննության առումով դիմողի շահագրգռվածության հիմնավորումը: Մինչդեռ, ըստ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 75 հոդվածի՝ սահմանադրական վեճերի պարագայում ներկայացված դիմումը պետք է պարունակի հիմնավորումներ առ այն, որ պատաս-

խանողի գործողությունը, անգործությունը կամ իրավական ակտը խախտում է դիմող կողմին կամ նրա կողմից ներկայացված մարմնին Սահմանադրությամբ վերապահված լիազորությունները կամ դրանց խախտման անմիջական վտանգ է ստեղծում:

Միմյանցից էականորեն տարբերվում են նաև նշված գործերով ընդունվող որոշումների տարատեսակներն ու դրանց հետևանքները: «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 68 հոդվածի 9-րդ մասը սահմանում է, որ «իրավական ակտերի վերացական վերահսկողության» արդյունքում Սահմանադրական դատարանը կարող է ընդունել հետևյալ որոշումներից մեկը. 1) վիճարկվող ակտը կամ դրա վիճարկվող դրույթը Սահմանադրությանը համապատասխանող ճանաչելու մասին, 2) վիճարկվող ակտը կամ դրա վիճարկվող դրույթը Սահմանադրական դատարանի մեկնաբանությամբ Սահմանադրությանը համապատասխանող ճանաչելու մասին, 3) վիճարկվող ակտն ամբողջությամբ կամ մասամբ Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչելու մասին, 4) վիճարկվող նորմատիվ իրավական ակտն ամբողջությամբ կամ մասամբ Սահմանադրությանը հակասող ճանաչելու և նորմատիվ իրավական ակտի կամ դրա մի մասի իրավական ուժը կորցնելու ավելի ուշ ժամկետ սահմանելու մասին: Ավելին, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 68 հոդվածի համաձայն. «...: 13. Սույն հոդվածի 9-րդ մասի 3-րդ կետում նշված որոշումը Սահմանադրական դատարանն իրավասու է տարածելու նաև այդ որոշման ուժի մեջ մտնելուն նախորդող իրավահարաբերությունների վրա, եթե այդպիսի որոշում չընդունելը կարող է հան-

րության կամ պետության համար առաջացնել ծանր հետևանքներ:

14. Սույն հոդվածի 13-րդ մասում նշված դեպքում Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչված նորմատիվ իրավական ակտի, ինչպես նաև այդ ակտի կատարումն ապահոված այլ նորմատիվ իրավական ակտերի վրա հիմնված՝ Սահմանադրական դատարանի որոշման ուժի մեջ մտնելուն նախորդող երեք տարիների ընթացքում կատարված վարչական կամ դատական ակտերը կողմի դիմումի հիման վրա ենթակա են վերանայման վարչական կամ դատական ակտն ընդունած մարմնի կողմից՝ օրենքով սահմանված կարգով:

15. Քրեական կամ վարչական պատասխանատվություն սահմանող գրենքի վիճարկվող դրույթը Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչելու մասին որոշում ընդունվելու դեպքում իրավական ուժը կորցնում է իր ուժի մեջ մտնելու պահից, իսկ դրա կիրառման վերաբերյալ Սահմանադրական դատարանի որոշման ուժի մեջ մտնելուն նախորդող ժամանակահատվածում ընդունված դատական, իսկ կողմի դիմումի հիման վրա՝ նաև վարչական ակտերը ենթակա են վերանայման օրենքով սահմանված կարգով:

16. Սահմանադրական դատարանը սույն հոդվածի 9-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված որոշումները սույն գրենքով սահմանված կարգով ներկայացված համապատասխան դիմումի հիման վրա կարող է վերանայել, եթե՝ 1) փոփոխվել է Սահմանադրության՝ տվյալ գործով կիրառված դրույթը, կամ 2) ի հայտ է եկել տվյալ գործով կիրառված՝ Սահմանադրության դրույթի այնպիսի նոր ընկալում, որի առկայությամբ նույն հարցի վերաբերյալ կարող է ընդունվել Սահ-

մանադրական դատարանի այլ որոշում, և տվյալ հարցն ունի սկզբունքային սահմանադրաիրավական նշանակություն: ...»:

Մինչդեռ, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 75 հոդվածը նախատեսում է, որ Սահմանադրական դատարանը, մեկնաբանելով Սահմանադրության համապատասխան դրույթը, սահմանադրական մարմինների միջև նրանց լիազորությունների վերաբերյալ վեճերով ընդունում է հետևյալ որոշումներից որևէ մեկը. 1) վիճարկվող լիազորության իրականացմամբ պատասխանողի կատարած գործողությունը կամ ցուցաբերած անգործությունը կամ ընդունված իրավական ակտը ճանաչում է Սահմանադրությանը համապատասխանող, 2) վիճարկվող լիազորության իրականացմամբ պատասխանողի կատարած գործողությունը կամ ցուցաբերած անգործությունը ճանաչում է Սահմանադրությանը հակասող, իսկ ընդունված իրավական ակտը՝ ամբողջությամբ կամ մասամբ Սահմանադրությանը հակասող և անվավեր, 3) ճանաչում է վիճարկվող լիազորությունն իրականացնելու իրավասություն ունեցող՝ դատավարության կողմ չհանդիսացող սահմանադրական մարմնին և այդ հիմքով կարճում է գործի վարույթը:

Վերը շարադրվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ ինչպես գործերի քննության և լուծման, այնպես էլ արդյունքում ընդունվող որոշումների ու դրանց հետևանքների տեսանկյունից քննարկվող երկու լիազորությունների միջև առկա են էական տարբերություններ: Ինչպես արդեն նշեցինք, այդ հանգամանքը կարող է հանգեցնել նույնատիպ իրավիճակներում Սահմանադրական դատարանի տարբեր լիազորությունների իրացման առնչությամբ դիմումների ներկայացման, արդյուն-

քում՝ նույնատիպ հարցերի հետ կապված յուրաքանչյուր կոնկրետ իրավիճակում տարբեր գործերի քննության համար նախատեսված առանձնահատկությունների գործադրման, ուստի նաև՝ այդ առնչությամբ հակասական պրակտիկայի ձևավորման:

Հետևաբար, կարևոր ենք համարում հիմնախնդրի առնչությամբ միասնական մոտեցման և պրակտիկայի ձևավորումը: Այդ տեսանկյունից նպատակահարմար ենք համարում, որ բոլոր այն դեպքերում, երբ սահմանադրական վեճը հնարավոր է լուծել Սահմանադրական դատարանի որևէ այլ լիազորության իրացման շրջանակներում, մասնավորապես, օրինակ, իրավական ակտերի վերացական վերահսկողության, դիմումը ներկայացվի և գործի քննությունն իրականացվի հենց այդ լիազորության համատեքստում և վերջինիս առանձնահատկությունները նկատի ունենալով: Մասնավորապես, մեր կարծիքով, եթե բարձրացվում է ՀՀ Սահմանադրության 168 հոդվածի 1-ին կետով ամրագրված իրավական ակտերի սահմանադրականության խնդիր, նույնիսկ եթե համապատասխան ակտն ընդունվել է սահմանադրական մարմնի կողմից կոնկրետ սահմանադրական լիազորության իրացման արդյունքում, քննությունն անհրաժեշտ է իրականացնել «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 68 հոդվածով ամրագրված գործի շրջանակներում, այլ կերպ՝ «իրավական ակտերի վերացական վերահսկողության» համատեքստում:

Հետևաբար, կարծում ենք, որ հարցի առնչությամբ ընդհանուր լուծումն այն պետք է լինի, որ սահմանադրական լիազորությունների հարցով վեճերի վերաբերյալ գործերի քննությունը բացառվի այն դեպքերում, երբ հարցի լուծումը հնարավոր է

Սահմանադրական դատարանի այլ լիազորության իրացման շրջանակներում:

Այդ առումով նշենք, որ «Սահմանադրական դատարանի մասին» ՌԴ դաշնային սահմանադրական օրենքի 93 հոդվածի համաձայն՝ իրավասության հարցով վեճերով պետական իշխանության մարմնի միջնորդությունը թույլատրելի է, եթե վեճը չէր լուծվել կամ չէր կարող լուծվել այլ կարգով: Մլովակիայի Հանրապետության Սահմանադրության 126 հոդվածը նախատեսում է, որ Սահմանադրական դատարանը լուծում է պետական կառավարման կենտրոնական մարմինների միջև իրավասության հարցով վեճերը, եթե օրենքը չի նախատեսում, որ այս հարցերը լուծվում են այլ պետական մարմնի կողմից:

Հիշյալ համատեքստում կարևոր ենք համարում նաև այն հանգամանքի վերլուծությունը, որ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքը, անդրադառնալով հիշյալ գործերով Սահմանադրական դատարանի կողմից ընդունվող որոշումների տարատեսակներին, ամրագրում է հետևյալ ձևակերպումը. «Սահմանադրական դատարանը, **մեկնաբանելով Սահմանադրության համապատասխան դրույթը** (ընդգծումը մերն է՝ Ա.Մ.), սահմանադրական մարմինների միջև նրանց լիազորությունների վերաբերյալ վեճերով ընդունում է հետևյալ որոշումներից որևէ մեկը...»: Կարծում ենք, որ հիշյալ իրավակարգավորումները հիմք են տալիս եզրակացնելու, որ քննարկվող գործերի քննության հիմնական էությունը սահմանադրական համապատասխան նորմերի մեկնաբանությունն է, ուստի, մեր կարծիքով, սահմանադրական մարմինների միջև սահմանադրական լիազորությունների հարցով վեճը ևս պետք է պայմանավորված լինի սահմանադրական

համապատասխան նորմի մեկնաբանության անհրաժեշտությամբ: Այդ առումով հիշատակման է արժանի այն հանգամանքը, որ մի շարք երկրներում, որտեղ Սահմանադրական դատարանն ունի համանման լիազորություն, հիշյալ գործերի քննության էությունը հենց սահմանադրական համապատասխան նորմերի մեկնաբանությունն է և դրանց սահմանադրաիրավական բովանդակության բացահայտումը: «Գերմանիայի Ղաշնային Սահմանադրական դատարանի մասին» օրենքի 13 հոդվածի համաձայն, օրինակ, Սահմանադրական դատարանը լուծում է Հիմնական օրենքի մեկնաբանության հետ կապված հարցերը՝ բարձրագույն դաշնային մարմիններից մեկի կամ Հիմնական օրենքով կամ բարձրագույն դաշնային մարմիններից մեկի կանոնակարգով սեփական իրավունքներով օժտված որևէ այլ կողմի միջև իրավունքների և պարտականությունների ծավալի առնչությամբ վեճերի պարագայում²⁶⁰: «Հունգարիայի Սահմանադրական դատարանի մասին» օրենքի 36 հոդվածի համաձայն ևս՝ պետական մարմինների կամ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների միջև լիազորությունների հարցով վեճերի առկայության պարագայում Սահմանադրական դատարանը լուծում է նշված վեճերը **Հիմնական օրենքի մեկնաբանության հիման վրա**²⁶¹: Միջազգային պրակտիկայում հանդիպում է նաև այն իրավիճակը, երբ նույնիսկ համապատասխան սահմանադրաիրավական կարգավորումների բացակայության պայմաններում Սահմանադրական դատարանը սահմանադրական լիազորությունների հար-

²⁶⁰ Տե՛ս http://www.bundesverfassungsgericht.de/SharedDocs/Downloads/EN/Gesetze/BVerfGG.pdf?__blob=publicationFile&v=10, /Վերջին մուտք՝ 10.04.2018/:

²⁶¹ Տե՛ս <https://hunconcourt.hu/act-on-the-cc/>, /Վերջին մուտք՝ 10.04.2018/:

ցով վեճի առկայությունը պայմանավորում է նաև այն հանգամանքով, թե արդյոք կոնկրետ գործի շրջանակներում առկա է Սահմանադրությունը մեկնաբանելու կարիք: Օրինակ՝ Ռումինիայի Սահմանադրական դատարանն իր՝ 27 հունիսի 2012թ. N 683 որոշմամբ արձանագրել էր համապատասխան սահմանադրական վեճի առկայություն՝ հիմք ընդունելով նաև այն, որ կոնկրետ իրավիճակում առկա է Սահմանադրության համապատասխան նորմերը մեկնաբանելու անհրաժեշտություն²⁶²:

Քննարկվող հիմնախնդրի առումով կարծում ենք, որ սահմանադրական մարմինների միջև վեճն իր բովանդակությամբ կարող է բավականին լայն լինել և վերաբերել ոչ միայն իրավական, այլ նաև քաղաքական հիմնախնդիրների՝ համապատասխանաբար լուծումներ ենթադրելով ոչ միայն իրավական, այլ նաև քաղաքական հարթության տեսանկյունից: Միննույն ժամանակ, կարծում ենք, որ սահմանադրական լիազորությունների հարցով վեճերի պարագայում Սահմանադրական դատարանում քննության է ենթակա վեճի սուկ սահմանադրաիրավական բաղադրատարրը, հետևաբար, սահմանադրական արդարադատության շրջանակներում չի կարող քննության ենթարկվել և լուծում ստանալ քաղաքական հարթության տեսանկյունից պատասխան ենթադրող որևէ հարցադրում, իսկ Սահմանադրական դատարանի կողմից առաջարկվող լուծումները չեն կարող քաղաքական բնույթ ունենալ: Հետևաբար, ակնհայտ է, որ սահմանադրական մարմինների միջև վեճի պարագայում գործի էությունը պետք է լինի սահմանադրական համապատասխան նորմի մեկնաբանությունն ու դրա հիման վրա համապատասխան լիազորության իրացման կամ չի-

²⁶² Տե՛ս Simion M. նշված աշխատությունը, էջ 93:

րացման սահմանադրականության գնահատումը: Այդ հանգամանքն իր հերթին հիմք է տալիս եզրակացնելու, որ Սահմանադրական դատարանում նշված գործերը կարող են քննության ենթակա լինել սուկ այն դեպքում, երբ սահմանադրական վեճի առկայությունը պայմանավորված է սահմանադրական համապատասխան նորմի մեկնաբանման անհրաժեշտությամբ²⁶³: Ավելին, հիշյալ համատեքստում անհրաժեշտ է ուշադրություն դարձնել նաև այն հանգամանքին, որ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 51 հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ կողմերն իրավունք չունեն իրենց ելույթներն օգտագործելու քաղաքական հայտարարությունների համար: Իսկ Սահմանադրական դատարանի դատավորները ցանկացած գործունեություն իրականացնելիս և բոլոր հանգամանքներում պարտավոր են դրսևորել քաղաքական զսպվածություն և չեզոքություն²⁶⁴:

Քննարկվող բնագավառում առկա ամենամեծ խնդիրներից մեկը սահմանադրական արդարադատություն իրականացնող

²⁶³ Գրականության մեջ հիշյալ վեճերով սահմանադրական վերահսկողությունը դիտարկվում է որպես «քաղաքականությունը», «քաղաքական վեճերը» խաղաղեցնելու միջոց: Միննույն ժամանակ, հատուկ շեշտադրվում է, որ Սահմանադրական դատարանը դրանք լուծում է առավել ողջամիտ եղանակով՝ **սահմանադրական օրինականության շրջանակներում**: Ավելին, ընդգծվում է, որ թեև հիշյալ գործերով Սահմանադրական դատարանը հանդես է գալիս որպես Սահմանադրությունը խախտող կամայական իշխանությունը սահմանափակող, սակայն Դատարանն ինքը չպետք է վերածվի դեսպոտիզմի դրսևորման, ուստի, ինքն էլ պետք է սահմանափակի իր ակտիվությունը (տ՛ես CDL-JU(2015)021, “Constitutional Review Design and Functions Implications For the Separation of Powers” // Report of the European Commission For Democracy Through Law (Venice Commission), Strasbourg, 28 September 2015):

²⁶⁴ Տե՛ս «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 4 հոդվածի 5-րդ մաս, 14 հոդվածի 1-ին մասի 3-րդ կետ:

մարմինների քաղաքականացման բացառումն է: Ակնհայտ է, որ սահմանադրական դատարանների քաղաքականացման վտանգն օբյեկտիվ է՝ հաշվի առնելով նշված դատարանների կողմից քննվող հարցերի առանձնահատկությունները: Բնական է, որ իրավասության հարցերով վեճերի քննության, Սահմանադրության մեկնաբանության, օրենսդիր մարմնի կողմից ընդունված ակտերն անվավեր ճանաչելու և այլ գործերի քննության արդյունքում Սահմանադրական դատարանն օբյեկտիվորեն անդրադառնում է հարցադրումների, որոնք առաջացել են քաղաքական հարթությունում: Իհարկե, արդեն նշեցինք, որ անկախ այդ հանգամանքից, վերջինիս կողմից քննության ենթակա հարցերն ու առաջարկվող լուծումները պետք է բացառապես սահմանադրաիրավական բնույթի լինեն: Միննույն ժամանակ, ակնհայտ է, որ նման գործերի քննության փաստն արդեն իսկ խոսում է հիշյալ մարմինների քաղաքականացման վտանգի առկայության մասին:

Սահմանադրական արդարադատության համաշխարհային փորձը վկայում է, որ գրեթե բոլոր սահմանադրական ժողովրդավարություններում սահմանադրական կամ համանման դատարանները քաղաքական տեսանկյունից ամենավիճելի հարցերի առնչությամբ չափազանց հաճախ սկսում են հարմարվել քաղաքական մեծամասնության տեսակետներին, իշխող մեծամասնությունն էլ, իր հերթին, փորձում է օգտագործել դատարաններին իր իշխանությունը մեծացնելու համար: Ընդ որում՝ գրականության մեջ այս հանգամանքը դիտարկվում է որպես բոլոր ժողովրդավարություններին բնորոշ երևույթ: Որպես օրինակ հիշատակվում են ԱՄՆ Գերագույն դատարանի մի շարք որոշումներ, այդ թվում՝ «Միավորված

քաղաքացիներն ընդդեմ Դաշնային ընտրական հանձնաժողովի»՝ 558 U.S. 310(2010) որոշումը, կամ հունգարական փորձը և այլն, որոնք վկայում են այն մասին, որ սահմանադրական կամ համանման դատարանների մանդատը կարող է էականորեն նվազել գործող ամենաազդեցիկ քաղաքական ուժերի ցանկությունների արդյունքում²⁶⁵:

Աշխատանքի շրջանակներում արդեն իսկ անդրադարձել ենք սահմանադրական կայունության և քաղաքականության միջև կապին և ներկայացրել քննարկվող հիմնախնդրին առնչվող հիմնական մոտեցումները: Նշել ենք, որ սահմանադրական կայունությունը երաշխավորելու տեսանկյունից քաղաքականությունը հանդիսանում է կարևորագույն գործոն, սակայն միևնույն ժամանակ կարևորել ենք այն հանգամանքը, որ հիշյալ ազդեցությունը միակողմանի չէ, և Սահմանադրությունն ինքնին կարևոր դերակատարություն է ունենում քաղաքական գործընթացներն ուղղորդելու և դրանք կարգավորելու տեսանկյունից:

Իհարկե, սահմանադրական արդարադատությունն իրականացնող մարմնի քաղաքականացումը բացառելու գաղափարը կարող է պարադոքսալ թվալ, քանզի առաջին հայացքից ձևական ու անիրական է թվում քաղաքական բնույթ ունեցող կամ քաղաքական հետևանքներ առաջացնող, անմիջականորեն ժողովրդի կողմից ընտրված իշխանության մարմինների մասնակցությամբ կամ նրանց վրա ազդեցություն ունեցող գործերի քննության ընթացքում իշխանության նույն մարմինների

²⁶⁵ S'ku Beširević V. "Governing without judges": The politics of the Constitutional Court in Serbia // International Journal of Constitutional Law, Volume 12, N 4, 1 October 2014, էջ 955:

կողմից ձևավորվող սահմանադրական դատարանների անկախության երաշխավորումը: Կարծում ենք, սակայն, որ իշխանությունների բաժանման և հավասարակշռման, ժողովրդաիշխանության դոկտրինների վերախմաստավորման պայմաններում վերը նշված գաղափարը կարող է առավել քան իրական և իրագործելի լինել:

Մասնավորապես, թեև ժողովրդավարության դասական դոկտրինի շրջանակներում, որի առանցքը ժողովրդի՝ իշխանության աղբյուր և կրող հանդիսանալու գաղափարն է, պետական մարմինները, այդ թվում՝ սահմանադրական դատարանը, դիտարկվում են որպես այդ իշխանության միջնորդավորված իրականացնողներ և հաճախ սահմանափակված են համարվում այդ հանգամանքով, սակայն, ինչպես արդեն նշեցինք, ժողովրդին որպես իշխանության աղբյուր ճանաչելու մոտեցումն ինքնանպատակ չէ, և ժողովրդավարության համար առանցքային հատկանիշն այն պետք է լինի, որ վերջինիս պարագայում իշխանության աղբյուրը ժողովուրդն է, իշխանությունն իրականացվում է ժողովրդի կողմից և ժողովրդի համար՝ **հիմքում ունենալով մարդուն՝ որպես բարձրագույն արժեք և նպատակ ունենալով անհատի համար երաշխավորել ինքնարտահայտման ու ինքնադրսևորման հնարավորություններն ու վերջինիս արժևորման պահանջի իրացումը**: Հիշյալ հանգամանքը որպես ժողովրդաիշխանության դոկտրինի առանցք ընկալելու պարագայում ակնհայտ է դառնում, որ նույնիսկ եթե իրավական ակտն ընդունվում է ժողովրդի կամ նրա կողմից անմիջականորեն ընտրված մարմնի կողմից կամ վերջիններս հանդես են գալիս որպես սահմանադրական վեճի կողմ, ինչպես ակտը, այնպես էլ համապատասխան մարմին-

ների գործողությունները պետք է բավարարեն վերը նշված հանգամանքներին և սահմանադրական պետությանը բնորոշ հատկանիշներին: Հետևաբար, վեճի կողմ հանդիսացող սուբյեկտի բնույթն ինքնին որևէ կերպ չի սահմանափակում սահմանադրական արդարադատությունն իրականացնող մարմնին քննարկվող չափանիշներին ակտի կամ գործողության/անգործության համապատասխանությունը գնահատելիս, և այդ հանգամանքը չի կարող վերջինիս անկախությունը սահմանափակող գործոն հանդիսանալ: Այդ է պատճառը, որ ՀՀ սահմանադրաիրավական կարգավորումներն ամրագրում են ինչպես խորհրդարանի, այնպես էլ հանրաքվեով ընդունված օրենքների սահմանադրականությունը վիճարկելու հնարավորություն, ինչպես նաև Սահմանադրության փոփոխությունների նախագծի և հանրաքվեի դրվող իրավական ակտերի նախագծերի սահմանադրականությունը գնահատելու նախնական պարտադիր սահմանադրական վերահսկողություն: Ավելին, Ազգային ժողովը՝ որպես ժողովրդի կողմից անմիջականորեն ընտրված մարմին, ևս հանդիսանում է սահմանադրական լիազորությունների հարցով սահմանադրական մարմինների միջև վեճի կողմ, ընդ որում՝ հանդես գալով ինչպես դիմողի, այնպես էլ պատասխանողի կարգավիճակով:

Վերը շարադրվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ Սահմանադրական դատարանն ինքնին որևէ կերպ չի կարող սահմանափակված համարվել սոսկ այն հանգամանքով, որ իրավական ակտն ընդունվել է ժողովրդի կամ նրա կողմից անմիջականորեն ընտրված մարմնի կողմից, կամ վերջիններս են հանդիսանում Դատարանում քննվող համապատասխան սահմանադրական վեճի կողմ:

Կարծում ենք, որ ժամանակակից աշխարհում այս գործոնը ևս պետք է ընկած լինի ժողովրդավարության դոկտրինը վերախմաստավորելու և այդ համատեքստում սահմանադրական կայունության ու քաղաքականության, Սահմանադրական դատարանի գործունեության ու քաղաքականության միջև պատշաճ հավասարակշռություն գտնելու առանցքում: Նշված հանգամանքը հատկապես կարևորվում է այն տեսանկյունից, որ սահմանադրական դատարանները չափազանց հաճախ բախվում են ոչ միայն ազդեցիկ քաղաքական ուժերի կողմից հիշյալ մարմինների նկատմամբ ազդեցություն գործելու փորձերին, այլ նաև հանրության կողմից վերջիններիս նկատմամբ ազդելու և սահմանադրական դատարանների անկախությունը «սահմանափակելու» երևույթին: Ընդ որում՝ այդ հանգամանքը սովորաբար հիմնավորվում է նրանով, որ իշխանությունը պատկանում է ժողովրդին, հետևաբար, հենց վերջինս պետք է առանցքային դերակատարություն ունենա հանրային կյանքի բոլոր բնագավառներին առնչվող հարցերի լուծման, այդ թվում՝ սահմանադրական արդարադատության իրականացման առումով: Նշված մոտեցումը հատկապես խորանում է հեղափոխությունների, կառավարող իշխանությունը կազմող քաղաքական ուժերի հանկարծակի և/կամ արմատական փոփոխության արդյունքում, երբ իշխանություն ձեռք բերած քաղաքական ուժը սկզբնական փուլում վայելում է հանրության անվերապահ վստահությունը: Վերջինս հանգեցնում է ինչպես ժողովրդի իշխանության բացարձակացման, այնպես էլ իշխող քաղաքական ուժի անսահմանափակ իշխանությանը հանրության անվերապահ, երբեմն նաև՝ «միամիտ» աջակցության: Արդյունքում՝ ակնհայտ են դառնում ոչ միայն քաղաքական իշ-

խանության, այլ առաջին հերթին հենց ժողովրդի ազդեցության փորձերը արդարադատություն, այդ թվում՝ սահմանադրական արդարադատություն իրականացնող մարմինների վրա: Այդ առումով տեղին է հիշատակել գրականության մեջ ներկայացված այն տեսակետը, որ թեև բոլորն ասում են, որ ուզում են ունենալ այնպիսի դատավորներ, որոնք միայն օրենքով են առաջնորդվում, բայց բոլորն էլ այս գաղափարը փաստացի ընկալում են այնպես, որ իրենք ուզում են ունենալ **դատավորներ, ովքեր կայացնում են իրենց համար հաճո որոշումներ** (ընդգծումը մերն է – Ա.Մ.)²⁶⁶:

Կարծում ենք, որ նման իրավիճակները պետք է բացառվեն, քանզի խաթարում են սահմանադրական կայունությունն ու կայուն ժողովրդավարությունը և հակասում են ժողովրդաիշխանության դոկտրինի՝ ներկայացված առանցքային առանձնահատկություններին: Աշխատանքի շրջանակներում քննարկված՝ ժողովրդի իշխանության սահմանների, պրոֆեսիոնալ կառավարման անհրաժեշտության վերաբերյալ գաղափարները հիմք են տալիս եզրակացնելու, որ հենց դրանք պետք է ընկած լինեն ժողովրդաիշխանության դոկտրինի ընկալման, այդ թվում՝ վերջինիս հասարակական ընկալման հիմքում, և ժողովուրդն ինքը պետք է հիշյալ համատեքստում պահպանի «ողջամիտ ինքնասահմանափակման» սկզբունքը՝ հստակորեն պատկերացնելով իր իշխանության սահմաններն ու դրա սահմանափակման չափանիշները:

Քննարկվող հիմնախնդրի առումով հարկ է նաև նկատի

²⁶⁶ St' u Edwin L. Felter Jr. Maintaining the Balance between Judicial Independence and Judicial Accountability in Administrative Law // Journal of the National Association of Administrative Law Judiciary, 1997, Volume 17, N 1, էջ 90:

ունենալ, որ բնականաբար, ժամանակակից ցանկացած սահմանադրական համակարգի, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրական համակարգի նպատակներից է հաշվետու դատական իշխանություն ունենալը²⁶⁷, սակայն այդ հանգամանքը ենթադրում է սուսկ **անկախ և անաչառ** դատական իշխանության՝ **իրավունքի առջև** հաշվետվողականություն:

Ավելին, հաշվետվողականությունն ինքնին չի կարող ընկալվել որպես դատական իշխանության նկատմամբ ազդեցություն գործելու և դրա միջոցով նրա անկախությունը սահմանափակելու հնարավորություն, քանզի նմանատիպ ընկալումն ամբողջությամբ կարող է խաթարել դատական իշխանության ինչպես անկախության, այնպես էլ հաշվետվողականության էությունը: Անկախությունը ենթադրում է, որ որոշումների կայացման ամբողջ գործընթացում դատարանը պետք է զերծ լինի ցանկացած այլ սուբյեկտի կողմից որևէ ճնշումից և միջամտությունից²⁶⁸: Հաշվետվողականությունն իր հերթին ենթադրում է համապատասխան սուբյեկտի կողմից իր գործո-

²⁶⁷ St' u OSCE/ODIHR Final Opinion on Draft Amendments to the Act on the National Council of the Judiciary and Certain Other Acts of Poland, Warsaw, 5 May 2017, <https://www.osce.org/odihhr/315946?download=true>, /Վերջին մուտք՝ 10.05.2018/, Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգ / մշակվել է Հայաստանի Հանրապետության Նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի կողմից, Երևան, 2014թ. հոկտեմբեր, <http://www.parliament.am/library/sahmanadrakan%20barepoxumner/hayecakarg.pdf>:

²⁶⁸ St' u Марченко М. Н. Судебное правоотворчество и судебское право. М.: ТК Велби, Изд-во Проспект, 2008, <http://knigi.link/gosudarstva-prava-teoriya/printsipyi-samostoyatelnosti-nezavisimosti-17845.html>, /Վերջին մուտք՝ 10.05.2018/:

դությունների համար պատասխանատվություն ստանձնելու պարտավորություն և պատրաստակամություն²⁶⁹: Հետևաբար, թեև դատական իշխանության անկախությունն ու հաշվետվողականությունն առաջին հայացքից կարող են միմյանց հակասող հասկացություններ թվալ, սակայն, մեր կարծիքով, ներկայացված բնորոշումները հիմք են տալիս եզրակացնելու, որ դրանք տարբեր բովանդակություն ունեցող և միմյանց փոխընդդեմ գաղափարներ են, արդյունքում՝ պետք է ընկալվեն և մեկնաբանվեն հենց այդ համատեքստում: Ավելին, հաշվետվողականությունը ենթադրում է *իրավունքի առջև* հաշվետու լինելու անհրաժեշտություն, և պետք է իրացվի սուկ այն շրջանակներում, որոնք չեն խաթարում դատական իշխանության անկախության սահմանները, քանզի, ինչպես արդեն նշեցինք, ժամանակակից սահմանադրական համակարգերի առանցքը սուկ *անկախ և անաչառ* դատական իշխանության *իրավունքի առջև* հաշվետվողականությունն է²⁷⁰:

Ներկայացված եզրահանգման մասին են վկայում նաև գրականության մեջ լայնորեն քննարկվող՝ հաշվետվողականության գնահատման ցուցիչները: Դրանք վերաբերում են բոլոր այն հանգամանքներին, որոնց առկայությունն է ենթադ-

²⁶⁹ Տե՛ս www.merriam-webster.com/dictionary/accountability /Էլեկտրոնային բառարան Մերրիամ-Վեբստեր/, /Վերջին մուտք՝ 11.06.2018թ./:

²⁷⁰ Այդ առումով հիշատակման է արժանի գրականության մեջ ներկայացված այն տեսակետը, որ թափանցիկությունը դատական իշխանության հաշվետվողականության կարևորագույն տարրերից է, սակայն այն պետք է իրացվի՝ նկատի ունենալով դատական իշխանության անկախության տեսանկյունից ենթադրվող սահմանները (Տե՛ս Independence and Accountability of the Judiciary // ENCJ Report 2013-2014, https://www.ency.eu/images/stories/pdf/workinggroups/independence/ency_report_independence_accountability_adopted_version_sept_2014.pdf, /Վերջին մուտք՝ 10.05.2018/):

րում դատական իշխանության հաշվետվողականության համարժեք մակարդակը: Այդ առումով, մասնավորապես, կարելի է հիշատակել դատավորների կարգապահական պատասխանատվության ինստիտուտի, դատավորի վարքագծի կանոնների առկայությունը, թափանցիկությունը (գործերի բաշխումը, ժամանակացույցերը, գործերի քննության տևողությունը, դատավորի կողմից արդարադատության իրականացումից բացի այլ թույլատրելի գործունեության իրականացումը պետք է թափանցիկ լինեն), դատարանի կողմից գործի քննության և դատարանի որոշման՝ կողմերի, հասարակության և լրատվամիջոցների համար օբյեկտիվորեն հասկանալի և ընկալելի լինելու անհրաժեշտությունը, դատարանի որոշումների՝ պատճառաբանված լինելու անհրաժեշտությունը, դատական իշխանության գործունեության առնչությամբ հաշվետվություններ ներկայացնելու կառուցակարգերի, լրատվամիջոցների հետ աշխատանքի համապատասխան սկզբունքների առկայությունն ու դրանց փաստացի իրացումը, դատավորի կողմից գործի անկախ և անաչառ քննության անհնարինության պարագայում նրա կողմից ինքնաբացարկ հայտնելու կամ բացարկի հնարավորությունը և այլն²⁷¹:

Վերը շարադրվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ ներկայացված գործոնների առկայության ու փաստացի իրացման

²⁷¹ Տե՛ս Independence and Accountability of the Judiciary // ENCJ Report 2013-2014,

https://www.ency.eu/images/stories/pdf/workinggroups/independence/ency_report_independence_accountability_adopted_version_sept_2014.pdf, /Վերջին մուտք՝ 10.08.2018/, Tirkey I. Judicial Accountability In India (Understanding and Exploring the Failures and Solutions to Accountability) // CCS Working Paper No. 247, http://ccs.in/internship_papers/2011/247_judicial-accountability-in-india_ishatirkey.pdf, /Վերջին մուտք՝ 10.08.2018/:

մակարդակով է պայմանավորված դատական իշխանության հաշվետվողականությունը կոնկրետ սահմանադրական համակարգում: Հետևաբար, վերջինիս առկայությունը գնահատվում է ոչ թե այն հանգամանքով, թե դատարանների կողմից ընդունվող որոշումները որքանով են հաճելի հասարակության համար, այլ նրանով, թե այդ որոշումները որքանով են իրավաչափորեն պատճառաբանված, արդարացի, ընդունված անկախության և անկողմնակալության սկզբունքների պահպանմամբ, այդ համատեքստում որքանով է համարժեք դատավորի վարքագիծը, այն է՝ դրսևորում է արդյոք վերջինս դատավորի բարձր կարգավիճակին համարժեք վարքագիծ, գերծ է մնում արդյոք դատական իշխանությունը վարկաբեկող, ինչպես նաև դատական իշխանության անկախության և անաչառության վերաբերյալ հանրության վստահությունը նվազեցնող վարքագիծ դրսևորելուց, դատավորի մասնագիտական և անձնական որակները հրապարակայնորեն կասկածի տակ առնելուց, և առկա են արդյոք վերը նշված չափանիշներին չհամապատասխանող վարքագծի կամ որոշումների պարագայում դրանք հաղթահարելու համար անհրաժեշտ իրավական կառուցակարգեր, որքանով են դրանք փաստացի իրացվում ու հանրության և լրատվամիջոցների հետ պատշաճ աշխատանքի արդյունքում մատուցվում հանրությանը: Արդյունքում՝ նաև եզրահանգում ենք, որ խոսքը հիշյալ համատեքստում դատական իշխանության՝ *հրավունքի առջև* հաշվետվողականության մասին է, և հանրության առջև հաշվետու լինելու հանգամանքը սուսկ ածանցվում է վերջինից: Այդ առումով հիշատակման է արժանի նաև այն հանգամանքը, որ թեև «Դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքն ամրագրում է «հան-

րության առջև հաշվետվողականություն» ձևակերպումը²⁷², սակայն սահմանադրական բարեփոխումների հայեցակարգային առաջնահերթությունների հիմքում է եղել անկախ, ինքնուրույն և *օրենքի առջև* հաշվետու դատական իշխանության կայացումը²⁷³: Հետևաբար, կարծում ենք, որ հանրության առջև հաշվետվողականության գաղափարն անհրաժեշտ է ընկալել հենց վերոնշյալ հայեցակարգային առաջնահերթությունների, մասնավորապես, օրենքի/իրավունքի առջև հաշվետու լինելու առաջնահերթության համատեքստում:

Ներկայացված վերլուծությունը հիմք է տալիս եզրակացնելու, որ հաշվետվողականությունն ինքնին *անկախ* դատական իշխանությանը բնորոշ հատկանիշ է, չի բացառում և չի հակասում վերջինիս, որևէ պարագայում չի կարող ընկալվել սուսկ որպես հանրությանը հաճո որոշումներ կայացնելուն ուղղված կառուցակարգ, ենթադրում է *հրավունքի առջև* հաշվետու լինելու անհրաժեշտություն, ունի գնահատման համապատասխան ցուցիչներ, որոնք ինքնին չեն խախտում, որևէ պարագայում չեն կարող խախտել դատական իշխանության անկախության սահմանները, և պետք է կյանքի կոչվեն ժողովրդի իշխանության իրացման սահմանների առնչությամբ

²⁷² «Դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 19 հոդվածի 1-ին մաս, որն ամրագրում է. «Դատարանների գործունեության արդյունավետությունը, թափանցիկությունը և հանրության առջև հաշվետվողականությունն ապահովելու նպատակով Դատական դեպարտամենտը հավաքում և վարում է դատական վիճակագրություն՝ Կառավարության սահմանած կարգով»:

²⁷³ Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգ / մշակվել է Հայաստանի Հանրապետության Նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի կողմից, Երևան, 2014թ. հոկտեմբեր, <http://www.parliament.am/library/sahmanadrakan%20barepoxumner/hayecakarg.pdf>, /Վերջին մուտք՝ 10.08.2018/:

աշխատանքի շրջանակներում ներկայացված մոտեցումների համատեքստում:

Ինչ վերաբերում է մեծամասնություն կազմող քաղաքական ուժերի կողմից սահմանադրական դատարանների նկատմամբ ազդեցության փորձերին, նշենք, որ ժամանակակից սահմանադրական համակարգերը նախատեսում են այդ երևույթները բացառող համապատասխան սահմանադրաիրավական կարգավորումներ: Հետևաբար, հիմնական երաշխիքը հիշյալ համատեքստում քաղաքական համապատասխան ինստիտուտների կողմից բավարար կամք դրսևորելու, «ողջամիտ ինքնասահմանափակման» սկզբունքը պահպանելու և նման երևույթներից ձեռնպահ մնալու համարժեք քաղաքական ու սահմանադրական մշակույթի ձևավորումն է:

Կարծում ենք, որ այդ հանգամանքը սերտորեն փոխկապված է նաև իշխանությունների բաժանման ու հավասարակշռման դոկտրինի և վերջինիս վերաիմաստավորման հետ, ինչին հարկ ենք համարում անդրադառնալ հիշյալ համատեքստում: Նշենք, որ գրականության մեջ հաճախ իշխանությունների բաժանման և հավասարակշռման առնչությամբ առկա մոտեցումները դիտարկվում են որպես իշխանության այլ ճյուղերի կողմից սահմանադրական դատարանի նկատմամբ այս կամ այն ազդեցության հանգամանքը հիմնավորելու միջոց՝ մասնավորապես, նկատի ունենալով օրենսդիր իշխանությունը որպես իշխանության առաջնային ճյուղ դիտարկելու վերաբերյալ տեսակետները: Այդ առումով առաջին հերթին ընդգծենք, որ, մեր կարծիքով, իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքը ևս ունի վերաիմաստավորման անհրաժեշտություն:

Մասնավորապես, կարծում ենք, որ վերջինս անհրաժեշտ է ոչ թե իշխանության ճյուղերը միմյանցից վերջնականապես մեկուսացնելու, այլ նրանց *փոխգործակցությունն ու համագործակցությունն ապահովելու համար*: Ավելին, *իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի հիմնական նպատակը ոչ թե պետական իշխանության մարմինների փոխադարձ վերահսկողության կառուցակարգերի առկայությունն է, այլ առաջին հերթին հիմնախնդիրների առավել ընդունելի և արդյունավետ համատեղ լուծումներ գտնելը*: Պատահական չէ իրավաբանական գրականության մեջ լայնորեն տարածված այն տեսակետը, որ հենց պետական իշխանության տարանջատումն է տալիս նրանց միջև համագործակցության հնարավորություն²⁷⁴: Հիշյալ համատեքստում հիշատակման է արժանի Գերմանիայի Դաշնային Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումը, համաձայն որի՝ սահմանադրական մարմինների գործունեության համակարգումը պահանջում է ... որպես նրանց անկախության երաշխիք, որպեսզի նրանք իրենց սահմանադրական գործունեությունը իրականացնելիս ներդաշնակ ձևով համագործակցեն միմյանց հետ և հրաժարվեն այնպիսի գործողություններից, որոնք կարող են վնաս պատճառել այլ սահմանադրական մարմինների հեղինակությանը՝ այդպիսով վտանգելով ինքնին Սահմանադրությունը²⁷⁵: ՌԴ Սահմանադրական դատարանը ևս իրա-

²⁷⁴ St̆ u Пулбере Д. Соблюдение прав человека и контроль конституционности законов в общем и на примере Республики Молдова // Конституционное правосудие: Вестник Конференции органов конституционного контроля стран молодой демократии, 1(51)2011, էջ 70:

²⁷⁵ St̆ u Люхтергандт О. Значение решений Федерального Конституционного Суда для правового порядка Германии // Альманах (Конституционное правосудие в новом тысячелетии). Ереван, 2011, էջ 128:

վական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ իշխանությունների տարանջատումը ենթադրում է իրավական երաշխիքների, զսպումների ու հակակշիռների այնպիսի համակարգ, որը բացառում է իշխանության կոնցենտրացումը դրանցից մեկի ձեռքերում, ապահովում է իշխանության բոլոր ճյուղերի ինքնուրույն և անկախ իրականացում ու միաժամանակ՝ համագործակցություն²⁷⁶:

Վերը շարադրվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ իշխանությունների բաժանման ու հավասարակշռման սկզբունքի նման ընկալման պայմաններում իշխանության որևէ ճյուղ չի կարող առաջնային կամ երկրորդային դիտարկվել այլ ճյուղերի նկատմամբ, և իշխանության բոլոր ճյուղերի գործունեության հիմնական նպատակը պետք է լինի առկա հիմնախնդիրների առավել ընդունելի և արդյունավետ համատեղ լուծումներ գտնելը, այլ ոչ որպես ինքնանպատակ՝ իշխանության այլ մարմինների նկատմամբ վերահսկողություն իրականացնելը: Այդ առումով սահմանադրական արդարադատությունը պետք է ընկալվի որպես համագործակցության ներկայացված մշակույթի պայմաններում առաջացած հիմնախնդիրներին սահմանադրաիրավական լուծում տվող անկախ կառուցակարգ, իսկ Սահմանադրական դատարանը չպետք է դիտարկվի որպես օրենսդիր կամ գործադիր իշխանության համար երկրորդային նշանակություն ունեցող մարմին կամ հակառակը՝ դատական ատյան, որը սուսկ վերահսկողություն է իրականացնում վերջիններիս գործունեության առանձին աս-

պեկտների նկատմամբ՝ արդյունքում փորձեր կատարելով ազդեցություն գործադրելու Սահմանադրական դատարանի նկատմամբ ու նշված հիմնավորումներով սահմանափակելու այդ մարմնի անկախությունը: «Ողջամիտ ինքնասահմանափակման» սկզբունքն էլ իր հերթին ենթադրում է բոլոր քաղաքական ուժերի զսպվածություն այնպիսի գործողությունների կատարման հարցում, որոնք կարող են վնաս պատճառել Սահմանադրական դատարանի հեղինակությանը՝ արդյունքում վտանգելով նաև Սահմանադրության փաստացի կենսագործումն ու սահմանադրական արժեքների գոյությունը:

Արդեն նշեցինք հեղափոխությունների, կառավարող իշխանությունը կազմող քաղաքական ուժերի փոփոխության արդյունքում ժողովրդի կողմից Սահմանադրական դատարանի նկատմամբ ճնշումների և դրանց ծավալի հնարավոր մեծացման մասին: Կարծում ենք, սակայն, որ նշված իրադարձությունները կարող են նաև հակառակ ազդեցությունն ունենալ իշխանության մարմինների կողմից Սահմանադրական դատարանի վրա ազդեցություն գործելու փորձերի առումով, հատկապես, երբ իշխանության համակարգում սկսում է բացակայել մեկ հիմնական ուժ, որը բացարձակ մեծամասնությամբ է կազմավորում իշխանությունը, կամ երբ օրենսդիր իշխանությունում մեծամասնություն կազմող ուժը տարբերվում է գործադիր իշխանությունը կազմավորող ուժից: Սրանք, իհարկե, բացառիկ իրավիճակներ են, սակայն դրանց համատեքստում փոքրանում է իշխանության այլ մարմինների կողմից Սահմանադրական դատարանի նկատմամբ ազդեցություն գործելու հավանականությունը, քանզի դասավորումների առումով իշխանության ուժերի ապակենտրոնաց-

²⁷⁶ Ст' u Зорькин В. Принцип разделения властей в деятельности Конституционного суда Российской Федерации // Конституционное правосудие: Вестник Конференции органов конституционного контроля стран молодой демократии. Ереван, 2(40)-3(41) 2008, էջ 28:

վածության պատճառով բացակայում է այն հիմնական կենտրոնը, որտեղից կարող են իրականացվել ճնշումները հիշյալ մարմնի նկատմամբ: Կարծում ենք, որ քաղաքական անկայունությունը, այդ թվում՝ օրենսդիր մարմնում ուժերի անընդհատ վերադասավորումները, կառավարություն ձևավորող կոալիցիաների անկայունությունը, ընդդիմադիր ուժերի կողմից գործադիր իշխանության ձևավորումը և այլն, Սահմանադրական դատարանին, բացի վերը շարադրվածից, նաև մանրեղու և դրա արդյունքում իր անկախությունը պահպանելու և մեծացնելու հնարավորություն են տալիս: Որպես օրինակ կարելի է հիշատակել մի շարք սահմանադրական դատարանների, այդ թվում՝ գրականության մեջ լայնորեն քննարկվող՝ Հունգարիայի Սահմանադրական դատարանի գործունեությունը 1990-ական թվականներին, երբ վերջինս քաղաքական իրավիճակի արդյունքում հաճախ էր մանրեղու հնարավորություն ունենում՝ ընդհուպ մինչև վիճարկվող օրենքների 1/3-ը նշված տարիներին հակասահմանադրական և անվավեր ճանաչելով: Ինքնուրույն գործունեության նման հաջողությունը բացատրվում է երեք հիմնական գործոնների առկայությամբ՝ Սահմանադրական դատարանին տրված լայն լիազորություններով, չափազանց ամբիցիոզ և նախկինում ընդդիմադիր գործիչ հանդիսացած նախագահի առկայությամբ, իշխանության մարմինների միջև բաժանման և հավասարակշռման հստակ համակարգով և Սահմանադրական դատարանի որոշումներն այս փուլում հարգելու պատրաստակամությամբ²⁷⁷: Վերջին

²⁷⁷ St' u Brown J. N., Waller J. G. Constitutional courts and political uncertainty: Constitutional ruptures and the rule of judges // International Journal of Constitutional Law, Volume 14, N 4, 1 October 2016, էջ 823-825:

գործոնը հիմք է տալիս եզրակացնելու, որ իշխանությունների բաժանման ու հավասարակշռման սկզբունքի վերախմաստավորման և այդ համատեքստում այն որպես առաջին հերթին իշխանության տարբեր մարմինների միջև համագործակցություն ընկալելու պայմաններում է միայն հնարավոր երաշխավորել այդ մարմինների բնականոն գործունեությունը, տվյալ պարագայում, մասնավորապես, Սահմանադրական դատարանի քաղաքականացման բացառումն ու անկախության երաշխավորումը: Հակառակ իրավիճակը հանգեցնում է ինչպես հիշյալ մարմինների գործունեության արդյունավետության նվազման, այնպես էլ դրանց հեղինակության անկման, ինչպես, օրինակ, 1990-ական թթ. սկզբում ՌԴ Սահմանադրական դատարանի պարագայում, որն, ունենալով բավականին լայն լիազորություններ, իշխանության այլ մարմինների կողմից իր որոշումների չկատարման ու դրանց նկատմամբ բավարար հարգանքի բացակայության պայմաններում վերածվեց փաստացի արդյունավետություն չունեցող ինստիտուտի, վտանգվեց վերջինիս հեղինակությունն, իսկ 1993թ.-ին Հանրապետության նախագահն ընդհանրապես ցրեց Սահմանադրական դատարանը, որի գործունեությունը վերականգնվեց սուկ 1995թ.-ին²⁷⁸:

Ամփոփելով վերը շարադրվածը՝ նշենք, որ Սահմանադրական դատարանն ինքնին ներգրավված է այնպիսի հարցադրումների առնչությամբ լուծումներ գտնելու գործընթացին, որոնք վերաբերում են նաև քաղաքական հարթությանը: Միևնույն ժամանակ, վերջինս դրանց առնչությամբ կարող է առաջարկել սուկ սահմանադրական բնույթ ունեցող լուծում-

²⁷⁸ St' u Brown J. N., Waller J. G. նշված աշխատությունը, էջ 825-827:

ներ և պետք է զերծ մնա քաղաքական հարթության տեսանկյունից դրանց համար կարգավորումներ առաջարկելու փորձերից: Մակայն ակնհայտ է, որ նույնիսկ քաղաքական նման զսպվածության պարագայում վերջինիս գործունեության արդյունքները էական դերակատարություն են ունենում քաղաքական գործընթացներն ուղղորդելու տեսանկյունից: Հետևաբար, որքան էլ պարադոքսալ չթվա, ակնհայտ է, որ լինելով գուտ դատական իշխանություն իրականացնող, սուկ սահմանադրաիրավական հարցեր լուծող, քաղաքական առումով չեզոք մարմին, Սահմանադրական դատարանն այսպես թե այնպես առանցքային նշանակություն ունեցող «քաղաքական դերակատարի» է վերածվում: Հետևաբար, այդ համատեքստում առաջին հերթին անհրաժեշտ է տարբերակել գուտ ակտիվ և սահմանադրաիրավական հարցերին պատասխաններ տալու միջոցով սահմանադրական վեճեր լուծող դատարանը քաղաքական գործընթացներին միջամտող, քաղաքական չեզոքություն չդրսևորող դատարանից: Վերջին իրավիճակն անընդունելի է, վկայում է Սահմանադրական դատարանի կողմից «ողջամիտ ինքնասահմանափակման» սկզբունքի խախտման մասին և ծայրահեղորեն նվազեցնում է հենց Սահմանադրական դատարանի հեղինակությունը: Համանման իրավիճակ առկա էր 1990-ական թթ. սկզբներին Ռուսաստանի Դաշնությունում, երբ գործադիր-օրենսդիր մարմինների ճգնաժամի ընթացքում Սահմանադրական դատարանը, իսկ ավելի հստակ՝ Դատարանի նախագահը, կոնֆլիկտի վերջին օրերին հրապարակայնորեն պաշտպանում էր խորհրդարանին: Ավելին՝ երբ վեճը լուծելու նպատակով Հանրապետության նախագահն արձակեց խորհրդարանը, ՄԴ նախագահը խորհրդարանի այլ ա-

ռաջնորդների հետ դա հրապարակայնորեն որակեց որպես հեղափոխություն՝ չնայած այն հանգամանքին, որ Դատարանի մի շարք անդամներ դեմ էին այդ տեսակետին²⁷⁹: Նպատակ չունենալով քննարկել սահմանադրական նշված վեճի մանրամասները, վերլուծել դրան առնչվող բոլոր իրավական և քաղաքական հարցադրումները և գնահատականներ տալ վերջիններիս, այնուամենայնիվ ընդգծենք, որ քաղաքական զսպվածության ու չեզոքության նման խախտումները, անկախ օբյեկտիվ իրականությունից, ակնհայտորեն ձևախեղում են իշխանությունների բաժանման ու հավասարակշռման սկզբունքի ամբողջ էությունը, հանգեցնում են դատական իշխանություն իրականացնող մարմինների գործունեության էության ձևախեղման և վերջիններիս հեղինակության անկման, հետևաբար, անընդունելի են բոլոր իրավիճակներում:

Վերը շարադրվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ Սահմանադրական դատարանի քաղաքականացումը բացառելը չափազանց բարդ է՝ հաշվի առնելով, որ գուտ ակտիվ և սահմանադրաիրավական հարցերին պատասխաններ տալու միջոցով սահմանադրական վեճեր լուծող դատարանը քաղաքական գործընթացներին միջամտող, քաղաքական չեզոքություն չդրսևորող դատարանից տարբերակելու սահմանն է չափազանց նուրբ: Միևնույն ժամանակ, ինչպես արդեն նշեցինք, ժողովրդաիշխանության և իշխանությունների բաժանման ու հավասարակշռման դոկտրինների վերաիմաստավորման պայմաններում այդ հանգամանքը լիակատար առումով իրացվելի է, ինչը, մեր կարծիքով, հնարավոր է իրականացված վերլուծության արդյունքում ամփոփ ներկայացվող ներքոհիշյալ

²⁷⁹ St' u Brown J. N., Waller J. G. նշված աշխատությունը, էջ 827:

երեք հիմնական հանգամանքների միաժամանակյա երաշխավորման պարագայում՝ 1. Սահմանադրական դատարանի կողմից «ողջամիտ ինքնասահմանափակման» սկզբունքի հարգման, քաղաքական զսպվածության ու չեզոքության պահպանման, արդյունքում՝ առաջադրվող հարցադրումներին սահմանադրական, այլ ոչ քաղաքական լուծումների ներկայացման պայմաններում, 2. ժողովրդի կողմից իր իշխանության սահմանների վերաբերյալ ընկալման հստակեցման, այդ իշխանության անսահմանափակ լինելու մոտեցման բացառման և նշված համատեքստում դատական իշխանության անկախությունը ժողովրդի կողմից հարգելու անհրաժեշտության իմաստավորման դեպքում, 3. իշխանության այլ ճյուղերի և մեծամասնություն կազմող քաղաքական ուժերի կողմից «ողջամիտ ինքնասահմանափակման» սկզբունքի պահպանման, իշխանությունների բաժանման ու հավասարակշռման սկզբունքի վերաիմաստավորման և այդ համատեքստում Սահմանադրական դատարանի անկախության, քաղաքական զսպվածության, չեզոքության և որոշումների նկատմամբ հարգանքի առկայության պայմաններում:

Հիշյալ համատեքստում հարկ ենք համարում անդրադառնալ նաև սահմանադրական լիազորությունների հարցով վեճերի մասնակիցներին և այդ առնչությամբ առկա հնարավոր խնդրահարույց հարցադրումներին:

Միջազգային պրակտիկայում քննարկվող հարցադրման առնչությամբ առկա է երկու հիմնական մոտեցում՝ 1. երբ օրենսդրությամբ հստակորեն առանձնացվում են այն սահմանադրական, պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինները, որոնք կարող են նշված գործերով դիմել Սահ-

մանադրական դատարան: Օրինակ՝ Ռումինիայի Հանրապետության Սահմանադրության 146-րդ հոդվածը սահմանում է, որ սահմանադրական դատարանը լուծում է պետական մարմինների միջև սահմանադրական բնույթի վեճերը՝ *Հանրապետության Նախագահի, Պառլամենտի երկու պալատների նախագահներից մեկի, Վարչապետի կամ Մագիստրատուրայի գերագույն խորհրդի նախագահի դիմումի հիման վրա*²⁸⁰: Գերմանիայում հիշյալ հարցով Սահմանադրական դատարան կարող են դիմել *Դաշնային նախագահը, Բունդեսրազը, Բունդեսրաթը, Դաշնային կառավարությունը, հիշյալ մարմինների այն ստորաբաժանումները, որոնք լիազորված են Հիմնական օրենքով կամ Բունդեսրազի կամ Բունդեսրաթի կանոնակարգերով, Հողերի կառավարությունը Հողերի բարձրագույն մարմինները և այդ մարմինների այն ստորաբաժանումները, որոնք լիազորված են Հողերի Սահմանադրությամբ կամ Հողերի բարձագույն մարմինների կանոնակարգով*²⁸¹: 2. երբ հիշյալ մարմիններն օրենսդրությամբ չեն հստակեցվում, և դիմող սուբյեկտի առնչությամբ նախատեսվում է ընդհանրական ձևակերպում: Օրինակ՝ «Սահմանադրական դատարանի մասին» Չեխիայի Հանրապետության օրենքի 120-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ իրավասության վերաբերյալ վեճերի դեպքում դիմող սուբյեկտներն են՝ *պետական մարմինը*՝ պետական մարմնի և տեղական ինքնակառավարման ռեզիդենտի միջև իրավասության

²⁸⁰ Տե՛ս http://www.cdep.ro/pls/dic/site.page?den=act2_2&par1=5#t5c0s0sba142, /Վերջին մուտք՝ 10.05.2018/:

²⁸¹ Տե՛ս «Գերմանիայի Դաշնային Սահմանադրական դատարանի մասին» օրենքի 63, 68, 71 հոդվածներ, http://www.bundesverfassungsgericht.de/SharedDocs/Downloads/EN/Gesetze/BVerfGG.pdf?__blob=publicationFile&v=5, /Վերջին մուտք՝ 10.05.2018/:

վերաբերյալ վեճերի կամ պետական մարմինների միջև իրավասության վերաբերյալ վեճերի դեպքում; *տեղական ինքնակառավարման ղեկավարման ղեկավարման մարմինը՝* պետական մարմնի և տեղական ինքնակառավարման ղեկավարման մարմնի միջև իրավասության վերաբերյալ վեճերի կամ տեղական ինքնակառավարման ղեկավարման մարմնի միջև իրավասության վերաբերյալ վեճերի դեպքերում²⁸²: Ալբանիայի Հանրապետության Սահմանադրության 131-րդ հոդվածը նախատեսում է, որ Սահմանադրական դատարանը լուծում է պետական մարմինների, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինների միջև առաջացած լիազորությունների վերաբերյալ վեճերը: Իսկ «Սահմանադրական դատարանի կազմավորման և գործունեության» մասին օրենքի 54 հոդվածը սահմանում է, որ հիշյալ հարցով Սահմանադրական դատարան կարող է դիմել այն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը, որը վեճի կողմ է հանդիսանում կամ ուղղակիորեն առնչվում է նշված վեճին²⁸³:

Նշենք, որ միջազգային պրակտիկայում առավել տարածված է առաջին մոտեցումը, և երկրների մեծամասնությունում օրենսդրությամբ հստակ նշվում են այն սահմանադրական, պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինները, որոնք նշված հարցերով կարող են դիմել Սահմանադրական դատարան:

Ինչպես արդեն նշեցինք, ՀՀ Սահմանադրությունը ևս հս-

տակեցնում է այն սահմանադրական մարմիններին, որոնք սահմանադրական լիազորությունների հարցով սահմանադրական վեճերով կարող են դիմել Սահմանադրական դատարան: Դրանք են, մասնավորապես, պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդը, Հանրապետության նախագահը, Կառավարությունը, Բարձրագույն դատական խորհուրդը և տեղական ինքնակառավարման մարմինները:

Միևնույն ժամանակ, քննարկվող հիմնախնդրի առնչությամբ հետաքրքիր կարգավորում է ամրագրում «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 75 հոդվածը՝ տարբերակելով սահմանադրական վեճերի առնչությամբ գործերով դիմող և պատասխանող կողմերին: Մասնավորապես, սահմանադրական օրենքը որպես նշված գործերով Սահմանադրական դատարան դիմող սուբյեկտներ հիշատակում է պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդին՝ Ազգային ժողովի և Ազգային ժողովի մարմինների սահմանադրական լիազորությունների առնչությամբ առաջացած վեճերով, Հանրապետության նախագահին, Կառավարությանը, Բարձրագույն դատական խորհրդին և տեղական ինքնակառավարման մարմիններին՝ իրենց սահմանադրական լիազորությունների առնչությամբ առաջացած վեճերով: Մինչդեռ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքով սահմանված պատասխանող կողմի շրջանակը շատ ավելի նեղ է: Որպես այդպիսիք, մասնավորապես, կարող են հանդես գալ Հանրապետության նախագահը, Ազգային ժողովը և Կառավարությունը: Ուստի, Բարձրագույն դատական խորհուրդը միակ սահմանադրական մարմինն է, որը հիշյալ գործերով հնարավորություն ունենալով դիմելու

²⁸² Տե՛ս https://www.usoud.cz/fileadmin/user_upload/ustavni_soud_www/Pravni_uprava/A/Constitutional_court_act_182_1993.pdf, /Վերջին մուտք՝ 10.05.2018/:

²⁸³ Տե՛ս http://www.gjk.gov.al/web/law_nr_8577_date_10_02_2000_84.pdf, /Վերջին մուտք՝ 10.05.2018/:

Սահմանադրական դատարան, միննույն ժամանակ, չի կարող ներգրավվել որպես պատասխանող կողմ:

Հաշվի առնելով վերը շարադրվածը՝ հիշյալ համատեքստում հարկ ենք համարում անդրադառնալ նշված խնդրի վերլուծությանն ու դրան առնչվող հարցադրումների քննարկմանը:

Առաջին հերթին նշենք, որ դատական իշխանություն իրականացնող կամ վերջինիս անկախությունը երաշխավորող մարմիններին որպես Սահմանադրական դատարանում քննության ենթակա սահմանադրական վեճերի կողմ դիտարկելու առնչությամբ միջազգային պրակտիկայում առկա են հետևյալ հիմնական մոտեցումները՝ 1. օրենսդրությամբ որպես սահմանադրական վեճի կողմ են դիտարկվում դատարանները, օրինակ՝ Սլովենիայում, Խորվաթիայում; 2. օրենսդրությամբ որպես սահմանադրական վեճի կողմ են դիտարկվում դատական իշխանության անկախությունը երաշխավորող մարմինները, օրինակ՝ Ռումինիայում, Բուլղարիայում, Հայաստանի Հանրապետությունում; 3. հիշյալ մարմինները բացառված են սահմանադրական վեճերի կողմերի շրջանակից, օրինակ՝ Հունգարիայում: Միննույն ժամանակ, կարևոր է նկատել, որ բոլոր այն վերոնշյալ երկրներում, որտեղ դատական իշխանություն իրականացնող կամ վերջինիս անկախությունը երաշխավորող մարմինները հանդես են գալիս որպես վեճի կողմ, օրենսդրությունը տարբերակում չի նախատեսում նրանց կողմից դիմող կամ պատասխանող կողմ հանդես գալու հնարավորությունների առումով: Ավելին, առանձին երկրներում բավականին մեծ թիվ են կազմում Սահմանադրական դատարանում քննվող հենց այն սահմանադրական վեճերը, ո-

րոնց կողմ են հանդիսանում դատական իշխանության մարմինները, օրինակ՝ Սլովենիայում²⁸⁴:

Ինչ վերաբերում է ներկայացված հնարավոր մոդելներին, կարծում ենք, որ քննարկվող հիմնախնդրի առումով լավագույն տարբերակը դատական իշխանության անկախությունը երաշխավորող մարմիններին որպես վեճի կողմ դիտարկելն է, ինչը հնարավորություն է տալիս բացառելու դատական իշխանություն իրականացնող մարմիններին նշված վեճերի մեջ անմիջականորեն ներգրավելուց՝ միաժամանակ նախադրյալներ ստեղծելով վերջիններիս անկախությունը երաշխավորող մարմնի միջոցով սահմանադրական նման վեճերի պարագայում համարժեք իրավական լուծումներ գտնելու համար:

ՀՀ Բարձրագույն դատական խորհուրդը հիշյալ գործերով որպես պատասխանող կողմ չդիտարկելու հիմնական պատճառը, հավանաբար, դատարանների անկախությունը երաշխավորող նշված մարմնի նկատմամբ հնարավոր ավելորդ ազդեցությունները բացառելն է: Միջազգային-իրավական փաստաթղթերում բազմիցս արձանագրվել է, որ նմանատիպ մարմինները երաշխավորում են դատարանների և դատավորների անկախությունը, ուստի՝ իրենք էլ պետք է անկախ լինեն և զերծ իշխանության այլ մարմինների միջամտություններից²⁸⁵: Բարձրագույն դատական խորհուրդն օժտված է այնպիսի սահմանադրական լիազորություններով, ինչպիսիք են, օրի-

²⁸⁴ Տե՛ս <http://www.us-rs.si/en/case-law/search-3441/>, /Վերջին մուտք՝ 10.05.2018/:

²⁸⁵ Տե՛ս OSCE/ODIHR Final Opinion on Draft Amendments to the Act on the National Council of the Judiciary and Certain Other Acts of Poland, Warsaw, 5 May 2017, <https://www.osce.org/odihhr/315946?download=true>, /Վերջին մուտք՝ 10.05.2018/:

նակ, դատավորների թեկնածուների ցուցակների կազմումն ու հաստատումը, դատավորի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու կամ նրան ազատությունից զրկելու վերաբերյալ համաձայնության տալը, դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելը և այլն, որոնց պարագայում վերջինս պետք է օժտված լինի լիակատար անկախությամբ: Մինչդեռ ակնհայտ է, որ նշված սահմանադրական լիազորությունների առնչությամբ սահմանադրական վեճի մեջ հիշյալ մարմնի ներգրավումը կամ դրա անընդհատ հավանականությունը ակնհայտորեն վտանգում են վերջինիս անկախությունն ու նրա սահմանադրական առաքելությունը ձևախեղելու հավանականություն են ստեղծում: Հետևաբար, այս տեսանկյունից Բարձրագույն դատական խորհուրդը սահմանադրական լիազորությունների առնչությամբ վեճերով պատասխանողների թվից բացառելու վերաբերյալ իրավակարգավորումը կարող է արդարացված դիտարկվել:

Միննույն ժամանակ, կարծում ենք, որ ՀՀ սահմանադրական կարգավորումները նախատեսում են մի շարք այնպիսի իրավիճակներ, երբ հիշյալ մարմինը ներգրավվում է սահմանադրական լիազորությունների առնչությամբ տարատեսակ այլ վեճերի շրջանակներում, այդ թվում՝ փաստացի հանդես գալով որպես գործով պատասխանող: Մասնավորապես, ՀՀ Սահմանադրության 139 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Հանրապետության նախագահը Սահմանադրության 166 հոդվածի 3-րդ, 4-րդ, 6-րդ և 7-րդ մասերով սահմանված դեպքերում (որոնք վերաբերում են Վճռաբեկ դատարանի դատավորների, Վճռաբեկ դատարանի պալատների նախագահների, առաջին աստիճանի և վերաքննիչ դատարանների դատավորների, առա-

ջին աստիճանի և վերաքննիչ դատարանների նախագահների նշանակմանը, երբ որպես առաջարկությամբ հանդես եկող մարմին է դիտարկվում Բարձրագույն դատական խորհուրդը) կարող է համապատասխան ակտը եռօրյա ժամկետում իր առարկություններով վերադարձնել առաջարկություն ներկայացնող կամ միջնորդությամբ դիմող մարմնին: Եթե իրավասու մարմինը չի ընդունում այդ առարկությունը, ապա Հանրապետության նախագահը ստորագրում է համապատասխան ակտը կամ **դիմում է Սահմանադրական դատարան**: Ընդ որում՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 86 հոդվածի համաձայն՝ տվյալ գործերով որպես պատասխանող դատավարությանը ներագրավվում է Հանրապետության նախագահին համապատասխան առաջարկություն ներկայացրած կամ միջնորդությամբ դիմած մարմինը: Հետևաբար, ակնհայտ է, որ նշված իրավիճակում ևս Բարձրագույն դատական խորհուրդը փաստացի ներգրավվում է իր կարևորագույն սահմանադրական լիազորությունների առնչությամբ վեճի մեջ՝ ընդհուպ հանդես գալով որպես գործով պատասխանող²⁸⁶: Ավելին, ՀՀ Սահմանադրության 168 և 169 հոդվածներում ևս խոսքը համապատասխան սահմանադրական մարմինների միջև նրանց սահմանադրական լիազորությունների առնչությամբ վեճերի մասին է, և ըստ էության, որևէ

²⁸⁶ Նշված հարցերի քննությունն առանձնացված է սահմանադրական մարմինների միջև իրենց սահմանադրական լիազորությունների առնչությամբ վեճերի քննությունից, և վերջինիս առանձնահատկություններն օրենքում ներկայացված են առանձին: Մակայն այդ հանգամանքը նշված գործի էությունը, որպես այդպիսին, չի փոխում, և փաստացի այս դեպքում էլ գործ ունենք սահմանադրական մարմինների միջև իրենց սահմանադրական լիազորությունների առնչությամբ վեճի հետ:

խոսք չի գնում որպես դիմող կամ պատասխանող հանդես գալու հարցի առնչությամբ այդ մարմինները տարբերակելու հանգամանքի մասին: Նույնիսկ եթե Բարձրագույն դատական խորհրդի առնչությամբ այլ սահմանադրական կարգավորումները, մասնավորապես, վերջինիս կարգավիճակը, լիազորությունների բնույթն ու դրանով պայմանավորված՝ անկախությունն ու հիշյալ մարմնի նկատմամբ ճնշումները բացառելու անհրաժեշտությունը, կարող են հիմք հանդիսանալ սահմանադրական լիազորությունների հարցով վեճերով վերջինիս՝ պատասխանող հանդես գալու հանգամանքը բացառելը հիմնավորելու համար, սակայն սահմանադրական ներկայացված այլ կարգավորումները, մասնավորապես 139, 168, 169 հոդվածները, ևս հուշում են, որ դրանց հիմքում չի դրվել Բարձրագույն դատական խորհուրդը սահմանադրական լիազորությունների հարցով վեճերի առումով պատասխանողների շարքից բացառելու տրամաբանությունը: Ավելին, կարծում ենք, որ հիշյալ գործերով որպես դիմող կողմ հանդես գալու դեպքում ևս քննարկվող մարմինը փաստացի ներգրավվում է սահմանադրական վեճի մեջ՝ չնայած այն հանգամանքին, որ տվյալ իրավիճակում շատ ավելի փոքր է վերջինիս անկախությունը սահմանափակելու և նրա սահմանադրական լիազորությունների իրացման վրա ազդեցություն գործելու հավանականությունը: Սակայն տվյալ պարագայում, մեր կարծիքով, առկա է խնդրահարույց մեկ այլ հանգամանք՝ այն, որ լիովին խաթարվում է Բարձրագույն դատական խորհրդի և այլ սահմանադրական մարմինների միջև փոխհարաբերությունների համաչափությունը, քննարկվող մարմինն անհամաչափ շահեկան դիրքում է հայտնվում բոլոր այլ մարմինների նկատմամբ և ու-

նենալով նման անհամաչափ շահեկան դիրք ու այլ սահմանադրական մարմիններին զսպող ու հակակշռող բազմաթիվ լիազորություններ՝ հիշյալ տեսանկյունից սկսում են լիովին բացակայել այլ մարմինների կողմից վերջինիս զսպող ու հակակշռող լիազորությունները:

Մինևույն ժամանակ, կարծում ենք, որ թեև վեճի կողմ հանդիսանալու պարագայում առաջանում է Բարձրագույն դատական խորհրդի նկատմամբ ազդեցություն գործելու հնարավորություն, սակայն նման տրամաբանությամբ առաջնորդվելու դեպքում նույն տեսակետը կարելի է հայտնել դատական իշխանություն իրականացնող կամ դատական իշխանության անկախությունը երաշխավորող մարմիններին առնչվող ցանկացած այլ գործի քննության առնչությամբ: Մինչդեռ հարկ է նկատի ունենալ, որ սահմանադրական մարմինների միջև իրենց սահմանադրական լիազորությունների առնչությամբ գործերի քննության պարագայում խոսքը, ինչպես արդեն նշեցինք, սուկ սահմանադրական հարցադրումների և սահմանադրական լիազորությունների քննարկման մասին է, մասնավորապես, համապատասխան գործողության, անգործության, իրավական ակտի, ներկայացված առաջարկության կամ միջնորդության սահմանադրականության: Այլ հարցադրումներ հիշյալ գործերի քննության շրջանակներում չեն կարող քննարկվել: Ավելին, ակնհայտ է, որ հիշյալ գործերը քննության են ենթակա դատական իշխանություն իրականացնող մարմնի, մասնավորապես, Սահմանադրական դատարանի կողմից, ինչը ենթադրում է արդարադատությանը բնորոշ բոլոր սկզբունքների և չափանիշների պահպանում:

Հավելենք նաև, որ միջազգային-իրավական փաստաթղ-

թերում լայնորեն քննարկվում են Բարձրագույն դատական խորհրդի առանձին որոշումների բողոքարկման անհրաժեշտությանն առնչվող հարցերը, մասնավորապես, ընդգծվում է դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու առնչությամբ որոշումները անկախ դատարանում բողոքարկելու կառուցակարգերի առկայության անհրաժեշտությունը²⁸⁷: «Դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 89 հոդվածն էլ նախատեսում է, որ որոշակի հարցերի առնչությամբ Բարձրագույն դատական խորհուրդն ընդունում է ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր, որոնց սահմանադրականությունը, ըստ ՀՀ Սահմանադրության 168 հոդվածի 1-ին կետի²⁸⁸ տրամաբանության, կարող է վիճարկվել Սահմանադրական դատարանում:

Հիշյալ համատեքստում հարկ է նաև նկատի ունենալ, որ Բարձրագույն դատական խորհուրդների գործունեության հիմքում դրված հիմնական միջազգային-իրավական չափանիշն այն է, որ վերջիններս պետք է **որոշիչ ազդեցություն** ունենան

²⁸⁷ Տե՛ս CDL-AD(2007)028, Judicial Appointments // Report adopted by the Venice Commission at its 70th Plenary Session (Venice, 16-17 March 2007), <http://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD%282007%29028-e>, /Վերջին մուտք՝ 10.05.2018/, CDL-AD(2017)019, Draft Judicial Code // Opinion adopted by the Venice Commission at its 112th Plenary Session (Venice, 6-7 October 2017),

[http://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD\(2017\)019-e](http://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2017)019-e), /Վերջին մուտք՝ 10.05.2018/:

²⁸⁸ ՀՀ Սահմանադրության 168 հոդվածի 1-ին կետը նախատեսում է, որ Սահմանադրական դատարանը Սահմանադրական դատարանի մասին օրենքով սահմանված կարգով

1) որոշում է օրենքների, Ազգային ժողովի որոշումների, Հանրապետության նախագահի հրամանագրերի և կարգադրությունների, Կառավարության և վարչապետի որոշումների, **ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի** համապատասխանությունը Սահմանադրությանը:

դատավորների նշանակման, ծառայողական առաջխաղացման և կարգապահական պատասխանատվության հարցերում²⁸⁹: Ավելին, նշված բոլոր փաստաթղթերում, այդ թվում՝ ՀՀ օրենսդրության առնչությամբ ներկայացված կարծիքներում, հստակորեն արձանագրվում է, որ քննարկվող հարցերի առնչությամբ Հանրապետության նախագահը չի կարող Բարձրագույն դատական խորհրդի կողմից ներկայացված թեկնածուին մերժելու իր լիազորությունը իրացնել սուկ այն պատճառով, որ կասկածներ ունի թեկնածուի որակների առնչությամբ: Նա այս լիազորությունը կարող է իրացնել միայն բացառիկ իրավիճակներում՝ ընտրության ընթացակարգերի կոպիտ խախտումների կամ թեկնածուի կողմից դատավորի կարգավիճակին ձևական պահանջների առումով ակնհայտ անհամապատասխանության պարագայում²⁹⁰: ՀՀ սահմանադրական և օրենսդրական ներկայացված կարգավորումների վերլուծությունը, մեր կարծիքով, վկայում է, որ դրանց հիմքում, ըստ էության, դրված է հենց նշված տրամաբանությունը, ինչը բացառում է այդ նորմերի այլ կերպ մեկնաբանումն ու իրացումը:

Հիշյալ համատեքստում ակնհայտ է դառնում, որ նույնիսկ եթե Բարձրագույն դատական խորհուրդը հանդես գա որպես

²⁸⁹ Տե՛ս CDL-AD(2007)028, Judicial Appointments // Report adopted by the Venice Commission at its 70th Plenary Session (Venice, 16-17 March 2007), <http://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD%282007%29028-e>, /Վերջին մուտք՝ 10.05.2018/, CDL-AD(2010)004, The Independence of the Judicial System Part I: The Independence of Judges // Report adopted by the Venice Commission at its 82nd Plenary Session (Venice, 12-13 March 2010):

²⁹⁰ Տե՛ս CDL-AD(2017)019, Draft Judicial Code // Opinion adopted by the Venice Commission at its 112th Plenary Session (Venice, 6-7 October 2017), [http://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD\(2017\)019-e](http://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2017)019-e), /Վերջին մուտք՝ 10.05.2018/:

սահմանադրական լիազորությունների հարցով վեճի պատասխանող կողմ, այդ գործի շրջանակներում կարող է քննվել բացառապես համապատասխան գործողության, անգործության կամ ակտի սահմանադրականությանը վերաբերող հարցադրում:

Ամփոփելով վերը շարադրվածը՝ կարող ենք կատարել հիմնախնդրի առնչությամբ հետևյալ հիմնական եզրահանգումները.

- ՀՀ սահմանադրական կարգավորումների հիմքում ընկած չէ Բարձրագույն դատական խորհուրդը սահմանադրական լիազորությունների հարցով վեճերի առումով պատասխանողների շարքից բացառելու տրամաբանությունը,

- Բարձրագույն դատական խորհուրդը սահմանադրական լիազորությունների առնչությամբ վեճերով պատասխանողների թվից բացառելու վերաբերյալ իրավակարգավորումը կարող է արդարացված դիտարկվել այն տեսանկյունից, որ նշված վեճերի մեջ հիշյալ մարմնի ներգրավումը կամ դրա անընդհատ հավանականությունը ակնհայտորեն վտանգում է վերջինիս անկախությունը, ու նրա սահմանադրական առաքելությունը ձևախեղելու հավանականություն է ստեղծում,

- Անկախ կարգավիճակից՝ հիշյալ գործերով որպես կողմ հանդիսանալու դեպքում Բարձրագույն դատական խորհուրդը փաստացի ներգրավվում է սահմանադրական վեճի մեջ՝ չնայած այն հանգամանքին, որ որպես դիմող հանդես գալու պարագայում շատ ավելի փոքր է վերջինիս անկախությունը սահմանափակելու և նրա սահմանադրական լիազորությունների իրացման վրա ազդեցություն գործելու հավանականությունը,

- Բարձրագույն դատական խորհուրդը հիշյալ գործերով դիմող դիտարկելու, սակայն պատասխանողների շարքից բա-

ցառելու պարագայում լիովին խաթարվում է վերջինիս և այլ սահմանադրական մարմինների միջև փոխհարաբերությունների համաչափությունը, քննարկվող մարմինն անհամաչափ շահեկան դիրքում է հայտնվում բոլոր այլ մարմինների նկատմամբ և ունենալով նման անհամաչափ շահեկան դիրք ու այլ սահմանադրական մարմիններին զսպող ու հակակշռող բազմաթիվ լիազորություններ՝ հիշյալ տեսանկյունից սկսում են լիովին բացակայել այլ մարմինների կողմից վերջինիս զսպող ու հակակշռող լիազորությունները,

- Վերը շարադրվածը նկատի ունենալով՝ կարծում ենք, որ անհրաժեշտ է ընդհանուր տրամաբանություն դնել հիշյալ հիմնախնդրի առնչությամբ սահմանադրաիրավական կարգավորումների հիմքում՝ կա՛մ դիտարկել Բարձրագույն դատական խորհուրդը սահմանադրական վեճերի կողմ՝ ինչպես դիմողի, այնպես էլ պատասխանողի կարգավիճակում, կա՛մ բացառել հիշյալ մարմինը Սահմանադրական դատարանում քննության ենթակա սահմանադրական վեճերի կողմի շրջանակից:

§ 3. Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների զարգացման հիմնախնդիրները՝ սահմանադրական կայունության երաշխավորման համատեքստում

Արդեն նշեցինք, որ Սահմանադրության զարգացման եղանակների արդյունավետ իրացումը ենթադրում է ոչ միայն վերջինիս տեքստում փոփոխություններ կատարելու, այլ նաև մի շարք այլ եղանակներով, այդ թվում՝ Սահմանադրության պաշտոնական մեկնաբանության միջոցով Հիմնական օրենքի

զարգացման հնարավորություն: Այդ հանգամանքն իր հերթին հիմք է տալիս եզրակացնելու, որ սահմանադրական կայունությունը ենթադրում է նաև նման մեկնաբանություն ընդգրկող ՄԴ իրավական դիրքորոշումների կայունություն:

Հետևաբար, հիշյալ համատեքստում անհրաժեշտ ենք համարում վերլուծել այն հարցադրումները, թե կարող են արդյոք զարգանալ սահմանադրական մեկնաբանություն ընդգրկող ՄԴ իրավական դիրքորոշումները, և եթե այո, ապա ինչպես և ինչպիսի հաճախականությամբ:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 61 հոդվածի համաձայն՝ Սահմանադրական դատարանի ըստ էության ընդունված որոշումները պարտադիր են բոլոր պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց պաշտոնատար անձանց, ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանց համար՝ Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում: Կարծում ենք, որ օրենսդրական հիշյալ դրույթն ինքնին ենթադրում է, որ այն վերաբերում է Սահմանադրական դատարանի ամբողջ որոշմանը, հետևաբար ինչպես պատճառաբանական, այնպես էլ եզրափակիչ մասերում արտահայտված իրավական դիրքորոշումներին²⁹¹:

Ուստի, հաջորդ հարցը, որն առաջանում է հիշյալ համատեքստում, այն է, թե արդյոք սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները պարտադիր են նաև հենց իր՝ Սահմանադրական դատարանի համար և կարող է արդյոք

²⁹¹ Այդ մասին մանրամասն վերլուծությունը տե՛ս Մանասյան Ա. Սահմանադրական դատարանի որոշումների տեղը ՀՀ իրավական համակարգում և դրանց դերը Սահմանադրության կայունության ապահովման գործում, Երևան, 2013, էջ 56-116:

վերջինս դրանք ժամանակի ընթացքում փոփոխել:

Վերը նշված եզրահանգումը հեղինակների մեծ մասին հիմք է տվել եզրակացնելու, որ հասցեատերերի համար ՄԴ իրավական դիրքորոշումների պարտադիրությանն առնչվող կանոնը վերաբերում է նաև հենց իրեն՝ սահմանադրական դատարանին²⁹²: Սակայն իրավաբանական գրականության մեջ հանդիպում է և այն տեսակետը, որ պարտադիրության հիշյալ կանոնն իր տարածման շրջանակների տեսանկյունից ունի մեկ բացառություն, այն է՝ Սահմանադրական դատարանը, քանզի վերջինս օժտված է իր նախադեպային իրավունքում ամրագրված սկզբունքները փոփոխելու հնարավորությամբ²⁹³:

Անդրադառնալով քննարկվող հիմնախնդրի առնչությամբ ՀՀ օրինակին՝ նշենք, որ, մեր կարծիքով նույնպես, սահմանադրական արդարադատությունն իրականացնող մարմինը սահմանափակված է իր կողմից արտահայտված իրավական դիրքորոշումներով: Հակառակ իրավիճակը կարող է հանգեցնել իրավական պետության հիմքում ընկած այնպիսի արժեքների ձևախեղման, ինչպիսիք են սահմանադրական դատարանի գործունեության կանխատեսելիությունը, պրակտիկայի շարունակականությունը, իրավական որոշակիության

²⁹² St´u Marchenko M. H. Источники права. М., 2008, էջ 414, Кряжков В. А., Лазарев Л. В., նշված աշխատությունը, էջ 239, Кампо В. Правовые позиции Конституционного суда Украины как необходимый элемент обеспечения судебно-правовой реформы // Конституционное правосудие: Вестник Конференции органов конституционного контроля стран молодой демократии, 1(47)2010, էջ 27, Ku´ris E. Constitutional Law as Jurisprudential Law – the Lithuanian Experience, with Special Reference to Human Rights // Конституционное правосудие: Вестник Конференции органов конституционного контроля стран молодой демократии, 1(51)2011, էջ 111:

²⁹³ St´u Kommers D. P. The Constitutional Jurisprudence of the Federal Republic of Germany. Duke University Press, Durham and London, 1997, էջ 54:

սկզբունքի պահպանումը և այլն: Այդ է պատճառը, որ իր գործունեության ընթացքում ՀՀ սահմանադրական դատարանը հավատարիմ է մնում նախկինում արտահայտած իր իրավական դիրքորոշումներին՝ որոշումների շրջանակներում պարբերաբար վկայակոչելով դրանք²⁹⁴:

Հիշյալ համատեքստում հարկ ենք համարում ընդգծել կանխատեսելիության առանցքային դերակատարությունը ինչպես կայունության երաշխավորման, այնպես էլ իրավական պետության կայացման տեսանկյունից: Ակնհայտ է, որ հասարակական հարաբերությունների մասնակիցների իրավաչափ ակնկալիքի պաշտպանությունն ու երաշխավորումը կայունության, իրավական որոշակիության և իրավական պետության կայացման կարևորագույն գրավականներից են: Այդ առումով հիշատակման է արժանի գրականության մեջ արտահայտված այն տեսակետը, որ դատական ակտերի կանխատեսելիությունը հնարավորություն է տալիս դատավարության հնարավոր մասնակիցներին հնարավորինս ճշգրիտ կանխատեսելու քննության արդյունքները՝ նախքան իրենց գործը դատարան ներկայացնելը և այդ առնչությամբ որոշում կայացնելը: Դատական ակտերի կանխատեսելիության մեծացմանը զուգահեռ նվազում է դատավարությունների թիվը՝ նպաստելով առավել կայուն սոցիալական միջավայրի ձևավորմանը²⁹⁵:

²⁹⁴ Տե՛ս, օրինակ, ՀՀ սահմանադրական դատարանի՝ 27 մայիսի 2008թ. ՍԴՌ-754, 19 հունվարի 2010թ. ՍԴՌ-852, 25 փետրվարի 2011թ. ՍԴՌ-943, 5 մայիսի 2012թ. ՍԴՌ-1027 և մի շարք այլ որոշումներ:

²⁹⁵ Տե՛ս Priscaariu M. R. The Predictability of Romanian Constitutional Court Decisions and the Political 'Migration' of Parliamentarians // Reforme ale Justitiei in Europa de Est, Institutul European Publishing, Iasi, 2014, https://papers.ssrn.com/sol3/papers.cfm?abstract_id=2597715, /Վերջին մուտք՝ 05.09.2018/:

Ավելին, ընդգծվում է, որ կայունությունն ու իրավական կանխատեսելիությունը արժևորվում են նաև բարոյական տեսանկյունից, քանի որ դրանք երաշխավորում են, որպեսզի համանման գործերի նկատմամբ դրսևորվի հավասար վերաբերմունք²⁹⁶:

Միևնույն ժամանակ հարկ է նկատի ունենալ, որ սավաճն ամեննին չի ենթադրում իրավական բոլոր երևույթների, այդ թվում՝ Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների բացարձակ անփոփոխելիություն: Աշխատանքի շրջանակներում բազմիցս ենք նշել, որ կայունությունը չի նշանակում անփոփոխելիություն, իսկ «կայունությունն» ու «զարգացումը կամ փոփոխելիությունը» միմյանց բացառող հասկացություններ չեն: Ավելին, ակնհայտ է, որ սահմանադրական դատարանի կողմից սահմանադրական դոկտրինի ձևավորումը ոչ թե մեկանգամյա, այլ անընդհատ ու աստիճանաբար իրականացվող գործընթաց է²⁹⁷: Հետևաբար, վերջինս կարծրացած երևույթ չէ և հասարակական հարաբերությունների զարգացմանը զուգընթաց կարող է փոփոխվել: Այդ է պատճառը, որ իրավաբանական գրականության մեջ լայնորեն տարած-

²⁹⁶ Տե՛ս Lindquist A. S., Cross C. F. Stability, Predictability and the Rule of Law: Stare Decisis as Reciprocity Norm, University of Texas School of Law, <https://law.utexas.edu/conferences/measuring/The%20Papers/Rule%20of%20Law%20Conference.crosslindquist.pdf>, /Վերջին մուտք՝ 05.09.2018/:

²⁹⁷ Այդ առումով հիշատակման է արժանի Լիտվայի Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումը, համաձայն որի՝ կոնկրետ սահմանադրաիրավական հիմնախնդրի առնչությամբ պաշտոնական սահմանադրական դոկտրինը ձևավորվում է ոչ թե «անմիջապես», այլ «գործ առ գործ» սկզբունքով (տե՛ս Ruling No. 33/03 of the Constitutional Court of the Republic of Lithuania of 28 March 2006, <http://www.lrkt.lt/dokumentai/2006/r060328.htm>, /Վերջին մուտք՝ 01.09.2015/):

ված է այն տեսակետը, որ Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների կայունությունը չի նշանակում, որ դրանք չեն կարող կոնկրետացվել, հստակեցվել կամ փոփոխվել՝ Սահմանադրության մեջ և օրենքներում, ինչպես նաև հասարակական ու պետական կյանքում տեղի ունեցող փոփոխություններին զուգընթաց²⁹⁸:

Պատահական չէ, որ մի շարք պետություններում, ինչպիսիք են, օրինակ, ՌԴ, Գերմանիան, Լիտվան, Հունգարիան և այլն, Սահմանադրական դատարանին տրված է նախկինում ընդունած իր որոշումներից շեղվելու ու դրանք փոփոխելու հնարավորություն²⁹⁹: Լիտվայի Սահմանադրական դատարանը քննարկվող հիմնախնդրի առնչությամբ նույնիսկ արտահայտել է իրավական դիրքորոշում՝ ամրագրելով, որ հակառակ մեկնաբանությունը կնշանակեր, որ Սահմանադրական դատարանը չի իրականացնում սահմանադրական արդարադատություն և չի ապահովում Սահմանադրության գերակայությունը³⁰⁰: Նշվածի առումով գրականության մեջ ևս կարծիք է արտահայտվել այն մասին, որ նախադեպերի բացարձակ կա-

²⁹⁸ Տե՛ս, օրինակ, Витрук Н. Конституционное правосудие. М., 2005, էջ 119, Бондарь Н. Судебный конституционализм в России. М. 2011, էջ 130, Зорькин В. Современный мир, право и Конституция. М., 2010, էջ 167:

²⁹⁹ Տե՛ս Զորյկին В. Принцип разделения властей в деятельности Конституционного суда Российской Федерации // Конституционное правосудие: Вестник Конференции органов конституционного контроля стран молодой демократии, Ереван, 2(40)-3(41) 2008, էջ 34-35, Kommers D. P., նշված աշխատությունը, էջ 54, Ruling No. 33/03 of the Constitutional Court of the Republic of Lithuania of 28 March 2006, <http://www.lrkt.lt/dokumentai/2006/r060328.htm>, /Վերջին մուտք՝ 01.09.2015/:

³⁰⁰ Տե՛ս Ruling No. 33/03 of the Constitutional Court of the Republic of Lithuania of 28 March 2006, <http://www.lrkt.lt/dokumentai/2006/r060328.htm>, /Վերջին մուտք՝ 01.09.2015/:

յունությունն ու կանխատեսելիությունը հանգեցնում են այնպիսի կոշտ իրավական պարադիգմայի ձևավորման, որը ունակ չի լինում փոփոխությունների՝ սոցիալական նորմերի և պրակտիկայի փոփոխություններին զուգահեռ³⁰¹:

Վերը շարադրվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ սահմանադրական կայունության տեսանկյունից բացառիկ կարևորություն ունի ինչպես Սահմանադրական դատարանի գործունեության կանխատեսելիությունը, այնպես էլ փոփոխվող հասարակական հարաբերություններին սահմանադրական դոկտրինի համապատասխանեցման անհրաժեշտությունը:

Հետևաբար, կարծում ենք, որ սահմանադրական կայունության երաշխավորման տեսանկյունից հիշյալ համատեքստում առաջնահերթ կարևորություն ունի այն հանգամանքը, որպեսզի Սահմանադրական դատարանն օժտված լինի սահմանադրական դոկտրինի զարգացման համարժեք հնարավորություններով, սակայն միևնույն ժամանակ, հիշյալ դոկտրինի զարգացման հիմքում չլինի Սահմանադրական դատարանի անսահմանափակ հայեցողությունը: Լիտվայի Սահմանադրական դատարանը, օրինակ, այդ առումով իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ Դատարանի կողմից իր նախադեպերից շեղումը հնարավոր է միայն, երբ դա անհրաժեշտ է Սահմանադրությամբ ամրագրված արժեքների, մասնավորապես, մարդու իրավունքների առավել լայն պաշտպա-

³⁰¹ Տե՛ս Lindquist A. S., Cross C. F. Stability, Predictability and the Rule of Law: *Stare Decisis* as Reciprocity Norm, University of Texas School of Law, <https://law.utexas.edu/conferences/measuring/The%20Papers/Rule%20of%20Law%20Conference.crosslindquist.pdf>, /Վերջին մուտք՝ 01.09.2018/:

նության համար, և այդ հանգամանքը պետք է հստակ պատճառաբանվի յուրաքանչյուր գործի շրջանակներում³⁰²:

Հիշյալ համատեքստում հիշատակման է արժանի այն հանգամանքը, որ մեր կարծիքով, Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների զարգացումը ենթադրում է երկու հնարավոր իրավիճակների առկայություն՝ 1. երբ անհրաժեշտ է հիմնավորապես փոփոխել Սահմանադրական դատարանի նախկինում արտահայտած կոնկրետ իրավական դիրքորոշումը, 2. երբ անհրաժեշտ է լայնացնել Սահմանադրական դատարանի նախկինում արտահայտած կոնկրետ իրավական դիրքորոշման ծավալը՝ առանց փոփոխելու վերջինիս բովանդակությունը:

Մեր կարծիքով, երկու իրավիճակներում էլ քննարկվող հիմնախնդրի արդյունավետ լուծման հիմնական բանալին սահմանադրական դատարանի պրակտիկայի շարունակականության ու կանխատեսելիության և սահմանադրական դոկտրինի զարգացման հիմքում ընկած արժեքների միջև յուրաքանչյուր կոնկրետ իրավիճակում հավասարակշռություն գտնելն է՝ սահմանադրական դատարանի կողմից «ողջամիտ ինքնասահմանափակման» սկզբունքի պահպանմամբ:

Կարծում ենք, որ առաջին իրավիճակում նշված հավասարակշռությունը ենթադրում է, որ Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները փոփոխել հնարավոր է սուսկ այն դեպքում, երբ առկա է կոնկրետ սահմանադրական

անհրաժեշտություն, այն է՝ սահմանադրական համապատասխան նորմի կամ դրա ընկալման փոփոխությունը:

Ինչ վերաբերում է ներկայացված երկրորդ իրավիճակում Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների զարգացմանը, կարծում ենք, որ վերջինս ևս հնարավոր է սահմանադրական նորմի կամ դրա ընկալման փոփոխության դեպքում, սակայն որևէ պարագայում չի կարող սահմանափակվել միայն նշված փոփոխություններին առնչվող իրավիճակներով: Ինչպես նշեցինք, սահմանադրական դատարանի կողմից սահմանադրական դոկտրինի ձևավորումը ոչ թե մեկանգամյա, այլ անընդհատ ու աստիճանաբար իրականացվող գործընթաց է: Ավելին, նշված դոկտրինը կարծրացած երևույթ չէ և հասարակական հարաբերությունների զարգացմանը զուգընթաց կարող է ընդլայնվել: Ուստի ակնհայտ է, որ դիրքորոշման բովանդակությունը հիմնավորապես չփոփոխելու պարագայում սուսկ վերջինիս ծավալի ընդլայնման դեպքերը չեն կարող պայմանավորված լինել բացառապես սահմանադրական նորմի կամ վերջինիս ընկալման փոփոխություններով, և կարող են տեղի ունենալ ցանկացած իրավիճակում, եթե պահպանվում է հիշյալ հիմնախնդրի լուծման հիմնական բանալին, այն է՝ Սահմանադրական դատարանի պրակտիկայի շարունակականության ու կանխատեսելիության և սահմանադրական դոկտրինի զարգացման հիմքում ընկած արժեքների միջև յուրաքանչյուր կոնկրետ իրավիճակում հավասարակշռություն գտնելը՝ սահմանադրական դատարանի կողմից «ողջամիտ ինքնասահմանափակման» սկզբունքի պահպանմամբ:

Որպես օրինակ կարելի է հիշատակել խտրականության

³⁰² St' u Ku' ris E. Constitutional Law as Jurisprudential Law – the Lithuanian Experience, with Special Reference to Human Rights // Конституционное правосудие: Вестник Конференции органов конституционного контроля стран молодой демократии, 1(51)2011, էջ 111:

արգելքին առնչվող ՀՀ Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները: ՀՀ Սահմանադրական դատարանը 29 հունվարի 2008թ. ՄԴՈ-731 որոշմամբ արձանագրեց, որ «ՀՀ Սահմանադրության 14.1-րդ հոդվածն ամրագրում է օրենքի առջև բոլորի հավասարության սկզբունքը: Այս հոդվածի պահանջներին համապատասխան՝ պետության պոզիտիվ սահմանադրական պարտականությունն է ապահովել այնպիսի պայմաններ, որոնք նույն կարգավիճակն ունեցող անձանց **հավասար հնարավորություն կտան իրացնելու**, իսկ խախտման դեպքում՝ պաշտպանելու իրենց իրավունքները, հակառակ դեպքում կխախտվեն ոչ միայն հավասարության, խտրականության արգելման, այլ նաև իրավունքի գերակայության և իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքները»: Այնուհետև զարգացնելով իր այս իրավական դիրքորոշումները՝ Դատարանը 4 մայիսի 2010թ. ՄԴՈ-881 որոշմամբ արձանագրեց. «Սահմանադրական դատարանը խտրականության արգելման սկզբունքի շրջանակներում թույլատրելի է համարում օբյեկտիվ հիմքով և իրավաչափ նպատակով պայմանավորված ցանկացած տարբերակված մոտեցում: Խտրականության արգելման սկզբունքը չի նշանակում, որ միևնույն կատեգորիայի անձանց շրջանակում ցանկացած տարբերակված մոտեցում կարող է վերածվել խտրականության: Խտրականության սկզբունքի խախտում է հանդիսանում այն տարբերակված մոտեցումը, որը գուրկ է օբյեկտիվ հիմքից և իրավաչափ նպատակից: ...: Սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենքի առջև բոլորի հավասարության սահմանադրական սկզբունքը ենթադրում է օրենքի առջև հավասար պատասխանատ-

վության, պատասխանատվության անխուսափելիության և իրավական պաշտպանության հավասար պայմանների ապահովում, և չի առնչվում իրավական տարբեր կարգավիճակ ունեցող սուբյեկտների համար որևէ իրավաչափ նպատակով պայմանավորված նախադրյալներ՝ տվյալ դեպքում սոցիալական անկախության երաշխիքներ նախատեսելու կամ իրավունքի տվյալ կատեգորիայի սուբյեկտների համար լրացուցիչ պարտականություններ սահմանելուն»: 7 հունիսի 2011թ. ՄԴՈ-967 որոշմամբ ՀՀ Սահմանադրական դատարանը նշեց, որ «ենթադրյալ խտրականության դեպքում առկա պետք է լինի մի իրավիճակ, երբ տվյալ կոնկրետ սուբյեկտի նկատմամբ դրսևորվում է տարբերակված մոտեցում նույն իրավիճակում գտնվող այլ սուբյեկտի համեմատությամբ, ում նկատմամբ վերաբերմունքն ավելի բարենպաստ է»: 7 հուլիսի 2015թ. ՄԴՈ-1224 որոշման շրջանակներում Դատարանը նաև արձանագրեց, որ «խտրականությունն առկա է այն դեպքում, երբ նույն իրավական կարգավիճակի շրջանակներում այս կամ այն անձի կամ անձանց նկատմամբ դրսևորվում է տարբերակված մոտեցում, մասնավորապես՝ նրանք զրկվում են այս կամ այն իրավունքներից, կամ դրանք սահմանափակվում են, կամ ձեռք են բերում արտոնություններ»:

Նշենք, որ 2015թ. փոփոխություններից հետո ՀՀ Սահմանադրությունը օրենքի առջև ընդհանուր հավասարության և խտրականության արգելքի առնչությամբ նախատեսում է բովանդակային առումով 2005թ. խմբագրությամբ Սահմանադրությանը համանման կարգավորումներ: Այդ առումով հատկանշական է, որ սահմանադրական փոփոխություններից հե-

տո՝ 10 հուլիսի 2018թ. ՀՀ Սահմանադրական դատարանն ընդունեց ՄԴՌ-1424 որոշումը, որով վերահաստատեց քննարկվող հարցադրման առնչությամբ նախկինում արտահայտած և աշխատանքի շրջանակներում արդեն իսկ ներկայացված իր նախկին իրավական դիրքորոշումները:

Վերադառնալով Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների զարգացմանն առնչվող հարցադրմանը՝ նշենք, որ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 68 հոդվածի 16-րդ մասը նախատեսում է սահմանադրական դատարանի կողմից այդ հոդվածի 9-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված որոշումները օրենքով սահմանված կարգով ներկայացված համապատասխան դիմումի հիման վրա վերանայելու հնարավորություն, եթե 1) փոփոխվել է Սահմանադրության՝ տվյալ գործով կիրառված դրույթը, 2) ի հայտ է եկել տվյալ գործով կիրառված Սահմանադրության դրույթի այնպիսի նոր ընկալում, որի առկայությամբ նույն հարցի վերաբերյալ կարող է ընդունվել սահմանադրական դատարանի այլ որոշում, և եթե տվյալ հարցն ունի սկզբունքային սահմանադրաիրավական նշանակություն:

Որոշ հետինակների կարծիքով, տվյալ պարագայում պետք է խոսք գնա ոչ թե սահմանադրական դատարանի որոշումների, այլ վերջինիս իրավական դիրքորոշումների վերանայման մասին, քանզի սահմանադրական դատարանի որոշման վերանայումը առաջ է բերում նախկինում կայացված որոշման հիման վրա ձևավորված օրենսդրական և իրավակիրառ քաղաքականության փոփոխություն, մինչդեռ սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշման վերանայումը նշանակում է, որ սահմանադրական դատարանը փոխում է նախկին

նում ձևավորած իր դիրքորոշումը և, պայմանավորված հասարակական կյանքի էական փոփոխություններով, նոր գործով վերանայում է սահմանադրական նորմի ընկալումը: Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշման փոփոխությունը չի կարող ունենալ հետադարձ նշանակություն և առաջ բերել նախկինում կայացված որոշման հիման վրա ձևավորված օրենսդրական և իրավակիրառ պրակտիկայի փոփոխություն³⁰³:

Ակնհայտ է, որ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքով ամրագրված «որոշման վերանայում» ձևակերպումը վերաբերում է նաև իրավական դիրքորոշումներին: Սակայն, մեր կարծիքով, քննարկվող դրույթի նպատակը ոչ թե Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների, այլ ակտի սահմանադրականության կամ հակասահմանադրականության վերաբերյալ վերջնական եզրահանգման վերանայման առնչությամբ կարգավորումներ ամրագրելն է, և իրավական դիրքորոշումներին վերջինս վերաբերում է այնքանով, որքանով դրանց փոփոխությունն անհրաժեշտ է քննարկվող եզրահանգումը վերանայելու համար: Այդ է վկայում նաև Սահմանադրական դատարանի որոշումները վերջինիս կողմից վերանայելու հնարավորություն նախատեսող պետությունների՝ հիշյալ հիմնախնդրին առնչվող արդարադատական պրակտիկան, երբ նմանատիպ դրույթների հիման վրա վերանայվում է Դատարանի վերջնական եզրահանգումը՝ հիմքում ունենալով նախկին իրավական դիրք-

³⁰³ Տե՛ս Ղամբարյան Ա. ՀՀ սահմանադրական դատարանի որոշումների վերանայման թույլատրելիությունը // Իրավագիտության հարցեր, N 1-2, Երևան, 2009, էջ 50:

քորոշման փոփոխությունը³⁰⁴:

Մինչդեռ սահմանադրական արդարադատության միջազգային պրակտիկան, ինչպես արդեն իսկ նշեցինք, այնպիսին է, որ բացի վերը շարադրվածից, հնարավոր են իրավիճակներ, երբ իրավական դիրքորոշման փոփոխության անհրաժեշտությունն առաջանա ոչ թե նախկինում կայացված որևէ որոշում վերանայելու ու վերջնական եզրահանգումը փոփոխելու, այլ նոր գործով որոշում ընդունելու համար: Ակնհայտ է, որ վերջինս, ի տարբերություն նախկինում կայացված վերջնական եզրահանգման վերանայման, վերաբերում է ոչ թե արդեն լուծված գործի ճակատագրին, այլ անհրաժեշտ է սահմանադրական դոկտրինի զարգացման և նոր գործերով որոշումներ ընդունելու համար, ուստի բոլոր դեպքերում ունի սկզբունքային սահմանադրաիրավական նշանակություն³⁰⁵:

³⁰⁴ Տե՛ս, օրինակ, Բելառուսի Հանրապետության Սահմանադրական դատարանի՝ 15 ապրիլի 1997թ. N 3-56/97 եզրակացությունը Բելառուսի Հանրապետության Սահմանադրական դատարանի՝ 4 նոյեմբերի 1996թ. եզրակացությունը վերանայելու վերաբերյալ, <http://www.lawbelarus.com/repub2008/sub39/text39295.htm>, /Վերջին մուտք՝ 01.09.2015/, Ղազախստանի Հանրապետության Սահմանադրական խորհրդի՝ 24 սեպտեմբերի 2008թ. №7 որոշումը Սահմանադրական խորհրդի՝ 26 դեկտեմբերի 2000թ. № 22/2, 13 դեկտեմբերի 2001թ. № 16-17/3, 18 մայիսի 2006թ. № 2 որոշումները վերանայելու վերաբերյալ, <http://www.constcouncil.kz/rus/resheniya/?cid=11&rid=448>, /Վերջին մուտք՝ 01.09.2015/):

³⁰⁵ Այդ առումով հիշատակման է արժանի իրավաբանական գրականության մեջ արտահայտված այն տեսակետը, որ սահմանադրական դատարանի որոշման եզրափակիչ մասն ուղղված է անցյալին: Վերջինիս գործառույթն է իրավական շրջանառությունից հանել Սահմանադրությանը հակասող իրավական ակտը, մինչդեռ որոշման պատճառաբանական մասն ուղղված է ապագային և իրականացում է ոչ միայն ընդունված որոշումը հիմնավորելու, այլ նաև կանխարգելիչ, օրենսդրին որոշակի սահմանադրական չափանիշների ուղղորդող գործառույթ, որոնցից վերջինս չի կարող հետ կանգնել (տե՛ս Курис Э. Конституционное правосудие. Вопросы теории и практики. Ереван, 2004, էջ 37):

Հետևաբար, նմանատիպ իրավիճակներում իրավական դիրքորոշման փոփոխությունը չի կարող կախվածության մեջ դրվել այնպիսի նախապայմաններից, ինչպիսիք են նախկին որոշման կոնկրետ տեսակը, դրա ընդունման ժամանակահատվածը կամ դիմողի կողմից հենց նշված հարցին առնչվող դիմումի ներկայացումը: Մինչդեռ, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 68 հոդվածի 16-րդ մասի քննարկվող կարգավորումը վերաբերում է սուսկ վիճարկվող ակտը կամ դրա վիճարկվող դրույթը Սահմանադրությանը համապատասխանող ճանաչելու կամ վիճարկվող ակտը կամ դրա վիճարկվող դրույթը Սահմանադրական դատարանի մեկնաբանությամբ Սահմանադրությանը համապատասխանող ճանաչելու մասին Սահմանադրական դատարանի որոշումների վերանայմանը և բացառում է որոշումների այլ տարատեսակների վրա հիշյալ կարգավորման տարածումը: Ավելին, նշված հիմքով Սահմանադրական դատարանը համապատասխան որոշումները կարող է վերանայել սուսկ օրենքով սահմանված կարգով ներկայացված համապատասխան դիմումի հիման վրա: Հավելենք նաև, որ մինչ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի ընդունումը «Սահմանադրական դատարանի մասին» 2006թ. հունիսի 1-ի ՀՀ օրենքը նախատեսում էր, որ որոշման վերանայմանն առնչվող քննարկվող կարգավորումն առնչվում է սուսկ այն դեպքերին, երբ գործով ըստ էության որոշման ընդունումից անցել է առնվազն 7 տարի:

Վերը շարադրվածը նկատի ունենալով՝ կարծում ենք, որ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքով նախատեսված՝ Սահմանադրական դատարանի որոշումների վերա-

նայմանն առնչվող դրույթի հիմնական նպատակը ակտի սահմանադրականության կամ հակասահմանադրականության վերաբերյալ վերջնական եզրահանգումը վերանայելու առնչությամբ կարգավորումներ ամրագրելն է, և այն չի վերաբերում հիշյալ նպատակային ուղղվածությունը չունեցող վերը նշված այլ իրավիճակներում սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների փոփոխությանը: Հակառակ մոտեցման պարագայում անխուսափելի է սահմանադրական դատարանի պրակտիկայի ու սահմանադրական դոկտրինի կարծրացած համակարգի ձևավորումը, ինչն իր հերթին կարող է վտանգի տակ դնել պետության ողջ իրավական անվտանգությունը:

Վերը շարադրվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ Սահմանադրական դատարանը պետք է սահմանադրական դոկտրինի զարգացման համարժեք հնարավորություններ ունենա, և այդ առումով չի կարող ընդունելի լինել որևէ այլ չափանիշի կամ նախապայմանի առկայություն, քան՝ Սահմանադրական դատարանի պրակտիկայի շարունակականության ու կանխատեսելիության և սահմանադրական դոկտրինի զարգացման հիմքում ընկած արժեքների միջև յուրաքանչյուր կոնկրետ իրավիճակում հավասարակշռություն գտնելը՝ սահմանադրական դատարանի կողմից «ողջամիտ ինքնասահմանափակման» սկզբունքի պահպանմամբ:

Հիշյալ համատեքստում հարկ ենք համարում անդրադառնալ նաև սահմանադրական փոփոխություններից հետո Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների գործողությանն առնչվող խնդիրներին, մասնավորապես, այն հարցադրմանը, թե շարունակում են արդյո՞ք գործել սահմանա

նադրական փոփոխություններից առաջ արտահայտված Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները, և եթե այո, ապա ի՞նչ ծավալով:

Կարծում ենք, որ այն մոտեցումը, որ Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները սահմանադրական փոփոխություններից հետո պետք է մեխանիկորեն կորցնեն իրենց իրավաբանական ուժը, տրամաբանական չէ, և չի կարող համարժեք արտահայտել նշված դիրքորոշումների սահմանադրական էությունն ու դրա հիմքում ընկած տրամաբանությունը:

Սահմանադրական կայունության, Սահմանադրության զարգացման, Սահմանադրական դատարանի գործունեության և իրավական դիրքորոշումների առանձնահատկություններին առնչվող և մեր կողմից աշխատանքի շրջանակներում արդեն իսկ ներկայացված վերլուծությունը հիմք են տալիս եզրակացնելու, որ 1. Սահմանադրական կայունությունը ենթադրում է Սահմանադրության «միջուկը», առանցքը կազմող նորմերի անփոփոխելիություն, 2. Սահմանադրության զարգացումը ենթադրում է սահմանադրական նորմերի միջև կուտակային կապի առկայություն, 3. Սահմանադրական դատարանի գործունեության և իրավական դիրքորոշումների կարևորագույն առանձնահատկություններից են վերջիններիս կանխատեսելիությունն ու Սահմանադրական դատարանի պրակտիկայի շարունակականությունը:

Ակնհայտ է, որ Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների՝ սահմանադրական փոփոխություններից հետո մեխանիկորեն ուժը կորցնելու գաղափարը չի կարող համապատասխանել նշված տրամաբանությանը, քանզի

բարեփոխումների արդյունքում առնվազն հիմնարար փոփոխությունների չեն կարող ենթարկված լինել Սահմանադրության առանցքը կազմող նորմերը, ավելին՝ սահմանադրական հին և նոր կարգավորումների միջև պետք է պահպանված լինի կուտակային կապը: Իսկ նշվածն իր հերթին ենթադրում է Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների կանխատեսելիության և Սահմանադրական դատարանի պրակտիկայի շարունակականության երաշխավորման անհրաժեշտություն:

Հետևաբար, թեև սահմանադրական փոփոխությունների արդյունքում Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները կարող են փոփոխվել, իսկ սահմանադրական դոկտրինը՝ զարգանալ, սակայն դա տրամաբանական կարող է լինել սոսկ մի դեպքում՝ երբ խոսքը փոփոխված սահմանադրական նորմի կամ նորմի փոփոխված ընկալմանն առնչվող իրավական դիրքորոշումների մասին է: Համանմանորեն, անտրամաբանական կլինեք ենթադրել, որ սահմանադրական չփոփոխված նորմը կամ վերջինիս չփոփոխված ընկալումը կարող են հանգեցնել Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների փոփոխության:

Այդ առումով կարելի է հիշատակել ՀՀ Սահմանադրական դատարանի՝ օրենքի առջև բոլորի հավասարության և խտրականության արգելքի սկզբունքներին առնչվող իրավական դիրքորոշումները:

Արդեն նշեցինք, որ 2015թ. փոփոխություններից հետո ՀՀ Սահմանադրությունը օրենքի առջև ընդհանուր հավասարության և խտրականության արգելքի առնչությամբ նախատեսում է բովանդակային առումով 2005թ. խմբագրությամբ Սահմա-

նադրությանը համանման կարգավորումներ: Հետևաբար, ակնհայտ է, որ Սահմանադրական դատարանի նման իրավական դիրքորոշումների պարագայում վերջիններիս իրավաբանական ուժը մեխանիկորեն կորցնելու առնչությամբ մոտեցումը տրամաբանական չէ, և կձևախեղի սահմանադրական կայունության, Սահմանադրության զարգացման, Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների կանխատեսելիության և Դատարանի պրակտիկայի շարունակականության գաղափարների ամբողջ էությունն ու հիմքում ընկած տրամաբանությունը: Այլ հարց է, որ, ինչպես արդեն նշեցինք, սահմանադրական դոկտրինը կարող է զարգանալ՝ արդեն իսկ քննարկված իրավիճակներում և սկզբունքների պահպանմամբ:

Նշենք, որ միջազգային պրակտիկայում ևս բացառիկ դեպքերում կարելի է հանդիպել սահմանադրական փոփոխություններից հետո Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների իրավաբանական ուժը մեխանիկորեն կորցնելու ինստիտուտին: Հունգարիայի 2011թ. ընդունված Հիմնական օրենքում 2013թ. կատարված չորրորդ փոփոխության արդյունքում Հիմնական օրենքի «Եզրափակիչ և անցումային» դրույթներում ամրագրվեց, որ մինչև Հիմնական օրենքի ուժի մեջ մտնելն ընդունված Սահմանադրական դատարանի որոշումները ուժը կորցրած են ճանաչվում: Մինևույն ժամանակ նախատեսվեց, որ այս դրույթը չի անդրադառնում այդ որոշումների իրավական հետևանքներին³⁰⁶: Հատկանշականն այն

³⁰⁶ Տե՛ս Հունգարիայի Հիմնական օրենքի «Եզրափակիչ և անցումային դրույթներ»-ի 5-րդ հոդված, https://hunconcourt.hu/uploads/sites/3/2018/10/fundamental_law_of_hungary-7.pdf, /Վերջին մուսք՝ 18.10.2018/:

է, որ մինչ այդ՝ 2012թ.-ին, Հունգարիայի Սահմանադրական դատարանն իրավական դիրքորոշում էր արտահայտել այն մասին, որ նոր գործերով Սահմանադրական դատարանը կարող է օգտագործել մինչև Հիմնական օրենքի ուժի մեջ մտնելն ընդունված որոշումներում արտահայտած իրավական դիրքորոշումները, եթե դա հնարավոր է Հիմնական օրենքի այնպիսի կոնկրետ նորմերի և դրանց մեկնաբանման կանոնների պայմաններում, որոնք ունեն նախկին Սահմանադրությունում ամրագրված նույն կամ համանման բովանդակությունը: Հիմնական օրենքի՝ չփոփոխված հիմնարար արժեքներին, մարդու իրավունքներին և ազատություններին և սահմանադրական այլ չփոփոխված ինստիտուտներին առնչվող Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները պահպանում են իրենց իրավաբանական ուժը³⁰⁷:

Վերը շարադրված վերլուծությունը նկատի ունենալով և չանդրադառնալով կոնկրետ պետության սահմանադրական քաղաքականության հիմքում ընկած շարժառիթներին՝ կարծում ենք, որ սահմանադրական նման կարգավորումների նախատեսումը, այն էլ Սահմանադրական դատարանի արդեն իսկ արտահայտած հակադիր իրավական դիրքորոշումների պայմաններում, խնդրահարույց է և կարող է ձևախեղել քննարկվող ինստիտուտների հիմքում դրված ամբողջ սահմանադրական արժեքանությունը՝ խաթարելով սահմանադրական կայունության գաղափարը:

³⁰⁷ Տե՛ս Հունգարիայի Սահմանադրական դատարանի՝ 22/2012 (V. 11.) որոշում, https://hunconcourt.hu/uploads/sites/3/2017/11/en_0022_2012.pdf, /Վերջին մուտք՝ 18.10.2018/:

Ամփոփելով Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների զարգացմանն առնչվող վերլուծությունը՝ նշենք, որ ընդհանուր եզրահանգումը հիշյալ համատեքստում հետևյալն է.

- Սահմանադրական կայունության կարևորագույն գրավականներից է Սահմանադրական դատարանի գործունեության և իրավական դիրքորոշումների կանխատեսելիությունը:

- Սահմանադրական փոփոխություններից հետո Սահմանադրական դատարանի նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումների՝ մեխանիկորեն ուժը կորցնելու վերաբերյալ մոտեցումը տրամաբանական չէ, համարժեք չի արտահայտում նշված դիրքորոշումների սահմանադրական էությունն ու դրա հիմքում ընկած տրամաբանությունը և ձևախեղում է սահմանադրական կայունության, Սահմանադրության զարգացման, Սահմանադրական դատարանի գործունեության կանխատեսելիության և պրակտիկայի շարունակականության գաղափարները:

- Սահմանադրական դատարանի կողմից սահմանադրական դոկտրինի ձևավորումը ոչ թե մեկնազամյա, այլ անընդհատ ու աստիճանաբար իրականացվող գործընթաց է: Ավելին, նշված դոկտրինը կարծրացած երևույթ չէ և հասարակական հարաբերությունների զարգացմանը զուգընթաց կարող է փոփոխվել, ինչը ենթադրում է Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների զարգացում:

- Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների զարգացումը կարող է ենթադրել երկու հնարավոր իրավիճակների առկայություն՝ 1. երբ անհրաժեշտ է հիմնավորապես փոփոխել Սահմանադրական դատարանի նախկինում

արտահայտած կոնկրետ իրավական դիրքորոշումը, 2. երբ անհրաժեշտ է լայնացնել Սահմանադրական դատարանի նախկինում արտահայտած կոնկրետ իրավական դիրքորոշման ծավալը՝ առանց փոփոխելու վերջինիս նախկին բովանդակությունը:

- Երկու դեպքում էլ քննարկվող հիմնախնդրի արդյունավետ լուծման հիմնական բանալին սահմանադրական դատարանի պրակտիկայի շարունակականության ու կանխատեսելիության և սահմանադրական դոկտրինի զարգացման հիմքում ընկած արժեքների միջև յուրաքանչյուր կոնկրետ իրավիճակում հավասարակշռություն գտնելն է՝ սահմանադրական դատարանի կողմից «ողջամիտ ինքնասահմանափակման» սկզբունքի պահպանմամբ: Առաջին դեպքում Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները փոփոխել հնարավոր է սուսկ այն դեպքում, երբ առկա է կոնկրետ սահմանադրական անհրաժեշտություն, այն է՝ սահմանադրական համապատասխան նորմի կամ դրա ընկալման փոփոխությունը: Երկրորդ դեպքում Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների զարգացումը չի սահմանափակվում սուսկ սահմանադրական նորմի կամ դրա ընկալման փոփոխություններով, և կարող է իրացվել սահմանադրական դոկտրինի զարգացումը ենթադրող անհրաժեշտ ցանկացած այլ իրավիճակում՝ պահպանելով հիմնախնդրին վերաբերող առանցքային և արդեն իսկ ներկայացված չափանիշը:

КОНСТИТУЦИОННАЯ СТАБИЛЬНОСТЬ КАК ВАЖНЕЙШАЯ ПРЕДПОСЫЛКА СТАБИЛЬНОЙ ДЕМОКРАТИИ

РЕЗЮМЕ

Монография посвящена раскрытию ряда вопросов относительно доктрины демократии, аксиологической природы конституционной стабильности и роли последней в обеспечении демократизации общества.

В работе впервые комплексно изучена аксиологическая природа конституционной стабильности с точки зрения ее роли в обеспечении демократии.

Анализируя идею демократии, автор делает вывод, что для должного восприятия этого понятия недостаточна лишь особенность осуществления власти народом и для народа, и доктрины демократии нуждаются в переосмыслении. Обосновывается, что стержневым в данном контексте должно быть то, что демократия – это форма правления, в условиях которой источником власти является народ, власть осуществляется народом и для народа, имея в основе человека как высшую ценность и руководствуясь целью гарантирования для личности возможностей самовыражения и самореализации. Подчеркивается, что власть народа не является неограниченной и должна ограничиваться основными правами и свободами человека и гражданина. Более того, анализируя элитарную концепцию демократии, автор приходит к выводу, что для достижения обсуждаемой цели необходим отбор представителей власти на основании идеи элитизма, принимая за основу свойства компетентности и профессионализма.

Автор определяет стабильность как свойство Конституции и конституционной системы, предполагающее жизнеспособность Основного закона в условиях преобразовывающихся общественных отношений. При этом в данном контексте речь не о статической, а о динамической стабильности, когда фундаментальным изменениям не подвергается “ядро”, суть Конституции (как общественного соглашения относительно основных правил жизнедеятельности), однако Конституция сама в состоянии адаптироваться к развивающимся общественным отношениям, быть стимулом их развития.

Анализируя вопросы относительно аксиологической характеристики конституционной стабильности, автор обосновывает, что Конституция должна быть для политики не инструментом, а границей, конституционное развитие же должно выражать не текущие политические предпочтения и интересы, а стоять выше них и определять фундаментальные правовые рамки для политических деятелей и событий. Иными словами, конституционная политика должна четко дифференцироваться от текущей политики, а Конституция не должна быть частью текущей политической игры, сама определяя правила этой игры.

Исследуя периодичность конституционных изменений в различных странах, автор приходит к заключению, что Конституция не должна меняться параллельно с каждым изменением политической ситуации в стране или формированием нового конституционного большинства. Конституция является не просто документом, имеющим высшую юридическую силу, но и символом конкретной конституционной системы, и в этом аспекте Основной закон имеет символическую значимость. Сле-

довательно, пути и периодичность изменения Конституции должны формировать такое общественное восприятие, что Конституция является стабильным документом, символом конкретной конституционной системы и не может меняться, имея в основе лишь политическую волю политического большинства. Одновременно, автор считает неоправданным также и противоположный подход, когда определяется конкретный период, в течение которого Конституция не должна подвергаться изменениям. В результате обосновывается, что невозможно говорить о конкретном промежутке времени, который сам по себе свидетельствует о наличии конституционной стабильности или указывает на эффективную периодичность конституционных изменений.

Автор отмечает, что “развитие Конституции” – это качественные, направленные и, как правило, необратимые изменения Основного закона, обладающие особенностью внутренней взаимосвязанности и системности, в условиях которых сохраняется основное качество системы, “ядро Конституции”. Последние являются качественной особенностью Конституции, в отсутствие которой она перестает быть конкретной обсуждаемой системой, в каких условиях невозможно говорить также и о ее стабильности и развитии. Это в свою очередь свидетельствует о том, что указанные ценности не могут подвергаться фундаментальным изменениям, так как такие изменения приведут к искажению состояния конституционализма. В результате автор приходит к заключению, что, несмотря на кажущуюся парадоксальность идеи “конституционности конституционных развитий”, последняя является важным элементом гарантирования

конституционализма, имеет конкретное содержание и исключительную значимость для обеспечения стабильной демократии.

Автор отмечает, что особые регулирования, которые предусматривает преамбула Конституции РА, составляют «ядро», «суть» Конституции, следовательно, с содержательной точки зрения они не могут подлежать фундаментальным изменениям. В то же время подчеркивается, что преамбула, кроме декларативного значения, имеет также конституционную ценность, практическую значимость и может развиваться иными альтернативными путями, считая исходным то, что упомянутые регулирования подлежат динамическому толкованию, в рамках которого возможны изменения в восприятии их отдельных элементов, одновременно, элементы, составляющие «ядро», «суть» этих принципов, должны оставаться неизменными.

С точки зрения эффективности конституционных изменений подчеркивается значимость совмещения механизмов непосредственной и представительной демократий, что имеет важное значение для принятия профессиональных решений, повышения эффективности правления, эффективной реализации власти народа и целей последней, и в условиях гарантирования иных обстоятельств может лучшим образом способствовать обеспечению конституционной стабильности и укреплению стабильной демократии.

Обосновывается также, что развитие Конституции невозможно эффективно осуществлять только путем внесения изменений в ее текст, и что толкование является одним из важнейших способов развития Основного закона.

В монографии исследуются также методы и пределы официального толкования Конституции. Автор отмечает, что воля конституционного законодателя и буквальное значение конституционных норм не должны быть единственной основой раскрытия содержания последних, и что с точки зрения обеспечения стабильности и развития Конституции целесообразным является ее динамическое толкование. В то же время подчеркивается, что эффективное толкование Конституции Конституционным Судом РА и соблюдение принципа «целесообразного самоограничения» при этом предполагают раскрытие содержания конституционных норм и выявление решений конкретных конституционных проблем в рамках действующих конституционных регулирований, а также согласованное, а не изолированное применение способов толкования в ходе этого.

В монографии дифференцируются понятия «действие Конституции» и «применение Конституции». Подчеркивается, что действие Конституции во всех случаях является непосредственным и *в рамках установленных конституционных регулирований* не опосредовано необходимостью принятия и применения иных актов. Иной вопрос, что для всестороннего регулирования общественных отношений Конституция может сама предполагать необходимость принятия других актов. Но даже в указанных ситуациях Конституция обладает свойством прямого действия - в рамках предусмотренных в Основном законе конкретных регулирований.

В работе также исследуются правовые механизмы разрешения конституционных споров о компетенции, и представляется авторский подход относительно понятия и содержания послед-

них. Обосновывается, что цивилизованный метод разрешения подобных споров - их преодоление в правовом пространстве. Это, в свою очередь, предполагает предусмотрение и реализацию соответствующих механизмов рассмотрения указанных дел в Конституционном Суде. Автор приходит к заключению, что в случае конституционного спора только конституционно-правовой элемент последнего подлежит рассмотрению в Конституционном Суде. Следовательно, в рамках конституционного правосудия не могут рассматриваться и решаться вопросы, предполагающие политического ответа, а предлагаемые Конституционным судом решения не могут иметь политический характер.

Представляется также авторский подход относительно соотношения понятий “независимость” и “подотчетность” судебной власти, согласно которому подотчетность является характерной особенностью, свойственной для независимой судебной власти, не противоречит сути последней, ни в коем случае не может восприниматься лишь как механизм, направленный на принятие приятных для общества решений, предполагает необходимость подотчетности перед *правом*, имеет соответствующие критерии и показатели оценки, которые сами по себе не нарушают, ни в коем случае не могут нарушать границы независимости судебной власти, и должны претворяться в жизнь в соответствии с подходами, представленными относительно реализации границ власти народа.

В монографии исследуется также понятие «конституционная идентичность», представляется содержание указанного понятия, согласно которому конституционная идентичность – это

оригинальность, индивидуальность и уникальность конкретной конституционной системы. Она включает в себя не только изначально существующие характерные особенности, придающие системе качество уникальности, но также и особенности более крупных систем, заимствованных указанной конституционной системой, с которыми последняя начинает себя идентифицировать. Конституционная идентичность должна восприниматься не как признак, изначально присущий конкретной социальной системе, но как особенность, которая формируется и преобразовывается в результате социальных взаимодействий. В то же время, все новообразованные характерные особенности, включая заимствованные у других систем, также становятся признаками, определяющими оригинальность и индивидуальность конкретной системы.

CONSTITUTIONAL STABILITY AS AN IMPORTANT PREREQUISITE FOR STABLE DEMOCRACY

SUMMARY

The monograph is dedicated to revelation of a number of issues concerning the doctrine of democracy, axiological characteristics of constitutional stability and the role of the latter in ensuring the democratization of the society.

The work is the first to complexly study the axiological characteristics of constitutional stability from the aspect of its role in ensuring democracy.

Analyzing the idea of democracy, the author draws a conclusion that for the proper perception of this notion just the feature of implementation of power by the people and for the people is not enough, and the doctrines of democracy need to be rethought. According to the author the key point here should be the fact that democracy is a form of governance, within the frames of which people are the source of power, power is implemented by the people and for the people, having in the basis the human being as the highest value and being guided by the aim of guaranteeing for the latter possibilities for self-expression and self-realization. The author concludes that the power of people is not an unlimited one and should be limited by fundamental human and citizen's rights and freedoms. Moreover, for the realization of the discussed aim of democracy choice of representatives of power based on the idea of elitism is necessary, taking as a basis the features of competence and professionalism.

The author defines the stability as a feature of the Constitution and constitutional system, which presupposes viability of the Basic Law in conditions of reorganizing social relations. Moreover, in this context it concerns not static, but dynamic stability, when the "core", the essence of the Constitution (as a social agreement concerning the main rules of life) isn't subject to fundamental changes, but the Constitution itself is able to adapt to developing social relations, be a stimulus for their development.

Analyzing issues concerning the axiological characteristics of constitutional stability, the author substantiates that the Constitution should not be a tool for politics, but a bound, framework for it. Moreover, the constitutional developments should express not the current political preferences and interests, but be superior to them and define fundamental legal framework for political actors and events. In other words, constitutional policy should be clearly differentiated from the ongoing politics, and the Constitution should not be a part of the current political game, itself defining the rules of that game.

Studying the frequency of constitutional amendments in various states, the author draws a conclusion that the Constitution should not be amended parallel with each change of the political situation in the state or formation of a new political majority. Constitution is not just a document with a highest legal force, but also a symbol of a concrete constitutional system, and in this aspect the Basic Law has a symbolic significance. Hence, the ways and frequency of constitutional amendments should form such a public perception that the Constitution is a stable document, symbol of a concrete constitutional system and cannot be amended just based

on the political will of the political majority of the day. At the same time, the author believes that the opposite approach, according to which a concrete period is defined, within the frames of which the Constitution cannot be amended, is also unjustified. In the result it is substantiated that a concrete period of time, which itself presupposes the existence of constitutional stability or points out effective periodicity of constitutional amendments, cannot be indicated.

The author mentions that “development of the Constitution” is qualitative, directed and, as a rule, irreversible changes to the Basic Law, possessing peculiarity of internal interrelatedness and systemness, when the main quality of the system, the “core” of the Constitution is preserved. The latter are the qualitative peculiarity of the Constitution, in case of absence of which it ceases to be the concrete discussed system, in which conditions there is also no possibility to speak about its stability and development. This, in its turn, presupposes that the mentioned values cannot be subject to fundamental changes, as the latter will lead to the distortion of constitutionalism. In the result the author concludes that notwithstanding the seeming paradoxicalness of the idea of “constitutionality of constitutional developments”, the latter isn’t a blank notion, is an important element of ensuring constitutionalism, has a concrete content and exceptional significance for ensuring stable democracy.

The author mentions that peculiar regulations, which are defined in the preamble of the RA Constitution, are the “core”, “kernel” of the Constitution, hence, cannot be subject to fundamental changes from the textual viewpoint. At the same time,

it is emphasized that the constitutional preamble, besides the declaratory significance, has a constitutional value, practical importance and can be developed via other alternative ways, having as a key point the circumstance that the above-mentioned regulations are subject to dynamic interpretation, within the frames of which changes of perception of their separate elements are possible, simultaneously, the elements, constituting the «core», «kernel» of these principles, should be unchangeable.

From the viewpoint of efficiency of constitutional amendments the importance of combination of mechanisms of direct and representative democracies is emphasized, which is an important basis for professional decision-making, effective realization of the power of people and the aims of the latter, increasing the efficiency of administration, and in conditions of guaranteeing the other circumstances can mostly contribute to ensuring constitutional stability and strengthening stable democracy.

It is also substantiated that the development of the Constitution is impossible to carry out effectively only by way of making changes in its text and that interpretation is one of the most important means of the development of the Basic Law.

The monograph also studies methods and limits of official interpretation of the Constitution. The author mentions that the will of constitutional legislator and the literal meaning of constitutional norms should not be the only basis for revealing the content of the latter, and that from the perspective of ensuring the stability and development of the Constitution it is expedient to apply dynamic interpretation. At the same time it is emphasized that effective interpretation of the Constitution by the RA

Constitutional Court and observance of the principle of “efficient self-restraint” during it presuppose revealing the content of constitutional norms and deducing solutions to concrete constitutional problems in the frames of current constitutional regulations, as well as consistent and not isolated application of the interpretation methods during it.

The monograph differentiates notions “effect of the Constitution” and “application of the Constitution”. It is emphasized that the effect of the Constitution is direct in any case and *within the frames of defined constitutional regulations* is not intermediated by the necessity of adopting and applying other acts. It's another issue that for the thorough regulation of social relations the Constitution itself can presuppose necessity of adoption of other acts. But even in these situations the Constitution is endowed with the peculiarity of direct effect – within the frames of concrete regulations defined in the Basic Law.

The work also studies mechanisms of overcoming constitutional conflicts on competencies, and an author's approach is presented on the notion and content of the latter. It is substantiated that the civilized method for the solution of the mentioned conflicts is their overcoming in legal dimension. This, in its turn, presupposes determination and realization of corresponding mechanisms of consideration of the mentioned cases at the Constitutional Court. The author concludes that in case of constitutional conflicts just its constitutional-legal element is subject to consideration at the Constitutional Court. Hence, in the frames of constitutional justice, issues, presupposing political answers, can't be considered and resolved, and the solutions

proposed by the Constitutional Court can't have a political character.

An author's approach is also presented on interrelations of the notions “independence” and “accountability” of the judicial power, according to which accountability is a characteristics peculiar for independent judicial power, does not contradict the essence of the latter, can in no case be perceived just as a mechanism of adopting decisions pleasant for the society, presupposes necessity of accountability *before the law*, has corresponding assesment indicators, which themselves do not violate the boundaries of the independecne of the judicial power, and should be materialized in accordance with approaches presented with regard to the realization of the limits of the power of people.

The monograph also studies the notion «constitutional identity», the content of the latter is presented, according to which constitutional identity is the originality, individuality and uniqueness of the concrete constitutional system. It includes not just the originally existing features, which provide the given system a quality of uniqueness, but also the features of the larger systems, which are borrowed by the constitutional system and with which the latter starts to identify itself. Constitutional identity should be perceived as not a feature, initially belonging to the given social system, but a feature, which is formed and transformed in the result of social interactions. At the same time, all the newly formed peculiarities, including the ones borrowed from other systems, also become features, defining originality and individuality of the given system.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

ՀՀ իրավական ակտեր

1. ՀՀ 1995թ. հուլիսի 5-ի Սահմանադրություն (2015թ. դեկտեմբերի 6-ի փոփոխություններով), ՀՀՊՏ 2005.12.05/ Հատուկ թողարկում Հոդ. 1426
2. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենք, ՀՕ-58-Ն, ՀՀՊՏ 2006.06.21/32(487) Հոդ.645, 01.06.2006
3. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենք, ՀՕ-42-Ն, ՀՀՊՏ 2018.01.31/7(1365) Հոդ.74, 17.01.2018
4. «Դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենք, ՀՕ-95-Ն, ՀՀՊՏ 2018.02.12/10(1368) Հոդ.143, 07.02.2018
5. «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք, ՀՕ-180-Ն, ՀՀՊՏ 2018.03.28/23(1381) Հոդ.373, 21.03.2018

ՀՀ սահմանադրական դատարանի ակտեր

6. ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 13 օգոստոսի 2004թ. ՄԴՈ-502 որոշում
7. ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 18 հոկտեմբերի 2006թ. ՄԴՈ-652 որոշում
8. ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 29 հունվարի 2008թ. ՄԴՈ-731 որոշում
9. ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 15 ապրիլի 2008թ. ՄԴՈ-751 որոշում
10. ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 27 մայիսի 2008թ. ՄԴՈ-754 որոշում
11. ՀՀ Սահմանադրական դատարանի իր՝ 30 հունիսի 2009թ. ՄԴՈ-810 որոշում
12. ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 12 հունվարի 2010թ. ՄԴՈ-850 որոշում
13. ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 19 հունվարի 2010թ. ՄԴՈ-852 որոշում

14. ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 4 մայիսի 2010թ. ՄԴՈ-881 որոշում
15. ՀՀ Սահմանադրական դատարանը 4 փետրվարի 2011թ. ՄԴՈ-934 որոշում
16. ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 25 փետրվարի 2011թ. ՄԴՈ-943 որոշում
17. ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 7 հունիսի 2011թ. ՄԴՈ-967 որոշում
18. ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 5 մայիսի 2012թ. ՄԴՈ-1027 որոշում
19. ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 7 հուլիսի 2015թ. ՄԴՈ-1224 որոշում
20. ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 28 մարտի 2017թ. ՄԴՈ-1359 որոշում
21. ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 10 հուլիսի 2018թ. ՄԴՈ-1424 որոշում (բոլոր որոշումները www.concourt.am կայքում)
22. Հաղորդում ՀՀ սահմանադրական դատարանի 2006թ. ընդունած որոշումների կատարման վիճակի վերաբերյալ, <http://concourt.am/armenian/report/index.htm>
23. Հաղորդում ՀՀ սահմանադրական դատարանի 2007թ. ընդունած որոշումների կատարման վիճակի վերաբերյալ, <http://concourt.am/armenian/report/index.htm>
24. Հաղորդում ՀՀ սահմանադրական դատարանի 2008թ. ընդունած որոշումների կատարման վիճակի վերաբերյալ, <http://concourt.am/armenian/report/index.htm>
25. Հաղորդում ՀՀ սահմանադրական դատարանի 2009թ. ընդունած որոշումների կատարման վիճակի վերաբերյալ, <http://concourt.am/armenian/report/index.htm>
26. Հաղորդում ՀՀ սահմանադրական դատարանի 2010թ. ընդունած որոշումների կատարման վիճակի վերաբերյալ, <http://concourt.am/armenian/report/index.htm>

Արտասահմանյան երկրների իրավական ակտեր

27. Ալբանիայի Հանրապետության Սահմանադրություն, http://www.gjk.gov.al/web/constitution_of_albania_1722.pdf
28. Բելառուսի Հանրապետության Սահմանադրություն, <http://www.kc.gov.by/main.aspx?guid=1611>
29. Բուլղարիայի Հանրապետության Սահմանադրություն, <http://www.constcourt.bg/en/LegalBasis>
30. Գերմանիայի Դաշնային Հանրապետության Հիմնական օրենք, http://www.gesetze-im-internet.de/englisch_gg/index.html
31. «Գերմանիայի Դաշնային Սահմանադրական դատարանի մասին» օրենք, http://www.bundesverfassungsgericht.de/SharedDocs/Downloads/EN/Gesetze/BVerfGG.pdf?__blob=publicationFile&v=5
32. Թուրքիայի Հանրապետության Սահմանադրություն, https://global.tbmm.gov.tr/docs/constitution_en.pdf
33. Իտալիայի Հանրապետության Սահմանադրություն, https://www.cortecostituzionale.it/documenti/download/pdf/The_Constitution_of_the_Italian_Republic.pdf
34. «Իսպանիայի Սահմանադրական դատարանի մասին» օրգանական օրենք, <http://www.tribunalconstitucional.es>
35. Լատվիայի Հանրապետության Սահմանադրություն, <http://www.satv.tiesa.gov.lv/en/2016/02/04/the-constitution-of-the-republic-of-latvia/>
36. «Լեհաստանի Սահմանադրական տրիբունալի կազմավորման և Սահմանադրական տրիբունալում գործերի քննության կարգի մասին» օրենք, http://trybunal.gov.pl/fileadmin/content/dokumenty/Akty_normatywne/The_Act_on_the_Organisation_of_the_Constitutional_Tribunal_and_the_Mode_of_Proceedings_Before_the_Constitutional_Tribunal_en.pdf
37. Լիտվայի Հանրապետության Սահմանադրություն,

<http://www.lrkt.lt/en/about-the-court/legal-information/the-constitution/192>

38. Խորվաթիայի Հանրապետության Սահմանադրություն, <http://concourt.am/armenian/constitutions/index2015.htm>
39. Հունգարիայի Հիմնական օրենք, https://hunconcourt.hu/uploads/sites/3/2018/07/fundamental_law_of_hungary_7-1.pdf
40. «Հունգարիայի Սահմանադրական դատարանի մասին» օրենք, <http://www.mkab.hu/jog/ab-torveny>
41. Հունաստանի Հանրապետության Սահմանադրություն, <https://www.hellenicparliament.gr/UserFiles/f3c70a23-7696-49db-9148-f24dce6a27c8/001-156%20aggliko.pdf>
42. Մոլդովայի Հանրապետության Սահմանադրություն, http://www.constcourt.md/public/files/file/Baza%20legala/Constitutia_engl__13.11.17.pdf
43. Չեխիայի Հանրապետության Սահմանադրություն, <http://www.psp.cz/en/docs/laws/constitution.html>
44. «Չեխիայի Հանրապետության Սահմանադրական դատարանի մասին» օրենք, <http://www.concourt.cz>
45. ՌԴ Սահմանադրություն, <http://www.ksrf.ru>
46. «ՌԴ Դաշնային Սահմանադրական դատարանի մասին» դաշնային սահմանադրական օրենք, <http://www.ksrf.ru>
47. Սերբիայի Հանրապետության Սահմանադրություն, <http://www.ustavni.sud.rs/page/view/en-GB/235-100028/constitution>
48. Սլովակիայի Հանրապետության Սահմանադրություն, <http://www.concourt.sk>
49. Ուկրաինայի Սահմանադրություն, <http://www.ccu.gov.ua>
50. «Ուկրաինայի Սահմանադրական դատարանի մասին» օրենք, <http://www.ccu.gov.ua>
51. Ֆրանսիայի Հանրապետության Սահմանադրություն,

https://www.constituteproject.org/constitution/France_2008.pdf?lang=en

Արատասահմանյան երկրների սահմանադրական դատարանների ակտեր

52. Ruling No. 21/2003 of The Constitutional Court of the Republic of Lithuania of 30 May 2003, <http://www.lrkt.lt/dokumentai/2003/r030530.htm>

53. Ruling No. No. 24/04 of The Constitutional Court of the Republic of Lithuania of 25 May 2004, <http://www.lrkt.lt/dokumentai/2004/r040525.htm>

54. Ruling No. 33/03 of the Constitutional Court of the Republic of Lithuania of 28 March 2006, <http://www.lrkt.lt/dokumentai/2006/r060328.htm>

55. ՌԴ Սահմանադրական դատարանի՝ 12 ապրիլի 1995թ. N 2-ՈՒ որոշում, www.ksrf.ru

56. ՌԴ Սահմանադրական դատարանի՝ 2016թ. ապրիլի 19-ի 12-ՈՒ/2016 որոշում, <http://doc.ksrf.ru/decision/KSRFDecision230222.pdf>

57. Հունգարիայի Սահմանադրական դատարանի՝ 45/2005 (XII. 14.) AB որոշումը, http://www.mkab.hu/letoltesek/en_0045_2005.pdf

58. Հունգարիայի Սահմանադրական դատարանի՝ 22/2012 (V. 11.) որոշում, https://hunconcourt.hu/uploads/sites/3/2017/11/en_0022_2012.pdf

59. Բելառուսի Հանրապետության Սահմանադրական դատարանի՝ 15 ապրիլի 1997թ. N 3-56/97 եզրակացությունը Բելառուսի Հանրապետության Սահմանադրական դատարանի՝ 4 նոյեմբերի 1996թ. եզրակացությունը վերանայելու վերաբերյալ, <http://www.lawbelarus.com/repub2008/sub39/text39295.htm>

60. Ղազախստանի Հանրապետության Սահմանադրական խորհրդի՝ 24 սեպտեմբերի 2008թ. №7 որոշումը Սահմանադրական խորհրդի՝ 26 դեկտեմբերի 2000թ. № 22/2, 13 դեկտեմբերի 2001թ. № 16-17/3, 18 մայիսի 2006թ. № 2 որոշումները վերանայելու վերաբերյալ, <http://www.constcouncil.kz/rus/resheniya/?cid=11&rid=448>

Տեսական գրականություն

61. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ / ընդհանուր խմբագրությամբ՝ Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի, Երևան, Իրավունք, 2010, 1086 էջ

62. Հարությունյան Գ. Սահմանադրական մշակույթ. պատմության դասերը և ժամանակի մարտահրավերները, Վերահրատարակություն՝ լրամշակումներով, Երևան, Նժար, 2016, 672 էջ

63. Հարությունյան Գ. Սահմանադրությունից՝ սահմանադրականություն, Երևան, Նժար, 2004, 140 էջ

64. Հարությունյան Գ., Մանասյան Ա. Սահմանադրական վերահսկողություն. Ուսումնական ձեռնարկ բուհերի համար (լրամշակված վերահրատարակություն), Երևան, Իրավունք հրատ. 2015, 240 էջ

65. Հարությունյան Գ., Սարգսյան Հ., Գևորգյան Ռ. Սահմանադրականություն. Ախտորոշման, մշտադիտարկման և կառավարման խնդիրներ, Երևան, «Զանգակ» հրատ., 2017, 140 էջ

66. Մանասյան Ա. Սահմանադրական դատարանի որոշումների տեղը ՀՀ իրավական համակարգում և դրանց դերը Սահմանադրության կայունության ապահովման գործում, Երևան, 2013, 248 էջ

67. Նազարյան Հ. ԱՄՆ դատական համակարգը, Երևան, Նժար, 1997, 136 էջ

68. Авакьян С.А. Конституционное право России: В 2-х томах. Том 1. М.: Норма: Инфра-М, 2010, 864 էջ

69. Алексеев П.В., Панин А.В. Философия: Классический университетский учебник. М.: ТК Велби, Проспект, 2005, 608 էջ

70. Арутюнян Г., Баглай М. Конституционное право: Энциклопедический словарь. М.: НОРМА, 2006, 544 էջ

71. Арутюнян Г. Конституционный суд в системе государственной власти /сравнительный анализ/. Ереван, Нжар, 1999, 238 էջ

72. Баранов Н.А. Современная демократия: эволюционный подход. 2008, <http://textbooks.studio/uchebnik-teoriya-politiki-elitarnaya-model-demokratii-23148.html>

73. Бондарь Н. Судебный конституционализм в России в свете конституционного правосудия. М.: Норма: ИНФРА-М, 2011, 544 էջ

74. Бучило Н. Ф., Чумаков А. Н. Философия: Учебное пособие. М.: ПЕР СЭ, 2001, 447 էջ

75. Витрук Н. Конституционное правосудие. Судебно-конституционное право и процесс: Учебное пособие. М., Юристь, 2005, էջ 527

76. Гаджиев Х. Толкование норм Конституции и закона конституционными судами. Баку: Озан, 2002, 168 էջ

77. Григорьев А.С. Юридическая техника: Учебное пособие. Электронное издание. Тюмень: Издательство Тюменского государственного университета, 2015, <https://lawbook.online/yuridicheskoy-tehniki-osnovyi/primeneniye-norm-prava-ponyatie-priznaki-formyi-67556.html>

78. Гуц А. Глобальная этносоциология: Учебное пособие. Омск: ОмГУ, 1997, 212 էջ, <http://www.univer.omsk.su/MEP/ch7st.win.htm>

79. Зорькин В. Современный мир, право и Конституция. М.: Норма, 2010, 544 էջ

80. Иванов А.А., Иванов В.П.. Теория государства и права. М. 2007, <https://textbook.news/gosudarstva-prava-teoriya/deystvie-prava-pravovoe-vozdeystvie-pravovoe-141059.html>

81. Кашанина Т. Юридическая техника. М., Норма: ИНФРА-М, 2011, 496 էջ

82. Комментарий к Конституции РФ / Под ред. Зорькина В. Д., Лазарева Л. В. М.: Эксмо, 2009, 1056 էջ

83. Коркунов Н. М. Лекции по общей теории права. СПб.: Н.К. Мартынов, 1909, 364 էջ

84. Кравец И. А. Российский конституционализм: Проблемы становления, развития и осуществления. СПб.: Юрид. центр Пресс, 2005, 675 էջ

85. Кряжков В. А., Лазарев Л. В. Конституционная юстиция в РФ. М.: БЕК, 1998, 462 էջ

86. Курис Э. Конституционное правосудие. Вопросы теории и практики. Ереван, 2004

87. Марченко М. Н. Источники права. М.: ТК Велби, Изд-во Проспект, 2008, 760 էջ

88. Марченко М. Н. Судебное правотворчество и судебское право. М.: ТК Велби, Изд-во Проспект, 2008, 512 էջ

89. Марченко М. Н. Теория государства и права. М.: ТК Велби, Изд-во Проспект, 2008, 648 էջ

90. Михалева Н. А. Конституционное право зарубежных стран СНГ. М.: Юристь, 1999, 352 էջ, http://pravo.xpcc.ru/book_z1019_page_23.html

91. Морозова Л. Теория государства и права. 4-ое издание. М. Эксмо. 2010, 512 էջ

92. Новая философская энциклопедия / под ред. В. С. Стёпина. М., 2001, http://dic.academic.ru/dic.nsf/enc_philosophy/1013/%D0%A0%D0%90%D0%97%D0%92%D0%98%D0%A2%D0%98%D0%95

93. Политология: энциклопедический словарь / общ. ред. и сост. Аверьянов Ю.И. М.: Издательство Моск.коммерч.ун-та, 1993, 431 էջ

94. Право и правоприменение в России: междисциплинарные исследования / под ред. Волкова В. М.: Статут, 2011, 317 էջ

95. Правоведение: Учебник / под ред. Мальцева Г. М.: Изд-во РАГС, 2003, 584 էջ, http://lawtoday.ru/razdel/biblo/pravoved/DOC_064.php

96. Пряхина Т. Конституционная доктрина РФ. М.: ЮНИТИ-ДАНА, Закон и право, 2006, 323 էջ

97. Румянцев О. Г. Основы конституционного строя России (понятие, содержание, вопросы становления). 1994, <http://jurisprudence.club/konstitutsionnoe-uchebnik/ustoychivost-osnov-konstitutsionnogo-57906.html>

98. Сандевуар П. Введение в право / Пер. с франц. М., ИнтраТэк-Р, 1994, 324 էջ

99. Теория государства и права. курс лекций. Изд. второе, переработанное и дополненное / под ред. Матузова Н. И., Малько А.В., <http://www.bibliotekar.ru/teoria-gosudarstva-i-prava-1/87.htm>

100. Теория государства и права: Учебник / под ред. М. Н. Марченко. М.: Издательство «Зерцало», 2004, <https://dic.academic.ru/dic.nsf/ruwiki/364959>

101. Ушаков Д. Толковый словарь русского языка Ушакова. 2012, <https://slovar.cc/rus/ushakov/455507.html>

102. Червонюк В. Конституционное право России. М.: ИНФРА-М, 2004, 170 էջ, <http://pravoznavec.com.ua/books/97/5891/24/>

103. Философия: Энциклопедический словарь. М.: Гардарики / под ред. Ивина А. 2004, https://dic.academic.ru/dic.nsf/enc_philosophy/313

104. Философский энциклопедический словарь. 2010, http://dic.academic.ru/dic.nsf/enc_philosophy/313

105. Элементарные начала общей теории права / под ред. Червонюка В. И. М. Право и закон, 2003, https://elementary-law.academic.ru/92/Действие_права

106. Balkin J. Living Originalism. London, Cambridge, Massachusetts: The Belknap Press of Harvard University Press, 2011, 474 էջ

107. Barber S. A., Fleming J. E. Constitutional Interpretation. New York: Oxford University Press, 2007, 201 էջ

108. Burgess S. The Founding Fathers, Pop Culture, and Constitutional Law. Ohio University, USA: Ashgate, reprinted 2009, 141 էջ

109. Concepts and Principles of Democratic Governance and Accountability. Edited by Mathias Kamp, 2011, 52 էջ

110. Cunningham F. Theoris of Democracy (A Critical Introduction), 2002, London and New York, T J International Ltd, Padstow, Cornwall, 256 էջ

111. Frosini O. J. Constitutional Preambles at a Crossroads between Politics and Law. Titanlito S.p.A. Dogana (Repubblica di San Marino), 2012, 177 էջ

112. How Constitutions Change (A Comparative Study) / edited by Oliver D., Fusaro C. Oxford and Portland, Oregon: Hart Publishing, 2011, 501 էջ

113. Kommers D. P. The Constitutional Jurisprudence of the Federal Republic of Germany. Durham and London: Duke University Press, 1997, 620 էջ

114. Morlino L. Qualities of Democracy: How to Analyze Them. Istituto Italiano di Scienze Umane, Florence (Italy). 2009, 44 էջ

115. National Identity, Nationalism and Constitutional Change

/ Edited by Bechhofer F. and McCrone D. Palgrave Macmillan, 2009,
http://www.law.ed.ac.uk/__data/assets/pdf_file/0011/35939/chap1_intro.pdf

116. Raadt de J. Contested Constitutions: Constitutional Design, Conflict, and Change in Post-Communist East Central Europe. Enschede: Ipskamp Drukkers, 2009, 253 էջ,
<http://dare.ubvu.vu.nl/bitstream/1871/18202/5/8594.pdf>

117. Rasch E. B., Congleton D. R. Amendment Procedures and Constitutional Stability,
[http://www.rdc1.org/forthcoming/DCD%20\(Chap%2012,%20Amendment%20Procedures,%20Congleton%20and%20Rausch\).pdf](http://www.rdc1.org/forthcoming/DCD%20(Chap%2012,%20Amendment%20Procedures,%20Congleton%20and%20Rausch).pdf)

118. Responding to Imperfection – The Theory and Practice of Constitutional Amendment / edited by Levinson S. Princeton, NJ: Princeton University Press, 1995, 336 էջ

119. Rosenfeld M. The Problem of “Identity” in Constitution-making and Constitutional Reform. Working Paper. 2005. N 143, 25 էջ

120. Roznai Y. Unconstitutional Constitutional Amendments: A Study of the Nature and Limits of Constitutional Amendment Powers. London, The London School of Economics and Political Science, 2014, 363 էջ

121. The Basic Law of Hungary (A First Commentary) / edited by Csink L., Schanda B., Varga ZS. A. Dublin: Clarus Press, 2012, 622 էջ

122. The Twilight of Constitutionalism / edited by Dobner P. and Loughlin M. Oxford: Oxford University Press, 2010, 368 էջ

123. Vliet M. van, Waihu W., Magolowondo A. Constitutional Reform Processes and Political Parties: Principles for Practice, 60 էջ,
<https://openaccess.leidenuniv.nl/bitstream/handle/1887/30222/ASC-075287668-3333-01.pdf?sequence=1>

124. What Is Democracy? Editor: Howard Cincotta,
<https://www.ait.org.tw/infousa/zhtw/docs/whatsdem/whatdm2.htm>

Գիտական հոդվածներ

125. Հարությունյան Գ. Մարդու սահմանադրական ինքնության իմացաբանական ու արժեքանական բնութագրիչները,
<http://concourt.am/armenian/structure/president/articles/article-january2018.pdf>

126. Հարությունյան Գ. Սահմանադրականության գումարելիները՝ իրավունքի գերակայություն, կայուն զարգացում,
<http://concourt.am/armenian/structure/president/articles/harutyunyan2011.pdf>

127. Ղամբարյան Ա. ՀՀ սահմանադրական դատարանի որոշումների վերանայման թույլատրելիությունը // Իրավագիտության հարցեր, N 1-2, Երևան, 2009, էջ 47-53

128. Абельс Х. Проблема социального порядка в социологии Талкотта Парсонса, 2002, Перевод Минакова А. / под ред. Головина Н. А.,
http://sbiblio.com/biblio/archive/abels_social_order_problem/

129. Авакьян С. Публичная власть: конституционно-правовые аспекты // Вестник Тюменского государственного университета. 2009. N 2, էջեր 5-15

130. Балагурова Н. Н. Стабильность конституционных норм и обеспечение их соответствия складывающимся общественно-политическим отношениям // Вестник Челябинского государственного университета, 2009, № 15 (153), էջ 16-19,
www.lib.csu.ru/vch/153/003.pdf

131. Баранов Н. Исторический обзор развития демократии,
http://nicbar.ru/theoria_democracy1.htm

132. Брежнев О. Споры о компетенции между органами власти как объект судебного конституционного контроля,

<https://www.zonazakona.ru/law/comments/479/>

133. Бушуев В., Титов В. Национально-государственная идентичность в современном мире и роль исторической политики в ее формировании (теоретико-методологический анализ), <https://cyberleninka.ru/article/v/natsionalno-gosudarstvennaya-identichnost-v-sovremennom-mire-i-rol-istoricheskoy-politiki-v-ee-formirovani-teoretiko>

134. Галеев К. Монархия и республика. Достоинства и недостатки, <http://schools.keldysh.ru/labmro/lib/projects/galeevk.htm>

135. Грызлов Б. Конституция останется неизменной, <http://gryzlov.ru/index.php?page=smi&id=223>

136. Загребельский Г. Толкование законов: стабильность или трансформация? // Сравнительное конституционное обозрение. N 3(48)2004, № 80-82

137. Зорькин В. Принцип разделения властей в деятельности Конституционного суда Российской Федерации // Конституционное правосудие: Вестник Конференции органов конституционного контроля стран молодой демократии. Ереван, 2(40)-3(41) 2008, № 26-48

138. Исполинов А. Приоритет права Европейского Союза и национальная (конституционная) идентичность в решениях Суда ЕС и конституционных судов государств – членов ЕС, https://zakon.ru/publication/prioritet_prava_evropejskogo_soyuza_i_nacionalnaya_konstitucionnaya_identichnost_v_resheniyah_suda_e

139. Кампо В. Правовые позиции Конституционного суда Украины как необходимый элемент обеспечения судебно-правовой реформы // Конституционное правосудие: Вестник Конференции органов конституционного контроля стран молодой демократии, 1(47)2010, № 22-37

140. Курис Э. О стабильности Конституции, источниках конституционного права и мнимом всемогуществе Конституционных Судов // Конституционное правосудие. Вопросы теории и практики. Приложение. Ереван, 2004, № 40 № 2

141. Краснолуцкий Г. Политическая альтернатива России: элитизм или элитаризм? // Управленческое консультирование. 2011. № 1, № 89-99

142. Кузнецов К.А., Щелин П.А. Национальная идентичность и устойчивая государственность // Сравнительная политика, 1 (14) / 2014, № 31-36

143. Курис Э. О стабильности конституции, источниках права и мнимом всемогуществе конституционных судов // Сравнительное конституционное обозрение, 2004, N 3(48), № 92-102

144. Левская Л. Конституционное развитие Республики Беларусь, http://mogilev-region.gov.by/files/konstitucionnnoe_razvitie_respubliki_belarus.doc

145. Люхтергандт О. Значение решений Федерального Конституционного Суда для правового порядка Германии // Альманах (Конституционное правосудие в новом тысячелетии). Ереван, 2011, № 123-138

146. Маврин С. Роль Конституционного Суда Российской Федерации в урегулировании конституционных конфликтов // Альманах (Конституционное правосудие в новом тысячелетии). Ереван, 2017, № 79-92

147. Остапович И. Толкование Конституции: опыт зарубежных стран, <http://e-lib.gasu.ru/vmu/archive/2007/01/28.pdf>

148. Папир Х.-Ю. Конституционное правосудие как опора правового государства // Конституционное правосудие: Вестник Конференции органов конституционного контроля стран молодой демократии, 4(42)2008, № 25-29

149. Пулбере Д. Соблюдение прав человека и контроль конституционности законов в общем и на примере Республики Молдова // Конституционное правосудие: Вестник Конференции органов конституционного контроля стран молодой демократии, 1(51)2011, էջ 58-72

150. Рубцова М., Санина А. Государственная идентичность как фактор управляемости современным обществом // Журнал социологии и социальной антропологии. 2012. № 3 (62), էջեր 86-97

151. Санина А., Павлов А. Государственная идентичность: содержание понятия и постановка проблемы // Управленческое консультирование. № 9, 2015, էջեր 30-40

152. Сорокин В.В. Конституция Российской Федерации 1993 года: критерии стабильности, <http://tigrp.wordpress.com/2010/02/01/сорокин-в-в-конституция-российской-фе/>

153. Тохян Ф. Роль и полномочия органов конституционного правосудия в решении компетенционных споров (практика Армении и международный опыт) // Альманах (Конституционное правосудие в новом тысячелетии). Ереван, 2017, էջեր 126-134

154. Тропер М. Проблема толкования и теория верховенства Конституции // Сравнительное конституционное обозрение, N 4(53)2005, էջ 171-181

155. Уитц Р. Об отсутствии определенности в толковании Конституции // Конституционное право: Восточноевропейское обозрение, N1(38)2002, էջ 26-35

156. Balkin J. M. Constitutional Interpretation and Change in the United States: The Official and the Unofficial, <http://juspolicum.com/article/Constitutional-Interpretation-and-Change-in-the-United-States-The-Official-and-the-Unofficial-1088.html>

157. Barak A. Constitutional Human Rights and Private Law // Review of Constitutional Studies, Vol. III, N 2, Yale Law School Legal Scholarship Repository. 1-1-1996, էջ 219-281

158. Besselink L. National and Constitutional Identity before and after Lisbon // Utrecht Law Review, Volume 6, Issue 3, 2010, էջեր 36-49

159. Beširević V. “Governing without judges”: The politics of the Constitutional Court in Serbia // International Journal of Constitutional Law, Volume 12, N 4, 1 October 2014, էջեր 954-979

160. Birmontiene T. The Significance of Constitutional Review for the Development of Law // Альманах (Конституционное правосудие в новом тысячелетии). Ереван, 2011, էջ 69-86

161. Brown J. N., Waller J. G. Constitutional courts and political uncertainty: Constitutional ruptures and the rule of judges // International Journal of Constitutional Law, Volume 14, N 4, 1 October 2016, էջեր 817-850

162. Cerar M. The Relationship between Law and Politics // Annual Survey of International & Comparative Law, Volume 15, Issue 1, 2009, էջեր 19-41

163. Chirwa M. D. The Horizontal Application of Constitutional Rights in a Comparative Perspective // Law, Democracy & Development. Vol 10, No 2 (2006), էջեր 21-48

164. Edwin L. Felter Jr. Maintaining the Balance between Judicial Independence and Judicial Accountability in Administrative Law // Journal of the National Association of Administrative Law Judiciary, 1997, Volume 17, N 1, էջեր 89-96

165. Enache M. The Constitutional Reform in Romania // US-China Law Review, Vol. 12, N 8, 2015, էջեր 633-646

166. Ginsburg T., Rockmore D., Foti N. We the Peoples: The Global Origins of Constitutional Preambles // University of Chicago

Law School Chicago Unbound, Journal Articles, 2014, էջեր 101-136

167. Guerra L. Latent and Manifest Functions of Constitutional Courts // Альманах (Конституционное правосудие в новом тысячелетии). Ереван, 2011, էջ 50-57

168. Crawford J. The Criteria for Statehood in International Law // British Yearbook of International Law, Volume 48, Issue 1, 1977, էջեր 93-182, <https://www.ilsa.org/jessup/jessup13/British%20Yearbook%20of%20International%20Law-1977-Crawford-93-182.pdf>

169. Jacobsohn G. Constitutional Identity // The Review of Politics, University of Notre Dame. 2006, 68 (3), էջեր 361-397

170. Guzman A. The Consent Problem in International Law, UC Berkeley // Berkeley Program in Law and Economics, Working Paper Series, <https://escholarship.org/content/qt04x8x174/qt04x8x174.pdf>

171. Ku'ris E. Constitutional Law as Jurisprudential Law – the Lithuanian Experience, with Special Reference to Human Rights // Конституционное правосудие: Вестник Конференции органов конституционного контроля стран молодой демократии, 1(51)2011, էջ 104-113

172. Kutlesic V. Preambles of Constitutions - a comparative study of 194 current constitutions. Belgrade Business School, Serbia, <https://constitutional-change.com/preambles-of-constitutions-a-comparative-study-of-194-current-constitutions/>

173. L. Van den Hauwe. Public Choice, Constitutional Political Economy and Law and Economics. Brussels, Belgium: Copyright 1999 Ludwig Van den Hauwe, encyclo.findlaw.com/0610book.pdf

174. Lindquist A. S., Cross C. F. Stability, Predictability and the Rule of Law: Stare Decisis as Reciprocity Norm, University of Texas School of Law,

<https://law.utexas.edu/conferences/measuring/The%20Papers/Rule%20of%20Law%20Conference.crosslindquist.pdf>

175. Mittal S. Constitutional Stability in a Changing World, http://politicalscience.stanford.edu/cooperationcolloppapers/Mittal_cooperationmemo.pdf

176. Mittal S., Weingast R. B. Constitutional Stability and the Deferential Court, // Journal of Constitutional Law, Vol. 13:2, էջեր 337-352, <https://scholarship.law.upenn.edu/cgi/viewcontent.cgi?article=1077&context=jcl>

177. Negretto G. L. The Durability of Constitutions in Changing Environments: A Study on Constitutional Stability in Latin America, <http://verfassungswandel.files.wordpress.com/2008/10/14-negretto-paper.pdf>

178. Ordeshook P. C. Constitutional Stability. Pasadena, California, October, 1991, <http://www.hss.caltech.edu/SSPapers/sswp779.pdf>

179. Overview of Law and Politics // The Oxford Handbook of Political Science, Edited by Goodin R., 2011, <http://www.oxfordhandbooks.com/view/10.1093/oxfordhb/9780199604456.001.0001/oxfordhb-9780199604456-e-012?print=pdf>

180. Papuashvili G. Problematic Aspects of Interrelationship between the Constitutional and Ordinary Courts, http://www.venice.coe.int/WCCJ/Papers/GEO_Papuashvili_E.pdf

181. Papuashvili G. Problems of the Constitutional Stability in Georgia // Альманах (Конституционное правосудие в новом тысячелетии). Ереван, 2009, էջ 48-51

182. Pavcnik M. Constitutional Interpretation (in Continental Europe), http://ivr-enc.info/index.php?title=Constitutional_Interpretation_%28in_Continental_Europe%29

183. Peltason J.W. The Development of the Constitution, <http://www.america.gov/st/usg->

english/2008/April/20080416002922eaifas0.5097315.html

184. Prisacariu M. R. The Predictability of Romanian Constitutional Court Decisions and the Political 'Migration' of Parliamentarians // *Reforme ale Justitiei in Europa de Est*, Institutul European Publishing, Iasi, 2014, https://papers.ssrn.com/sol3/papers.cfm?abstract_id=2597715

185. Rasch E. B., Congleton D. R. Amendment Procedures and Constitutional Stability, [http://www.rdc1.org/forthcoming/DCD%20\(Chap%2012,%20Amendment%20Procedures,%20Congleton%20and%20Rausch\).pdf](http://www.rdc1.org/forthcoming/DCD%20(Chap%2012,%20Amendment%20Procedures,%20Congleton%20and%20Rausch).pdf)

186. Rosenfeld M. Constitution-making, Identity Building, and Peaceful Transition to Democracy: Theoretical Reflections Inspired by the Spanish Example // *Cardozo Law Review*. 1998. Vol. 19, էջեր 1891-1920

187. Schmitz T. Basic Elements of Fundamental Rights Doctrine, http://www.iuspublicum-thomas-schmitz.uni-goettingen.de/Downloads/Schmitz_FR-Doctrine_Jakarta-2014.pdf

188. Simion M. Constitutional Legal Disputes between the President of Romania and Other Public Authorities in the Case-Law of the Constitutional Court of Romania // *Agora International Journal of Juridical Sciences*, N 2 (2017), Agora University Press, Oradea, Romania, էջեր 88-95

189. Tirkey I. Judicial Accountability In India (Understanding and Exploring the Failures and Solutions to Accountability) // *CCS Working Paper No. 247*, http://ccs.in/internship_papers/2011/247_judicial-accountability-in-india_isha-tirkey.pdf

190. Tribe L. A Constitution We Are Amending: In Defense of a Restrained Judicial Role // *97 Harvard Law Rev.* 1983, Issue 2, էջեր 433-445

191. Twomey A. The Involvement of Sub-national Entities in Direct and Indirect Constitutional Amendment within Federations,

<http://camlaw.rutgers.edu/statecon/workshop11greece07/workshop11/Twomey.pdf>

192. Vermeule A. Selection Effects in Constitutional Law. VERMUELEBOOK, <http://www.virginialawreview.org/content/pdfs/91/953.pdf>

193. Walker Jack L. A Critique of the Elitist Theory of Democracy // *The American Political Science Review*, Vol. 60, No. 2 (Jun., 1966), էջեր 285-295

194. Wolcher L. E. Constitutional Interpretation in the United States and the United Kingdom, http://ivr-enc.info/index.php?title=Constitutional_Interpretation_in_the_United_States_and_the_United_Kingdom

195. Zines L. Dead Hands or Living Tree? Stability and Change in Constitutional Law // [2004] *AdelLawRw* 2; (2004) 25(1) *Adelaide Law Review* 3, <http://www.austlii.edu.au/au/journals/AdelLawRw/2004/2.html>

Ատենախոսություններ և ատենախոսությունների սեղմագրեր

196. Голдобина З. Г. Активизм и оригинализм в деятельности Верховного суда США и в американской политико-правовой доктрине (Автореферат диссертации на соискание ученой степени кандидата юридических наук). Екатеринбург, 2007, <http://www.usla.ru/structure/dissovet/Goldobina-aref.pdf>

197. Новиков Н. И. Нормативное толкование в механизме правового регулирования (Автореферат диссертации на соискание ученой степени кандидата юридических наук). Ростов-на-Дону, 2009, http://www.dissercat.com/content/normativnoe-tolkovanie-v-mekhanizme-pravovogo-regulirovaniya?_openstat=cmVmZXJ1bi5jb207bm9kZTthZDE7

198. Румянцева Ю. Е. Официальное толкование норм уго-

ловно-процессуального права (Автореферат диссертации на соискание ученой степени кандидата юридических наук). Екатеринбург, 2008, էջ 9, <http://www.usla.ru/structure/dissovet/Rumyanцева-aref.pdf>

Միջազգային կառույցների, խորհրդատվական մարմինների փաստաթղթեր և այլ նյութեր

199. Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգ / մշակվել է Հայաստանի Հանրապետության Նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի կողմից, Երևան, 2014թ. հոկտեմբեր, <http://www.parliament.am/library/sahmanadrakan%20barepoxumnner/hayecakarg.pdf>

200. Advance with the Times // 10th National People's Congress and Chinese People's Political Consultative Conference, <http://www.china.org.cn/english/10th/88511.htm>

201. Calvert R. Coordination and Constitutional Change. Washington University in St. Louis, <http://calvert.wustl.edu/downloads/CoordConstChg.MPSA.pdf>

202. CDL-JU(2004)024, The Application of Different Techniques of Interpretation of the Constitution as a Factor of Its Development // Report by Mr Aivars ENDZIŅŠ (Chairman of the Constitutional Court, Member, Latvia), Strasbourg, 20 February 2004, <http://www.venice.coe.int/docs/2004/CDL-JU%282004%29024-e.pdf>

203. CDL-JU(2004)031, The Application of Different Techniques of Interpretation of the Constitution as a Factor of Its Development Thereof // Report by Mr Uno LÕHMUS (Chief Justice of the Supreme Court, Estonia), Strasbourg, 25 February 2004, <http://www.venice.coe.int/docs/2004/CDL-JU%282004%29031-e.pdf>

204. CDL-JU (2005)066, “Disputes Regarding the Competences Between the State Powers Before the Constitutional Court – International Experience”, by Mavcic A., Strasbourg, 8th January 2006, [http://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-JU\(2005\)066-e](http://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-JU(2005)066-e)

205. CDL-AD(2007)008, Code of Good Practice on Referendums // adopted by the Council for Democratic Elections at its 19th meeting (Venice, 16 December 2006) and the Venice Commission at its 70th plenary session (Venice, 16-17 March 2007), [http://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=cdl-ad\(2007\)008-e](http://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=cdl-ad(2007)008-e)

206. CDL-AD(2007)028, Judicial Appointments // Report adopted by the Venice Commission at its 70th Plenary Session (Venice, 16-17 March 2007), <http://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD%282007%29028-e>

207. CDL-DEM(2008)002add, Constitutional Provisions for Amending the Constitution: Limits to Constitutional Amendments // European Commission for Democracy through Law (Venice Commission), Strasbourg, 9 October 2008, [http://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=e=CDL-DEM\(2008\)002add-e](http://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=e=CDL-DEM(2008)002add-e)

208. CDL-AD(2010)001, Report on Constitutional Amendment, Adopted by the Venice Commission at its 81st Plenary Session (Venice, 11-12 December 2009), <http://www.venice.coe.int/docs/2010/CDL-AD%282010%29001-e.pdf>

209. CDL-AD(2010)004, The Independence of the Judicial System Part I: The Independence of Judges // Report adopted by the Venice Commission at its 82nd Plenary Session (Venice, 12-13 March 2010)

210. CDL-JU(2015)021, “Constitutional Review Design and Functions Implications For the Separation of Powers” // Report of

the European Commission For Democracy Through Law (Venice Commission), Strasbourg, 28 September 2015)

211. CDL-PI(2015)023, Compilation of Venice Commission Opinions concerning Constitutional Provisions for Amending the Constitution // European Commission for Democracy through Law (Venice Commission), Strasbourg, 22 December 2015, [http://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-PI\(2015\)023-e](http://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-PI(2015)023-e)

212. CDL-AD(2017)019, Draft Judicial Code // Opinion adopted by the Venice Commission at its 112th Plenary Session (Venice, 6-7 October 2017), [http://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD\(2017\)019-e](http://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2017)019-e)

213. OSCE/ODIHR Final Opinion on Draft Amendments to the Act on the National Council of the Judiciary and Certain Other Acts of Poland, Warsaw, 5 May 2017, <https://www.osce.org/odihr/315946?download=true>

214. Encyclopaedia Britannica, Vol. 5, 1977; Constitutional Law, http://www.vanuatu.usp.ac.fj/courses/LA207_Public_Law_1/Readings/la207_encybrit_constitutional_law.html

215. Gillman H. Political Development and the Origins of the “Living Constitution”, 2007, <http://www.acslaw.org/files/Gillman-Vanderbilt%20Paper%209-2007.pdf>

216. Ginsburg T., Melton J., Elkins Z. The Lifespan of Written Constitutions/ American Law & Economics Association Annual Meetings, <http://law.bepress.com/cgi/viewcontent.cgi?article=1934&context=alea>

217. Ginsburg T., Melton J., Elkins Z. Chronology of Constitutional Events, Version 1.2 // Comparative Constitutions Project, <http://comparativeconstitutionsproject.org/download-data/>

218. Independence and Accountability of the Judiciary // ENCJ Report 2013-2014, https://www.encj.eu/images/stories/pdf/workinggroups/independence/encj_report_independence_accounta

bility_adopted_version_sept_2014.pdf

219. Inquiry to Review New Zealand’s Existing Constitutional Arrangements // Report of the Constitutional Arrangements Committee, Presented to the House of Representatives, Forty-seventh Parliament (Hon Peter Dunne, Chairperson), August 2005, http://www.parliament.nz/NR/rdonlyres/575B1B52-5414-495A-9BAF-C9054195AF02/15160/DBSCH_SCR_3229_2302.pdf

220. Thomas Jefferson to James Madison, September 6, 1789; Letter to Samuel Kercheval, July 12, 1816, <http://etext.virginia.edu/etcbin/toccer-new?id=JefLett.sgm&images=images/modeng&data=/texts/english/modeng/parsed&tag=public&part=244&division=div1>

Այլ ինտերնետային կայքեր

221. www.dic.academic.ru
222. www.arlis.am
223. www.businessdictionary.com
224. www.concourt.am
225. <http://www.constitution.ru>
226. www.en.oxforddictionaries.com
227. www.constcourt.md
228. www.global.tbmm.gov.tr
229. www.constcourt.ge
230. www.hrw.org
231. www.president.gov.by
232. www.bundesverfassungsgericht.de
233. www.hunconcourt.hu
234. www.merriam-webster.com
235. www.cdep.ro
236. www.usoud.cz
237. www.gjk.gov.al
238. www.us-rs.si

ԱՆԱՀԻՏ ՄԱՆԱՍՅԱՆ

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ
ԿԱՅՈՒՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ԳՐԱՎԱԿԱՆ**

АНАИТ МАНАСЯН

**КОНСТИТУЦИОННАЯ СТАБИЛЬНОСТЬ КАК
ВАЖНЕЙШАЯ ПРЕДПОСЫЛКА СТАБИЛЬНОЙ
ДЕМОКРАТИИ**

ANAHIT MANASYAN

**CONSTITUTIONAL STABILITY AS AN IMPORTANT
PREREQUISITE FOR STABLE DEMOCRACY**

Չափսը՝ 60x84¹/₁₆:
Ծավալը՝ 21.5 տպ. մամուլ:
Քանակը՝ 200 օրինակ: